

Վ-730

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ուսումնական ծեռնարկ

**Երևան
Տնտեսագետ
2008**

ՀՏԴ 339 (07)
ԳՄԴ 65.5 ց7
Մ 730

Հրատարակվում է ՀՊՏՀ
գիտական խորհրդի որոշմամբ

Մասնագիտական խմբագիրներ՝
Գ. Ա. Աղաջանյան
Տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր
Զ. Ա. Թաղևոսյան
Տնտեսագիտության դոկտոր, դոցենտ


Մ 730 Միջազգային տնտեսական հարաբերություններ: Ուսումնական ծեռնարկ:-
Եր.: Տնտեսագետ, 2008.- 296 էջ:

Զեռնարկում հանգամանորեն շարադրված են «Միջազգային տնտեսական
հարաբերություններ» դասընթացի ուսումնական ծրագրի բոլոր թեմաները:
Նախատեսված է մասնագիտական բուհերի ուսանողների համար:

13872 (118)
ՀՊՏՀ գրադարան
Библиотека
ուս. 2

ԳՄԴ 65.5 ց7

ISBN 978-99941-51-78-3



© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2008

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 7

ԳԼՈՒԽ I. «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1. ՄՏՀ-ի էությունը, ծագման նախադրյալները և զարգացման վրա ազդող գործոնները	9
1.2. ՄՏՀ դասընթացի ուսումնասիրության առարկան.....	12
1.3. ՄՏՀ-ի օբյեկտները և սուբյեկտները	22
1.4. ՄՏՀ-ի ձևերը. դրանց փոխադարձ կապը	24
1.5. ՄՏՀ դասընթացի խնդիրները	26
1.6. ՄՏՀ-ի զարգացման էվոյուցիան	27
1.7. ՄՏՀ-ի զարգացման արդի միտումները	28
1.8. ՄՏՀ-ի կարգավորումը	29
Գրականություն	30

ԳԼՈՒԽ II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

2.1. Աշխատանքի միջազգային բաժանման էությունը	31
2.2. Աշխատանքի միջազգային բաժանման նախադրյալները և գործոնները.....	34
2.3. Արտադրության միջազգային մասնագիտացումը, կոոպերացումը և դրանց ձևերը.....	38
2.4. Արտադրության միջազգային մասնագիտացման և ազգային տնտեսության համալիր զարգացման հիմնահարցերը.....	48
2.5. Ժամանակակից տեսությունները աշխատանքի միջազգային բաժանման վերաբերյալ.....	50
Գրականություն	56

ԳԼՈՒԽ III. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ. ԵՎ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴԴՅԱԼՆԵՐԸ

3.1. «Համաշխարհային տնտեսություն» հասկացությունը. դրա մեկնաբանումները	58
3.2. Համաշխարհային տնտեսության ձևավորման նախադրյալները.....	61
3.3. Համաշխարհային տնտեսության կազմավորման և զարգացման հիմնական փուլերը	64

3.4.	Աշխարհի երկրների դասակարգման ցուցանիշները	68
3.5.	Համաշխարհային տնտեսության կառուցվածքը.....	72
3.6.	Զարգացած երկրներ	74
3.7.	Զարգացող երկրներ	76
3.8.	Նոր արդյունաբերական (ինդուստրիալ) երկրներ.....	78
3.9.	Նավթ արդյունահանող երկրներ	84
3.10.	Անցման շրջանի երկրներ	85
3.11.	Հայաստանի Հանրապետությունը և համաշխարհային տնտեսությունը	86
	Գրականություն	88

ԳԼՈՒԽ IV. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

4.1.	Առևտուրը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում	89
4.2.	Միջազգային առևտրի տեսությունները.....	92
4.3.	Արտաքին առևտրային քաղաքականությունը.....	100
4.4.	Արտաքին առևտրի կարգավորումը	107
4.5.	Միջազգային առևտրի ապրանքային, ճյուղային և աշխարհագրական կառուցվածքը	117
4.6.	Հայաստանի Հանրապետության տեղը միջազգային առևտրային հարաբերությունների համակարգում	122
4.7.	Միջազգային առևտրի կարգավորումը	127
4.8.	Ծառայությունների համաշխարհային շուկան	131
	Գրականություն	136

ԳԼՈՒԽ V. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺԸ

5.1.	Կապիտալի միջազգային միգրացիան	137
5.1.1.	<i>Կապիտալի միջազգային միգրացիայի էությունը. դրան նպաստող գործոնները</i>	<i>138</i>
5.1.2.	<i>Կապիտալի միջազգային միգրացիայի ձևերը</i>	<i>141</i>
5.1.3.	<i>Կապիտալի միջազգային միգրացիայի շարժընթացը, աշխարհագրական ուղղությունները և ժամանակակից առանձնահատկությունները.....</i>	<i>147</i>
5.1.4.	<i>Կապիտալի միգրացիայի սոցիալ-տնտեսական հետևանքները արտահանող և ներմուծող երկրներում....</i>	<i>152</i>
5.1.5.	<i>ՀՀ-ի մասնակցությունը կապիտալի միջազգային միգրացման գործընթացներին</i>	<i>155</i>
	Գրականություն	160

5.2.	Աշխատուժի միջազգային միգրացիա	
5.2.1.	Աշխատուժի միջազգային միգրացիայի էությունը, պատճառները և ձևերը	161
5.2.2.	Աշխատուժի միջազգային միգրացիայի շարժընթացը և ձգողության համաշխարհային կենտրոնները	170
5.2.3.	Աշխատուժի միջազգային միգրացիայի սոցիալ-տնտեսական հետևանքները աշխատուժ արտահանող և ներմուծող երկրներում	173
5.2.4.	Աշխատուժի միջազգային միգրացիայի պետական, միջպետական, տարածաշրջանային և միջազգային կարգավորումը	178
5.2.5.	ԴՖ-ի մասնակցությունը աշխատուժի միջազգային միգրացման գործընթացներին	185
	Գրականություն	194
5.3.	Տեխնոլոգիաների միջազգային փոխանակություն	
5.3.1.	Տեխնոլոգիաների միջազգային փոխանցման էությունը...	195
5.3.2.	Տեխնոլոգիաների համաշխարհային շուկայի բնորոշ գծերը և առանձնահատկությունները	196
5.3.3.	Իրավական պաշտպանությունը որպես տեխնոլոգիաների առևտրային իրացման արդյունավետ պայման	198
5.3.4.	Միջազգային առևտրում մտավոր գործունեության անմիջական արդյունքների փոխանցման ձևերը	202
5.3.5.	Տեխնոլոգիաների փոխանցման միջպետական և պետական կարգավորումը	208
5.3.6.	Հայաստանի Հանրապետության մասնակցությունը տեխնոլոգիաների համաշխարհային շուկային	209
	Գրականություն	216

ԳԼՈՒԽ VI. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1.	Արժուքային հարաբերությունների էությունը և դերը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում	217
6.2.	Ազգային և համաշխարհային արժուքային համակարգերը. դրանց տարրերը	218
6.3.	Համաշխարհային արժուքային համակարգի էվոլյուցիան	221

6.4. Արժույթը և դրա տեսակները: Արժութային փոխարկելիություն.....	223
6.5. Արժութային փոխարժեք: Արժութային գնանշում	226
6.6. Արժութային փոխարժեքի վրա ազդող գործոնները.....	231
6.7. Սպասումներ փոխարժեքի փոփոխության վերաբերյալ ..	232
6.8. Արժութային շուկաներ. դրանցում իրականացվող գործառնությունները	233
6.9. Արժութային ռիսկ. դրա կառավարումը.....	239
6.10. Արժութային քաղաքականություն	241
6.11. Արժութային քաղաքականության առանձնահատկությունները ՀՀ-ում.....	244
6.12. Միջազգային արժութավարկային կազմակերպությունները	248
6.13. Եվրոպական արժութային համակարգը և զարգացման փուլերը	251
6.14. Միջազգային հաշվարկների էությունը և ձևերը.....	253
6.15. Վճարային հաշվեկշռի էությունը, կառուցվածքը և կարգավորման մեթոդները.....	255
6.16. ՀՀ վճարային հաշվեկշիռը	258
Գրականություն	261

ԳԼՈՒԽ VII. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ

7.1. Տնտեսական ինտեգրման էությունը և փուլերը.....	263
7.2. Տարածաշրջանային ինտեգրման նախադրյալները	269
7.3. Եվրամիության ձևավորման և զարգացման փուլերը.....	272
7.4. Խառը տիպի ինտեգրման միավորումները: NAFTA և APEC	276
7.5. Ինտեգրման գործընթացները զարգացող երկրներում	283
7.6. Անկախ պետությունների համագործակցություն	287
7.7. Հայաստանի Հանրապետությունը միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացներում.....	290
Գրականություն	294

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի դարաշրջանում էլ ավելի են խորանում տնտեսական կյանքի բոլոր ոլորտների միջազգայնացման գործընթացները: Դրանցում, անշուշտ, մեծ դեր են խաղում միջազգային տնտեսական հարաբերությունները, որոնք աշխատանքի միջազգային բաժանման արդյունք են: Համաշխարհային տնտեսության և ազգային տնտեսությունների առաջընթացը ներկա պայմաններում կապված է միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման հետ, որի շնորհիվ որակական փոփոխությունների են ենթարկվում համաշխարհային արտադրություն, գին և առևտուր, միջազգային ֆինանսներ, արտադրության գործոնների շարժ, տնտեսական ինտեգրման և գլոբալացման գործընթացներ և այլ կատեգորիաներ: Ահա թե ինչու ցանկացած գիտական աշխատանք կամ հետազոտություն, լինի ուսումնական ծեռնարկ, դասագիրք, մենագրություն, թե հոդված՝ նվիրված միջազգային տնտեսական հարաբերությունների ողջ համակարգի հարցերի լուսաբանմանը, խիստ արժեքավոր է և արժանի է ուշադրության:

Ձեռնարկի պատրաստման և հրատարակման անհրաժեշտությունը, մի կողմից՝ պայմանավորված է այն հանգամանքով, որ չնայած մեկուկես տասնամյակից ավելի է, ինչ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» առարկան դասավանդվում է պետական և մասնավոր բուհերում ու քոլեջներում, այնուամենայնիվ, մայրենի լեզվով հրատարակված գրականությունը և՛ սահմանափակ է, և՛ ինչ-որ չափով՝ հնացած: Մինչդեռ դասընթացի ուսումնասիրման առարկան պահանջում է նոր տեղեկատվություն բարձր շարժունակություն ունեցող աշխարհատնտեսական կապերի մասին, որի գիտական վերլուծության հիման վրա հիշյալ կապերի վերաբերյալ, հարկավ, անհրաժեշտ կլինեն նոր, ժամանակակից մեկնաբանություններ: Մյուս կողմից՝ նկատի ունենալով, որ գլոբալացման ուժեղացող գործընթացների ազդեցությամբ խորացել և բարդացել են միջազգային տնտեսական հարաբերությունները, ապա տնտեսավարման համաշխարհային փորձի ուսումնասիրումը մեծ հետաքրքրություն է ներկայացնելու ազատ շուկայական հարաբերություններին դեռևս անցման փուլում գտնվող երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության համար:

Հայաստանի Հանրապետության աստիճանական ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը, միջազգային և տարածաշրջանային տնտեսական կազմակերպությունների հետ փոխհարաբերությունների էլ ավելի բարելավումը, ինչպես նաև արտերկրների գործընկերների հետ ծագող հարցերի շուրջ գործարար բանակցություններ վարելը պահանջում են, որ տնտեսագետներն ունենան համապատասխան գիտելիքներ համաշխարհային շուկայի և գնի, ապրանքների ու արտադրության գործոնների միջազգային շարժի, միջազգային արժույթային համակարգի, արժույթի և նրա փոխարժեքի, արժեթղթերի, միջազգային հաշվարկների և տնտեսական պայմանագրերի ձևերի, այլ կատեգորիաների մասին:

Ձեռնարկում քննարկվում են միջազգային տնտեսական հարաբերությունների ձևավորման նախադրյալները, զարգացման վրա ազդող գործոններն ու միտումները, աշխատանքի միջազգային բաժանման, համաշխարհային տնտեսության կազմավորման և զարգացման հարցերը, առանձնահատուկ ուշադրություն է դարձվել արտաքին առևտրին, արտադրության գործոնների միջազգային շարժին և միջազգային արժույթային հարաբերություններին:

Ձեռնարկը եզրափակվում է միջազգային տնտեսական ինտեգրման միտումների ձևավորման, զարգացման առանձնահատկությունների և դրանց տնտեսական ու քաղաքական հետևանքներն արժարժող հարցերի լուսաբանմամբ:

Ուսումնական ձեռնարկի գլուխները և առանձին ենթագլուխները շարադրել են. տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր **Գ. ԱՐԱՋԱՆՅԱՆԸ** (գլուխ 1 և ենթագլուխ 5.2), տնտեսագիտության դոկտոր, դոցենտ **Ջ. ԹԱՂԵՎՈՍՅԱՆԸ** (գլուխ 4), տնտեսագիտության թեկնածու, դոցենտներ **Գ. ՆԱՋԱՐՅԱՆԸ** (գլուխ 2), **Ջ. ԹԱՂԵՎՈՍՅԱՆԸ** (գլուխ 3), **Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԸ** (ենթագլուխ 5.3), տնտեսագիտության թեկնածուներ **Թ. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ** և **ԷՂ. ՊԱՊՈՅԱՆԸ** (գլուխ 6), **Դ. ԳԱՆՈՅԱՆԸ** (գլուխ 7), դասախոս **Լ. ԱՐԱՋԱՆՅԱՆԸ** (ենթագլուխ 5.1):

Գ Լ ՈՒ Խ Ի

«ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1. ՄՏՀ-ի էությունը, ծագման նախադրյալները և զարգացման վրա ազդող գործոնները

Գլոբալացման ժամանակակից պայմաններում միջազգային տնտեսական հարաբերությունների (ՄՏՀ) համակարգի ուսումնասիրությունը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն, քանի որ համաշխարհային ապրանքային և ֆինանսական շուկաների միջև ընդլայնվող փոխադարձ կապերն ու փոխկախվածությունն ավելի ու ավելի մեծ ազդեցություն են ունենում ցանկացած երկրի տնտեսական զարգացման վրա: Տնտեսական անկումները և ֆինանսաարժույթային ճգնաժամերը, սկզբնապես ծագելով առանձին երկրներում կամ տարածաշրջաններում, անխուսափելիորեն ստանում են գլոբալ բնույթ: Դա է պատճառը, որ բոլոր երկրները ձգտում են իրականացնել արդյունավետ արտաքին տնտեսական քաղաքականություն: Ավելին, արդի ժամանակաշրջանում ցանկացած երկիր չի կարող հաջողությամբ լուծել իր առջև ծառայած սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, եթե ազգային տնտեսական քաղաքականությունը չկոորդինացնի մյուս երկրների տնտեսական քաղաքականության հետ: Դա անհրաժեշտ է հատկապես անցումային տնտեսություն ունեցող երկրների համար, որոնք չեն կարող հասնել էական նվաճումների՝ առանց աշխարհատնտեսական կապեր հաստատելու: Նույնը վերաբերում է նաև Հայաստանի Հանրապետությանը, որի տնտեսական կախվածությունն արտաքին աշխարհից օրեցօր ավելի է մեծանում:

ՄՏՀ դասընթացի ուսումնասիրությունը կարևորվում է նրանով, որ մեր հանրապետությունը միջազգային տնտեսական հարաբերություններում առանձին սուբյեկտ է, ուստի մեր տնտեսագետ-միջազգայնագետներից պահանջվում է ՄՏՀ-ի մասին ունենալ խոր գիտելիքներ, որպեսզի արտերկրների մեր գործընկերների

հետ բանակցություններ վարելիս ընդունվեն փոխադարձ շահավետ որոշումներ: Ժամանակակից մեներջերը պետք է յուրացնի և գործնականում կիրառի ՄՏՀ դասընթացի հիմնական դրույթները, քանի որ ներկա պայմաններում անհմաստ է նախաձեռնել ձեռնարկատիրական գործունեություն՝ առանց համապատասխան կապեր ստեղծելու այլ երկրների տնտեսավարող սուբյեկտների հետ:

«Միջազգային տնտեսական հարաբերություններ» դասընթացն ընդհանուր տնտեսագիտական առարկաներից է, որի ուսումնասիրության հիմքում «Տնտեսագիտության տեսություն» և «Համաշխարհային տնտեսություն» գիտաճյուղերում բացահայտված օրենքներն ու օրինաչափություններն են: Տեսական և գործնական առումով ՄՏՀ դասընթացում դիտարկվում են աշխարհատնտեսական կարևորագույն կապերը և տրվում դրանց ժամանակակից մեկնաբանությունները, ուսումնասիրվում աշխարհատնտեսական կապերի հիմնական ձևերը, ժամանակակից միջազգային տնտեսական հարաբերությունների իրացման մեխանիզմներն ու գործիքները, ինչպես նաև երկրների արտաքին տնտեսական գործունեությանն առնչվող կիրառական խնդիրները:

Իհարկե ՄՏՀ դասընթացն ուսումնասիրողները հաճախ բախվում են փոխադարձաբար միմյանց հետ կապված մի շարք դժվարությունների: Դրանցից առավել կարևորը թերևս ուսումնասիրվող օբյեկտի մեծ շարժունակությունն է, որը մշտապես պահանջում է աշխարհատնտեսական կապերի մասին նոր, թարմ տեղեկություն: Դասընթացի ուսումնասիրության մյուս հիմնական դժվարությունն այն է, որ խորհրդային տնտեսագետները երկար ժամանակ արհամարհել են միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտը՝ նախապատվությունը տալով սեփական ուժերին ու կանոններին:

Մարդկային հասարակության կազմակերպական տարբեր ձևերի միջև տնտեսական կապերն ունեն բազմադարյա պատմություն: Սկզբում դրանք ընդունել են եզակի գործարքի ձև, այնուհետև դրանց քանակի ավելացման հաշվին հանդես են եկել նոր գործող անձինք՝ ընդլայնելով այն օբյեկտների շրջանակը, որոնք դարձել են միջազգային առևտրի առարկաներ (կապիտալ, աշխատուժ, ծառայություններ, հայտնագործություններ, տեղեկատվություն և այլն):

Ասվածից հետևում է, որ ՄՏՀ-ի առաջացումն ամենից առաջ կապված է եղել փոխանակության ծագման հետ, իսկ նրա հետագա զարգացումը պայմանավորված է եղել մի շարք օբյեկտիվ նախադրյալներով: Վերջիններիս թվում առաջնահերթ դեր են խաղացել՝

ա) անցումը բնատնտեսությունից ապրանքային տնտեսության, որի աստիճանական զարգացումը հիմք է ծառայել ազգային և համաշխարհային շուկաների ձևավորման, ինչպես նաև ՄՏՀ-ի առաջացման համար,

բ) XV և XVI դարերի աշխարհագրական մեծ հայտնագործությունները, որոնց շնորհիվ առևտրական կապեր են հաստատվել տարբեր աշխարհամասերի և երկրների միջև,

գ) արտադրողական ուժերի զարգացման որակական թռիչքը, որն արտահայտվել է արտադրության մասշտաբների մեծացմամբ:

ՄՏՀ-ի ձևավորման և զարգացման վրա ազդում են բազմաթիվ այլ գործոններ, որոնք տնտեսագետները դասակարգում են 5 խմբերի: Դրանք են՝

1. Երկրների բնական-աշխարհագրական տարբերությունները. երկրները միմյանցից տարբերվում են հանքային հանածոների պաշարներով, հողերի բերրիությամբ, աշխարհագրական դիրքով և այլն:

2. Մեքենայական արտադրության և զանգվածային արտադրության կազմակերպման աստիճանը: Դրանցով պայմանավորված՝ արտադրության ծավալների մեծացումը չէր համապատասխանում երկրների ներքին շուկաների փոքր տարողունակությանը, որի պատճառով արտադրված ապրանքների մի մասը դուրս էր գալիս արտաքին շուկա: Ընդ որում՝ անցումը մեքենայական արտադրությանը ոչ միայն բարձրացնում էր աշխատանքի արտադրողականության մակարդակը, այլև խորացնում արտադրության մասնագիտացման աստիճանը, որը նույնպես երկրների առջև դնում էր աշխատանքի արդյունքների փոխադարձ փոխանակման, հետևաբար՝ ՄՏՀ-ի ընդլայնման պահանջ:

3. XX դարի երկրորդ կեսին տեղի ունեցած ՉՏՀ-ն՝ կապված արտադրության մեջ ավտոմատիկայի, կիբեռնետիկայի և էլեկտրոնիկայի ներդրման հետ: Սակայն նորագույն տեխնոլոգիաների և ապրանքների նոր տեսակների մշակումը պահանջում է նշանակալի, մշտապես աճող ծախսեր: Ահա թե ինչու երկրների մեծ մասը կա՛մ միավորում է իր գիտահետազոտական և փորձարարա-կոնստրուկ-

միավորում է իր գիտահետազոտական և փորձարարա-կոնստրուկտորական աշխատանքները (իրականացնելով համատեղ ծրագրեր), կա՛մ էլ մասնագիտանում է գիտական որոշակի ուղղությունների մեջ՝ փոխանակելով ստացված արդյունքները:

4. Կապիտալի արտահանումը: Արտերկրների ներդրումների իրականացմամբ ստեղծվում են միջազգային արտադրության հիմնական սուբյեկտները՝ վերազգային կորպորացիաները: Իսկ միջազգային վարկավորումն ապահովում է համաշխարհային վերարտադրության անընդհատությունը:

5. Գործոններ, որոնք կապված են գլոբալ հիմնախնդիրներին (էկոլոգիական, էներգետիկ, հումքային, սննդամթերքի, ահաբեկչության և այլն), որոնց լուծումն առանձին վերցրած երկրի ուժերից վեր է: Նման հիմնախնդիրների լուծումը հնարավոր է իրականացնել աշխարհի բոլոր երկրների համատեղ ջանքերով՝ անկախ դրանց սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակից և քաղաքական կողմնորոշումից:

1.2. ՄՏՀ դասընթացի ուսումնասիրության առարկան

ՄՏՀ դասընթացի ուսումնասիրության առարկան ընդգրկում է երկու կարևոր բաղադրամաս.

ա) միջազգային տնտեսական հարաբերությունները,

բ) ՄՏՀ-ի իրացման մեխանիզմը:

Միջազգային տնտեսական հարաբերությունները թեպետ գոյություն են ունեցել դեռևս համաշխարհային տնտեսության կազմավորումից առաջ, այնուամենայնիվ, դրանք կրել են միջերկրային, նեղ տարածաշրջանային բնույթ: Համաշխարհային տնտեսության կազմավորումից հետո այն ձեռք է բերել գլոբալ բնույթ: ՄՏՀ-ն ժայռատիճան բարդ և արագ շարժվող համաշխարհային տնտեսության համակարգի տարր է: Համաշխարհային տնտեսության կազմավորման (XIX դարի վերջին և XX դարի սկզբին) գործընթացների ավարտից հետո միայն հնարավոր դարձավ միջազգային տնտեսական հարաբերությունները քննարկել որպես նրա անբաժանելի մաս: Համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող արմատական

փոփոխություններն անխուսափելիորեն իրենց կնիքն են դնում ՄՏՀ-ի վիճակի և բնույթի վրա:

Միջազգային տնտեսական հարաբերություններն առաջանում են տարբեր երկրների, դրանց տարածաշրջանային միավորումների, առանձին ֆիրմաների ու կազմակերպությունների միջև նյութական, աշխատանքային ու ֆինանսական ռեսուրսների, ինչպես նաև տարբեր տեսակի ծառայությունների միջազգային շարժման ժամանակ: ՄՏՀ-ն տարբեր երկրների ազգային տնտեսությունների միջև բազմազան տնտեսական կապերի (գիտատեխնիկական, արտադրական, առևտրային, արժույթաֆինանսական, վարկադրամական և այլն) համակարգ է, որը հիմնված է աշխատանքի միջազգային բաժանման վրա:

ՄՏՀ-ն օբյեկտիվորեն կապված է աշխատանքի միջազգային բաժանման (ԱՄԲ), արտադրության և գիտության միջազգային մասնագիտացման, տնտեսական կյանքի միջազգայնացման, ազգային տնտեսությունների բացության աստիճանի բարձրացման, ինչպես նաև դրանց սերտաճման գործընթացների հետ: Դրանցից առաջնայինն աշխատանքի միջազգային բաժանումն է, որի զարգացումն ու խորացումը կախված է բնական և ձեռքբերովի, ինչպես նաև սոցիալական, ազգային, քաղաքական, իրավական և այլ գործոնների հետ: Աշխատանքի միջազգային բաժանման բնական պայմանը երկրների միջև բնական հարստությունների անհամաչափ բաշխումն է և բնակլիմայական պայմանների խիստ տարբերությունները: ԱՄԲ-ի սոցիալական բնույթը որոշվում է արտադրության միջոցների սեփականության բնույթով: Վերջիններս նաև ՄՏՀ-ի սուբյեկտներ են: Նման պայմաններում հակասություն է առաջանում սեփականության ազգային պետական առանձնացվածության և արտադրության միջազգայնացման միջև, որը լուծվում է սեփականության միջազգայնացման միջոցով: Արդյունքում ձևավորվում են միջազգային, միջպետական և միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների սեփականություններ:

Ասվածից հետևում է, որ ՄՏՀ-ի ծագման և զարգացման օբյեկտիվ հիմքն աշխատանքի հասարակական բաժանումն է, մասնավորապես դրա բարձրագույն ձևը՝ աշխատանքի միջազգային բաժանումը: Վերջինիս խորացումը հասցրել է նրան, որ ՄՏՀ-ի ոլորտ են ընդգրկվել աշխարհի բոլոր երկրները, որոնց միջև տնտեսական հարաբերությունները դարձել են բազմակողմ ու բազմաբնույթ:

Ըստ այդմ՝ ձևավորվել է գլոբալ միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգ, որի զարգացումը չի կարող տեղի ունենալ առանց հակասությունների, քանի որ վերջիններս ամեն մի երևույթի (այդ թվում՝ ՄՏՀ-ի) զարգացման հիմնական գործոն են: Ընդ որում՝ ՄՏՀ-ն ուսումնասիրում է ոչ միայն ցանկացած տնտեսական, այլ առավել հաճախ կրկնվող, բնորոշ, կայուն և որոշիչ հարաբերությունները:

ՄՏՀ-ն, որպես մարդկային գործունեության հարաբերականորեն ինքնուրույն ոլորտ, ունի մի շարք առանձնահատկություններ: Դրանցից են՝

1) ՄՏՀ-ն ընդգրկում է ազգային սահմաններից դուրս նշանակալի տարածքներ, ներառում լրացուցիչ ռեսուրսներ,

2) երկրների միջև տեղի է ունենում ռեսուրսների, արտադրության գործոնների և արտադրված արդյունքների տեղափոխություն,

3) ՄՏՀ-ի ոլորտում գործում են հատուկ մեխանիզմներ և գործիքներ (ֆինանսական, արժութային, մաքսային և այլն), որոնք ապահովում են աշխարհատնտեսական բոլոր տեսակի կապերի իրականացումը,

4) ստեղծվել են հատուկ կառույցներ, այդ թվում՝ միջազգային, որոնք մեծապես նպաստում են երկրների միջև տնտեսական կապերի իրականացմանը:

Ժամանակակից ՄՏՀ-ի բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ նրա ինտենսիվ զարգացումն է, որը պայմանավորված է՝

- արտադրության միջազգայնացմամբ,
- ԳՏԱ-ով,
- տարածաշրջանային ինտեգրացման զարգացմամբ,
- գլոբալ հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

Տվյալ երկրի տնտեսական հարաբերությունների ամբողջ համակարգում ՄՏՀ-ն հանդես է գալիս որպես «երկրորդային», այսինքն՝ ածանցյալ հարաբերություններ ներազգային տնտեսական հարաբերությունների նկատմամբ, թեպետ ժամանակակից պայմաններում դրանք դառնում են ավելի ընդգրկուն և վճռական ազդեցություն ունենում ոչ միայն առանձին ազգային տնտեսության, այլև ողջ համաշխարհային տնտեսության զարգացման ընթացքի վրա:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ցանկացած երկրի բնակչության ժամանակակից պահանջմունքների բավարարումը գործնականում հնարավոր չէ առանց ՄՏՀ-ի: Բազմաթիվ և բազմատե-

սակ ապրանքներ այսօր հնարավոր չէ արտադրել առանց այլ երկրների ուժերի և միջոցների միջազգային միավորման, քանի որ ոչ միայն արտադրության ծախսերն են մեծացել, այլև դրանց ստացման համար անհրաժեշտ օգտագործվող՝ աշխարհի տարբեր ծագերում տեղաբաշխված զանազան ռեսուրսները: Ոչ մի երկիր չի կարող հենվել միայն սեփական ռեսուրսների վրա և դրանցով արտադրել ու բավարարել իր ժողովրդի՝ մշտապես աճող պահանջ-մուկները: Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր փոքր թե մեծ երկիր կիրառի աշխատանքի միջազգային բաժանման ընձեռած առավելությունները՝ այդ ճանապարհով կրճատելով իր երկրում արտադրվող արտադրանքի արտադրության ծախսերը, տնտեսի ռեսուրսներ և ապահովի իր ժողովրդի ամենատարբեր պահանջմուկները: Ասվածը վկայում է, թե ինչ տեղ և դեր ունի ՄՏՀ-ն յուրաքանչյուր երկրի տնտեսական զարգացման գործում: Տարբեր ժամանակներում սեփական ուժերի վրա հենվելու փորձը դրական արդյունք չի տվել: Սակայն այսօր հնարավոր չէ աշխարհում մատնանշել որևէ երկիր, որն ունենա լրիվ տնտեսական անկախություն:

Այսպիսով, ցանկացած երկրի ազգային տնտեսության զարգացման գործում որոշիչ դեր են խաղում արտաքին տնտեսական գործոնները, հատկապես՝ ՄՏՀ-ի բազմազան ձևերը, որոնց նշանակությունը շատ մեծ է փոքր երկրների համար: Արտաքին տնտեսական գործոնների դերը բոլոր երկրների տնտեսական զարգացման գործում այսուհետ էլ ավելի է բարձրանալու: Տվյալ երկրի տնտեսական աճի գործում արտաքին տնտեսական գործոնների դերը գնահատելու համար կիրառվող ցուցանիշներից կարևոր են բնակչության մեկ շնչի հաշվով տվյալ երկրի արտաքին ապրանքաշրջանառության և արտերկրների ներդրումների ծավալները:

Ամբողջ աշխարհի և առանձին երկրների (այդ թվում՝ ՀՀ-ի) մեկ շնչի հաշվով արտաքին առևտաշրջանառության ծավալի միջին ցուցանիշի շարժընթացը բնութագրվում է ներքոհիշյալ աղյուսակի տվյալներով:

Մեկ շնչի հաշվով արտաքին առևտրաշրջանառության ծավալի միջին ցուցանիշի շարժընթացը աշխարհում և առանձին երկրներում (նաև ԴԴ-ում) 1995, 2000 և 2005 թթ.

(ԱՄՆ դոլար)¹

Տարիներ	Աշխարհում	Երկրներ						
		ԱՄՆ	Գերմանիա	Ճապոնիա	Ֆրանսիա	Մեծ Բրիտանիա	Ռուսաստան	ԴԴ
1995	1761	5079	12171	6232	9793	8741	1027	295
2000	2133	7269	12544	6317	10187	10397	1035	371
2005	3249	8688	21271	8153	15002	14799	2579	867

Աղյուսակի տվյալները վկայում են, որ ինչպես ամբողջ աշխարհի, այնպես էլ առանձին երկրների արտաքին ապրանքաշրջանառության ծավալը մեկ շնչի հաշվով զգալիորեն մեծացել է: Հարկ է նշել նաև, որ այդ ցուցանիշի աճը և շրջանառվող ապրանքների անվանացանկի ընդլայնումը խոշոր ներդրումներ պահանջող, հետևողական և երկարաժամկետ տնտեսական ռազմավարության արդյունք են:

Բնակչության մեկ շնչի հաշվով միջին ցուցանիշը կիրառելի է նաև կապիտալի միջազգային միգրացիան գնահատելու համար: Ամբողջ աշխարհի և առանձին երկրների ՕՌԲ-ների (արտահոսք+ ներհոսք) մասին պատկերացում են տալիս թիվ 2 աղյուսակի տվյալները:

¹ Աղյուսակում բերված տվյալները հաշվարկելու համար հեղինակի կողմից օգտագործվել են տեղեկատվական հետևյալ աղբյուրները.

- <http://imfststatistics.org>,
- <http://en.wikipedia.org/wiki/World-population>,
- <http://www.census.gov/cgi-bin/ipc/dbsprd>,
- IFS, 2006 November,
- IFS (International Financial Statistics) November 2006
- Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք, Եր., 2003, էջ 510, 511, 540, 541, 542, 543, 546:
- Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք, Եր., 2006, էջ 513, 514:

Մեկ շնչի հաշվով ՕՈՒՆ-ների միջին ծավալը աշխարհում և մի շարք երկրներում (Նաև ՀՀ-ում) 1995, 2000 և 2005 թթ.

(ԱՄՆ դոլար)²

Տարիներ	Աշխարհում	Երկրներ						
		ԱՄՆ	Գերմանիա	Ֆրանսիա	Ֆրանսիա	Մեծ Բրիտանիա	Ռուսաստան	ՀՀ
1995	112	586	632	180	682	1221	18	8
2000	437	1747	3283	313	3679	6161	40	39
2005	263	400	959	380	3365	4364	196	92

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ մի շարք զարգացած երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով ՕՈՒՆ-ները մինչև 2000 թ. աճել են, իսկ դրանից հետո՝ նվազել:

Տվյալ երկրի տնտեսական աճի գործում արտաքին գործոնների դերը գնահատելու համար օգտագործվում են նաև արտահանման ու ներմուծման, ինչպես նաև արտերկրներում ներդրումների ներհոսքերի և արտահոսքերի քվոտաները:

Վերոհիշյալ ձևերի հաշվարկվող ցուցանիշների մի մասը կիրառելի է նույնիսկ աշխատուժի միջազգային միգրացիայի ուսումնասիրման և գնահատման համար:

Ինչպես ամեն մի հարաբերություն, այնպես էլ ՄՏՀ-ն դրսևորվում է որոշակի շահերի (համաշխարհային, խմբային, ազգային և անհատական) միջոցով:

Համաշխարհային կամ համամարդկային շահերը կապված են մարդկային հասարակության օբյեկտիվ տնտեսական պահանջ-մունքների բավարարման հետ: Խմբային շահերը այս կամ այն

² Աղյուսակը կազմվել է տեղեկատվական հետևյալ աղբյուրների հիման վրա.

- <http://imfstatistics.org/imf/ImfBrowser.aspx>,
- International Financial Statistics (IFS) 2006,
- UNCTAD database,
- UNCTAD, FOI/TNC database,
- ՀՀ-ի վիճակագրական հաշվեկշիռը, Եր., 1996,
- Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք, Եր., 2002,
- Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք, Եր., 2006:

երկրների խմբի ընդհանուր շահերն են, որոնք թելադրվում են միջպետական հարաբերություններով, ինչպես նաև տարածաշրջանային առանձնահատկություններով: Օրինակ, «Նավթ արտահանող երկրների կազմակերպության» հիմնական նպատակը մասնակից պետությունների շահերի պաշտպանությունն է: Ազգային և անհատական շահերը առանձին պետությունների ու դրանց այն տնտեսավարողների շահերն են, որոնք իրականացնում են արտաքին տնտեսական գործունեություն: Այդ շահերի երեք խմբերին էլ բնորոշ են ինչպես ընդհանրությունները, այնպես էլ հակասությունները: Դենց դա է պատճառը, որ ՄՏԴ-ն ոչ միայն համագործակցության, այլև մրցակցային պայքարի ոլորտ է: Դրանցից առաջնայինն իհարկե համագործակցությունն է, քանի որ ներկա դարաշրջանի հիմնական գիծը դարձել է երկրների համագործակցության միտումը, փոխադարձաբար միմյանց հասկանալը, միասնական, փոխադարձ կապերը և ընդհանուր շարժումը:

Միջազգային տնտեսական հարաբերությունները կախված են վերնաշենքային բնույթի հարաբերություններից: Այն հզոր լծակ է պետությունների արտաքին տնտեսական քաղաքականությունների իրականացման գործում: Յուրաքանչյուր պետության արտաքին տնտեսական քաղաքականությունը ենթադրում է նրա ռազմավարական նպատակներն իրականացնող՝ ամբողջությամբ վերցրած արտաքին տնտեսական հարաբերություններում: Ընդ որում՝ պետության արտաքին տնտեսական քաղաքականությունը սերտ կապի մեջ է նրա ներքին տնտեսական քաղաքականության հետ: Վերջինիս բովանդակությունը որոշվում է տվյալ երկրում ձևավորված հասարակական հարաբերություններով, արտադրողական ուժերի զարգացման մակարդակով, վերարտադրական գործընթացների ընդլայնման խնդիրներով: Պետությունների արտաքին տնտեսական քաղաքականությունների վրա էական ազդեցություն են ունենում համաշխարհային տնտեսության մեջ (իետևպես՝ ՄՏԴ-ի համակարգում) տեղի ունեցող այնպիսի երևույթներ, ինչպիսիք են համաշխարհային շուկայում մրցակցային պայքարի սրումը, ազգային արժույթի փոխարժեքի ապակայունացումը, պետությունների վճարային հաշվեկշիռների խրոնիկական անհաշվեկշռվածությունները, զարգացող երկրների՝ օրեցօր աճող արտաքին պարտքը, Արևելյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ-ի երկրներում տնտեսական ու քաղաքական անկայունությունը և այլն: Միջազգային տնտեսա-

կան հարաբերություններն անմիջական կախման մեջ են քաղաքական հարաբերություններից, քանի որ պետությունները ցանկացած պահի այն օգտագործում են որպես իրենց արտաքին քաղաքականությունների իրականացման հզոր միջոց: Այլ կերպ ասած՝ ժամանակակից պայմաններում տեղի է ունենում միջազգային տնտեսական հարաբերությունների քաղաքականացում, որը դրսևորվում է երկրի արտաքին տնտեսական քաղաքականության գիծը մշակելու և իրագործելու ժամանակ: Տնտեսական հարաբերությունները օգտագործվում են քաղաքական նպատակներ իրականացնելու համար: Այստեղից պետք է եզրակացնել, որ ՄՏՀ դասընթացի ուսումնասիրության առարկան արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման հարաբերություններն են, դրանք կարգավորող օբյեկտիվ տնտեսական օրենքներն ու կատեգորիաները, որոնք օգտագործվում են նաև երկրների արտաքին տնտեսական քաղաքականությունների իրականացման համար:

ՄՏՀ-ն սերտորեն կապված է շուկայական տնտեսության և դրան բնորոշ հիմնական հատկանիշների հետ, որը պայմանավորված է աշխատանքի միջազգային բաժանմամբ և տարբեր մակարդակներով (միկրո-, մակրո- և վերազգային) նրա տնտեսավարող սուբյեկտների տնտեսական առանձնացվածությամբ:

ՄՏՀ-ի՝ որպես զարգացած շուկայական տնտեսության ոլորտի հիմնական հատկանիշներից են.

1. ՄՏՀ-ի մասնակիցները միմյանցից առանձնացված են, որոնք միջև տնտեսական կապերը հիմնականում հանդես են գալիս ապրանքադրամական հարաբերությունների ձևով:

2. ՄՏՀ-ում գործում են պահանջարկի և առաջարկի օրենքները, ազատ գնագոյացումը և մրցակցությունը:

3. Ապրանքների, ծառայությունների և արտադրության գործոնների միջազգային տեղաշարժերը տեղի են ունենում փողի, հաշվարկների համակարգի, ապրանքային վարկերի, արժուքային հարաբերությունների միջոցով: Ապրանքային շուկաների հետ միասին գործում են ֆինանսական, աշխատուժի և տեղեկատվության համաշխարհային շուկաները:

4. ՄՏՀ-ն ունի իր սեփական ենթակառուցվածքները, որոնք հանդես են գալիս տնտեսական, ֆինանսավարկային հիմնարկությունների ու կազմակերպությունների ձևով, ինչպես միջազգային, այնպես էլ տարածաշրջանային նշանակությամբ:

Դասընթացի ուսումնասիրության երկրորդ բաղադրամասը ՄՏՀ-ի իրացման մեխանիզմն է, որը ներառում է ՄՏՀ-ի իրացումն ապահովող իրավական նորմերն ու միջոցները (գործիքները), միջազգային տնտեսական պայմանագրերը (համաձայնագրերը), օրենսգրքերը և միջազգային ու տարածաշրջանային տնտեսական կազմակերպությունների համապատասխան ծառայությունները, որոնք ուղղված են միջազգային տնտեսական հարաբերությունների իրացմանն ու զարգացմանը:

ՄՏՀ-ի իրացման մեխանիզմը թելադրվում է կապերի շուկայական բնույթով և սկզբունքորեն չի տարբերվում երկրի ներսում գործող տնտեսական հարաբերությունների իրացման մեխանիզմից: Դրա մասնակիցների գործունեության մեխանիզմը մարքեթինգային մոտեցումն է. արտահանողը նախապես պետք է ստույգ իմանա գնորդի պահանջները, շուկայի իրավիճակը և հեռանկարները: Իսկ դրա համար անհրաժեշտ է ուսումնասիրել, զնահատել և կանխատեսել ներմուծող երկրի մակրոտնտեսական միջավայրի պայմանները (տնտեսական, բնակլիմայական, էկոլոգիական, սոցիալ-տնտեսական, իրավական, հոգեբանական, քաղաքական և այլն), որոնց ըստ ամենայնի բնութագրումը հնարավորություն կտա ճիշտ կանխատեսել արտահանվող ապրանքի նկատմամբ հնարավոր պահանջարկը, արտարժույթով հասույթի գումարը և այլն:

Արտահանման գործարքի արդյունավետ իրականացման համար մատակարարը պետք է մշակի ապրանքների շարժման տարբերակները, տեղափոխման (պահեստավորման) եղանակներն ու երթուղիները, իր երկրի և ներմուծող ֆիրմայի երկրի ենթակառուցվածքների օգտագործման հնարավորությունները, միջնորդների ընդգրկման նպատակահարմարությունը, իսկ անհրաժեշտության դեպքում ստեղծի իրացման իր սեփական առևտրային ներկայացուցչությունը՝ համապատասխան խանութներով, պահեստներով և այլն: Գովազդը, գների քաղաքականությունը, հաշվարկների համակարգը և առևտրային վարկերը պետք է ստեղծեն այնպիսի պայմաններ, որոնք գրավիչ լինեն ինչպես արտերկրների, այնպես էլ հայրենական սպառողների համար:

Արտաքին տնտեսական գործունեության կարևորագույն բաղադրիչներից մեկը մրցակցության վերլուծությունն է: Միջազգային շուկայում պետք է բացառվի անբարեխիղճ մրցակցությունը, և շուկայի այս կամ այն մասնակցին հնարավորություն չտրվի չարա-

շահելու իր գերիշխող դիրքը: Դա խիստ անհրաժեշտ է, քանի որ միջազգային շուկայում մրցակցության ծավալները մեծ են, կոշտ և ավելի կործանարար, քան ներքին շուկայում: Մրցակից ֆիրմաների արտադրանքների մրցունակությունը բացահայտելու և գնահատելու, դրանց համեմատական առավելությունները ճիշտ որոշելու համար պետք է ուսումնասիրել ոչ միայն մրցակիցների արտադրատեսակներն իրենց սպառողական հատկանիշներով, այլ նաև մրցակցող ֆիրմաների գործունեության ընդհանուր պատկերը՝ մրցակցի տնտեսական և ֆինանսական դրությունը, վարկանիշը, նպատակը, արտաքին գործունեության և կառավարման առանձնահատկությունները, կիրառվող մարքեթինգային մեթոդները և այլն:

ՄՏՀ-ի իրացման մեխանիզմը պահանջում է մշակել նոր արտադրանքի ստեղծման հայեցակարգ՝ ելնելով նրա կենսափուլի ցուցանիշներից:

Գնագոյացման արդյունավետ քաղաքականություն իրականացնելու համար էլ ավելի պետք է կատարելագործել ՄՏՀ-ի շուկայական մեխանիզմը, քանի որ համաշխարհային ապրանքային շուկաների գներն ազգային տնտեսություններում ծառայում են որպես ներքին գների ձևավորման կարևոր չափանիշ:

ՄՏՀ-ի մեխանիզմի էական կողմերից մեկը տեղեկատվության միջավայրն է: Առևտրատնտեսական գործարքների ժամանակ մասնակիցներից պահանջվում է խիստ վստահելի և համեմատելի տեղեկատվություն: Դա հատկապես անհրաժեշտ է երկարաժամկետ արտադրական և գիտատեխնիկական կապերի սահմանման, համատեղ գործունեության կազմակերպման, ներդրումային նախագծերի իրականացման, գործընկեր ֆիրմաների ընտրության ժամանակ:

ՄՏՀ-ի մեխանիզմի առանձնահատկությունները պայմանավորված են՝

ա) համաշխարհային տնտեսության լայնածավալ մասշտաբներով, որոնք բարդացնում են տրանսպորտային հիմնախնդիրը, մեծացնում՝ ծախսերը,

բ) արտադրության որոշ գործոնների ցածր շարժունակությունը կամ դրա բացակայությունը: Վերջինս վերաբերում է հողին, բնական ռեսուրսներին, հանքավայրերին և այլն: Ռեսուրսների շարժման վրա ազդում է նաև պետական միջամտությունը,

գ) ազգային արժույթները դժվարացնում են հաշվարկները արտաքին տնտեսական գործարքների գծով, որի համար պահանջվում է արտահանող և ներմուծող երկրներում ունենալ արժութային շուկաներ,

դ) արտադրանքի միջազգային ստանդարտացման և սերտիֆիկացման պահանջների կատարումը ենթադրում է մեծ չափերի հասնող լրացուցիչ ծախսեր:

ՄՏՀ-ի մեխանիզմի առանձնահատկությունները պայմանավորված են նրանով, որ կապված են տնտեսական կապերի միջազգային բնույթով, տերիտորիալ հեռավորություններով, արժութաֆինանսական գործիքների օգտագործմամբ և այլն:

Այսպիսով, և՛ արտահանողները, և՛ ներմուծողները պետք է ներդնեն արտաքին տնտեսական գործունեության կազմակերպական այնպիսի ձև, որը հաշվի առնի ինչպես ՄՏՀ-ի մեխանիզմի վերոհիշյալ առանձնահատկությունները, այնպես էլ ռիսկի գործոնը: Վերջինս խիստ կապված է գործընկեր-երկրի տնտեսական, առևտրային և քաղաքական անկայունության հետ: Ռիսկի գործոնի նշանակությունն ավելի է մեծանում ՄՏՀ-ի՝ համեմատաբար խոր ձևերի ժամանակ:

1.3. ՄՏՀ-ի օբյեկտները և սուբյեկտները

ՄՏՀ-ի օբյեկտներ են՝

➤ Ապրանքները և ծառայությունները, որոնք շրջանառում են միջազգային առևտրում: Հատկանշական է, որ ապրանքային հոսքերն ունեն կայուն և մասշտաբային բնույթ, լայն տեսականի՝ տարբերակված ըստ որակի և այլն: Միայն ապրանքների միջազգային ապրանքաշրջանառության ծավալը 2000 թ. կազմել է 12 տրլն 953 մլրդ, 2005-ին՝ 20 տրլն 957 մլրդ ԱՄՆ դոլար³:

➤ Արտադրության գործոնների տեղաշարժը երկրների միջև: Դրանց մեջ մտնում են կապիտալի շարժը տարբեր ձևերով, աշխատուժի միջազգային միգրացիան, մտավոր սեփականության օբյեկտների փոխանակումը և այլն: Այլ խոսքով՝ ՄՏՀ-ի օբյեկտ են

³ Աղբյուրը՝ IFS (International Financial Statistics), November, 2006.

նաև այն ռեսուրսները, որոնք ներգրավվում են միջազգային փոխանակման մեջ:

➤ Երկրների և միջազգային կազմակերպությունների բազմակողմ և բազմազան համագործակցությունը գլոբալ բնույթի հիմնախնդիրների լուծման գործում:

ՄՏՀ-ի սուբյեկտներն են՝

➤ տարբեր երկրների մասնավոր ֆիրմաները, ձեռնարկությունները և առանձին քաղաքացիները, որոնք իրականացնում են արտաքին տնտեսական գործառնություններ, որոնց համար ներքին ու արտաքին շուկաների միջև չկան սկզբունքային տարբերություններ (միկրոմակարդակ),

➤ տարբեր մակարդակների պետական մարմինները՝ կենտրոնական, տարածքային, մունիցիպալ և այլն (մակրոմակարդակ),

➤ պետական ձեռնարկությունները և կազմակերպությունները,

➤ միջազգային կազմակերպությունները, վերազգային կորպորացիաները, որոնց դերը հատկապես մեծ է կապիտալի, ֆինանսավարկային և արտարժութային ռեսուրսների շուկաներում (վերազգային մակարդակ):

Այլ կերպ ասած՝ ՄՏՀ-ի սուբյեկտներ են համարվում տնտեսապես առանձնացված կողմերը, որոնք իրականացնում են միջազգային փոխանակություն:

ՄՏՀ-ի օբյեկտների և սուբյեկտների թվարկումից հետո պարզ է դառնում, որ միջազգային տնտեսական հարաբերություններն իրականացվում են ինչպես աշխատանքի միջազգային բաժանման մեջ ձեռնարկությունների ու կազմակերպությունների մասնակցության գործընթացներում, այնպես էլ արտադրության միջազգային կոոպերացիայի արդյունքում: Այսինքն՝ ՄՏՀ-ի ուսումնասիրության առարկան միջազգային տնտեսական գործընթացներում համաշխարհային տնտեսության սուբյեկտների և օբյեկտների (որոնք միմյանց հետ կապված են փոխադարձորեն) մասնակցության ընդհանուր գծերի և առանձնահատկությունների հետազոտությունն է:

ՄՏՀ-ի սուբյեկտները միմյանց հետ փոխադարձորեն կապված և կախված գործում են համաշխարհային տնտեսության տարբեր ոլորտներում, որի հետևանքով ձևավորվել է ՄՏՀ-ի որոշակի կառուցվածք:

1.4. ՄՏՀ-ի ձևերը. դրանց փոխադարձ կապը

Միջազգային տնտեսական հարաբերությունները ծագում ու զարգանում են որոշակի պայմաններում և դրսևորվում են բազմազան ձևերով: ՄՏՀ-ի ձևերի հարաբերակցությունը և յուրաքանչյուրի դերը մարդկային հասարակության զարգացման տարբեր փուլերում աշխարհի տարբեր երկրներում և տարածաշրջաններում նույնը չեն:

Միջազգային տնտեսական հարաբերությունները դրսևորվում են հետևյալ ձևերով.

- ապրանքների և ծառայությունների միջազգային առևտուր,
- արտադրության և գիտատեխնիկական աշխատանքների միջազգային մասնագիտացում (աշխատանքի միջազգային բաժանում),
- գիտատեխնիկական արդյունքների միջազգային փոխանակում,
- կապիտալի միջազգային միգրացիա,
- աշխատուժի միջազգային միգրացիա,
- երկրների միջև տեղեկատվական, արժույթաֆինանսական և վարկային կապեր,
- միջազգային տնտեսական ինտեգրացիա,
- միջազգային տնտեսական կազմակերպությունների գործունեություն, գլոբալ հիմնախնդիրների լուծման գործում դրանց տնտեսական համագործակցություն:

ՄՏՀ-ի սոցիալ-տնտեսական բովանդակությունը, դրանց կառուցվածքն ու ձևերը կախված են ոչ միայն աշխատանքի միջազգային բաժանման խորացումից, այլև արտադրողական ուժերի զարգացման մակարդակից և արտադրական հարաբերությունների բնույթից:

ՄՏՀ-ի ձևերի մեջ առաջինն ապրանքների և ծառայությունների միջազգային առևտուրն է, որին բաժին է ընկնում աշխարհատնտեսական կապերի ամբողջ ծավալի մոտ 80%-ը⁴: ՄՏՀ-ի հիմնական ձևերի զարգացման հեռանկարները և դերը, դրանց միջև հարաբերակցությունը կախված են աշխատանքի հասարակական բաժանման խորացումից, բարձրագույն ձևերին դրա անցումից: Նման

⁴ Տե՛ս Ե. Փ. Авдокушин, Международные экономические отношения: учебное пособие, М., 2000, էջ 52:

գործընթացները նպաստում են համաշխարհային շուկայի տարողունակության մեծացմանը և ՄՏՀ-ի ոլորտի ընդլայնմանը:

ՄՏՀ-ի բոլոր ձևերը տարբերվում են նշանակալի աճի տեմպերով: Այսպես, 1999 թ. համեմատությամբ 2000 թ. համաշխարհային ՀՆԱ-ն աճել է 2,5, միջազգային առևտուրը՝ 13, իսկ ՕՈՒՆ-ները՝ 18%-ով⁵: 2005 թվականին 2004 թ. համեմատությամբ համաշխարհային ՀՆԱ-ի իրական աճը կազմել է 4,7%, միջազգային առևտրինը՝ 12%⁶: Համաշխարհային արդյունաբերական արտադրանքի աճը 2003 թ. 2002-ի նկատմամբ կազմել է 3%:

Համաշխարհային ՀՆԱ-ն 1999-ին կազմել է 27 տրլն 358 մլրդ, 2005-ին՝ 44 տրլն 385 մլրդ ԱՄՆ դոլար⁷:

Ինչ վերաբերում է օտարերկրյա ուղղակի ներդրումներին, ապա այն 2000-ին կազմել է 2 տրլն 654 մլրդ դոլար (արտահոսք՝ 1 տրլն 244 մլրդ դոլար, ներհոսք՝ 1 տրլն 410 մլրդ դոլար), այնուհետև աստիճանաբար իջել է՝ 2005-ին կազմելով 1 տրլն 695 մլրդ դոլար, որը 2000 թ. համեմատությամբ կրճատվել է 959 մլրդ դոլարով⁸:

ՀՀ-ում ՀՆԱ-ի աճը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է՝ 1995-ին 6,9% , 2000-ին՝ 6, 2005-ին՝ 13,9: Նույն թվականներին մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմել է համապատասխանաբար 420, 637,3, 1512,6 ԱՄՆ դոլար⁹:

Նշանակալի աճ է նկատվում աշխատուժի միջազգային միգրացիայի բնագավառում. արագացվել են երկրների տարածաշրջանային ինտեգրման գործընթացները, որոշակի փոփոխություններ են կատարվում աշխարհաքաղաքական կապերի աշխարհագրական կառուցվածքում, տեղի են ունենում տնտեսական կապերի ինտենսիվացում արդյունաբերապես զարգացած երկրների միջև, փոխվում է զարգացող երկրների դերը համաշխարհային շուկաներում, իջնում է հետտոցիալիստական երկրների տեսակարար կշիռը համաշխարհային առևտրում և այլն: Այլ խոսքով՝ արդի ժամանակաշրջանում ՄՏՀ-ի համակարգում տեղի են ունենում արմատական

⁵ St'iu B. Загашвили, Ю. Шашков, Мировая торговля и международные инвестиции, МЭ и МО. 2000#8, էջ 19:

⁶ World Development Indicators database, World Bank, 1 July 2006

⁷ <http://www.combusem.com/WORLDGDP.HTM>

⁸ <http://imfstatistics.org/imf/lmf/lmf/Browser.aspx>

⁹ Վիճակագրական տեղեկագիրք, եր., 2006, էջ 212:

փոփոխություններ, որոնք հսկայական ազդեցություն են ունենում ինչպես համաշխարհային տնտեսության սուբյեկտների, այնպես էլ աշխարհատնտեսական կապերի բազմատեսակ ու բազմաբնույթ ձևերի վրա:

1.5. ՄՏՀ դասընթացի խնդիրները

ՄՏՀ դասընթացի ուսումնասիրության առավել կարևոր խնդիրներն են՝

- օգնել դասընթացն ուսումնասիրողներին՝ հստակ պատկերացնելու ՄՏՀ-ի տեսական հիմունքները, սկզբունքներն ու առանձնահատկությունները: Միջազգային մակարդակով վերջիններս արտահայտվում են տնտեսական օրենքների ձևափոխության և նոր տնտեսական կատեգորիաների հանդես գալու մեջ: Այդ կատեգորիաներից են՝ համաշխարհային տնտեսության համակարգը, համաշխարհային շուկան, համաշխարհային գինը, միջազգային արժույթային համակարգը, կապիտալի և աշխատուժի միջազգային միգրացիան և այլն,

- բացահայտել ՄՏՀ-ի էությունն ու բնույթը, դրանց տեղն ու դերը համաշխարհային տնտեսության մեջ,

- յուրացնել ՄՏՀ-ի կարևորագույն մեխանիզմներն ու մեթոդները, ձեռք բերել փորձ միջպետական տնտեսական հաղորդակցության հարաբերությունների ոլորտում տեղի ունեցող գործընթացների վերլուծությունից, որպեսզի այն օգտագործվի արտերկրների մեր գործընկերների հետ ծագող հարցերի շուրջ վարելու գործարար բանակցություններ և ընդունելու արդյունավետ որոշումներ,

- միջազգային տնտեսական հարաբերություններին վերաբերող անհրաժեշտ գիտելիքներ ունենալը պարտադիր պահանջ է հատկապես իրազեկ (գիտակ) մասնագետների համար,

- փոխանակել նոր, առաջավոր, կյանքի բոլոր ոլորտները շոշափող միջազգային փորձը, որն առանձնապես անհրաժեշտ է ազատ շուկայական հարաբերություններին անցման փուլում գտնվող մեր հանրապետությանը: Հայաստանը, որպես ինքնուրույն միջազգային սուբյեկտ, արդեն մասնակցում է աշխարհատնտեսական բազմատեսակ կապերին և աստիճանաբար ինտեգրվում է համաշխարհային տնտեսությանը:

1.6. ՄՏՀ-ի զարգացման էվոլյուցիան

ՄՏՀ-ի առաջացումն ու զարգացումն անցել են տարբեր փուլեր: Դրա ծագման առաջին փուլը կապված է եղել արտադրողական ուժերի զարգացման հետ: Վերջինս նպաստել է փոխանակության զարգացմանը, որի արդյունքում տեղի է ունեցել աշխատանքի երրորդ խոշոր հասարակական բաժանումը (առևտուրը անջատվել է արտադրությունից): Փոխանակության զարգացումը հասել է այնպիսի աստիճանի, որ միմյանց հետ առևտրական հարաբերությունների մեջ են մտել տարբեր երկրներ, առաջացել են առևտրի այնպիսի խոշոր կենտրոններ, որտեղ իրականացվել են ապրանքների առք ու վաճառք միջազգային մասշտաբով: Հենց դա էլ հիմք է դրել միջազգային տնտեսական հարաբերությունների առաջացմանը:

ՄՏՀ-ի զարգացման երկրորդ փուլը կապված է արդյունաբերական հեղաշրջման հետ, որը ձևավորել է աշխատանքի միջազգային բաժանումը, աշխատանքի ընդհանուր բաժանումից անցում է կատարվել նրա մասնակի և եզակի բաժանմանը, առաջացել են արտադրության այնպիսի ճյուղեր, որոնք հենց սկզբից կողմնորոշվել են արտադրելու առավելապես արտաքին շուկաների համար: Այդ ժամանակաշրջանում առևտրական կապիտալի տիրապետությունն աստիճանաբար իր տեղը զիջել է արդյունաբերական կապիտալին, առաջացել է կապիտալի հարաբերական ավելցուկ, որի մի մասի արտահանումը կարևոր դեր է խաղացել համաշխարհային տնտեսության կազմավորման գործում:

Երրորդ փուլը կապված է XIX դարի վերջի և XX դարի սկզբի հետ, երբ համաշխարհային տնտեսության կազմավորմամբ ՄՏՀ-ն ընդլայնեց և խորացեց իր ոլորտը, ձեռք բերեց գլոբալ բնույթ: Նշանակում է՝ ՄՏՀ-ի տարբեր ձևերը միմյանց հետ կապված են փոխադարձորեն: Այսպես, միջազգային առևտուրը, կապիտալի միգրացիան և ՄՏՀ-ի մյուս ձևերը չեն կարող իրականացվել առանց միջազգային արժույթային հարաբերությունների:

Այսպիսով, ՄՏՀ-ի ծագումն ու զարգացումն ունի ընդգրկուն պատմություն. այն ընթացել է ապրանքափոխանակության պարզ ձևերից դեպի արտադրության միջազգայնացում և երկրների տնտեսական ինտեգրման միջոցով մինչև ազգային տնտեսությունների մերձեցում: ՄՏՀ-ի զարգացումը պայմանավորում է երկրների փոխադարձ կախվածության ուժողացումը և փոխում է միմյանցից

նրանց «կախվածություն» ու «ոչ կախվածություն» հասկացությունների բովանդակությունը: Արդի դարաշրջանում երկրների տնտեսական կախվածության բացասական հետևանքների փոքրացումը դարձել է գործընկեր-երկրների տնտեսությունների փոխադարձ կապերի ուժեղացման կարևոր գործոն, իսկ կայուն կապերի խախտումը՝ կորուստ յուրաքանչյուր երկրի համար:

1.7. ՄՏՀ-ի զարգացման արդի միտումները

ՄՏՀ-ի զարգացման ժամանակակից միտումներն են՝

1. ՄՏՀ-ի բոլոր ձևերը միմյանցից տարբերվում են աճի տեմպերով:

2. Արագացվում են երկրների ինտեգրման գործընթացները:

3. Ուժեղանում են տնտեսական կապերը զարգացած երկրների միջև:

4. ՄՏՀ-ի զարգացումը տեղի է ունենում տարբեր տեսակի հասությունների պայմաններում: Այսինքն՝ ՄՏՀ-ն ձեռք է բերում մրցակցային բնույթ:

5. ՉՏԱ-ի արագացումը նոր ձևով է առաջադրում միջազգային բիզնեսի վարման եղանակների մասին հարցը, քանի որ գլոբալ տեղեկացվածությունը բավականաչափ հեշտացնում է կոմերցիոն և ընդհանուր տնտեսական հստակ տեղեկատվության ստացման հնարավորությունները:

6. Շրջակա միջավայրի ուղորտում կատարվող գլոբալ փոփոխությունները խնդիր են դնում որոնելու ֆինանսավորման այն միջոցները, որոնք պետք է ուղղվեն էկոլոգիական հիմնախնդիրների լուծմանը:

7. Բնակչության աճը և նրա մշտական տեղաշարժը: Հայտնի է՝ բնակչությունը տեղաշարժվում է աղքատության, բնապահպանական, տնտեսական և քաղաքական դրության անբավարարվածության պատճառներով:

8. Աղքատ և հարուստ երկրների տնտեսական զարգացման միջև խզման մեծացումը:

9. Աշխարհի երկրների միջև տնտեսական փոխադարձ կախվածության աճն անխուսափելիորեն տանում է իրավական, մշակութա-

յին ապրելակերպի և այլ նորմերի միասնականացման, որին դիմադրում են բնակչության այն խավերը, որոնք շահագրգռված են պահպանել ազգային և պատմական արժեքներն ու ավանդույթները:

10. Ուժեղանում է միջազգային տնտեսական կազմակերպությունների դերը պետությունների արտաքին և ներքին տնտեսական քաղաքականությունների վրա:

11. Ուժեղանում է ոչ պետական կառուցվածքային միավորների դերը միջազգային բազմաբնույթ հարցերի լուծման գործում:

1.8. ՄՏՀ-ի կարգավորումը

Միջազգային տնտեսական հարաբերությունների խորացման գործընթացներն օբյեկտիվորեն հանգեցնում են աշխարհատնտեսական կապերի բազմակողմ (պետական, տարածաշրջանային և միջազգային) միջամտությանը, այսինքն՝ կարգավորման դերի բարձրացմանը: Դրանք դրսևորվում են տնտեսական, առևտրային, վարկային, արժութային, մաքսային, վճարային միջպետական և բազմակողմ համաձայնագրերում, ինչպես նաև փաստաթղթերում:

ՄՏՀ-ի պետական կարգավորումն ամենից առաջ արտահայտվում է արտադրության գործոնների շարժունակության վրա պետական միջամտությամբ, երբ պետությունը օգտագործում է իր երկրի միգրացման կանոնները, արգելում հողի վաճառքը արտերկրացիներին, անհրաժեշտության դեպքում սահմանափակում օտարերկրյա ներդրումները և արտերկրների ֆիրմաների գործունեությունը, կիրառում հովանավորչություն արտաքին առևտրում, երկրում բացում է արժութային շուկաներ, սահմանում արժութային հսկողություն, մտցնում է արժութային այս կամ այն տեսակի համակարգ, նպաստում ապրանքների միջազգային ստանդարտացմանն ու սերտիֆիկացմանը և այլն, և այլն: Իսկ ՄՏՀ-ի միջազգային կարգավորումն անհնար է պատկերացնել առանց որոշակի ինստիտուցիոնալ ենթակառուցվածքի. այն է՝ միջազգային տնտեսական կազմակերպությունների համակարգի (Արժույթի միջազգային հիմնադրամ, Համաշխարհային բանկի խումբ, Առևտրի համաշխարհային կազմակերպություն, Աշխատանքի միջազգային կազմակերպու-

թյուն և այլն), որի մեջ մտնող յուրաքանչյուր տնտեսական կազմակերպություն կարգավորում է ՄՏՀ-ի այս կամ այն ոլորտը:

Յուրաքանչյուր առանձին երկրի արտաքին տնտեսական գործունեության կարգավորման արդյունքներն իրենց հերթին ազդում են ՄՏՀ-ի ընդհանուր վիճակի և զարգացման վրա:

Գրականություն

1. Ա. Մարկոսյան, Դ. Հախվերդյան, Գ. Նազարյան, Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Եր., 2002.
2. Թ. Թորոսյան, Միջազգային տնտեսագիտություն. ուսումնական ձեռնարկ, Եր., 2005.
3. Г. П. Овчинников, Международная экономика: учебное пособие, СПб, 1999.
4. Международные экономические отношения: учебник, под редакцией Н. Н. Ливенцева, М., «Проспект», 2005.
5. Е. Ф. Авдокушин, Международные экономические отношения: учебник, М., «Юрист», 2001.
6. С. В. Фомишин, Международные экономические отношения, Ростов-на-Дону, «Феникс», 2006.
7. Международные экономические отношения: учебник, под редакцией Б.М. Смитиенко, М., ИНФРА-М, 2007.
8. Международные экономические отношения: учебник, под общей редакцией В.Е. Рыбалкина, М., 1997.
9. Международные экономические отношения: учебник, под редакцией И.П.Фаминского, «Экономист», 2004.
10. Д.А. Шевчук, Мировая экономика: конспект лекций, Ростов-на Дону, «Феникс», 2007.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

2.1. Աշխատանքի միջազգային բաժանման էությունը

Երկրի ներսում աշխատանքի բաժանման և աշխատանքի միջազգային բաժանման (այսուհետև՝ ԱՄԲ) միջև զգալի նմանություններ կան:

Աշխատանքի բաժանմանը բնորոշ են երկու հատկություն՝ ա) *արտադրողների մասնագիտացումը որոշակի ապրանքների արտադրության մեջ, բ) այդ արտադրանքի փոխանակությունը*: Սակայն նույն առանձնահատկությունները բնորոշ են նաև ԱՄԲ-ին, միայն այն տարբերությամբ, որ վերջիններս դրսևորվում են ոչ թե առանձին երկրների ներսում, այլ տարբեր երկրների միջև: Նմանությունը միանգամայն ակնհայտ է, և սա էլ հենց հիմք է ԱՄԲ-ն որպես աշխատանքի հասարակական բաժանման դրսևորման բարձրագույն ձև դիտարկելու համար:

Թեև աշխատանքի միջազգային բաժանումն ի հայտ է գալիս երկրի ներսում աշխատանքի բաժանման հիման վրա, և տվյալ երկու տնտեսական երևույթներն իրենց կառուցվածքով բավականաչափ նման են, այնուամենայնիվ, ԱՄԲ-ն իր տնտեսագիտական բովանդակությունն ունի, որով խիստ տարբերվում է երկրի ներսում տեղի ունեցող աշխատանքի բաժանումից:

Երկրի ներսում աշխատանքի բաժանման և ԱՄԲ-ի միջև առավել ակնհայտ տարբերությունը վերջիններիս գործունեության ոլորտների յուրօրինակությունն է: Եթե երկրի ներսում աշխատանքի բաժանումն արտահայտում է որևէ կոնկրետ ազգային տնտեսության կառուցվածք, ապա աշխատանքի միջազգային բաժանումը հարաբերություններ են երկու կամ ավելի ազգային տնտեսությունների միջև:

Աշխատանքի միջազգային բաժանումը միջազգային տնտեսական հարաբերությունների էությունն արտահայտող ելակետային կատեգորիաներից մեկն է: Այն կարելի է բնութագրել որպես աշխար-

հի տարբեր երկրների միջև պատմականորեն ձևավորված առևտրական, տնտեսական և արտադրական կապերի ամբողջություն: ԱՄԲ-ն միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման որոշակի աստիճան է՝ կապված աշխատանքի հանրայնացման և արտադրության միջազգայնացման պատմական գործընթացների հետ: Աշխարհի բոլոր երկրները այս կամ այն ձևով ընդգրկված են այդ համակարգում, որը նրանց տալիս է լրացուցիչ տնտեսական խթան՝ հնարավորություն ընձեռելով նվազագույն ծախսերով բավարարել իրենց պահանջմունքները:

Աշխատանքի միջազգային բաժանումը մասնակից երկրների մասնագիտացումն է որոշակի տեսակի ապրանքների և ծառայությունների արտադրության ոլորտում: Դրա շնորհիվ էլ ձևավորվում են միջազգային մասնագիտացված ճյուղեր, որոնց արտադրանքը հիմնականում կողմնորոշված է դեպի արտաքին շուկա:

Աշխատանքի միջազգային բաժանումը XVII-XVIII դարերում հիմնականում դրսևորվում էր երկկողմ արտաքին տնտեսական կապերի ձևով, իսկ XIX-XX դարերում այն արդեն ծավալվեց ամբողջ աշխարհում:

Մինչ արդյունաբերական հեղաշրջումը (XVIII դարի վերջերից մինչև XIX դարի առաջին կեսը) աշխատանքի միջազգային բաժանումը հենվում էր բնական հիմքի՝ երկրում բնակլիմայական պայմանների, աշխարհագրական դիրքի, հումքի տարբերությունների վրա: Սակայն հետագայում աշխատանքի միջազգային բաժանման կախվածությունը բնական պայմաններից սկսեց թուլանալ: Այն առավելապես կապվածության մեջ մտավ տնտեսական զարգացման մակարդակից:

Աշխատանքի միջազգային բաժանման տնտեսական բովանդակությունն այն համատեղ արտադրության կազմակերպման եղանակն է, որի դեպքում տարբեր երկրների տնտեսությունները մասնագիտանում են որոշակի ապրանքների ու ծառայությունների արտադրության և դրանց փոխանակության վրա:

Այսպիսով, աշխատանքի միջազգային բաժանումը որոշիչ գործոն է համաաշխարհային տնտեսության և համաաշխարհային շուկայի ձևավորման ու զարգացման համար: Իր էությամբ աշխատանքի միջազգային բաժանումը նույնական է աշխատանքի հասարակական բաժանմանը, այն տարբերությամբ, որ արտադրության մասնագիտացման և կոոպերացման գործընթացները դուրս են գալիս

ազգային տնտեսության շրջանակներից: Միաժամանակ, աշխատանքի միջազգային բաժանման մակարդակը զգալիորեն ցածր է, քան համանման գործընթացը ազգային տնտեսության շրջանակներում:

Այսպես՝

1. Աշխատանքի միջազգային բաժանումը տրամաբանորեն և պատմականորեն համարվում է երկրորդային՝ ազգային տնտեսության համակարգի նկատմամբ: Ընդ որում՝ ազգային տնտեսության շրջանակներում ձեռնարկությունների մասնագիտացումը և կոոպերացումը ավելի խորն են, քան միջազգային մասշտաբով, թեպետ աշխատանքի միջազգային բաժանման մեջ երկրների ակտիվ մասնակցությունը խթանում է դրանց տնտեսությունների կոոպերացման և մասնագիտացման խորացմանը:

2. Աշխատանքի միջազգային բաժանման առանձնահատկությունն այն է, որ դրա ձևերն ու սոցիալ-տնտեսական բնույթը որոշվում է այն հասարակական հարաբերություններով, որոնք ձևավորվում են առանձին երկրների ազգային տնտեսություններում:

3. Միջազգային տնտեսական գործընթացներում աշխատանքի միջազգային բաժանման առանձնահատկությունը պետության միջամտության համեմատաբար սահմանափակ հնարավորությունն է: Պետական վարչակազմը տնտեսական գործընթացների վրա կարող է ներգործել միայն իր իրավասության շրջանակներում՝ սահմանափակված տվյալ պետության տարածքով: Այդ սահմաններից դուրս այն ուղորտն է, որտեղ հակադրվում են տարբեր ազգային շահեր, և որտեղ տնտեսական գործընթացների պետական կարգավորումը իրականացվում է միայն միջպետական համաձայնագրերի հիման վրա:

Ժամանակակից համաշխարհային տնտեսության ձևավորման հիմքում նույնպես ընկած է եղել աշխատանքի միջազգային բաժանումը: Դրա համար բնութագրական է տարբեր երկրների կապիտալների շրջապտույտի միահյուսումը, որն ընդգրկում է դրա բոլոր փուլերը, և վերափոխվում է ամբողջական ազգային կապիտալների շրջապտույտի միասեռված գործընթացների:


Գործնականում ազգային կապիտալների շրջապտույտի միջազգային միասեռման գործընթացները արտահայտվում են ազգային տնտեսությունների միջև արտադրական, առևտրային, արժութային, վարկային կապերի համակարգերի անընդհատ զարգացմամբ:

Դրանք սերտաճելով կարող են հասնել այնպիսի վիճակի, երբ առանձին ազգային տնտեսություններ չեն կարող գործել առանց մեկը մյուսի, դրանով իսկ պայմաններ ստեղծելով ազգային տնտեսությունների օբյեկտիվորեն ինտեգրման համար: Այս կամ այն տարածաշրջանում միջազգային ինտեգրումը ծագում է այն դեպքում, երբ արտադրության արդյունավետության աճի պայմաններով թելադրվող կոոպերացման ու արագ աճող միջազգային մասնագիտացման պահանջումները հակասության մեջ են մտնում այդ գործընթացների կարգավորման ազգային պետական քաղաքականության հետ: Այս հակասությունների հաղթահարման փորձերը առանձնապես ուժեղացան Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և այսօր զարգանում են ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևերով, իրենցից ներկայացնելով առանձին պետությունների այս կամ այն տնտեսական միջոցառումների ընթացիկ կոորդինացում (համաձայնեցում), միջկառավարական և տարբեր տեսակի համաձայնագրերի (կոնվենցիաների) կնքում:

2.2. Աշխատանքի միջազգային բաժանման նախադրյալները և գործոնները

Աշխատանքի միջազգային բաժանման գործընթացը պայմանավորված է տարբեր գործոններով: Վերջիններս դասակարգվում են առանձին խմբերի, որոնք սխեմատիկ ձևով կարելի է ներկայացնել գծապատկերի միջոցով:

Նշված գործոններն իրենց ազդեցությունն են թողնում աշխատանքի միջազգային բաժանման ձևերի վրա: Աշխատանքի միջազգային բաժանումը կարելի է բնորոշել որպես արդյունահանող, վերամշակող արդյունաբերական, գիտատնտեսական ծառայությունների ոլորտում իրականացվող աշխատանքների՝ ըստ երկրների կամ տարածաշրջանների մասնագիտացում: Եթե մինչ XX դարի կեսերը համաշխարհային շուկայում գերակշռում էր արդյունահանող արդյունաբերության կողմից արտադրված ապրանքների առևտուրը, ապա նույն դարի կեսերից այդ ցուցանիշը կազմեց համաշխարհային ապրանքաշրջանառության 62%-ը:



Նշված ժամանակահատվածում աշխատանքի միջազգային բաժանման վրա ազդող կարևորագույն գործոններն էին բնակլիմայական նպաստավոր պայմանները: Գիտատեխնիկական առաջընթացի շնորհիվ տեղի ունեցավ վերոհիշյալ գործոնների դերի թուլացում, որը խթան հանդիսացավ աշխատանքի միջազգային բաժանման ձևերի ներսում որակական թռիչքների համար: XX դարի երկրորդ կեսին համաշխարհային շուկայում մեծացավ վերամշակող արդյունաբերության ճյուղերի արտադրանքի տեսակարար կշիռը, իսկ պատրաստի արտադրանքի ծավալը կազմեց 60%: Աշխատանքի միջազգային բաժանման ձևերի վրա սոցիալ-տնտեսական պայմաններն ազդում են հավասարաչափ, քանի որ երկրի պատմական զարգացումը, տնտեսական մակարդակը, ազգային տնտեսության սոցիալական տեսակը, արտաքին տնտեսական կապերի իրացման մեխանիզմը զարգանում են բավականաչափ դինամիկ, և թռիչքաձև զարգացումներ չեն սպասվում:

Աշխատանքի մասնակի բաժանումը երկրների միջև աշխատանքի ճյուղային բաժանումն է: ԳՏԱ-ի ազդեցության ներքո աշխատանքի ճյուղային բաժանումը տարբերակվում է, առաջանում են նոր ճյուղեր, նոր պահանջմունքների ազդեցությամբ՝ նոր արտադրանքներ: Մասնակի բաժանման մեջ առաջատար դիրք է գրավում ներճյուղային բաժանումը, ինչպես, ասենք, մասնագիտացումը՝ քիմիական արդյունաբերությունում: Այսպես, Գերմանիան մասնագիտացել է ներկանյութերի և պլաստիկ զանգվածների արտադրության, Ֆրանսիան՝ օժանելիքի, Բելգիան՝ պարարտանյութերի արտադրության մեջ: Աշխատանքի ներճյուղային մասնագիտացումը նպաստում է արտադրանքի զանգվածային արտադրության մեծացմանը, ինչպես նաև արտադրանքի որակի ու աշխատանքի արտադրողականության բարձրացմանը:

Աշխատանքի եզակի բաժանումը ըստ տեխնոլոգիական գործընթացների և դետալային մասնագիտացման բաժանումն է: Այն կարող է հանդես գալ ներֆիրմային և միջֆիրմային բաժանման ձևով: Աշխատանքի ներֆիրմային բաժանումը իրականացվում է մի շարք գործողությունների խստագույն պահպանման հիման վրա: Այստեղ պահանջվում է մեկ ընդհանուր կենտրոնից աշխատանքների կազմակերպում և կառավարում, քանի որ աշխատանքների ներֆիրմային բաժանումը հենվում է տարբեր երկրներում արտադրանքի տարբեր մասերի արտադրության և որևէ այլ երկրում կամ երկրներում:

րից յուրաքանչյուրում պատրաստի արտադրանքի արտադրության կամ տեխնոլոգիական գործընթացների իրացման վրա:

Միջֆիրմային մասնագիտացումը իրականացվում է գործարքի մասնակիցների միջև պայմանագրերի կնքման, կապիտալ ներդրումներում մասնակցության, պատրաստի արդարանքի համատեղ առաքման ցանցի ստեղծման, համատեղ ծրագրերի մշակման ճանապարհով: Աշխատանքի միջֆիրմային բաժանման օրինակ է 150 տեղանոց ինքնաթիռի B 2500 տիպի շարժիչի արտադրությունը, որին մասնակցում են մի շարք երկրներ՝ յուրաքանչյուրը կատարելով որոշակի կապիտալ ներդրումներ: Անգլիական Ռոլս-Ռոյսը, Պռատ և Յուբնի ֆիրմաները կատարեցին այդ ներդրումների 30%-ը, ճապոնական Japaness Aeroengen-ը՝ 26%-ը, գերմանական Motoren and turbins-ը՝ 11%-ը, իտալական Fiat Avizonen ֆիրման՝ 6%-ը: Միջֆիրմային մասնագիտացման հիմնական շարժառիթը խոշոր մասշտաբի հասնող կապիտալ ներդրումներն են, որոնք անհնար է իրականացնել մի առանձին ընկերության միջոցով: Աշխատանքի եզակի բաժանումը ստեղծում է երկարաժամկետ կոոպերացված կապերի հնարավորություն, բայց համագործակցության այս ձևը պարունակում է արտադրության անընդհատության խափանման վտանգ, քանի որ քաղաքական իրավիճակի փոփոխությունները, գործադուլներն ու տնտեսական այլ անցանկալի երևույթները կարող են պատճառ դառնալ մատակարարումների ընդհատմանը: Ուստի միշտ ցանկալի է ունենալ մատակարարումների այլընտրանքային աղբյուրներ կամ որոշակի արտադրական պաշարներ:

Այսպիսով, աշխատանքի միջազգային բաժանումը փոխլրացնող արտադրությունների կազմակերպման համակարգ է, որը հենվում է ազգային տնտեսությունների մասնագիտացման վրա: Ընդ որում՝ այդ գործընթացին երկրների մասնակցությունն ունի շահադիտական նպատակ, որը թույլ է տալիս՝

- ստանալ այն տարբերությունը, որը գոյություն ունի ապրանքների արտադրության ազգային և միջազգային գների միջև,
- տնտեսել այն ծախսերը, որոնք առաջանում են որոշակի ապրանքի արտադրությունից հրաժարվելու և այլ երկրներում դրանք ավելի էժան գներով ձեռք բերելու շնորհիվ:

Տնտեսագետների շրջանում տարածված է այն կարծիքը, որ աշխատանքի միջազգային բաժանման տեմպերը ապագայում կշարունակվեն մնալ կայուն, բարձր, ուստի և կմեծանա դրանց մասնակ-

ցությունը միջազգային տնտեսական հարաբերություններին:

Ջարգացած երկրներն ավելի շատ կողմնորոշված կլինեն դեպի արտաքին շուկաներ՝ ներքին պահանջմունքները բավարարելով ներմուծման հաշվին: Ջարգացող երկրները էքստենսիվ տիպի արտադրության ճանապարհով մեծացնում են իրենց արտադրական հնարավորությունները՝ աշխատելով հիմնականում ներքին շուկայի համար և մասնակցում են համաշխարհային համագործակցությանը՝ արդյունահանվող արդյունաբերական արտադրանքի վերամշակման և իրացման միջոցով:

2.3. Արտադրության միջազգային մասնագիտացումը, կոոպերացումը և դրանց ձևերը

Աշխատանքի միջազգային բաժանումը դրսևորվում է արտադրության միջազգային մասնագիտացման և կոոպերացման ձևերով, որոնք տնտեսագիտական գրականության մեջ ներկայացվում են որպես աշխատանքի միջազգային բաժանման և՛ ձևեր, և՛ կրողներ:

Արտադրության մասնագիտացումը աշխատանքի հասարակական բաժանման ձև է, որն արտահայտվում է արտադրության գործող ճյուղերի տրոհմամբ, նորերի ձևավորմամբ, ինչպես նաև ճյուղի ներսում՝ աշխատանքի բաժանմամբ: Արտադրության մասնագիտացման խորացման կարևորագույն գործոններ են ԳՏԱ-ն և արտադրության մասշտաբների ընդլայնումը:

Արտադրության միջազգային մասնագիտացմամբ տեղի է ունենում դեպի արտաքին շուկան կողմնորոշված միատարր արտադրության կենտրոնացում մեկ կամ մի քանի երկրների տարածքում: Այդ դեպքում միատարր արտադրության համակենտրոնացման և աշխատանքի հանրայնացման հիման վրա տեղի է ունենում ազգային արտադրության տարբերակում և տեխնոլոգիական գործընթացների տարանջատում այնպես, որ ներքին պահանջարկը ետ է մնում թողարկված արտադրանքի քանակությունից, և հնարավորություն է տալիս երկրներին փոխլրացնել այդ պահանջարկը:

Արտադրության միջազգային մասնագիտացումը տեղի է ունենում երկու ուղղություններով. *արտադրական* և *տարածքային*, որը ենթադրում է երկրի կամ երկրների խմբի մասնագիտացում որևէ արտադրանքի արտադրության ոլորտում:

Արտադրության մասնագիտացումն իր հերթին լինում է՝

ա) միջճյուղային,

բ) ներճյուղային,

գ) ներարտադրական, այսինքն՝ առանձին ֆիրմաների մակարդակով:

Տարածքային մասնագիտացումը ևս հանդես է գալիս ըստ՝

ա) առանձին երկրների,

բ) երկրների խմբերի,

գ) ըստ տարածաշրջանների:

Միջազգային տնտեսական հարաբերություններ դասընթացին ավելի շատ հետաքրքրում է արտադրական մասնագիտացումը, որը հանդես է գալիս հետևյալ ձևերով.

- դետալային մասնագիտացում, որի դեպքում երկրները, առանձին ֆիրմաները մասնագիտանում են վերջնական արտադրանքի առանձին մասերի, հանգույցների արտադրության մեջ,
- վերջնական արտադրանքի մասնագիտացում, որը երբեմն անվանվում է առարկայական (պատրաստի արտադրանքի), երբ առանձին երկրները, ֆիրմաները մասնագիտանում են վերջնական արտադրանքի արտադրության մեջ,
- մասնագիտացում ըստ տեխնոլոգիական գործընթացների, երբ մասնագիտացում է ձեռք բերվում տեխնոլոգիական գործընթացի առանձին փուլի կամ փուլերի իրականացման գծով:

Արտադրության միջազգային մասնագիտացումը զարգացել է մի քանի փուլերով: XX դարի 30-ական թվականներին գերակշռում էին միջճյուղային մասնագիտացումը և խոշոր համալիր ճյուղերի արտադրանքի փոխանակումը (օրինակ, արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի գծով):

1950-1960-ական թվականներին ևս մասնագիտացումն իրականացվում էր հիմնականում ճյուղի մակարդակով, սակայն ոչ համալիր, այլ առաջնային ճյուղերի միջև (օրինակ, մեքենաշինության ներսում ավտոմոբիլաշինության և այլ ճյուղերի միջև):

1970-1980-ական թվականներից սկսած արտադրության միջազգային մասնագիտացումը ստացել է ներճյուղային բնույթ. այն իրականացվում է դետալային և տեխնոլոգիական եղանակներով: Դրա համապատասխան փոխանակության մեջ բարձրանում են կիսաֆաբրիկատների, հանգույցների տեսակարար կշիռը, իսկ ինչ վերաբերում է պատրաստի արտադրանքին, ապա փոխանակվում են

միատիպ ապրանքներ, որոնք միմյանցից տարբերվում են սպառողական հատկություններով:

Աշխատանքի միջազգային բաժանումն ունի ինչպես քանակական, այնպես էլ որակական բնութագրիչներ: Քանակական բնութագրիչներն արտահայտում են միջազգային առևտրի, արտաքին տնտեսական կապերի աճի տեմպերն ու կառուցվածքային փոփոխությունները, իսկ որակական բնութագրիչները՝ միջազգային տնտեսական հարաբերություններում ներգրավված աշխատանքների և ծառայությունների փոխանակային հարաբերությունները: Ներկայումս ապրանքների և ծառայությունների, արտադրության գործոնների միջազգային շարժին հավասար զարգանում են տրանսպորտային և տեղեկատվական ծառայությունները, զբոսաշրջությունը, հեղինակային, գիտատեխնիկական գիտելիքների վաճառքը և այլն:

Աշխատանքի միջազգային բաժանման գործում երկրի մասնակցության հարցերի ուսումնասիրության ժամանակ կարևոր տեղ է զբաղեցնում երկրի տնտեսության ճյուղերի կամ արտադրության ոլորտների միջազգային մասնագիտացման որոշումը: Առանց դրա գործնականում անհնար է գնահատել աշխատանքի միջազգային բաժանման մեջ երկրի ներդրման իրական աստիճանը, նրա ազդեցությունը վերարտադրության գործընթացների արդյունավետության վրա:

Արտադրության միջազգային մասնագիտացման մեջ ճյուղերի, արտադրության ոլորտների (նաև ծառայությունները, գիտական հետազոտությունների արդյունքների առևտուրը և այլն) մասնակցությունը բնութագրող ցուցանիշ է արտահանման մեջ այդ արտադրանքի զգալի բարձր բաժինը այլ ճյուղերի արտադրանքի համեմատությամբ, ինչպես նաև տվյալ երկրի արտադրանքի մեջ արտադրության այդ ճյուղերի առավել բարձր տեսակարար կշիռը:

Երկրի մասնագիտացման մակարդակը բնութագրող ցուցանիշները մշակվել են Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպության (OECD) և ՄԱԿ-ի Արդյունաբերության զարգացման կազմակերպության կողմից, որոնք գործնականում կիրառում են աշխատանքի միջազգային բաժանմանը երկրների մասնակցության աստիճանը գնահատելու համար: Այդ ցուցանիշներից առաջինը կոչվում է մասնագիտացում ըստ մակարդակի (Մ_ձ),

որը հաշվարկվում է որպես կոնկրետ ճյուղի արտահանման ծավալի (Արտ. ծավ.) և ներքին պահանջարկի ($U_{պահ.}$) հարաբերություն.

$$U_d = \frac{\text{Արտ. ծավ.}}{U_{պահ.}} \times 100\% :$$

Երբ համարիչը զգալիորեն գերազանցում է ներքին պահանջարկին, ապա տվյալ երկրի մասնագիտացման մակարդակը բարձր է:

Հաջորդ ցուցանիշը կոչվում է ներճյուղային մասնագիտացման գործակից (U_q), որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$U_q = \frac{U - U}{U + U} \times 100\% ,$$

որտեղ՝

Ա-ն արտահանման ծավալն է, Ն-ն՝ ներմուծման ծավալը:

Այս ցուցանիշը գտնվում է [-100,+100] միջակայքում: -100-ի դեպքում երկիրը բացառապես ներմուծող է, +100-ի դեպքում՝ արտահանող: Միջանկյալ ցուցանիշները ցույց են տալիս ճյուղի մասնագիտացման մակարդակը:

Արտադրության (ճյուղի) միջազգային մասնագիտացման մակարդակի հիմնական ցուցանիշներին են վերաբերում նաև արտահանման մասնագիտացման հարաբերական գործակիցը (ԱՄՀԳ).

$$\text{ԱՄՀԳ} = \frac{U}{U_h} ,$$

որտեղ՝

U_h -ն ապրանքի (ճյուղի ամբողջ ապրանքների) տեսակարար կշիռն է երկրի արտահանման ծավալի մեջ, U_h -ն՝ ապրանքի (ճյուղի ամբողջ ապրանքների) տեսակարար կշիռը՝ համաշխարհային արտահանման մեջ:

Տվյալ գործակցի օգնությամբ կարելի է, բնականաբար, բավականաչափ մոտավոր որոշել այն ճյուղերի (ապրանքների ու ծառայությունների) շրջանակը, որոնք տվյալ երկրի համար համարվում են միջազգայնորեն մասնագիտացված: Եթե նշված հարաբերակցությունը գերազանցում է միավորը, ապա հիմքեր կան խոսելու տվյալ ճյուղի միջազգային մասնագիտացման մասին և ընդհակառակը:

Ինչ վերաբերում է արտահանման քվոտային, ապա այն կողմնորոշող ցուցանիշ է, որը բնութագրում է տվյալ երկրի շուկայի համար

ազգային արդյունաբերության բաց լինելու մասին: Արտահանման քվոտայի մեծացումը վկայում է ինչպես աշխատանքի միջազգային բաժանման մեջ երկրի մասնակցության, այնպես էլ արտադրանքի մրցունակության աճի մասին:

XX դարի 60-ական թթ. սկսած համաշխարհային տնտեսության մեջ տեղի ունեցող գործընթացները հանգեցրին աշխատանքի մասնագիտական խորացման այնպիսի մակարդակի ձևավորման, որը թույլ է տալիս աշխարհի երկրները դասակարգել (հիմք ունենալով դրանց մասնագիտացումը) 3 խմբերի՝

- 1) մասնագիտացած վերամշակող արդյունաբերության մեջ,
- 2) արդյունահանող,
- 3) մասնագիտացած գյուղատնտեսական արտադրության մեջ:

Գյուղություն ունի նաև չորրորդ խումբը, որի մեջ մտնում են այն երկրները, որոնք միաժամանակ մասնագիտացված են նշված երեք խումբ ապրանքների արտադրության մեջ: Խոսքը արդյունաբերական զարգացած երկրների մասին է՝ ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա և այլն: Վերամշակող արդյունաբերության մեջ վերը նշված երկրների կողքին ավելանում են Իտալիան և Ճապոնիան: Նշված երկրները համաշխարհային շուկա են արտահանում բարձր տեխնոլոգիական ապրանքներ, հաստոցներ ու սարքավորումներ, գյուղատնտեսական մեքենաներ, ավտոմեքենաներ, կենցաղային սարքեր, քիմիական արդյունաբերության արտադրանք և այլն: Այս երկրների շրջանակներում ևս տեղի ունի մասնագիտացում: Այսպես, ԱՄՆ-ը, Ճապոնիան, Շվեդիան, Գերմանիան և Մեծ Բրիտանիան համաշխարհային շուկային մատակարարում են ավտոմեքենաներ, Գոլանդիան, Ճապոնիան և Գերմանիան՝ կենցաղային էլեկտրատեխնիկա, Ֆրանսիան և Գերմանիան՝ օժանելիք, Գերմանիան և Իտալիան՝ կոշիկեր և այլն:

Երկրորդ խմբի երկրները Լատինական Ամերիկայի, Մերձավոր Արևելքի, Ասիայի մի շարք զարգացող երկրներն են, որոնք ունեն զգալի բնական ռեսուրսներ, հատկապես վառելիքի պաշարներ: Այդ երկրները համաշխարհային շուկա են արտահանում նավթ, գազ, ածուխ, սև և գունավոր մետաղներ, ոսկի, արծաթ: Բացի զարգացող երկրներից՝ այդ շարքում են նաև ԱՄՆ-ը, Կանադան, Ֆրանսիան, Գերմանիան և այլն:

Գյուղատնտեսական ապրանքների արտադրության զարգացումը նույնպես իր տեղն ունի Լատինական Ամերիկայի, Ասիայի, Աֆրի-

կայի մի շարք երկրներում, թեև ԱՄՆ-ը, Արևմտյան Եվրոպայի բոլոր երկրները և Կանադան ևս համաշխարհային շուկա են արտահանում գյուղատնտեսական արտադրանք: Նշված երկրների շրջանակներում Բրազիլիան մասնագիտացել է սուրճի, Արգենտինան՝ մսի, Կուբան՝ շաքարի, Զնդկաստանը և Շրի-Լանկան՝ թեյի, Ավստրալիան՝ մսի և բրդի, աֆրիկյան մի շարք երկրներ՝ բամանի և մյուս ցիտրուսների արտադրության մեջ:

Միջազգային մասնագիտացման հետ մեկտեղ տնտեսական կյանքի միջազգայնացման հիմք է դառնում նաև տարբեր երկրների ֆիրմաների միջև միջազգային կոոպերացումը, այսպես կոչված՝ միկրոտնտեսական ինտեգրումը, որի էությունն ու ձևերը ժամանակակից պայմաններում մեծապես որոշվում են մրցակցային պայքարի նոր պայմաններով:

Արտադրության միջազգային կոոպերացումը երկու և ավելի երկրների արտադրական կարողությունների միավորումն է որևէ արտադրանքի արտադրության կամ տեխնոլոգիայի կատարելագործման միասնական ծրագրի իրականացման գործում:

Արտադրության միջազգային մասնագիտացումը ենթադրում է նաև արտադրության միջազգային կոոպերացման անհրաժեշտություն, որը տարբեր երկրների մասնագիտացված ճյուղերի, արտադրությունների ու ձեռնարկությունների միջև երկարատև տնտեսական կապերի հաստատումն է, որոնք սակայն չեն հանգեցնում ձեռնարկությունների ինքնուրույնության վերացմանը: Միջազգային կոոպերացման հիմքը աշխատանքի արտադրողականության անընդհատ բարձրացումն է, որը նաև խթանում է նոր արտադրությունների, ճյուղերի և ձեռնարկությունների ձևավորումը:

Արտադրության միջազգային կոոպերացումն ունի մի շարք հատկանիշներ, որոնցով տարբերվում է արտաքին տնտեսական կապերի այլ ձևերից: Այդ հատկանիշներից են՝

Առաջին՝ համատեղ գործունեության պայմանների նախնական փոխհամաձայնեցումը, որն արտահայտվում է համապատասխան պայմանագրերի ձևով:

**Միջազգային կոոպերացման դասակարգումն
ըստ հիմնական հատկանիշների**

<i>Դասակարգման հատկանիշները</i>	<i>Կոոպերացման բնույթը</i>
Ըստ տեսակների	Տնտեսական կոոպերացում, արդյունաբերական համագործակցություն, արտադրական կոոպերացում, գիտատեխնիկական կոոպերացում, արդյունաբերական օբյեկտների նախագծման և շինարարության կոոպերացում, իրացման ոլորտում կոոպերացում, կոոպերատիվ գործունեություն տնտեսական գործունեության այլ ասպարեզներում
Ըստ փուլերի	Նախարտադրական, արտադրական և առևտրային
Ըստ օգտագործվող մեթոդի	Համատեղ ծրագրերի կատարում, պայմանագրային մասնագիտացում, համատեղ ձեռնարկությունների ստեղծում
Ըստ կապերի կառուցվածքի	Ներֆիրմային, միջֆիրմային, ներճյուղային, միջճյուղային, հորիզոնական, ուղղահայաց և խառը
Ըստ տարածական ընդգրկման	Երկու և ավելի երկրների միջև, տարածաշրջանի սահմաններում, միջտարածաշրջանային և համաշխարհային
Ըստ սուբյեկտների թվի	Երկկողմ և բազմակողմ
Ըստ օբյեկտների թվի	Առարկայական և բազմառարկայական

Երկրորդ՝ գործունեության փոխադարձ կոորդինացումն է, որը թույլ է տալիս կողմերին՝ օպերատիվ կերպով վերակառուցել արտադրությունը՝ ելնելով ներկա պայմաններից:

Երրորդ՝ արտադրության միջազգային կոոպերացման սուբյեկտների դերում հանդես են գալիս տարբեր երկրների ձեռնարկություններ կամ ֆիրմաներ:

Չորրորդ՝ արտադրության միջազգային կոոպերացումը բնութագրվում է նրանով, որ ապրանքափոխանակությունը սերտորեն կախված է արտադրական ծրագրերի կատարումից:

Արտադրության միջազգային կոոպերացումը կարելի է դասակարգել ըստ ձևերի՝

- ա) տնտեսական,
- բ) արտադրական,

գ) ԳՏԱ կոոպերացում և արդյունաբերական համագործակցություն, որը ժամանակակից պայմաններում ամենատարածվածն է:

Արտադրության միջազգային կոոպերացումն իրականացվում է տարբեր փուլերով.

- 1) նախարտադրական կոոպերացում՝ գիտափորձնական (հետախուզական) և կոնստրուկտորական աշխատանքներում,
- 2) արտադրական կոոպերացում,
- 3) առևտրային, որը համագործակցություն է իրացման բնագավառում:

Ըստ կառուցվածքի՝ արտադրության միջազգային կոոպերացումը լինում է ներֆիրմային և միջֆիրմային:

Առաջին դեպքում համագործակցությունը տեղի է ունենում որևէ ֆիրմայի՝ տարբեր երկրներում գտնվող մասնաճյուղերի ու ստորաբաժանումների միջև: Սա հատուկ է հատկապես խոշոր վերազգային կորպորացիաներին: Երկրորդ դեպքում կոոպերացվում է տարբեր ֆիրմաների արտադրական գործունեությունը: Ներֆիրմային կոոպերացման համաձայնագիրը կարող է ներառել համագործակցությունը անձնակազմի ուսուցման և արտադրության կարգավորման, լիցենզիոն համաձայնագրերի և ֆրանչայզինգի, բուն արտադրության և արտադրանքի հետագա գնման ենթապայմանագրերի, կառավարման և մարքեթինգի պայմանագրերի, երկրաբանահետախուզական և գիտական հետազոտությունների համագործակցության գործում:

Ըստ սուբյեկտների թվի՝ արտադրության միջազգային կոոպերացումն իրականացվում է երկկողմ և բազմակողմ ձևերով:

Արտադրության միջազգային կոոպերացումն իրականացվում է տարբեր մեթոդներով.

- ա) համատեղ ծրագրերի,
- բ) պայմանագրերի,
- գ) համատեղ ձեռնարկությունների ձևով:

Համատեղ ծրագրերի իրականացումը տեղի է ունենում երկու եղանակով.

- կապալային կոոպերացման միջոցով,
- համատեղ արտադրությունների միջոցով:

Առաջին դեպքում արտադրական կոոպերացման մասնակիցները հանդես են գալիս գլխամասային ձեռնարկության կամ ֆիրմայի կապալառուի ձևով: Խոշոր ընկերությունն իր արտադրական ծրագ-

րերի կատարման մեջ ընդգրկում է համեմատաբար փոքր ֆիրմաներ, որոնք մասնագիտացված են վերջնական արտադրանքի համար առանձին դետալների և հանգույցների թողարկման մեջ: Օրինակ, ամերիկյան ավտոմոբիլային «Ֆորդ» կոնցեռնը գրեթե 25 հազար ֆիրմաներից գնում է կոմպլեկտավորող շինվածքներ և նյութեր: Երկրորդ դեպքում արտադրանքը համարվում է համատեղ աշխատանքի արդյունք և չունի որոշակի ազգային պատկանելություն: Ընկերությունների միջև համագործակցությունը հաճախ ձևակերպվում է կոնսորցիումների տեսքով:

Ռազմավարական ընկերակցություններ (այլանսներ) սովորաբար անվանվում են ներֆիրմային կոոպերացիոն համաձայնագրերը, որոնք համագործակցության այլ ոլորտների հետ մեկտեղ ներառում են նաև ապրանքների ու ծառայությունների համատեղ արտադրությունը:

Գլոբալացման արդի շրջանում, երբ ողջ աշխարհը դարձել է արտադրանքի իրացման պայքարի մրցավայր, որտեղ մրցակցությունն առավել սուր բնույթ է ընդունում, այդ պայմաններում գլոբալ շուկայում ապրանքների իրացման ընդլայնման նպատակով համագործակցությունը այլ ֆիրմայի կամ ֆիրմաների հետ արդյունավետ խթան է դառնում ցանկացած ֆիրմայի մրցակցության բարձրացման գործում:

Ռազմավարական համագործակցությունն առավել տարածված է բարդ ու գիտատար արտադրանքի արտադրության գործում, մասնավորապես՝ ավտոմեքենաների, օդանավերի, համակարգիչների, հեռահաղորդակցության սարքավորումների և այլնի արտադրության գործում: Ընկերակցությունների 12%-ը բաժին է ընկնում մեքենաշինությանը, 13%-ը՝ քիմիական արդյունաբերությանը, 6%-ը՝ համակարգիչների և դրանց դետալների արտադրությանը: Ռազմավարական համագործակցությունն առավել տարածված է ԱՄՆ-ի, ԵՄ-ի և ճապոնիայի ֆիրմաների միջև, չնայած դրանց միացել են այլ երկրների, այդ թվում՝ Արևելյան Եվրոպայի երկրների ֆիրմաները: Ընկերակցությունները ներկայումս ակտիվորեն ստեղծվում են տեղեկատվական տեխնոլոգիական համալիրում: Որպես կանոն, դրանք ջանքերը համատեղում են, որպեսզի համաշխարհային շուկայում օրըստօրե խորացող մրցակցության պայմաններում ամրապնդեն իրենց դիրքերը:

Պայմանագրային մասնագիտացում: Պայմանագրի մասնակիցների միջև արտադրական ծրագրի սահմանագատումն է, բաժանումը: Պայմանագրում կողմերը ձգտում են նվազեցնել կամ վերացնել արտադրության կրկնողությունը, բնականաբար, բացառելով մրցակցությունը շուկայում միմյանց միջև: Դա ենթադրում է նաև գիտական աշխատանքների փոխանակում:

Համատեղ ձեռնարկությունների ստեղծում: Այն արդյունաբերական համագործակցության յուրահատուկ ձև է տարբեր երկրների միջև, որևէ արտադրանքի կամ ծառայության արտադրության ոլորտում:

Համատեղ ձեռնարկություններին բնորոշ առանձնահատկություններն են.

- Գործընկերների սեփականության միավորումն ու դրա հիման վրա համատեղ ձեռնարկության ստեղծումը, արտադրանքի արտադրության և իրացման համատեղ կառավարումը, արտադրական ռիսկերի համատեղ կրումը, շահույթի բաշխումն ըստ հիմնադիր փաստաթղթերի:

- Համատեղ ձեռնարկությունը ձեռնարկատիրոջ համար կապիտալի ներդրման ձև է, որն ենթադրում է «ներդրումային միջավայրի» առկայություն, այսինքն՝ օտարերկրյա ներդրումների համար օրենսդրության, հումքի, բնական պաշարների առկայություն, որակյալ աշխատուժ, զարգացած ենթակառուցվածք, մասնավորապես՝ տրանսպորտ, կապի միջոցներ, էներգետիկ ապահովվածություն, ներքին շուկայի վճարունակություն, ազատ շուկայական հարաբերություններ, արժույթի փոխարկելիություն, երկրից արժույթով շահույթի ստացման երաշխիքներ: Այսպես, իտալական, գերմանական և ֆրանսիական ավտոմոբիլային ֆիրմաները ստեղծել են «Իվկեո» համատեղ ընկերությունը, որը միավորում է նրանց ուժերը բեռնատար ավտոմոբիլների արտադրության մեջ:

Միջազգային պրակտիկայում տարածված են համատեղ ձեռնարկությունների հետևյալ տեսակները.

ա) բաժնետիրական ընկերություն, որն իրավունք ունի հայտարարել անվանական կապիտալ (թողարկված բաժնետոմսերի ընդհանուր գումարը), բաշխված կապիտալ (այն բաժնետոմսերի գումարը, որոնք ծածկվելու են բաժանորդագրությամբ) և վճարված կապիտալը (բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում բաժնետերերի իրական ներդրումների գումարը),

բ) լրիվ պատասխանատվությամբ ընկերություններ, որոնց մասնակիցները ընկերության պարտավորությունների համար պատասխանատվություն են կրում իրենց պատկանող գույքով,

գ) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, որոնց մասնակիցները պատասխանատու են իրենց ներդրումների չափով:

2.4. Արտադրության միջազգային մասնագիտացման և ազգային տնտեսության համալիր զարգացման հիմնահարցերը

Երկրի ներսում աշխատանքի բաժանումից ԱՄԲ-ն տարբերակող առավել կարևոր առանձնահատկությունը միջազգային գործընթացների մասնակից երկրների կողմից ազգային տնտեսությունների կառուցվածքների վրա նրանց ազդեցության ուղղությունն է: Ինչպես հայտնի է, աշխատանքի ներքին բաժանման տնտեսագիտական առաջնային նպատակը տվյալ երկրի համախառն հասարակական աշխատանքի որոշակի կառուցվածքի ձևավորումն է: Այդ կառուցվածքը ենթադրում է տնտեսության առանձին ճյուղերի միջև կապիտալ ներդրումների այնպիսի տեղաբաշխում, որպեսզի հնարավոր լինի բավարարել ազգային տնտեսության հիմնական պահանջումները երկրում առկա սահմանափակ կապիտալային, բնական և աշխատանքային ռեսուրսների պայմաններում: Ներդրումների նպատակաուղղված տեղաբաշխման արդյունքում յուրաքանչյուր երկրում ձևավորվում է ազգային տնտեսությունը՝ իր բնորոշ արտադրության կառուցվածքով: Մի ճյուղում արտադրական գործունեության ժավալի յուրաքանչյուր լուրջ փոփոխություն կարող է հանգեցնել հասարակական աշխատանքի տեղաբաշխման՝ մինչ այդ ձևավորված չափաքանակների վերափոխմանը, ինչպես նաև փոխել կապիտալ ներդրումների ուղղվածությունը, առանձին ճյուղերի զարգացման տեմպերը և, վերջապես, արտադրական կամ անհատական սպառման մակարդակները:

ԱՄԲ-ի գործառական նշանակությունն այն է, որ տարբեր երկրների միջև ամուր տնտեսական կապերի հաստատման շնորհիվ ցուցաբերվի առավել բարենպաստ տնտեսական ազդեցություն

նրանց ազգային տնտեսությունների նկատմամբ: Այս ազդեցությունն արտահայտվում է նրանով, որ մասնակցությունն ԱՄԲ-ին՝ երկրին հնարավորություն է տրվելու ուժերը կենտրոնացնել այն ապրանքների վրա, որոնց արտադրության համար առկա են լավագույն պայմանները, տվյալ արտադրանքի արտադրությունն ընդլայնել այնպիսի ծավալներով, որոնք ունակ կլինեն բավարարել ոչ միայն տեղական բնակչության, այլ նաև գործընկեր-երկրների բնակչության պահանջույթները: Մյուս կողմից՝ այդ մասնակցությունը երկրին հնարավորություն է տալիս հրաժարվել այնպիսի ապրանքների արտադրությունից, որոնց համար բավարար պայմաններ չունի, և դրանց սպառումը կարող է ապահովել միայն ներմուծման ճանապարհով:

Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ երկրի ներսում աշխատանքի բաժանման և աշխատանքի միջազգային բաժանման տնտեսական արդյունքները միևնույնն են: Իսկապես, աշխատանքի հասարակական բաժանման այդ երկու ձևերն էլ իրենց ազդեցությունն են ունենում յուրաքանչյուր երկրի ազգային տնտեսության վրա, և դրանով դրանց նմանությունն ավարտվում է: Այդ ազդեցության ուղղությունները միանգամայն տարբեր են: Երկրի ներսում աշխատանքի բաժանման զարգացման պարագայում իրականացվում է ազգային տնտեսության կառուցվածքի ուղղակի վերափոխում, իսկ ԱՄԲ-ի դեպքում վերջինիս փոփոխությունները կատարվում են ոչ թե ուղղակի, այլ միջնորդավորված ձևով, այսինքն՝ ազգային տնտեսությունն ԱՄԲ-ին մասնակից մյուս երկրների պահանջույթներին համապատասխանեցնելու միջոցով:

ԱՄԲ-ի ազդեցությունն ազգային արտադրության կառուցվածքի վրա, վերջին հաշվով, հանգում է նրան, որ մասնակից երկրները պետք է ընդլայնեն արտահանմանն ուղղված արտադրությունը:

Հնարավոր է այնպիսի տարբերակ, որ երկիրն արտահանումն իրականացնի տվյալ ապրանքի ներքին սպառման կրճատման հաշվին: Այս դեպքում երկիրը ևս մասնակցում է աշխատանքի միջազգային բաժանմանը, սակայն պարտադիր չէ, որ այդ մասնակցությունը հանգեցնի երկրի ազգային տնտեսության կառուցվածքի փոփոխությանը: Եթե երկիրը տվյալ տիպի արտահանումից ստացված գումարներով գնում է այլ տիպի ապրանքներ՝ ներքին պահանջույթները բավարարելու համար, ապա այդ դեպքում տվյալ երկրի տնտեսության կառուցվածքը վերջինիս՝ ԱՄԲ-ին մասնակցության

ազդեցության ներքո, իհարկե, չի փոխվի: Այստեղ խոսքը մի ապրանքի սպառումը մյուսով փոխարինելու մասին է, այսինքն՝ ԱՄԲ-ի մասնակցության շնորհիվ կատարվում է պահանջմունքների դիվերսիֆիկացում: Անհատական սպառման պարզ դիվերսիֆիկացումը փոփոխում է ոչ թե ազգային տնտեսության կառուցվածքը, այլ միայն անհատական սպառման կառուցվածքը:

Եթե երկիրն արտահանումն իրականացնում է որևէ ապրանքի անհատական սպառման կրճատման հաշվին, իսկ ստացված գումարներով մեքենաներ ու սարքավորումներ է ներմուծում տնտեսության մյուս ճյուղերի զարգացման նպատակով, այդ դեպքում այդպիսի արտահանումն անպատճառ հանգեցնում է համախառն հասարակական արտադրության կառուցվածքի վերափոխմանը:

ԱՄԲ-ի զարգացումն անհատական սպառման կրճատման հաշվին հազվադեպ է պատահում: Ընդհակառակը, երկրներն ընդգրկվում են միջազգային տնտեսական գործընթացում այն պարզ պատճառով, որպեսզի հնարավորություն ունենան բավարարել իրենց բնակչության և տնտեսության աճող պահանջմունքներն առկա ռեսուրսների պայմաններում: ԱՄԲ-ին մասնակցությունը կարևոր միջոց է տվյալ հասարակության աճող անհատական և արտադրական պահանջմունքների բավարարման նպատակով եղած ազգային ռեսուրսների արդյունավետ ծախսման համար:

2.5. Ժամանակակից տեսությունները աշխատանքի միջազգային բաժանման վերաբերյալ

Աշխատանքի բաժանման հարցերին անդարադարձել են դեռևս անտիկ աշխարհի մտածողները: Քսենոֆոնը, օրինակ, աշխատանքի բաժանման նշանակությունը տեսնում էր աշխատանքի արտադրողականության բարձրացման մեջ, իսկ Պլատոնը աշխատանքի բաժանումը համարում էր տարբեր շերտերի գոյության, աստիճանականության պատճառ:

Աշխատանքի բաժանման գիտական տեսության հիմնադիրը Ա. Սմիթն է: Նրա «Ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների մասին» գիրքը սկսվում է աշխատանքի բաժանման մեկնաբանությամբ:

Աշխատանքի միջազգային բաժանման վերաբերյալ տեսությունները կարելի է բաժանել երկու խոշոր խմբի.

- տեսություններ, որոնք երկրների միջազգային մասնագիտացումը բացատրում են արտահանվող ապրանքների արտադրության համեմատաբար ցածր ծախսերով,
- տեսություններ, որոնք երկրների միջազգային մասնագիտացման հիմքում դնում են որոշակի ապրանքների արտադրության գծով առանձին ֆիրմաների մենաշնորհային առավելությունները:

Աշխատանքի միջազգային բաժանման դասական և նորդասական տեսությունները քննարկում են «Արտաքին առևտուր» թեմայի շրջանակներում, իսկ արդիականացման տեսությունները ներկայացվում են ստորև:

Տնտեսագիտական գրականության մեջ աշխատանքի միջազգային բաժանման արդի տեսությունները ներկայացված են երկու հիմնական ձևով՝

- ա) փոխկապակցվածության հայեցակարգի տարբերակներ,
- բ) աշխատանքի միջազգային բաժանման արդիականացման տարբեր մեկնաբանություններ:

Փոխկապակցվածության տեսությունը լայնորեն տարածվեց 1970-ականներին, որի հիմնադիրներից մեկը՝ հոլանդացի տնտեսագետ Կ.Նուվենհուզեն, աշխարհի երկրների տնտեսական համագործակցության հիմքում տեսնում էր բոլոր երկրների համար ընդհանուր բնապահպանական գործոնները՝

- շրջակա միջավայրի աղտոտվածությունը,
- բնական ռեսուրսների սահմանափակությունն ու սպառելիությունը:

Ըստ Կ. Նուվենհուզեի, այդ գործոնները այն հիմնական նպատակներն են կամ շարժառիթները, որոնք երկրներին մղում են աշխատանքի միջազգային բաժանման: Ջարգացած երկրները զարգացողներից կախված են հումքի, իսկ զարգացողները՝ զարգացած երկրներից նոր տեխնիկա և տեխնոլոգիա ներկրելու իմաստով: Դրանց միջև գոյություն ունի փոխադարձ ճնշում, ուստի և հնարավոր է դառնում առկա գործոնների հաշվին արտադրանքի փոխանակումը: Ամերիկացի տնտեսագետ Ռ. Կուպերը փոխկապակցվածության հիմնախնդիրը քննարկեց ոչ այնքան գործնական, որքան երկրի տնտեսական իրավիճակի և դրանց քաղաքականությունների

տեսանկյունից: Նա առանձնացրեց փոխկապվածության չորս կողմեր՝

1. Կառուցվածքային, ըստ որի՝ երկրները այնպես են միմյանց հետ կապված և փոխայայմանավորված, որ մի երկրում տեղի ունեցող փոփոխությունները համապատասխան տեղաշարժեր են առաջացնում նաև մյուս երկրներում:

2. Արտաքին տնտեսական քաղաքականության անհրաժեշտ կողմնորոշվածության պայմաններում երկրների վարած տնտեսական քաղաքականությունը:

3. Արտաքին տնտեսական գործոնների ազդեցությունը:

4. Քաղաքականության իրականացումը:

Ռ. Կուպերի բերած այդ փաստարկներն ավելի արդիական էին մինչև XX դարի 90-ական թվաանների սկիզբը՝ կապիտալիզմի և սոցիալիզմի գոյության պայմաններում: Համաշխարհային տնտեսության գլոբալացումը էականորեն փոխում է աշխատանքի միջազգային բաժանման՝ երկրների մասնակցության շարժառիթները, ընդ որում՝ առաջատար պետությունների կողմից քաղաքական գերակայության հասնելու՝ նախկինում տարածված միտումը հաճախ այս կամ այն երկրում քողարկվում է օգնության ծրագրերի, միջազգային տնտեսական կազմակերպությունների կողմից իրականացվող տնտեսական միջոցառումների, տնտեսական ինտեգրման գործընթացներով: Այնուհանդերձ, փոխկապվածության բավականաչափ վերացական տեսությունները հիմք հանդիսացան աշխատանքի միջազգային բաժանման արդի մոտեցումները մշակելու համար:

Արդիականացման կողմնակիցները պնդում են, որ զարգացող երկրները պետք է հրաժարվեն, այսպես կոչված՝ «հովանավոր երկրներից» և ակտիվորեն ներգրավվեն օտարերկրյա կապիտալ: Բացի դրանից, զարգացող երկրներում պետք է կենտրոնանա աշխատատար, նյութատար և ստանդարտացված ապրանքների արտադրությունը, իսկ զարգացած երկրները պետք է մասնագիտանան բարձր տեխնոլոգիաների արտադրության մեջ: Այս մոտեցումը իրական կյանքում լայնորեն տարածվեց: Լատինական Ամերիկայի, Ասիայի զարգացող երկրները «բացեցին իրենց դռները» զարգացած երկրների կապիտալի առջև, որը գլխավորապես ներդրվում է վերամշակող արդյունաբերության ճյուղերում: Աշխատանքի բաժանման այդ մոտեցումը խախտում է երկրի բնապահպանական

հավասարակշռությունը, ինչպես նաև տանում է զարգացող երկրներից հումքի և նյութերի արտահանման, որը և արագացնում է սահմանափակ ռեսուրսների սպառելու գործընթացը: Համաշխարհային շուկայում ներկայումս աշխատանքի միջազգային բաժանման ճյուղային կառուցվածքն ունի հետևյալ տեսքը՝

ա) նոր արդյունաբերական երկրները մասնագիտանում են համեմատաբար բարձր որակավորում ունեցող աշխատուժի միջոցով արտադրվող կապիտալատար ապրանքների արտադրության մեջ,

բ) զարգացող երկրներից առավել զարգացածները մասնագիտանում են նյութատար, աշխատատար ապրանքների արտադրության մեջ, իսկ հետամնաց երկրները որևէ խմբի մեջ չեն դասվում,

«Որակավորված աշխատուժի առավելության» մոդել: Ազգային տնտեսությունների զարգացման հետ մեկտեղ փոխվում են այս կամ այն ապրանքի արտադրության համար անհրաժեշտ աշխատուժի քանակն ու որակը, կապիտալի ծավալն ու բովանդակությունը: Դեռ ավելին, ժամանակի ընթացքում փոփոխության կարող են ենթարկվել նույնիսկ բնական ռեսուրսների ծավալներն ու որակական հատկանիշները (օրինակ՝ նոր հարուստ հանքավայրերի հայտնաբերում): Այս ամենի հետևանքով փոխվում են նաև հայացքները աշխատանքի միջազգային բաժանման վերաբերյալ: Մասնավորապես, տնտեսագիտական գրականության մեջ հայտնվել են, այսպես կոչված՝ աշխատանքի միջազգային բաժանման ոչ գործոնային և տեխնոլոգիական տեսություններ, որոնց մեջ զգալի տեղ է գրավում «Որակավորված աշխատուժի առավելության» մոդելը: Վերջինիս կողմնակիցների՝ ամերիկացի տնտեսագետ Դ. Կիսինգի և մյուսների կարծիքով, այդ մոդելը Հեքշեր-Օհլինի տեսակետի մոդիֆիկացված և կատարելագործված տարբերակն է, քանի որ որակավորված աշխատուժի ունեցող երկրները մասնագիտանում են այնպիսի ապրանքների արտադրության մեջ, որոնց համար ամենից շատ ծախսվում է հենց այդ գործոնը: Մոդելը ենթադրում է, որ ապրանքի արտադրությանը մասնակցում է երեք գործոն՝ *որակավորված աշխատուժի, չորակավորված աշխատուժի և կապիտալի*:

Իհարկե որակավորված աշխատուժը՝ որպես ավելցուկային գործոն, ազդում է ապրանքի գնի վրա, սակայն այն պետք է դիտարկել ոչ թե մեկուսացված, այլ կապիտալային ծախսերի հետ համադրության մեջ: Նշված հանգամանքը հաշվի առնելով միայն կարելի է խոսել աշխատանքային մեծ ծախսումներ պահանջող ապ-

րանքների արտադրության մեջ երկրների մասնագիտացման նպատակահարմարության վերաբերյալ:

«Մասշտաբից տնտեսման» մոդել: Արևմուտքում տարածված է արտադրության մասշտաբի սկզբունքի վրա հիմնված ԱՄԲ տեսությունը: Վերջինիս կողմնակիցներն են բելգիացի Դրիզեն և ամերիկացի Լ. Չաֆբաուերը: Այս տեսության համաձայն՝ երկրների միջազգային մասնագիտացման գործոն է հանդես գալիս ծախսերի տնտեսումը, որն առաջանում է մինչև որոշակի սահմանը արտադրության մասշտաբների ավելացման հետևանքով: Այս պատճառով էլ տվյալ տեսության հեղինակները կարծում են, թե միայն տարողունակ ներքին շուկա ունեցող մեծ երկրներում կարող են ներդրվել արտադրություններ, որոնց տնտեսական արդյունավետությունն ավելանում է արտադրության մասշտաբների ավելացմանը զուգընթաց:

Ինչպես նշել է Լ. Չաֆբաուերը, եթե բոլոր երկրների համար արտադրության և փոխանակման պայմանները հավասար լինեն, ապա փոքր երկրները կկարողանան խոշոր և տնտեսող ձեռնարկություններ հիմնել՝ հաշվի առնելով հավասար մրցակցային հարաբերությունների հաստատման արդյունքում արտահանման շուկաների ավելացումը: Իսկ երբ երկրների ներքին շուկաները մասամբ պաշտպանված են արտասահմանյան ապրանքների մրցակցությունից, մեծ երկրներն օգտվում են արտադրական առավելություններից (նույնիսկ այն պարագայում, երբ փոքր երկիրն առաջինն է արտադրել տվյալ ապրանքը և հիմք դրել բավականաչափ խոշոր արտադրության), քանի որ մաքսային սահմանափակումները երաշխավորում են, որ մեծ երկիրը վերջին հաշվով օգուտ կստանա թողարկման մեծ ծավալներից տնտեսման հաշվին:

Ահա թե ինչպես են մոդելի հեղինակները մեկնաբանում այն երևույթը, որ փոքր երկրները հաղթահարում են ներքին շուկաների հարաբերական սահմանափակությունն ու այլ երկրների բարձր մաքսային արգելքները՝ մասնագիտանալով մեքենաշինության, քիմիական արդյունաբերության, սև մետալուրգիայի մի շարք ապրանքատեսակների արտադրության մեջ, որոնք մեծ պահանջարկ են վայելում համաշխարհային շուկայում, չնայած դրանց բարձր գներին:

Ներճյուղային մասնագիտացման տեսական հիմնավորումը: Մինչև XX դարի կեսերը միջազգային առևտուրն ունեցել է բացա-

ռապես միջճյուղային բնույթ: Սակայն վերջին տասնամյակներում իրավիճակը սկսեց արմատապես փոխվել. արդյունաբերապես զարգացած երկրները սկսեցին ակտիվացնել առևտուրը վերամշակող արդյունաբերության ենթաճյուղերի ապրանքների գծով, այսինքն՝ միաժամանակ ներմուծում և արտահանում միևնույն ճյուղի ապրանքներ: Այսպես, ԳՖՅ-ն 1984 թ. արտահանում էր 518, ներմուծում՝ 591 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ գրասենյակային սարքավորումներ:

Միջճյուղային առևտրի զարգացումը հակասում է Յեքշեր-Օհլինի տեսությանը, քանի որ երկրներն այնպիսի ապրանքների առևտուր են իրականացնում, որոնք արտադրվում են գործոնների համանման ծախսումներով: Այդ իսկ պատճառով 1960-1970-ական թթ. արևմտյան տնտեսագիտական գրականության մեջ հայտնվեցին ներճյուղային մասնագիտացման տեսական հիմնավորումներ: Այդ նպատակով առաջարկված մոդելներից մեկը շվեդ տնտեսագետ Ս.Լինդեբերի մոդելն է: Ս. Լինդեբերն ու նրա կողմնակիցները պնդում էին, որ վերամշակող արդյունաբերության ապրանքների արտաքին առևտրի ծավալների վրա ազդում է պահանջարկը, որը որոշվում է բնակչության մեկ շնչի հաշվով ազգային եկամտի մեծությամբ: Որքան մոտ են երկու երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով ազգային եկամտի մակարդակները, այնքան առավել հավանական է, որ այդ երկրներից յուրաքանչյուրում արտադրված ապրանքները կկարողանան բավարարել դրանցից յուրաքանչյուրի բնակչության պահանջումները:

Երբեմն միջազգային առևտրի վիճակագրությունը հաստատում է Ս.Լինդեբերի տեսակետը: Օրինակ՝ մեծ է ԱՄՆ-ի և Կանադայի, ԵՄ անդամ երկրների միջև ներճյուղային առևտուրը, սակայն ամենից հաճախ միջազգային առևտրի վիճակագրությունը հակասում է տվյալ մոդելին: Նման հակասություն է նկատվում, երբ դիտարկում ենք ԱՄՆ-ի և ճապոնիայի առևտրային հարաբերությունները. թեև երկու երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով ազգային եկամտի մակարդակները գրեթե միևնույնն են. ԱՄՆ-ը ճապոնիայից ներմուծում է մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ, տեսասարքավորումներ, մոտոցիկլեր, նավթարդյունաբերական սարքավորումներ, արտահանում՝ ցորեն, եգիպտացորեն, սոյա, բամբակ և ածուխ:

Ս. Լինդեբերի մոդելի շրջանակներից դուրս է մաս ԱՄՆ-ի առևտուրը Մերձավոր Արևելքի երկրների՝ Սաուդյան Արաբիայի, Բուվեյ-

թի, Միացյալ Արաբական Եմիրությունների հետ: Թեև վերը նշված բոլոր երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով ազգային եկամտի մակարդակները գրեթե հավասար են, և նրանց միջև առևտուրն իրականացվում է ոչ թե ներծյուղային, այլ միջծյուղային մակարդակով: Երկրները միևնույն ճյուղի տարբեր ապրանքների առևտուր են իրականացնում այն պատճառով, որ դրանցից և ոչ մեկն ի վիճակի չէ կենտրոնացնել անհրաժեշտ գիտատեխնիկական ռեսուրսները՝ արտադրական և անհատական պահանջմունքների բավարարմանն ուղղված ապրանքատեսականու ողջ անվանացանկի թողարկման համար:

Իրականում, արտահանվող և ներմուծվող ապրանքները միմյանցից տարբերվում են, թեև ըստ վիճակագրության՝ դրանք կարող են խմբավորվել մեկ ճյուղում:

Ինչպես արդեն նշվեց, ԱՄԲ երկրորդ խումբ տեսությունները երկրների միջազգային մասնագիտացման հիմքում դնում են որոշակի ապրանքների արտադրության գծով առանձին ֆիրմաների մենաշնորհային առավելությունները: Ի տարբերություն առաջին խումբ տեսությունների, որոնք խրախուսում են համեմատաբար էժան ապրանքների արտադրությունը, տեսությունների այս խումբը առաջնությունը տալիս է որոշակի պահանջարկ վայելող բացառապես նոր ապրանքների արտադրությանը:

Գրականություն

1. Ա. Մարկոսյան, Դ. Հախվերդյան, Գ. Նազարյան, Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Եր., 2002:
2. Ե.Փ. Авдокушин, Международные экономические отношения: учебник, М., “Юристь”, 2002.
3. С.В. Фомишин, Международные экономические отношения, Ростов-на-Дону, “Феникс”, 2006.
4. К.А. Семенов, Международные экономические отношения: курс лекций, М., “Гарларика”, 2006.

5. Международные экономические отношения: учебник, под редакцией И.П. Фаминского, “Экономист”, 2004.
6. Международные экономические отношения: учебник, под редакцией Б.М. Смитиенко, М., ИНФРА-М, 2007.
7. Международные экономические отношения: учебник, под редакцией Н.Н. Ливенцева, М., “Прспект”, 2005.
8. Международные экономические отношения: учебник, под редакцией А.И. Евдокимова, М., “Прспект”, 2004.
9. Международные экономические отношения: учебник. под общей редакцией В.Е.Рывалкина, М., 1997.
10. Л.Е. Стповский Международные экономические отношения: учебник для ВУЗов. М., “ЮНИТИ” 2003.
11. Мировая экономика: учебник, под редакцией А.С. Булатова, М., “Юристъ”, 2005.
12. И.П. Гурова, Мировая экономика: учебник, М., “Омега-Л”, 2007.
13. Н.А. Миклашевская, А.В. Холопов, Международная экономика: учебник, М., “Дело и сервис”, 1998.
14. Г.П. Овчинников, Международная экономика: учебное пособие, СПб, 1999.
15. Доменик Сальваторе, Международная экономика: учебник, М., 1998.
16. А. Киреев, Международная экономика: в двух частях, М., 1998 и 1999.
17. В.К. Ломакин, Мировая экономика: учебник, М., ЮНИТИ, 2000.
18. Мировая экономика и международный бизнес: учебник, под редакцией В.В. Полякова и Р.К. Шенина, М., КХОРУС, 2007.
19. Ю.Ф. Симионов, О.А. Лыкова, Мировая экономика и международные экономические отношения, Ростов на Дону, “Феникс”, 2006.

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ**

**3.1. «Համաշխարհային տնտեսություն»
հասկացությունը. դրա մեկնաբանումները**

Հեռացող հազարամյակը թողեց բազում չբացահայտված տնտեսական, սոցիալական, էկոլոգիական և այլ հարցեր, որոնց հետազոտումն այսօր կարող է նպաստել ժամանակակից համաշխարհային տնտեսության արդիական հիմնախնդիրների առավել հստակ ըմբռնմանն ու վերլուծությանը:

Համաշխարհային տնտեսությունն իր ծագման և հետագա կազմավորման պահից անցել է զարգացման երկարատև ուղի՝ մշտապես նորացվելով, կերպափոխվելով և համալրվելով արդիական տարրերով, ստանալով նոր բնույթ ու բովանդակություն:

Արդեն III հազարամյակի շեմին երկրների միջև փոխկախվածությունն ու փոխապայմանավորվածությունը դրսևորվում են նաև գլոբալացման, ազգային տնտեսությունների միահյուսման ու մերձեցման, դրանց միջև պատնեշների վերացման, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային տնտեսական ինտեգրման ակտիվ գործունեության միջոցով: Աշխարհի երկրների միջև զարգացող ու խորացող տնտեսական կապերի ուսումնասիրությունը պահանջում է որոշակիացնել «համաշխարհային տնտեսություն» հասկացությունը, որի շրջանակներում էլ իրացվում են այդ կապերը:

Միջազգային տնտեսագիտության մեջ մինչև այսօր չի ձևավորվել «համաշխարհային տնտեսություն» հասկացության միասնական բնորոշում: Ստորև բերված են մի շարք սահմանումներ, որոնք թույլ են տալիս առավել ամբողջական պատկերացում կազմելու համաշխարհային տնտեսության՝ որպես միասնական տնտեսական օրգանիզմի մասին:

1. Համաշխարհային տնտեսությունն այն ազգային տնտեսությունների ամբողջությունն է, որոնք փոխկապակցված են աշխա-

տանքի միջազգային բաժանման՝ տնտեսական ու քաղաքական հարաբերությունների համակարգով¹:

2. Համաշխարհային տնտեսությունն այն ազգային տնտեսությունների ամբողջությունն է, որոնք փոխազդում են շուկայական տնտեսության տարբեր՝ մակրո- և միկրո- մակարդակներում, հենվելով մրցակցության կանոնների ու չափանիշների վրա և ապահովում են հիմնարար երկրների ազգային շահերն ու գերակայությունները²:

3. Ժամանակակից համաշխարհային տնտեսությունը գլոբալ տնտեսական օրգանիզմ է, ազգային տնտեսությունների ամբողջություն, որոնց միջև փոխկապվածությունն ու փոխազդեցությունները միջնորդավորված են միջազգային տնտեսական հարաբերություններով և ենթարկվում են շուկայական տնտեսության օբյեկտիվ օրենքներին³:

4. Համաշխարհային տնտեսությունը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգ է և ազգային տնտեսությունների այնպիսի ճյուղերի ու ոլորտների բազմություն, որոնք ընդգրկված են աշխատանքի միջազգային բաժանման մեջ, մասնակցում են միջազգային փոխանակությանը և կախված են դրանից⁴:

5. Համաշխարհային տնտեսությունն աշխարհի այն երկրների ազգային տնտեսությունների ամբողջությունն է, որոնք փոխազդեցությունների և փոխկախվածության մեջ են արտադրության գործոնների շարժի միջոցով⁵:

6. Ժամանակակից համաշխարհային տնտեսությունն հաճախ նույնացվում է միջազգային տնտեսության հետ և դիտվում որպես աշխարհի բոլոր երկրների միասնություն, որտեղ կարևորը հասուն շուկայական տնտեսության առկայությունն է՝ իր մրցակցային մեխանիզմով և դեպի գիտատեխնիկական առաջընթացն իր ուղղվածությամբ⁶:

¹ В.К. Ломакин, *Мировая экономика*, М., «ЮНМТИ», 2002, стр. 10.

² Е.Д. Халеви́нская, И. Кро́зе, *Мировая экономика: учебник*, М., «Юристь», 1999, стр. 16.

³ Е.Ф. Авдокушин, *Международные экономические отношения: учебник*, М., «Юристь», 1999, стр.22.

⁴ А.П. Кузякин, М.А. Семичев, *Мировая экономика: учебное пособие*, М., ТК, Велби, «Проспект», 2003, стр. 68.

⁵ И.П. Гурова, *Мировая экономика и международные отношения: тесты, упражнения, проблемные ситуации*, М., Изд-во «Дело», 2003, стр. 16.

⁶ В.М. Кудров, *Мировая экономика: учебник*, М., изд-во БЕК, 1999.

7. Ա.Ս. Բուլատովը համաշխարհային տնտեսությունը բնութագրում է նեղ և լայն առումներով: Մասնավորապես լայն առումով համաշխարհային տնտեսությունը դիտում է աշխարհի բոլոր ազգային տնտեսությունների միագումար, իսկ նեղ առումով՝ ազգային տնտեսությունների միայն այն մասի ամբողջություն, որոնք փոխազդեցությունների մեջ են արտաքին աշխարհի հետ⁷:

Կարելի է շարունակել բնորոշումները, սակայն բոլոր սահմանումներում նկատելի տարբերություններին զուգահեռ հանդիպում ենք հետևյալ ընդհանուր բնորոշիչներին.

- համաշխարհային տնտեսության կարևորագույն և հիմնարար տարրը ազգային տնտեսությունն է.
- համաշխարհային տնտեսությանը հատուկ է ամբողջականությունը.
- համաշխարհային տնտեսության տարրերը փոխկապակցված են ու փոխալսմանավորված:

Նշանակում է՝ օրինաչափ է, որ համաշխարհային տնտեսությունն առավել լրիվ բնորոշելու համար հարկ է այն դիտել որպես համակարգ՝ վերջինիս բնորոշ տարրերի, միմյանց միջև փոխադարձ կապերի և գործունեության նպատակի առկայության տեսանկյունից: Այսպիսով, համաշխարհային տնտեսությունը կարելի է սահմանել հետևյալ կերպ.

Համաշխարհային տնտեսությունը բարդ, գլոբալ համակարգ է, ազգային տնտեսությունների ու միջազգային տնտեսական կազմակերպությունների ամբողջություն, որոնց միջև փոխազդեցություններն ու փոխկապակցությունը միջնորդավորված են միջազգային տնտեսական բազմաբնույթ հարաբերություններով, դրանով իսկ ապահովելով ազգային պետությունների հիմնարար շահերի իրացումն ու զարգացման գերակայությունները: Ըստ այդմ՝ համաշխարհային տնտեսությունն ազգային տնտեսությունների ամբողջություն լինելով հանդերձ, դրանց պարզագույն միագումարը չէ, այլ դրսևորվում է որպես բարդ համակարգ՝ իր որոշակի կառուցվածքով և զարգացման տրամաբանությամբ: Այն հսկայական տնտեսական դաշտ է, որտեղ աշխատանքի միջազգային բաժանման խորացման պայմաններում երկրների միջև իրականացվում է սերտ, փոխալսմանավորված ձեռնարկչատիրական գործունեություն: XXI դարի

⁷ Мировая экономика: учебник, под ред. А.С. Булатова, М., «Юристъ», 2003, стр. 30.

սկզբին արդեն աշխարհի 216 երկրներում 6 մլրդ-ից ավելի բնակչությամբ արտադրվում էր 31336 891 մլն դոլար ՀՀԱ: Եթե XIX դարի կեսերին համաշխարհային ապրանքաշրջանառությունը կազմում էր մոտավորապես 15 մլրդ դոլար, ապա այսօր այն հաշվարկվում է տրիլիոն դոլարներով:

3.2. Համաշխարհային տնտեսության ձևավորման նախադրյալները

Համաշխարհային տնտեսությունը՝ որպես պատմական և քաղաքական կատեգորիա, ենթարկվում է սոցիալ-տնտեսական բազմաբնույթ գործոնների ներգործությանը, մշտապես կերպափոխվում է և հարստանում: Համաշխարհային տնտեսության ձևավորման հիմնական նախադրյալը աշխատանքի միջազգային բաժանումն է: Վերջինս միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման որոշակի աստիճան է, որը սերտորեն կապված է արտադրության հանրայնացման և միջազգայնացման պատմական գործընթացների հետ: Եթե XVIII դարի վերջերից մինչև XIX դարի կեսերը աշխատանքի միջազգային բաժանումը հենվում էր աշխարհի երկրների այնպիսի տարբերակման վրա, որը պայմանավորված էր այդ երկրների բնական ռեսուրսների, հանքահումքային հարստությունների անհամաչափ տեղաբաշխմամբ, ապա հետագայում այն հենվում էր արտադրության մյուս գործոնների՝ կապիտալի, աշխատուժի, ձեռնարկչատիրական ունակությունների առկայության վրա: Եվ օրինաչափ է, որ դասական տնտեսագետներից մինչև ժամանակակիցները փորձել են աշխատանքի միջազգային բաժանման մեջ երկրների ներգրավումը բացատրել արտադրության տարբեր գործոնների առկայությամբ (Ա.Սմիթ՝ բացարձակ առավելությունների, Դ.Ռիկարդո՝ համեմատական առավելությունների, Հեկլեր-Օհլին՝ արտադրության գործոններով օժտվածության, Մ.Պոզներ՝ տեխնոլոգիական խզման, Մ.Պորտեր՝ մրցակցային առավելությունների և այլ տեսություններ):

Այս առումով կարևորվում է նաև տեխնոլոգիայի՝ որպես արտադրության կարևոր գործոնի դերը աշխատանքի միջազգային բաժանման հետագա խորացման գործընթացում: Տեխնիկայի նվաճումների և տեխնոլոգիաների շարժը համաշխարհային տնտեսու-

թյան հետագա ձևավորման կարևոր նախադրյալներից է: Այսօր լի-
ցենզիաների առևտրին բաժին է ընկնում միջազգային առևտրի ծա-
վալի ավելի քան 10 տոկոսը:

Համաշխարհային տնտեսության ձևավորման օբյեկտիվ նախ-
դրյալ է նաև կապիտալի արտահանումը: Աշխատանքի միջազգային
բաժանման խորացումը՝ արտադրության և շրջանառության ոլորտ-
ների միջազգայնացման ուղիով, նպաստեց միջազգային մոնոպո-
լիաների առաջացմանը, դրանով իսկ՝ աշխարհատնտեսական կա-
պերի ընդլայնմանը: Վերջին տասնամյակների ընթացքում համաշ-
խարհային տնտեսության համակարգի դիտարկման հիմնական դե-
րակատարները համարվում են վերազգային կորպորացիաները
(ՎԱԿ): Ըստ ՄԱԿ-ի փորձագետների գնահատականի՝ անցյալ դարի
30-ական թվականներին գործում էին ոչ ավելի, քան 30 ՎԱԿ-եր:
Ներկայումս դրանց թիվը հասել է 77.000-ի, որոնք աշխարհի բազ-
մաթիվ երկրներում հիմնադրել են ավելի քան 770.000 մասնաճյու-
ղեր և դուստր ընկերություններ: ՎԱԿ-ի գործունեության ընդլայ-
նումը նախ և առաջ կապիտալի ակտիվ շարժի հետևանք է, և,
միաժամանակ, արտաքին առևտրային շրջանառության աճ: Ըստ
ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման կազմակերպության (UNCTAD) գնա-
հատականի՝ ՕՈՒՆ-ների մոտ 90%-ը (համաշխարհային արտահան-
ման 50%-ից ավելին) բաժին է ընկնում ՎԱԿ-երին⁸: Ամենևին պա-
տահական չէ, որ երկրների ազգային մրցակցային առավելություն-
ները, տեխնոլոգիական զարգացումների ուղղվածությունը և, առ-
հասարակ, քաղաքակրթության զարգացումները թելադրվում են
այս կառույցների կողմից:

Համաշխարհային տնտեսության ձևավորումը կախված է նաև մի
այլ հանգամանքից. նոր ծյուղերի և արտադրությունների զարգա-
ցումը հնարավոր չէ մեկ առանձին երկրի արտադրական կարողու-
թյուններով (օրինակ՝ ինքնաթիռաշինությունը). այստեղից էլ՝
երկրների տնտեսական ներուժի միավորման անհրաժեշտությունը:

Համաշխարհային տնտեսության ձևավորման օբյեկտիվ նա-
խադրյալներից են նաև մարդկանց հետաքրքրասիրությունները,
ըստ այդմ էլ՝ տարբեր ապրանքների նկատմամբ ունեցած պահան-
ջարկը: Օրինակ՝ տուրիզմի զարգացումը կարող է նպաստել տվյալ
երկրում նորանոր պահանջումների ձևավորմանը: Բազմաթիվ

⁸ St'u World Investment Report, 2001 Promoting Linkages UN. Overview 4.

ամերիկյան զբոսաշրջիկներ, ճանապարհորդելով Եվրոպայում, սովորեցին ճաշի ժամանակ գինի օգտագործել, ուստի և ամերիկյան մանրածախ առևտրով զբաղվող շատ ընկերություններ Եվրոպայում հիմնեցին գինի գնող մշտական գրասենյակներ: Սա նպաստեց Եվրոպայում լրացուցիչ աշխատատեղերի առաջացմանը՝ այդ արտադրանքն արտադրելու, իսկ ԱՄՆ-ում՝ դրա վաճառքն ու ներմուծումը կազմակերպելու համար:

Այսպիսով, համաշխարհային տնտեսությունը բարդ, ինքնակարգավորվող համակարգ է՝ միմյանց հետ արտադրական, առևտրային, գիտատեխնիկական, ֆինանսական սերտ կապերով, ինչպես նաև տրանսպորտի և կապի համընդհանուր համակարգով միահյուսված՝ փոխազդեցության մեջ գտնվող ազգային շուկաների միասնություն:

Համաշխարհային տնտեսությունը՝ որպես ամբողջական համակարգ, վերջնականապես ձևավորվեց XIX դարի վերջերին և XX դարի սկզբին՝ միջազգային կորպորացիաների գործունեության և գաղութային համակարգի ստեղծման հետևանքով: Ձևավորման կարևորագույն հիմքը համաշխարհային շուկան էր, որը զարգացավ ներքին, ազգային շուկաների հենքի վրա: Վերջիններս աստիճանաբար կողմնորոշվում էին դեպի արտասահմանյան գնորդը և վերածվում տարածաշրջանային միջազգային շուկաների: Չինաստանը, Եգիպտոսը, Հին Հունաստանը դեռևս վաղ ժամանակներից են ունեցել իրենց ներքին, ազգային շուկաները, որոնք հետզհետե մասնագիտացել են այս կամ այն արտադրանքի արտադրության մեջ, իսկ այնուհետև միավորվել օտարերկրյա շուկաների հետ: Այսպիսով, համաշխարհային շուկան քաղաքակիրթ շուկայական հարաբերությունների ձև է, որը ծագել է աշխատանքի միջազգային բաժանման խորացման հիման վրա և դուրս է եկել ազգային սահմաններից:

3.3. Համաշխարհային տնտեսության կազմավորման և զարգացման հիմնական փուլերը

Ժամանակակից համաշխարհային տնտեսության էությունը և զարգացման օրինաչափություններն առավել խորն ու ամբողջական ըմբռնելու համար հարկ է սահմանազատել և վերլուծել համաշխարհային տնտեսության ծագման ու ձևավորման երկարատև ուղին, կարևորելով այն գործոնները, որոնց ազդեցությամբ աստիճանաբար կազմավորվել է համաշխարհային տնտեսությունը՝ որպես գլոբալ տնտեսական համակարգ:

Համաշխարհային տնտեսության պատմական զարգացման ողջ ժամանակաշրջանը կարելի է ներկայացնել մի քանի փուլերով.

Առաջին փուլ. XV դարի կեսերից մինչև XVIII դարի կեսերը:

Այս փուլը նշանավորվեց աշխարհագրական խոշոր հայտնագործություններով, Ամերիկայում ոսկու և արծաթի հանքավայրերի հայտնաբերմամբ, ստրկավաճառությամբ և ազգային տնտեսությունների միջև միջազգային տնտեսական հարաբերությունների սաղմնային ձևերի առաջացմամբ: Ընդլայնվում էին առևտրային կապիտալի ներդրման ոլորտները, և տիրապետում էին մերկանտիլիզմի գաղափարները: Սա ամենաերկարատև փուլն էր, երբ հիմք էր դրվում համաշխարհային շուկայի ձևավորմանը:

Երկրորդ փուլ. XVIII դարի կեսերից մինչև XIX դարի վերջը:

Համաշխարհային տնտեսության ձևավորման այն ժամանակաշրջանն էր, երբ արդյունաբերական կապիտալի տարածման և դասական տնտեսագիտության սկզբունքների տիրապետության հետևանքով արևմուտքի արտադրողական ուժերն աճեցին աննախահեպ՝ նպաստելով արտադրության միջազգայնացման ավելի ու ավելի խորացմանը:

Արևմուտքի երկրներում մեքենայական արտադրության զարգացումը, դրանով իսկ միջազգային ապրանքաշրջանառության մեծացումը էապես նպաստեցին համաշխարհային շուկայի վերջնական ձևավորմանը, որը հետզհետե վերաճեց համաշխարհային տնտեսության այն պարզ պատճառով, որ ապրանքների առևտուրը լրացվեց կապիտալի շարժունակությամբ՝ մետրոպոլիաներից դեպի իրենց ագրարահումքային կցորդները: Այս փուլում աշխարհի երկրների տնտեսական միավորման հիմքում նաև գաղութատիրու-

թյան սկբնավորումն էր ու տարածումը՝ որպես համակարգագոյացման վճռական գործոն:

Երրորդ փուլ. XX դարի սկզբից մինչև 20-30-ական թվականները:

Այս փուլում աշխարհը ցնցեց սոցիալ-տնտեսական ճգնաժամը՝ «մեծ դեպրեսիան», որի արդյունքում կրճատվեցին երկրների տնտեսական զարգացման ցուցանիշները, ազգային տնտեսություններն ունեցան հետընթաց զարգացումներ: Ավելին, 1917 թվականին սոցիալիստական առաջին հեղափոխության պատճառով աշխարհատնտեսական կապերից զատված Ռուսաստանում ավելի ու ավելի ցայտուն դրսևորվեցին ավտարկային բնորոշ երևույթները: Բուրր երկրներում տնտեսական զարգացման ցածր մակարդակը պայմանավորվում էր կյանքի որակի նվազեցման հանգամանքով (անգրագիտություն, կյանքի տևողության կրճատում, թարմ ապրանքների սպառման չնչին ծավալներ և այլն):

Համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքում գերակշռում էր գյուղատնտեսությունը, իսկ արդյունաբերության մեջ՝ թեթև և սննդի արդյունաբերությունը:

Չորրորդ փուլ. XX դարի 40-ական թվականներից մինչև 60-ական թվականները:

Այս փուլում տեղի ունեցավ համաշխարհային տնտեսության վերակազմավորում. առաջացան համաշխարհային սոցիալիստական և համաշխարհային կապիտալիստական համակարգերը: Համաշխարհային տնտեսությունը դիտվում էր որպես երկու՝ հակադիր սոցիալ-տնտեսական համակարգերի պայքարի թատերաբեմ: Զարգացող երկրները դիտարկվում էին այս կամ այն համակարգի կցորդներ: Օրինակ, Աֆղանստանը համարվում էր «սոցիալիստական» ուղիով զարգացող երկիր, իսկ Հնդկաստանը՝ «կապիտալիստական»: Ակտիվացան տնտեսական կապերը երկու համակարգերի երկրների շրջանակներում: Հիշենք «Մարշալի պլանը» (1951 թ.), որն իրականացվեց Արևմտյան Եվրոպայում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տնտեսությունները վերականգնելու և այդ երկրներում կապիտալիստական համակարգը ընդլայնելու նպատակով, կամ «Տնտեսական փոխօգնության խորհրդի» (1949 թ.) ձևավորումը սոցիալիստական երկրների շրջանակներում:

Հինգերորդ փուլ. XX դարի 60-ական թվականները բնորոշվում են գաղութային համակարգի փլուզմամբ:

Աշխարհատնտեսական կապերի մեջ ընդգրկվեցին զարգացող երկրների մի ստվար խումբ, որոնք թեպետ իրենց հետամնացությամբ ու տնտեսության հուճքային արտահանման ուղղվածությամբ, շարունակեցին մնալ կապիտալիստական երկրների ուշադրության կենտրոնում այն պարզ պատճառով, որ դրանք մետրոպոլիաների համար ոչ միայն ապրանքների իրացման շուկաներ էին, այլև հուճքային կցորդներ: Նպատակն անշուշտ ազդեցության ուղորտների պահպանումն էր: Գաղութատիրությունը թեև փլուզվեց, սակայն ստացավ նորանոր ձևեր:

Վեցերորդ փուլ. XX դարի 70-80-ական թվականներ:

Այս փուլին բնորոշ են արդյունաբերապես զարգացած երկրների տնտեսական զարգացման մակարդակների համահարթումը և վառելիքաէներգետիկ երկու ճգնաժամերը:

Յոթերորդ փուլ. XX դարի 90-ական թվականներից մինչև այսօր:

ԽՍՀՄ-ի փլուզումից և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում բարեփոխումների գործընթացից հետո համաշխարհային տնտեսությունը ձեռք բերեց միասնական, ամբողջական համակարգին բնորոշ գծեր:

Ի հարկե տնտեսագիտական գրականության մեջ ավելի հաճախ հանդիպում ենք համաշխարհային տնտեսության զարգացման փուլերի այնպիսի դասակարգման, որն ընդգրկում է համաշխարհային տնտեսության վերջնական ձևավորումից հետո ընկած ժամանակահատվածը: Կնշանակի՝ այն ներառում է վերոնշյալ դասակարգման երրորդ, չորրորդ և յոթերորդ փուլերը:

Այսուհանդերձ, XXI դարի սկզբին համաշխարհային տնտեսությունն ավելի միասնական է, ինտեգրված, շարժունակ, քան նախորդ դարերում:

Այսօր համաշխարհային տնտեսական համալիրը բնութագրվում է երկրների միջև փոխհարաբերությունների ու փոխազդեցությունների էվոյուցիայի որակական նոր մակարդակով, որն էապես տարբերվում է մարդկային քաղաքակրթության նախորդ ժամանակաշրջաններից: Այն անմիջականորեն կապված է և՛ զարգացած երկրների աննախադեպ առաջընթացի, և՛ այնպիսի գլոբալ գործոնների ազդեցությունների հետ, ինչպիսիք են մշտապես ծավալվող գիտատեխնիկական հեղափոխությունը, դրա նվաճումների ներդրման ուղորտների ընդլայնումը, տնտեսական կյանքի ավելի ու ավելի խորացող միջազգայնացումը, ճգնաժամային իրավիճակներ-

րի բռնկումները աշխարհի ամենատարբեր տարածաշրջաններում:

Ակնհայտ են այս հարթության վրա ձևավորվող ռազմավարական մի շարք միտումներ, որոնք ուղղորդում են համաշխարհային տնտեսության հետագա զարգացումները: Նշենք դրանցից առավել էականները.

1. Նոր տեղեկատվական տնտեսության ձևավորումը, որը բնութագրվում է արդյունավետ, բարձրտեխնոլոգիական և ռեսուրսախնայողական արտադրությամբ:

2. Արմատական բարեփոխումները տնտեսական գործունեության ոլորտում, անցումը զանգվածային սպառողական արտադրական համալիրից դեպի անհատական ստեղծագործ գործունեություն:

3. Էական տեղաշարժերը համաշխարհային տնտեսության աշխարհագրական կառուցվածքում, մասնավորապես ակտիվանում է ասիական տարածաշրջանը՝ ի դեմս ասիական նոր արդյունաբերական երկրների:

4. Տարածաշրջանային ինտեգրացման խմբավորումների ձևավորմանը զուգընթաց խորանում են ազգային տնտեսությունների բացվածության աստիճանը, գլոբալացման գործընթացները:

5. Ակնհայտ են համաշխարհայի տնտեսության զարգացման արդի բարձր տեմպերը՝ ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանների:

6. Քաղաքակրթության գլոբալ հիմնախնդիրների առկայությունը, որը պահանջում է աշխարհի բոլոր երկրների ուժերի համախմբում և դրանց լուծմանն ուղղված ակտիվ գործունեություն:

Անշուշտ, համաշխարհային տնտեսության զարգացման այս միտումներն ուղեկցվում են աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական բազմազան երևույթներով: Արժուքային, հունքային, էկոլոգիական, էներգետիկ և այլ ճգնաժամերը շուկայական տնտեսության մշտական ուղեկիցներն են, որոնք ունենում են և դեռևս կունենան իրենց բացասական ազդեցությունները համաշխարհային տնտեսական զարգացումների վրա՝ նպաստելով նոր միտումների դրսևորման:

3.4. Աշխարհի երկրների դասակարգման ցուցանիշները

Երկրների արտադրության գործոններով տարբեր հագեցվածությունն ու զարգացման տարբեր պայմանները թույլ չեն տալիս դրանց տնտեսական զարգացման մակարդակը գնահատել մեկ միասնական տեսանկյունից: Այդ նպատակով ՄԱԿ-ի կողմից մշակվել է ցուցանիշների համակարգ, որի միջոցով գնահատվում է ոչ միայն երկրների տնտեսական զարգացման մակարդակը, այլև իրականացվում է դրանց դասակարգում այս կամ այն խմբերի մեջ: Այդ ցուցանիշներն են՝

- ա) բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ/ՀԱԱ կամ Աե ցուցանիշը,
- բ) ազգային տնտեսության ճյուղային կառուցվածքը,
- գ) բնակչության մեկ շնչին ընկնող հիմնական արտադրատեսակների արտադրությունը (առանձին ճյուղի զարգացման մակարդակը),
- դ) բնակչության կենսամակարդակը և կյանքի որակը,
- ե) տնտեսական ակտիվության ցուցանիշները:

Դարկ է նշել, որ երկրի տնտեսական զարգացման մակարդակը պատմական հասկացություն է: Ազգային տնտեսության և ամբողջ համաշխարհային համագործակցության զարգացման յուրաքանչյուր փուլ իր այս կամ այն փոփոխություններն է մտցնում դրա հիմնական ցուցանիշներում:

Երկրների տնտեսական զարգացման մակարդակի վերլուծության առաջատար ցուցանիշներն են բնակչության մեկ շնչին ընկնող ՀԱԱ/ՀԱԱ: Դրանք ընկած են զարգացած և զարգացող երկրների դասակարգման հիմքում: Այսպես, 80-ականների վերջերին և 90-ականների սկզբներին զարգացած երկրների շարքին դասվեցին այն երկրները, որտեղ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմեց տարեկան ավելի քան 5-6 հազար դոլար: Համաշխարհային բանկի դասակարգման համաձայն, ըստ եկամուտների տարբերվում են երկրների զարգացման հետևյալ մակարդակները⁹.

➤ Երկրներ, որոնք առանձնանում են եկամուտների ցածր մակարդակով, որտեղ բնակչության մեկ շնչի հաշվով ազգային եկա-

⁹ Стів Ю. Ф. Симонов, Б. П. Носко, А. А. Гильяно, Мировая экономика и международное эконом. отн., Ростов на Дону, "Феникс", 2005, էջ 26:

մուտը կազմում է 725 ԱՄՆ դոլար: Սրանք աշխարհի մոտավորապես 64 պետություններ են՝ Մոզամբիկը, Բանգլադեշը, Եթովպիան և այլն:

➤ Երկրներ, որոնք ունեն եկամուտների միջին մակարդակ, որտեղ բնակչության մեկ շնչի հաշվով ազգային եկամուտը կազմում է 725-8995 ԱՄՆ դոլար: Սրանք աշխարհի 101 պետություններն են՝ Լիբիա, Օման, Ուրուգվայ, Վենեսուելա և այլն:

➤ Երկրներ, որոնք առանձնանում են եկամուտների բարձր մակարդակով, որտեղ բնակչության մեկ շնչի հաշվով ազգային եկամուտը կազմում է 8.995 և ավելի ԱՄՆ դոլար: Սրանք աշխարհի մոտ 44 պետություններն են՝ Արևմտյան Եվրոպայի երկրները (բացառությամբ՝ Ալբանիայի), ԱՄՆ-ը, ճապոնիան և այլն:

Որոշ երկրներում, օրինակ՝ Սաուդյան Արաբիայում, բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն բավականին բարձր է, սակայն տնտեսության ճյուղային կառուցվածքի, արտադրանքի հիմնական տեսակների արտադրության ցուցանիշների ոչ բավարար մակարդակը թույլ չի տալիս այդ երկիրը դասել զարգացած երկրների շարքը: Ուստի երկրների տնտեսական զարգացման իրական մակարդակը բնութագրելու համար օգտագործվում են նաև վերը նշված մյուս ցուցանիշները:

Տնտեսության ճյուղային կառուցվածքի վերլուծությունը կատարվում է ՀՆԱ-ի ցուցանիշի հիման վրա՝ հաշվարկված ըստ ճյուղերի: Նախ՝ ուսումնասիրվում է ազգային տնտեսության երկու խոշոր ճյուղերի՝ նյութական և ոչ նյութական արտադրության հարաբերակցությունը, որը և բացահայտում է վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռը տնտեսության ճյուղային կառուցվածքում: Կարևոր նշանակություն ունի նաև առանձին ճյուղերի կառուցվածքի հետազոտությունը, օրինակ, վերամշակող արդյունաբերության ճյուղային կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, թե ի՞նչ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինությունը, քիմիական արդյունաբերությունը, այսինքն՝ ճյուղեր, որոնք ապահովում են գիտատեխնիկական առաջընթացը: Արդյունաբերապես զարգացած երկրներում մեքենաշինական ճյուղերի և արտադրությունների քանակը հասնում է 150-200-ի, իսկ տնտեսական զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրներում՝ 10-15-ի: Այս տեսանկյունից կարևորվում է նաև առանձին ճյուղերի դիվերսիֆիկացումը, որն առավել տարածված է զարգացած երկրներում:

Հետազոտվում է նաև խոշոր տնտեսական համալիրների՝ վառելիքաէներգետիկ, ագրոարդյունաբերական, ռազմաարդյունաբերական համալիրների տեսակարար կշիռը տնտեսության ճյուղային կառուցվածքում:

Բնակչության մեկ շնչին ընկնող հիմնական արտադրատեսակների արտադրությունը: Ազգային տնտեսության համար բազիսային համարվող արտադրանքի որոշ հիմնական տեսակների արտադրության ցուցանիշները նույնպես բնութագրում են երկրի տնտեսական զարգացման մակարդակը: Դրանք թույլ են տալիս պատկերացում կազմելու երկրի բնակչության պահանջմունքների բավարարման հնարավորությունների մասին: Նման ցուցանիշներից են համարվում բնակչության մեկ շնչի հաշվով էլեկտաբեռագիայի արտադրությունը, որից մեծապես կախված է տեխնիկական առաջընթացը, ապրանքների որակը, ծառայությունների մատուցման մակարդակը և այլն, կամ բնակչության մեկ շնչի հաշվով պողպատի ձուլումը, գլանվածքի արտադրությունը, մետաղահատ հաստոցների, ավտոմեքենաների արտադրությունը և այլն: Կարևոր են նաև սննդամթերքի հիմնական տեսակների արտադրության ծավալները, ինչպես, օրինակ, հացահատիկի, շաքարի, մսի, կարտոֆիլի և այլն: Գործնականում այս ցուցանիշները համադրվում են ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսական կազմակերպության կամ ազգային ինստիտուտների կողմից մշակված ռացիոնալ նորմաների հետ, որը պատկերացում է տալիս սննդամթերքի հիմնական տեսակների՝ բնակչության պահանջմունքների բավարարման մակարդակի մասին: Տնտեսական զարգացման մակարդակները համեմատելիս կարևորվում են նաև երկարատև օգտագործման ապրանքների (սառնարան, ավտոմեքենա, հեռուստացույց և այլն) թիվը 1000 մարդու կամ միջին վիճակագրական ընտանիքների հաշվով:

Բնակչության կյանքի որակը և կենսամակարդակը: Բնակչության կենսամակարդակը նշանակալից չափերով կախված է ՀՆԱ-ի օգտագործման կառուցվածքից: Կարևոր է հատկապես վերջնական սպառման կառուցվածքի վերլուծությունը (անձնական սպառողական ծախսերի): Սպառման ապրանքների մեջ երկարաժամկետ օգտագործման ապրանքների ու ծառայությունների մեծ բաժինը վկայում է բնակչության ավելի բարձր կենսամակարդակի, հետևաբար և երկրի ընդհանուր տնտեսական զարգացման բարձր մակարդակի մասին:

Բնակչության կենսամակարդակը հիմնականում որոշվում է ՀՆԱ-ի կառուցվածքով, նրա օգտագործման մակարդակով: Եթե ՀՆԱ-ի սպառման կառուցվածքում բարձր է երկարատև օգտագործման ապրանքների ու ծառայությունների տեսակարար կշիռը, ապա բարձր է և տվյալ երկրի բնակչության կենսամակարդակը: Բնակչության կենսամակարդակի վերլուծությունն ուղեկցվում է երկու՝ փոխադարձաբար կապված ցուցանիշների վերլուծությամբ՝ սպառողական զանբյուղ և կենսանվազագույն: Վերջիններս արտահայտվում են աղքատության մակարդակը բնութագրող ցուցանիշների համակարգում: Գործնականում կենսամակարդակը գնահատում են ըստ հետևյալ ցուցանիշների՝

- Աշխատանքային ռեսուրսների վիճակը (կյանքի միջին տևողությունը, բնակչության կրթական մակարդակը, մեկ շնչի հաշվով սննդամթերքի հիմնական տեսակների սպառումը կալորիաներով, աշխատանքային ռեսուրսների որակավորման մակարդակը, 10.000 բնակչի հաշվով ուսանողների և սովորողների թիվը և ՀՆԱ-ում կրթության վրա կատարված ծախսերի տեսակարար-կշիռը):

- Ծառայությունների ոլորտի զարգացումը (10.000 բնակչի հաշվով բժիշկների թիվը, 1000 մարդու հաշվով՝ հիվանդանոցային մահճակալների թիվը, բնակչության ապահովվածությունը բնակարաններով և այլն):

- Համաշխարհային պրակտիկայում վերջին տարիներին օգտագործում են նաև մի շարք համաթվեր՝ կյանքի որակը բնութագրելու համար: Այն ներառում է հասարակական զարգացման մակարդակը, տնտեսական և սոցիալական զարգացման մի շարք ցուցանիշներ, օրինակ՝ բնակչության կրթական մակարդակը, կյանքի տևողությունը, աշխատանքային շաբաթվա տևողությունը և այլն

Տնտեսական ակտիվության ցուցանիշները: Սրանք ազգային տնտեսության զարգացման բազիսային ցուցանիշներից են և թույլ են տալիս գնահատել երկրի հիմնական ու շրջանառու կապիտալի, աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Դրանք են՝ աշխատանքի արտադրողականությունը, ՀՆԱ-ի կապիտալատարության և նյութատարության ցուցանիշները:

Համաշխարհային առևտրում երկրի ակտիվությունը բնութագրում են արտահանման քվտան, արտահանման կառուցվածքը, ներմուծման կառուցվածքը հատկապես ներմուծվող հումքի և վերջնական պատրաստի արտադրանքի հարաբերակցությունը, երկրի

բաժինը համաշխարհային ՀՆԱ-ի, ՀԱԱ-ի և համաշխարհային առևտրի մեջ: Այսպես, օրինակ, եթե երկիրը տալիս է ավտոմեքենաների համաշխարհային արտադրության 10%-ը, միջազգային առևտրի՝ 1 կամ 2 %-ը, ապա դա վկայում է այն մասին, որ այդ ավտոմեքենաները իրենց որակական չափանիշներով չեն համապատասխանում համաշխարհային պահանջներին, ուրեմն ճյուղի զարգացման մակարդակը ցածր է: Երկրի տնտեսական զարգացման աստիճանի մասին վկայում է նաև կապիտալի արտահանման ցուցանիշը. որքան ավելի զարգացած է երկիրը, այնքան ավելի մեծ են կապիտալի արտահանման հնարավորությունները:

Կապիտալի շարժը բնութագրող ցուցանիշներից են՝

- տվյալ երկրում օտարերկրյա ներդրումների ծավալը և վերջինիս հարաբերակցությունը երկրի ազգային հարստությանը,
- տվյալ երկրում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալի հարաբերակցությունը իր տարածքում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալին: Այս հարաբերակցությունը բնութագրում է միջազգային ներդրումային գործընթացների զարգացումը, որը սերտորեն կապված է երկրի ազգային տնտեսության զարգացման մակարդակի և արդյունավետ գործունեության հետ,
- երկրի արտաքին պարտքի ծավալը և դրա հարաբերակցությունը տվյալ երկրի ՀՆԱ-ին /ՀԱԱ-ին:

3.5. Համաշխարհային տնտեսության կառուցվածքը

Աշխատանքի միջազգային բաժանման զարգացմանը զուգընթաց ձևավորվել է համաշխարհային տնտեսության որոշակի կառուցվածք, որում, ինչպես նշվեց վերևում, էական նշանակություն ունի երկրների տնտեսական զարգացման մակարդակը: Մինչև սոցիալիստական համակարգի փլուզումը, աշխարհի երկրները դասակարգվում էին 3 խմբերում.

- զարգացած երկրներ,
- զարգացող երկրներ,
- սոցիալիստական համակարգի կամ պլանային տնտեսություն ունեցող երկրներ:

Սոցիալիստական համակարգի փլուզումից հետո ՄԱԿ-ի դասակարգման համաձայն, որն ուներ զուտ վիճակագրական նկատա-

ռումներ, 90-ական թթ. սկզբներին պայմանականորեն առանձնացվեցին երկրների հետևյալ չորս խմբերը.

- արդյունաբերական զարգացած երկրներ,
- զարգացող երկրներ,
- Արևելյան Եվրոպայի երկրներ, որոնցում ներառվեցին նախկին ԽՍՀՄ երկրները, Ալբանիան, Բուլղարիան, Ռումինիան, Սլովակիան, Չեխիան, Հունգարիան, Լեհաստանը, նախկին ԳՂՀ-ն,
- Ասիայի սոցիալիստական երկրներ (Չինաստան, Մոնղոլիա, Վիետնամ, Հյուսիսային Կորեա):

Նախկին սոցիալիստական երկրների տնտեսություններում տեղի ունեցած վերափոխումների հետևանքով այս դասակարգումը կորցրեց իր արդիականությունը, և ՄԱԿ-ը կատարեց մեկ այլ դասակարգում, ըստ որի՝ ասիական 4 երկրները, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ երկրներից մի քանիսը (Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, Դրոզդաստանը, Ղազախստանը, Թուրքմենիան, Տաջիկստանը, Ուզբեկստանը) դասվեցին զարգացող երկրների շարքը, և դասակարգումն ստացավ հետևյալ տեսքը.

- արդյունաբերական զարգացած երկրներ,
- զարգացող երկրներ,
- Արևելյան Եվրոպայի երկրներ. ներառվեցին Ռուսաստանը, Բելառուսը, Ուկրաինան, Մոլդովան, Լատվան, Լիտվան և Էստոնիան, Ալբանիան, Հունգարիան, Չեխիան, Սլովակիան, Լեհաստանը:

Միաժամանակ, 1990-ական թթ. կեսերից սկսած տնտեսագիտական գրականության մեջ լայնորեն շրջանառվեցին *«նոր ձևավորվող շուկաներ»*, *«անցման շրջանի տնտեսություններ»* հասկացությունները, որոնցում ընկալվում էին Հարավարևելյան Ասիայի, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Անկախ պետությունների համագործակցության երկրները, Չինաստանը, Թուրքիան, Լատինական Ամերիկայի երկրները:

2004 թ. մայիսի մեկին, երբ Կենտրոնական Եվրոպայի 10-ը երկրներ անդամագրվեցին Եվրամիությանը, ՄԱԿ-ը կրկին երկրների դասակարգումը վերանայեց այն առումով, որ դրանք ներկայումս ներառվել են զարգացած երկրների համախմբում, իսկ Արևելյան Եվրոպայի երկրները դասակարգվում են զարգացող երկրների համախմբում: Այլ խոսքով, ներկայումս աշխարհի երկրները դասա-

կարգվում են երկու խմբերում՝ *զարգացած* և *զարգացող*: Ընդ որում՝ յուրաքանչյուր խումբ իր հերթին ևս ենթարկվել է բաժանման՝ ըստ տարածաշրջանների և տնտեսական զարգացման մակարդակների:

3.6. Ձարգացած երկրներ

Ձարգացած երկրների խմբի մեջ ընդգրկված են շուկայական տնտեսությամբ և սոցիալ-տնտեսական զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրները: Ձարգացածների շարքին են դասվում աշխարհի ավելի քան 29 երկրներ, այդ թվում՝ ԱՄՆ-ը, Արևմտյան Եվրոպայի երկրները, ճապոնիան, Ավստրալիան, Նոր Զելանդիան, Զարավաճֆրիկյան Հանրապետությունը: Այս երկրներում ապրում են աշխարհի բնակչության ավելի քան 14,1%-ը, որտեղ արտադրվում է ՀՀԱ-ի մոտ 57,1%-ը, բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ծավալը տատանվում է տարեկան 10.000 - 25.000 դոլարի սահմաններում: Դրանց բաժին է ընկնում համաշխարհային ապրանքաշրջանառության ավելի քան 70%-ը:

Արդյունաբերապես զարգացած երկրներին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- բազմաճյուղ և զարգացած արդյունաբերություն,
- տնտեսության ճյուղային կառուցվածքում գերակշռում են գիտատար և ժամանակակից ճյուղերը,
- բարձր զարգացած ենթակառուցվածքներ,
- հետինդուստրիալ հասարակարգին բնորոշ առանձնահատկություններ,
 - տնտեսական կյանքին պետության ակտիվ միջամտություն (նշենք, սակայն, որ տարբեր երկրներում պետական սեփականության տեսակարար կշիռն ու տնտեսական գործընթացների կարգավորման աստիճանը, ձևերն ու մեթոդները տարբեր են),
 - այս երկրներն ամբողջությամբ ինտեգրված են համաշխարհային տնտեսությանը, ակտիվորեն մասնակցում են աշխատանքի միջազգային ներդրողային բաժանմանը,
 - արտաքին տնտեսական կապերն առավել ազատականացված են, արտահանման կառուցվածքում գերակշռում են պատրաստի արտադրանքը, իսկ ներմուծման կառուցվածքում՝ հումքն ու

նյութերը,

- աշխատուժի միջազգային շուկայում գլխավորապես աշխատուժ ներմուծողներ են,
- կապիտալի շուկայում, կապված համաշխարհային տնտեսության զարգացման արդի առանձնահատկությունների հետ, և՛ կապիտալ արտահանողներ են, և՛ կապիտալ ներմուծողներ,
- տնտեսության ճյուղային կառուցվածքում գյուղատնտեսությունն առանձնանում է ինտենսիվ զարգացումամբ, որի շնորհիվ զարգացած երկրները բավարարում են ոչ միայն ներքին շուկայի պահանջները, այլև արտահանում են:

Ջարգացած երկրների առանձնահատկություններից մեկն էլ եկամուտների համեմատականորեն համաչափ բաշխվածությունն է, ինչպես նաև տնտեսական տարածքների համեմատական հավասարաչափ զարգացումը: Դրանք բնորոշ է տնտեսության սոցիալական կողմնորոշումը, մասնավորապես ուշադրությունը՝ բնակչության անապահով խավի նկատմամբ (թոշակառուներ, ուսանողներ, հաշմանդամներ և այլն):

Ակնհայտ բարձր են գիտության և գիտահետազոտական մշակումների մեջ կատարվող կապիտալ ներդրումները (ՀԱԱ-ի 2-3%-ը), և արտադրության մեջ դրանց արդյունքների արագ ներդրումը, որոնք վկայում են աշխատուժի մտավոր բարձր մակարդակի առկայության փաստը:

Ջարգացած երկրների տնտեսությանը հատուկ սոցիալականացումը նշանակում է բժշկության, կրթության, մշակույթի, նաև շրջակա միջավայրի պահպանության համար (վերջինիս հատկացվում է ՀԱԱ-ի 3-4%-ը) նախատեսվող ծախսերը:

Ըստ համաշխարհային քաղաքականության և տնտեսության մեջ ունեցած դերի՝ այս երկրները բաժանվում են 3 խմբի:

Առաջին խումբը ձևավորում են «մեծ յոթնյակի» երկրները՝ ԱՄՆ, ճապոնիա, Գերմանիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա և Կանադա: Դրանց առաջնայնությունը որոշվում է ոչ թե տարածքի մեծությամբ կամ բնակչության թվաքանակով, այլ համաշխարհային տնտեսության ու քաղաքականության մեջ ունեցած կարևոր դերով, աշխատանքի արտադրողականության բարձր մակարդակով, գիտության ու տեխնիկայի զարգացման գործում վաստակած մեծ հաջողություններով: «Յոթնյակին» բաժին է ընկնում ՀՀԱ-ի 45,4%-ը, այդ թվում՝ ԱՄՆ-ին՝ 21%, ճապոնիային՝ 7%, Գերմանիային՝ 5%:

Այս երկրները կառավարության և երկրի իշխանությունների շրջանակներում պարբերաբար հանդիպումներ են կազմակերպում՝ քննարկելու համար ժամանակակից գլոբալ հիմնախնդիրներ: 1996 թ. Ռուսաստանը ևս մասնակցում էր այդ աշխատանքներին՝ հիմնականում քաղաքական շարժառիթներով, իսկ 2002-ից Ռուսաստանը ևս անդամագրվել է այդ կազմակերպությանը, որը վերանվանվել է «մեծ ութնյակ»-ի:

Երկրորդ խումբը ձևավորում են տարածքով ոչ մեծ 14 երկրներ, որոնց բնորոշ է սոցիալ-տնտեսական զարգացվածության բարձր մակարդակ՝ Ավստրիա, Բելգիա, Դանիա, Նիդեռլանդներ, Շվեդիա և այլն: Սրանք տնտեսական ու քաղաքական փոխհարաբերություններում հաճախ հանդես են գալիս որպես կապող օղակ առաջին խմբի երկրների հետ: Այս խմբի առանձին երկրներ նշանակալից դեր ունեն համաշխարհային առևտրում և քաղաքականության մեջ:

Երրորդ խմբի մեջ մտնում են «վերաբնակեցված կապիտալիզմի» երկրները՝ Ավստրալիա, Հարավաֆրիկյան Հանրապետություն, Իսրայել:

Այսպիսով, զարգացած երկրները համաշխարհային տնտեսության շարժիչ ուժն են. դրանք աշխարհատնտեսական և քաղաքական զարգացումների գերակա ուղղությունների հիմնական որոշողներն են: Բավական է միայն հետևել «եռյակ» (տրիադի) երկրների՝ ԱՄՆ-ի, Եվրամիության և ճապոնիայի միջև փոխհամագործակցությանն ու փոխազդեցություններին, որպեսզի անառարկելիորեն ընդունենք հետարդյունաբերական երկրների գերակայությունը համաշխարհային տնտեսության բոլոր ոլորտներում և զարգացման բոլոր ժամանակներում:

3.7. Ջարգացող երկրներ

Համաշխարհային տնտեսության կառուցվածքում էական դեր են կատարում զարգացող (աշխարհի ավելի քան 150) երկրները, որոնց հիմնական մասը գաղութատիրության փլուզումից հետո ստացել է քաղաքական անկախություն և վարում է ինքնուրույն տնտեսական գործունեություն: Չնայած իրենց բազմազանությանը, այս երկրներն ունեն որոշ ընդհանրություններ, մասնավորապես՝

- ✓ տնտեսության ճյուղային կառուցվածքում գերակշռում են գյուղատնտեսությունը և արդյունահանող արդյունաբերությունը, (բացառությամբ՝ նոր արդյունաբերական երկրների),
- ✓ երկրների մեծ մասում արտահանումը հիմնված է մեկ կամ երկու ճյուղերի վրա,
- ✓ այս երկրների տնտեսությունը հիմնականում բազմակացութաձև է,
- ✓ զարգացող երկրների գերակշիռ մասը դեռևս ձեռք չի բերել լիակատար տնտեսական ազատություն,
- ✓ այս խմբի երկրներին հատուկ են արտաքին պարտքի հիմնախնդիրը:

Այսօր, իրենց տնտեսական և քաղաքական զարգացումների առանձնահատկություններից ելնելով, զարգացող երկրները պայքարում են նոր տնտեսակարգի համար: Այս հիմնադրույթը ձևավորվեց 1970-ական թվականներից, «77»-ի խմբի կողմից (հռչակագիրն ընդունվել է ՄԱԿ-ի կողմից՝ 1974 թվականին), որը միանգամայն օրինաչափորեն միավորեց բազմաթիվ զարգացող երկրների՝ հետևյալ խնդիրների լուծման շուրջ.

- ✓ միջպետական մակարդակով աշխարհատնտեսական կապերի քաղաքական կարգավորման անհրաժեշտություն,
- ✓ զարգացող երկրների համար իրավահավասար պայմաններում համաշխարհային ամբողջական արդյունքի վերաբաշխման մեխանիզմի ստեղծում,
- ✓ միջազգային տնտեսական հարաբերությունների ժողովրդականացում:

Ձարգացող երկրներն այսուհանդերձ որոշիչ դեր են կատարում համաշխարհային շուկայի կառուցվածքում, հատկապես արտաքին առևտրում:

Այսպիսով, զարգացող երկրների կառուցվածքը միատարր չէ. այն ներկայանում է մի շարք ենթախմբերով: Քննարկենք դրանցից հիմնականները.

3.8. Նոր արդյունաբերական (ինդուստրիալ) երկրներ

Գոյություն ունեն մի շարք չափանիշներ, ըստ որոնց՝ այս կամ այն երկիրը դասվում է նոր արդյունաբերական երկրների (այսուհետև՝ ՆԱԵ) շարքին: Այդ չափանիշներից են՝

- մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն,
- տնտեսական աճի միջին տարեկան տեմպը,
- ՀՆԱ-ի մեջ վերամշակվող արդյունաբերության տեսակարար կշիռը,
- արդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալը և դրա բաժինը ընդհանուր արտահանման մեջ,
- ՕՈՒՆ-ների ծավալները:

Նշված բոլոր ցուցանիշներով ՆԱԵ-ները ոչ միայն առանձնանում են զարգացող երկրներից, այլև երբեմն գերազանցում են արդյունաբերապես զարգացածներին:

Գործնականում առանձնացնում են ՆԱԵ-ների չորս սերունդ: Դրանք են՝

ա) «Ասիական վագրերը»՝ Հարավային Կորեան, Թայվանը, Սինգապուրը, Հոնկոնգը (Սյանգան) և Լատինական Ամերիկայի ՆԱԵ-ները՝ Արգենտինան, Բրազիլիան, Մեքսիկան,

բ) Մալազիա, Թայլանդ, Հնդկաստան, Չիլի,

գ) Կիպրոս, Թունիս, Թուրքիա, Ինդոնեզիա,

դ) Ֆիլիպիններ, Չինաստան, Վիետնամ:

ՆԱԵ-ների զարգացումը կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի՝

1. 1950-1960-ական թվականներ. ներմուծմանը փոխարինող ճյուղերի զարգացում:
2. 1960-ականներից մինչև 80-ական թվականներ. արտահանման ներուժի ստեղծում:
3. 1980-1990-ական թվականներ. գիտատար ճյուղերի զարգացում:

Առաջին փուլում զարգացավ թեթև արդյունաբերությունը, որը պայմանավորված էր նրանով, որ ներքին շուկայում պահանջարկ կար այնպիսի ապրանքների նկատմամբ, ինչպիսիք են հագուստը, կոշիկը և այլն:

Երկրորդ փուլում արտաքին շուկա ուղղված ճյուղերի ստեղծումն ու զարգացումը պայմանավորված էր զարգացած կապիտա-

լիստական երկրներից դեպի ՆԱԵ՝ աշխատատար և նյութատար արտադրությունների տեղափոխումով:

Երրորդ փուլում առավել ճկուն ձևով սկսում են զարգանալ արտադրության գիտատար ճյուղերը՝ քիմիական, մետաղամշակման, էլեկտրատեխնիկական և այլն: Այս փուլին բնորոշ առանձնահատկություններից էր մասնավոր ու պետական դրամական միջոցների հատկացումը գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներին:

ՆԱԵ-ների տնտեսական զարգացումը բոլոր փուլերում ուղեկցվում է օտարերկրյա կապիտալի և ՎԱԿ-երի ակտիվ մասնակցությամբ: Անհրաժեշտ է նշել, որ ի տարբերություն շատ զարգացող երկրների, ՆԱԵ-ներին հաջողվեց առավել արդյունավետ օգտագործել արտերկրների ներդրումները, առաջավոր տեխնոլոգիան և կառավարման ու կազմակերպման ժամանակակից մեթոդները:

ՆԱԵ-ներում աստիճանաբար փոխվում էր ՀՆԱ-ի կառուցվածքը, կրճատվում՝ գյուղատնտեսության բաժինը, որի փոխարեն արդյունաբերությունն իր դիրքերն էր ամրապնդում:

Սկզբնական շրջանում ՎԱԿ-երը ՆԱԵ-ներում ներդրումներ էին կատարում, երբ տեխնոլոգիան ամբողջապես մշակվել էր: Այս փուլում արտադրության կազմակերպման համար որոշիչ էր երկու գործոն՝

- որակյալ և էժան աշխատուժ,
- ֆինանսական միջոցներ:

Առաջինն ունեին ՆԱԵ-ները, երկրորդը՝ ՎԱԿ-երը: Տեղափոխելով արտադրությունը ՆԱԵ-ներ՝ ՎԱԿ-երը տնտեսում էին մեծ գումարներ: Սակայն 1990-ական թվականներին նվազագույն աշխատավարձի համաթիվը վերամշակող արդյունաբերության մեջ ՆԱԵ-ներում սկսեց աճել ավելի արագ տեմպերով, քան զարգացած երկրներում, և աշխատատար ճյուղերն այդ երկրներ տեղափոխելը ՎԱԿ-երի համար դարձավ ոչ այնքան շահավետ: Միևնույն ժամանակ զարգացած երկրներում նկատվում էր նոր տեխնիկայի ու տեխնոլոգիայի հետազոտական աշխատանքների զգալի թանկացում: Այս առումով հիմնական ծախսերը կատարվում էին գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների համար: Կարևոր էր նաև սպառման շուկաների մոտիկությունն ու կապիտալի առկայությունը: Եթե նախկինում վերոնշյալ գործոնները զարգացած երկրների մենաշնորհն էին, ապա այժմ դրանք ունեն նաև ՆԱԵ-ները, քանի

որ նրանցում զգալի մեծացել էին գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացման նպատակներով ֆինանսական միջոցների հատկացումները, դրանք հանգեցրին ՆԱԵ-ներում գիտական աշխատողների որակավորման բարձրացման լուրջ խթանների ձևավորմանը: Ավելին, գործնականում գրեթե բոլոր ՆԱԵ-ներում նկատվում է խնայողությունների աճ, որն օգտագործվում է ներդրումներն ակտիվացնելու նպատակով: Երկու տասնամյակների ընթացքում այդ երկրների շուկաների տարողունակությունը մեծացել է մի քանի անգամ, այդ թվում նաև բնակչության գնողունակությունը: Այս ամենը XX դարի վերջում նպաստեց ՎԱԿ-երի համար տնտեսապես շահավետ արտադրությունների տեղափոխմանը ՆԱԵ՝ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների փուլում: Դա հնարավորություն է ընձեռում տնտեսել մեծ գումարներ՝ օգտագործելով ՆԱԵ-ների էժան գիտական ներուժը:

Բնութագրելով ասիական ՆԱԵ-ների տնտեսական զարգացման առանձնահատկությունները՝ առաջին հերթին պետք է նշել այդ երկրների բնակչության ազգային մտածելակերպը և մշակութային յուրահատկությունները: Հատկապես՝

- անառարկելիորեն ղեկավարին ենթարկվելը և հարգանքը վերջինիս նկատմամբ,
- կրթական չափանիշների բարձր մակարդակը (միջազգային կազմակերպությունների գնահատմամբ՝ երիտասարդության մտավոր զարգացման մակարդակը բարձր է Սինգապուրում, Գապոնիայում, Հարավային Կորեայում, Հոնկոնգում),
- աշխատասիրությունը, ջանասիրությունը,
- դարերի ընթացքում ասիական երկրների միջև ձևավորված ամուր տնտեսական կապերը:

Ասիական ՆԱԵ-ների զարգացման համար մեծ նշանակություն է ունեցել նաև Գապոնիայի փորձը, որին կարճ ժամանակահատվածում հաջողվեց հասնել զարգացման բարձր մակարդակի: Գապոնիայի «տնտեսական հրաշքը» դարձավ օրինակ, որով էլ առաջնորդվեցին համարյա բոլոր ասիական ՆԱԵ-ները: Վերջիններիս զարգացմանը մեծապես նպաստել են այդ երկրների կառավարությունները: Սկզբնական շրջանում նրանց տնտեսական ռազմավարությունը նմանվում էր դասական մերկանտիլիզմին. խթանվում էր արտահանումը, և բավականին խստիվ սահմանափակումներ էին

դրվում ներմուծման վրա: Հովանավորչական քաղաքականությունը հայրենական արտադրողներին պաշտպանում էր արտերկրների մրցակիցներից: Ներքին շուկայում գործում էր ներմուծման փոխարինման քաղաքականությունը, ըստ որի՝ տեղական սպառողները կարող էին գնել միայն հայրենական արտադրանքը: Նման սահմանափակումները նպաստում էին արդյունաբերականացման գործընթացների արագացմանը, հայրենական արտադրողների շահերի պաշտպանությանը և արտահանմանն ուղղված արտադրությունների զարգացման խթանմանը:

1980-ական թվականների սկզբին զարգացող երկրներ ուղղված ընդհանուր ՕՈՒՆ-ների մոտ 42%-ը բաժին էր ընկնում ՆԱԵ-ներին: Ձեռնարկատիրական կապիտալի առաջատար ներդրող էր ԱՄՆ-ը, ապա ճապոնիան: Հատկապես ճապոնական ներդրումները նպաստեցին այս երկրների արդյունաբերականացմանը և արտահանման աճին: ճապոնական կապիտալի մասնակցությամբ ձևավորվեց խոշոր արտադրական հենք, որը թույլ տվեց համաշխարհային շուկա արտահանել մրցունակ, բարձրակարգ պատրաստի արտադրանք: Ասիական ՆԱԵ-ներում ՎԱԿ-երի ակտիվ գործունեությունը հատկապես պայմանավորված էր հետևյալ գործոններով՝

1. ՆԱԵ-ներն ունեն բարենպաստ աշխարհագրական դիրք, գտնվում են համաշխարհային առևտրատնտեսական ճանապարհների խաչմերուկում:

2. ՆԱԵ-ներում առկա էր քաղաքական կայունություն, դրանցում ապահովված էր ՕՈՒՆ-ների անվտանգությունը:

3. Որոշիչ դեր խաղացին նաև ոչ տնտեսական այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ աշխատասիրությունը, ջանասիրությունը, ճշմարտախոսությունը, խնայողությունների նկատմամբ հակումը և այլն:

Բազմաթիվ գործոնների առկայության շնորհիվ ՆԱԵ-ները հայտնվեցին արդյունաբերապես զարգացած երկրների հատուկ քաղաքական և տնտեսական հետաքրքրությունների կենտրոնում: ԱՄՆ-ի հետաքրքրությունները կապված էին Թայվանի և Հարավային Կորեայի հետ՝ որպես կոմունիստական ազդեցությանը հակադրվող երկրների: Վերջիններիս ԱՄՆ-ը տրամադրեց աննախադեպ տնտեսական և ռազմական օգնություն (1960-ական թվականներին Թայվանին տրամադրվեց 1.5 մլրդ դոլարի օգնություն):

Ասիական ՆԱԵ-ների ձեռքբերումներից մեկն էլ գործազրկության ցածր մակարդակն է: 1990-ական թվականների կեսերին «Ասիական

վագրերը», ինչպես նաև Թաիլանդը և Մալազիան, ամենացածր գործազրկություն ունեցող երկրներից էին: Տնտեսական փճի բարձր տեմպերն այստեղ ուղեկցվում էին բնակչության բարեկեցության զգալի բարձրացմամբ: 1980-1990-ական թվականների վերջերում այս երկրներում բնակչության մեկ շնչի հաշվով եկամուտն աճել է մոտ չորս անգամ: Միջազգային փորձագետների կարծիքով, ասիական ՆԱԵ-ները 2010 թվականին ՀՆԱ-ի ցուցանիշով կգերազանցեն արևմտաեվրոպական, իսկ 2020 թվականին՝ Հյուսիսային Ամերիկայի երկրներին: Այժմ արդեն «Ասիական վագրերը»՝ Սինգապուրը, Հարավային Կորեան, Թայվանը և Հոնկոնգը, դասվում են արդյունաբերապես զարգացած երկրների շարքը:

Ի տարբերություն ասիական ՆԱԵ-ների, լատինաամերիկյան երկրներն ունեն մեծ քանակությամբ օգտակար հանածոներ. այստեղ կան երկաթի հանքավայրեր, գունավոր մետաղներ (պղինձ, ցինկ), ուրան, քարածուխ, նավթ, բնական գազ, ոսկի, ադամանդ: Բացի այդ, այստեղ մեծ են անտառատարածքները (հատկապես Բրազիլիայում), որոնք պիտանի են գյուղատնտեսության համար: Պատահական չէ, որ տարածաշրջանի երկրները սկզբնական շրջանում մասնագիտացել էին հումքի արտահանման և արդյունահանող արդյունաբերության մեջ: Օրինակ, ոչ վաղ անցյալում Չիլիի արտահանման 80%-ը կազմում էր պղինձը:

Լատինական Ամերիկայի ՆԱԵ-ների տնտեսական զարգացման արդի օրնաչափություններն են.

1. Տարածաշրջանի բացությունը միջազգային առևտրի և ներդրումների համար:

Այս երկրներում պահպանվում են մրցակցային առավելությունները (աշխատանքի վարձատրության հարցում): Օրինակ, Մեքսիկայում աշխատավարձը միջին հաշվով երեք անգամ ցածր է, քան Հարավային Կորեայում: Արդյունքում՝ ՕՈՒՆ-ներն ուղղվում են լատինաամերիկյան ՆԱԵ-ների արտահանմանն ուղղված արտադրությունների զարգացմանը:

2. Տարածաշրջանի տնտեսական ինտեգրումը:

Լատինական Ամերիկայում արագանում են ինտեգրացման գործընթացները: Այստեղ գործում են մի քանի նմանատիպ միավորումներ, որոնցից առավել հաջողվածը Հարավային Ամերիկայի ընդհանուր շուկան է՝ ՄԵՐԿՈՍՈՒՐ-ը: Վերջինիս շրջանակներում աստիճանաբար վերանում են մաքսային սահմանափակումները, և

այժմ քննարկվում են Հյուսիսամերիկյան ազատ առևտրի համաձայնագրի (ՆԱՖՏԱ) հետ ինտեգրվելու հնարավորությունները: Անշուշտ, ինտեգրացիայի շարունակականությունը տարածաշրջանում կնպաստի առևտրի ակտիվացմանը, արտահանման աճին և երկրների ավելի նեղ մասնագիտացմանը:

3. Տարածաշրջանի ենթակառուցվածքային համակարգի զարգացման մակարդակը:

Ներկայումս տարածաշրջանի ենթակառուցվածքային համակարգը դեռևս թույլ է. դրա զարգացումը կպահանջի նոր ներդրումներ, կստեղծվեն նոր աշխատատեղեր. այն կծառայի որպես տնտեսական զարգացման հզոր ներուժ, կնպաստի ռեսուրսների ավելի արդյունավետ բաշխմանը, կբարձրացնի տարածաշրջանի երկրների արտադրական հնարավորությունները:

4. Լատինաամերիկյան երկրները ակտիվորեն ներգրավում են օտարերկրյա կապիտալ:

Քանի որ այս երկրների ներքին խնայողությունները չնչին են, ուստի կարևոր է համարվում միջազգային ֆինանսական շուկայից կապիտալի ներգրավումը: Այս նպատակով երկրները բարեփոխում են ազգային ներդրումային օրենսդրությունները՝ այն դարձնելով ավելի գրավիչ օտարերկրյա ներդրողների համար:

5. Պաշտպանության համար կատարված ծախսերի համեմատաբար ցածր մակարդակը:

Լատինաամերիկյան ՆԱԵ-ների ռազմական ոլորտում կատարված ծախսերը կազմում են ՀՆԱ-ի 1-2%-ը, որը ցածր է, քան Հարավարևելյան Ասիայի երկրներում:

Այս տարածաշրջանի տնտեսական զարգացումը շարունակելու համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ, որոնցից են՝

- արժութաֆինանսական ճգնաժամերի հետևանքների վերացումը,
- քաղաքական և սոցիալական անկայունության նվազեցումը, ներքաղաքական ճգնաժամերի լուծումը, սոցիալական լարվածության և բնակչության եկամտատևների տարբերության նվազեցումը,
- պետական համակարգի առողջացումը, պայքարը կոռուպցիայի և հանցագործության դեմ,
- պայքարը թմրամիջոցների առևտրի դեմ,
- բարեփոխումների համար առավել նպաստավոր պայմանների ապահովումը:

3.9. Նավթ արդյունահանող երկրներ

Ձարգացող երկրների կառուցվածքում որոշակի դեր են կատարում Մերձավոր Արևելքի նավթային ռեսուրսներով հարուստ երկրները, որոնք դեռևս 1960 թվականին միավորվեցին նավթ արտահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ) մեջ: ՕՊԵԿ-ի անդամ են տասնմեկ երկրներ: Դրանք են՝ Ալժիրը, Նիգերիան, Ինդոնեզիան, Իրանը, Իրաքը, Զուլեյթը, Սաուդյան Արաբիան, Միացյալ Արաբական Էմիրությունները, Վենեսուելան, Լիբիան և Կատարը, որոնք մատակարարում են աշխարհի նավթի 40%-ը և տիրում են ամբողջ աշխարհի նավթային պաշարների 78%-ին:

Երկրները համաձայնեցնում են իրենց նավթային քաղաքականությունը, որպեսզի կարգավորեն նավթի համաշխարհային շուկան և աջակցեն նավթ արտահանողներին՝ ստանալու մեծ եկամուտներ իրենց ներդրումներից:

Այսօր զարգացող երկրների կառուցվածքում էական դերակատարում ունեն մեծաթիվ բնակչությամբ այնպիսի երկրներ, ինչպիսիք են Թուրքիան, Չնդկաստանը, Պակիստանը և այլն: Սրանք, չնայած իրենց երկրներում առկա բազում հիմնախնդիրներին, ապահովում են տնտեսական աճի բարձր տեմպեր:

Ձարգացող երկրների ենթահամակարգում այժմ առանձնահատուկ ուշադրության են արժանանում մեծաթիվ բնակչությամբ, սոցիալ-տնտեսական բազում հիմնախնդիրներով, սակայն տնտեսական աճի բարձր տեմպեր ապահովող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Թուրքիան ու Չնդկաստանը:

Ձարգացող երկրների կառուցվածքում հարկ է նշել նաև աղքատ երկրների ենթախումբը, որոնց թիվը շուրջ 40 է, և գոյատևում են հիմնականում դրսից ստացվող օգնությունների հաշվին, որոնք առաջին անհրաժեշտության պարենամթերքով անգամ չեն բավարարում իրենց երկրի բնակչության պահանջումները:

3.10. Անցման շրջանի երկրներ

XX դարի վերջին սոցիալիստական համակարգի երկրներն ավելի ու ավելի էին բախվում այնպիսի դժվարին խնդրի հետ, ինչպիսին համաշխարհային տնտեսությանն այդ երկրների լիիրավ ինտեգրումն էր: Բարդությունը պայմանավորված էր այդ երկրներում ձևավորված տնտեսական համակարգի անկատարությամբ: Ուստի ժամանակի հրամայականն էր՝ իրականացնել տնտեսական բարեփոխումների մի ամբողջ համալիր, որն ընդգրկելու էր հատկապես տնտեսության վերակառուցումը՝ ապապետականացման, գների ազատականացման և ֆինանսական առողջացման միջոցով: Այս տեսանկյունից միջազգային պրակտիկայում ձևավորվել է հետսոցիալիստական երկրներում տնտեսական բարեփոխումների երկու մոդել:

✦ «շուկային թերապիա».- արմատական բարեփոխումներ, երբ տնտեսության վերակառուցումն ընթանում է արագ, սեփականության տարբեր ձևերի ստեղծման, գների միաժամանակյա ազատականացման, ֆինանսական կայունության ապահովման, տնտեսավարող սուբյեկտների բազմազան իրավունքների ձևավորման, ներքին շուկայի բացման միջոցով: Այս ուղին նախընտրեցին Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրները, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ հանրապետությունները:

✦ «աստիճանական» ուղի, երբ բարեփոխումներն ընթանում են աստիճանաբար, առանց ցնցումների: Այդպես իրականացվեցին վերակառուցման գործընթացները Չինաստանում, Վիետնամում:

Անշուշտ, միջազգային պրակտիկայում ակնհայտ դարձավ, որ շուկայական հարաբերություններին անցումը պահանջում է մակրոտնտեսական և միկրոտնտեսական վերափոխումների ամբողջ համալիրի ավելի երկարատև և աստիճանական ընթացք:

Կերպափոխումների արդյունավետությունը մեծապես պայմանավորված էր նաև երկրների տնտեսական, պատմական զարգացման առանձնահատկություններով: Այս է պատճառը, որ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրները, օրինակ, Չեխիան, Լեհաստանը, Սլովակիան, մյուսները, կարողացան կարճ ժամանակահատվածում հաղթահարել անցման շրջանի դժվարությունները և ինտեգրվել համաշխարհային տնտեսությանը: Բավական է նշել, որ այս երկրների տնտեսության ճյուղային կառուցվա-

քում գյուղատնտեսական արտադրանքի բաժինը կազմում է ՀՆԱ-ի 4,4%-ը (Սլովենիայում), իսկ արդյունաբերական արտադրանքինը՝ 41,7% (Չեխիայում): Այս երկրներում ծառայությունների բաժին է ընկնում ՀՆԱ-ի 50%-ից ավելին, և պատահական չէ, որ դրանց մեծ մասն այսօր արդեն հաղթահարել է անցման շրջանի բարդությունները և անդամակցում է եվրամիությանը: Մինչդեռ նախկին ԽՍՀՄ հանրապետությունները մինչև այսօր դեռ «դոփում են» բարեփոխումների շրջանակներում:

3.11. Հայաստանի Հանրապետությունը և համաշխարհային տնտեսությունը

Հայաստանի Հանրապետության համար համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու լիարժեք հնարավորություն ստեղծվեց նախկին ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: Անդամակցությունը միջազգային բազմաթիվ կազմակերպությունների, տարածաշրջանային ինտեգրման որոշ խմբավորումների, ինչպես նաև միջազգային բազմաբնույթ համաձայնագրերի ստորագրումը վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունը որպես պետություն առաջնորդվում է քաղաքակիրթ աշխարհի որդեգրած տնտեսական գործունեության կանոններով: Ավելին, ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը նշանակում է, որ միջազգային հանրությունն ընդունում է Հայաստանին որպես շուկայական բարեփոխումներ իրականացրած երկրի:

Սակայն անառարկելի է նաև այն իրողությունը, որ ազատական տնտեսական քաղաքականությունը, շուկայական տնտեսությանն անցման «շուկային թերապիայի» մոդելի կիրառումը, օրենսդրական բարեփոխումները, ապապետականացման գործընթացները հաջողությունների, տնտեսության զարգացման դրական միտումների հետ մեկտեղ երկրում ստեղծեցին սոցիալական, տնտեսական այնպիսի իրավիճակներ, որոնք դեռևս լուրջ կարգավորման կարիք ունեն:

Ցանկացած երկրի համար տնտեսական աճի և արտահանման շուկաների ընդլայնման տեսանկյունից չափազանց կարևոր նշանակություն ունի տարածաշրջանի երկրների հետ տնտեսական սերտ համագործակցության զարգացումը, որը, ինչ խոսք, առաջին

հերթին նպաստում է այդ երկրների տնտեսությունների ինտեգրման խորացմանը:

Ներկայումս Հայաստանն անդամ է տարածաշրջանային 2 կազմակերպությունների՝ ԱՊՀ-ին և Սևծովյան տնտեսական համագործակցությանը: Խոստովնալից են Հայաստան-Եվրամիություն փոխհարաբերությունները: Փորձեր են կատարվում ակտիվացնելու համագործակցությունը Իրան-Հայաստան-Թուրքմենստան, ինչպես նաև Հունաստան-Վրաստան շրջանակներում. թեպետ գործուն և արդյունավետ համագորակցության մասին խոսելը դեռևս վաղ է:

Այսպիսով, համաշխարհային տնտեսության արդի զարգացումներից Հայաստանի Հանրապետությունը անմասն մնալ չի կարող. դա ժամանակի հրամայականն է: Եվ պատահական չէ, որ մեր հանրապետությունը տարեցտարի վստահություն է ձեռք բերում միջազգային շուկայում որպես գործընկեր, որն էլ, անշուշտ, նպաստում է երկրի ներդրումային գրավչության բարձրացմանը, տնտեսական աճին, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Գրականություն

1. **Е.Ф. Авдокушин**, Международные экономические отношения: учебник, М., “Юристь”, 1999.
2. **И.П. Гурова**, Мировая экономика и международные отношения: тесты, упражнения, проблемные ситуации, М., изд-во “Дело”, 2003.
3. **А.П. Кузякин, М.А. Семичев**, Мировая экономика: учебное пособие, М., ТК, Велби, “Перспект”, 2003.
4. **В.М. Кудров**, Мировая экономика: учебник, М., изд-во “БЕК”, 1999.
5. **В.К. Ломакин**, Мировая экономика, М., ЮНМТИ, 2002.
6. Мировая экономика: учебник, под ред. **А.С. Булатова**, М., “Юристь”, 2003.
7. Мировая экономика и международный бизнес, под ред. проф. **В.В. Полякова**, М., 2005.
8. Международные экономические отношения, под ред. проф. **Б.М. Смитиенко**, М., 2005.
9. Международная экономика, **Алексей Киреев**, часть 2-ая, М., 2005.
10. **А.И. Погорлецкий**, Экономика зарубежных стран, М. 2001.
11. **Е.Д. Халевинская, И. Крозе**, Мировая экономика: учебник, М., “Юристь”, 1999.
12. World Investment Report, 2001 Promoting Linkages UN. Overview 4.
13. Statistic Yearbook, New York, 2003.

Ամսագրեր

1. «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», 2002, թիվ 1:
2. МЭ и МО, 2002, N 8.
3. МЭ и МО, 2003, N 3.
4. МЭ и МО, 2003, N 6.
5. МЭ и МО, 2005, N 10.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

4.1 Առևտուրը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում

Միջազգային տնտեսական հարաբերությունների ավանդական և առավել զարգացած ձևն առևտուրն է: Այն ծագել է դեռևս ստրկատիրության ժամանակաշրջանում, այսինքն՝ առաջինն է պատմականորեն և առավել զարգացածը՝ այսօր: Միջազգային առևտրի աճի տեմպերն ավանդաբար գերազանցել են համաշխարհային ներքին արդյունքի աճի տեմպերին: Ավելին, ինչպես ցույց է տալիս արտաքին առևտրային վիճակագրությունը, վերջին մեկուկես տասնամյակի ընթացքում նկատվում է համաշխարհային ապրանքաշրջանառության կայուն աճ: Եթե 2000-2004 թվականներին համաշխարհային ներքին արդյունքի աճի միջին տարեկան տեմպերը կազմել են 2.5%, ապա միջազգային առևտրի աճի տեմպերն այդ նույն ժամանակամիջոցում՝ միջինը 4.5%¹, իսկ 2005-2006 թթ. համապատասխան ցուցանիշները եղել են 4.3 և 7.0%²:

Միջազգային առևտուրը գիտատեխնիկական առաջադիմության ազդեցությամբ՝ տնտեսական կյանքի միջազգայնացման և աշխատանքի միջազգային բաժանման ինտենսիվացման պայմաններում երկրների միջև ապրանքների ու ծառայությունների շարժով պայմանավորված հարաբերություն է: Միջազգային առևտուրը ներառում է աշխարհի բոլոր երկրների միջև ձևավորված ապրանքադրամական հարաբերությունները, արտաքին առևտրի ամբողջությունը, համախառն ապրանքաշրջանառությունը: Գործնականում «միջազգային առևտուր» հասկացությունը տարբերվում է «արտաքին առևտուր» հասկացությունից: Արտաքին առևտուրը մեկ երկրի վճարովի արտահանումն ու վճարովի ներմուծումն է մնացած առևտրային գործընկերների (երկրների) հետ: Այսինքն՝ երկրների միջև ձևավո-

¹ World Trade in 2005. Overview, page 15.

² WTO, Trade Policy Review Body 2006, page 1.

րում են ապրանքային հոսքերի երկու ուղղություն՝ արտահանում և ներմուծում: Սակայն համաշխարհային առևտրի ծավալները հաշվարկվում են միայն արտահանման ծավալները գումարելու միջոցով՝ արտահայտած ԱՄՆ դոլարով և FOB գներով:

Աշխարհի ոչ մի երկիր չի կարող գոյատևել՝ առանց այլ երկրների հետ տնտեսական կապերի, իսկ շատ երկրների համար էլ առևտուրն արտաքին տնտեսական գործունեության հիմնական ձևն է: Երկրների միջև առևտրային կապերի անհրաժեշտությունը պայմանավորված է բնական և աշխատանքային ռեսուրսների սահմանափակվածությամբ, դրանց անհավասարաչափ բաշխմամբ, նեղ սպառողական շուկայով, ինչպես նաև նրանով, որ ապրանքների արտադրությունն առհասարակ պահանջում է տարբեր ռեսուրսների, տեխնոլոգիաների և ներդրումային ապրանքների առկայություն: Եթե նույնիսկ երկրներն ունեն ռեսուրսաապահովվածության բարձր մակարդակ, սպառողական լայն շուկա, միևնույն է, չեն կարող անհրաժեշտ արդյունավետությամբ արտադրել բոլոր այն ապրանքները, որոնց կարիքը հասարակությունն զգում է:

Միջազգային առևտուրն այն ոլորտն է, որը՝

- տանում է մասնագիտացման խորացմանը, ռեսուրսների սահմանափակվածությունից երկրների կախվածության թուլացմանը, համաշխարհային արտադրական ռեսուրսների արդյունավետ բաշխմանն ու օգտագործմանը, սպառման շուկաների ընդլայնմանը,

- հնարավորություն է տալիս ստեղծելու արժույթների փոխարկելիությունն ապահովող միջազգային ֆինանսական համակարգ, քանի որ առևտուրը գոյություն ունի միայն այդ պայմանի դեպքում,

- երկարաժամկետում նպաստում է երկրի բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի բարձրացմանը:

Միջազգային առևտուրը ազգային տնտեսությունը կապում է միասնական համաշխարհային համակարգի հետ: Վերջինը սկզբունքորեն տարբերվում է ներքին ազգային շուկաներից: Այսպես՝

- համաշխարհային շուկա մուտք են գործում միայն մրցունակ ապրանքները,

- դրանցում գործում են համաշխարհային գները,

- համաշխարհային շուկան ավելի մեծ չափերով է ենթակա մեծաշնորհացման, քանի որ այստեղ գլխավոր դերը պատկանում է

վերազգային կորպորացիաներին,

- վճռական ազդեցություն կարող են ունենալ ոչ միայն տնտեսական, այլ քաղաքական գործոնները (ներքաղաքական իրավիճակի փոփոխություն, էմբարգո և այլն),

- փոխադարձ հաշվարկները կատարվում են ազատ փոխարկելի արժույթով և միջազգային հաշվարկային միավորներով:

Միջազգային առևտրի սուբյեկտ են՝

- աշխարհի բոլոր երկրները, և արտաքին առևտրային կապերին դրանց մասնակցության ծավալն ու որակը մեծ չափերով կախված են այդ երկրների տնտեսական զարգացման մակարդակից:

- Վերջին տասնամյակների ընթացքում արտադրական գործընթացների միջազգայնացումը հանգեցրել է նրան, որ վերազգային կորպորացիաները վերաճել են միջազգային առևտրի կարևորագույն սուբյեկտի, որոնց 2000 թ. բաժին էր ընկնում համաշխարհային արտահանման 65-75%-ը³:

- Տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացների զարգացումը հանգեցրել է նրան, որ ներկայումս միջազգային առևտրի սուբյեկտներ են դարձել նաև ինտեգրացման խմբավորումները՝ Եվրամիությունը, Հյուսիսամերիկյան ազատ առևտրի ասոցիացիան և այլն:

Միջազգային առևտրի օբյեկտներ են մարդկային աշխատանքի արդյունքները՝ ապրանքներն ու ծառայությունները: Ապրանքը, լայն իմաստով, առարկա է, որը բավարարում է հասարակական որևէ պահանջմունք և արտադրվում է փոխանակության նպատակով: Այս սահմանման շրջանակներում ապրանք կարող են համարվել նաև ծառայությունները, իսկ ավելի նեղ իմաստով ապրանքը մարդու աշխատանքի արդյունք է, որը բավարարում է հասարակական պահանջմունքները, արտադրվում է փոխանակության նպատակով, տեսանելի է և շոշափելի: Ծառայություն է կոչվում մարդու աշխատանքի այն արդյունքը, որը նույնպես ուղղվում է հասարակական պահանջմունքների բավարարմանը, արտադրվում է փոխանակության համար, սակայն տեսանելի և շոշափելի չէ: Այստեղից չի հետևում, որ բոլոր ապրանքներն ու ծառայությունները կարող են դառնալ միջազգային առևտրի օբյեկտ: Ուստի անհրաժեշտ է միմյանցից

³ St'u B.A. Доргачев, Международные экономические отношения. ЮНИТИ. М., 2005, т. 143:

սահմանազատել միջազգայնորեն «վաճառվող» և «չվաճառվող» ապարանքներ հասկացությունները: Վաճառվող են համարվում այն ապրանքները, որոնք կարող են տեղաշարժվել տարբեր երկրներ: Դրանց գինը որոշվում է ինչպես ներքին, այնպես էլ համաշխարհային շուկայում առաջարկի ու պահանջարկի փոխազդեցությամբ:

Չվաճառվող ապրանքներն այն ապրանքներն են, որոնք սպառվում են հենց այն երկրում, որտեղ արտադրվում են, այսինքն՝ չեն տեղաշարժվում երկրների միջև: Վաճառվող և չվաճառվող ապրանքների միջև սահմանը զուտ պայմանական է. այն կախված է դրանց տեղափոխման տրանսպորտային ծախսերից, գոյություն ունեցող առևտրային արգելքներից: Գործնականում, միջազգային առևտրի ազատականացման ուղղությամբ իրականացվող միջոցառումները, ԳՏԱ ազդեցությամբ տրանսպորտային ծախսերի կրճատման ժամանակակից միտումները նպաստում են համաշխարհային շուկա մուտք գործող վաճառվող ապրանքների տեսականու և ծավալների անընդհատ ընդլայնմանն ու աճին:

4.2. Միջազգային առևտրի տեսությունները

Միջազգային առևտրի հիմնախնդիրները հետաքրքրել են գիտնականներին և քաղաքագետներին դեռևս այն ժամանակ, երբ մշակված չէին տնտեսագիտության տեսության այլ ուղղությունները:

Մերկանտիլիստական տեսությունը: Ինչո՞ւ են երկրները միմյանց հետ առևտուր անում հարցին առաջինը փորձեցին պատասխանել մերկանտիլիստները՝ XV-XVIII դարերում: Տեսության կողմնակիցները պնդում էին, թե երկրի գլխավոր հարստությունը, ազգի առաջընթացի հիմքը մետաղական դրամն է՝ ոսկին ու արծաթը: Ուստի արտաքին առևտուրը պետք է ուղղվի ոսկու կուտակմանը, քանի որ պարզ ապրանքափոխանակության ժամանակ երկու ապրանքներն էլ օգտագործվում են և դադարում գոյություն ունենալուց: Առավելագույն օգուտներ ստանալու համար առաջարկվում էր ուժեղացնել պետական միջամտությունն ու վերահսկողությունը արտաքին առևտրին: Պետությունը պետք է արտահանի ավելի շատ ապրանք, քան ներմուծի, կարգավորի արտաքին առևտուրը արտահանման ծավալի մեծացման հաշվին, կրճատի կամ խիստ սահմանափակի հումքի արտահանումը և թույլատրի հումքի անարգել

ներմուծումը, արգելի գաղութների առևտուրը այլ երկրների հետ:

Մերկանտիլիզմի գաղափարախոսության դրական կողմն այն է, որ առաջին անգամ տնտեսագիտական միտքը ներկայացրեց արտաքին առևտրի և երկրի տնտեսության զարգացման միջև կապը, և խոսվեց երկրի առևտրային հաշվեկշռի մասին: Սակայն մերկանտիլիստական տեսության սահմանափակվածությունն այն էր, որ մեկ ազգի հարստացումը դիտարկվում էր որպես մյուսի աղքատացման, գոյություն ունեցող հարստության վերաբաշխման միջոցով իրականացվող գործընթաց՝ անտեսելով ազգային տնտեսության հետագա զարգացման հնարավորությունը:

Միջազգային առևտրի դասական տեսությունները: Մերկանտիլիզմին առաջին գիտական հարվածը հասցրեց տնտեսագիտության դասական տեսությունը: Քննադատելով ազգերի հարստության մերկանտիլիստական մոտեցումները՝ անգլիացի տնտեսագետ Ա. Սմիթը փորձեց ապացուցել, որ ազգի բարեկեցությունը կախված է ոչ այնքան կուտակված ոսկու քանակությունից, որքան ապրանքներ և ծառայություններ արտադրելու կարողությունից: Հետևաբար, յուրաքանչյուր ազգի առջև ծառայած է ոչ թե ոսկու սպառման, այլ աշխատանքի բաժանման խորացման հիման վրա արտադրության զարգացման խնդիրը:

«Ազգերի հարստության բնույթի և պատճառների հետազոտության մասին» աշխատության մեջ Ա. Սմիթը պնդում է, որ պետության համար շահավետ կարող է լինել ոչ միայն ապրանքների վաճառքը, արտահանումը, այլև ներմուծումը: Այնուհետև նա փորձեց ցույց տալ, թե որ ապրանքներն են շահավետ արտահանել և որը ներմուծել: Իսկ այդ խնդրի իրականացման լավագույն ուղին գոյություն ունեցող օրենքների շրջանակներում գործունեության ոլորտի ընտրությունն է և բացարձակ տնտեսական ազատությունը: Այս դեպքում միայն հնարավոր կլինի ապրանքներն արտադրել նվազագույն ծախսումներով՝ ելնելով երկրում առկա բացարձակ առավելություններից: Նույն տրամաբանության շարունակությունն այն է, որ երկիրը կծգտի բացարձակ առավելություններով արտադրված արտադրանքը փոխանակել մեկ այլ երկրում բացարձակ առավելությունների պայմաններում արտադրված ապրանքների հետ: Տնտեսագիտական գրականության մեջ Սմիթի այս գաղափարը ստացել է բացարձակ առավելությունների տեսություն անվանումը: Բացարձակ առավելությունների տեսության ազդեցիկ կողմը

թերևս այն է, որ հենվում է արժեքի աշխատանքային տեսության վրա. ապրանքների արտադրության համար կատարված ծախսումները հաշվարկվում են՝ ելնելով ժամանակի գործոնից և ցույց է տալիս աշխատանքի բաժանման առավելությունները ոչ միայն ազգային, այլև միջազգային մակարդակով: Իսկ սահմանափակվածությունը նկատելի է, երբ միջազգային առևտուրը բացատրելիս չի կարողանում տալ այն հարցի պատասխանը, թե ինչու են երկրները միմյանց հետ առևտուր անում, եթե չունեն այս կամ այն ապրանքի արտադրության բացարձակ առավելություններ:

Հարցին պատասխանեց Դ. Ռիկարդոն. ընդգծելով միջազգային տնտեսական հարաբերությունների առանձնահատկությունը, նա ձևավորեց մի մոդել, որի միջոցով ցույց տվեց, որ Սմիթի առաջարկած սկզբունքների խախտումը արգելք չի կարող լինել միջազգային առևտրի զարգացման համար: Դ. Ռիկարդոն հայտնագործեց երկրների համեմատական առավելությունների օրենքը, ըստ որի՝ երկիրը պետք է մասնագիտանա այն ապրանքների արտահանման մեջ, որի արտադրության համար ունի բացարձակ առավելություններ (եթե ունի երկու ապրանքների արտադրության բացարձակ առավելություն) կամ ամենափոքր բացարձակ առավելություններ (եթե չունի գոնե մեկ ապրանքի արտադրության բացարձակ առավելություն): Օրենքի ճշմարտացիությունը Դ. Ռիկարդոն փորձեց ապացուցել՝ բերելով Անգլիայի և Պորտուգալիայի օրինակները, որոնք արտադրում են երկու ապրանք՝ կտավ և գինի: (Այդ օրինակի էլակետային պայմանները տե՛ս թիվ 1 աղյուսակում):

Աղյուսակ 1

Ապրանք \ երկիրը	Պորտուգալիա	Անգլիա
Գինի (X շիշ)	80 աշխ. / տարի	120 աշխ. / տարի
Կտավ (Y մետր)	90 աշխ. /տարի	100 աշխ. / տարի

X շիշ գինի արտադրելու համար Պորտուգալիայից կպահանջվի տարեկան 80 աշխատողի, իսկ Անգլիայից՝ 120 աշխատողի աշխատանք: Տարեկան Y մետր կտավ արտադրելու համապատասխան ցուցանիշներն են 90 և 100: Աղյուսակից հետևում է, որ Պորտուգալիան ունի գինի և կտավ արտադրելու բացարձակ առավելություն-

ներ: Այնուհանդերձ, վերջինս շահագրգռված է մասնագիտանալու գինու, իսկ Անգլիան՝ կտավի արտադրության մեջ: Իրոք, եթե համեմատելու լինենք երկու երկրների գինու արտադրության ծախսերը (80/120) կտավի արտադրության ծախսերի հետ (90/100), ապա կտեսնենք, որ Պորտուգալիան ունի գինու արտադրության համեմատական առավելություն՝ $80/120 < 90/100$: Պորտուգալիայի ծախսերը կազմում են գինու արտադրության անգլիական ծախսերի 66%-ը, կտավի արտադրության՝ 90%-ը:

Համեմատական ծախսերը թույլ են տալիս որոշելու շահավետ փոխանակության սահմանները: Պորտուգալիայում մեկ միավոր գինին փոխանակվում է 0,88 միավոր կտավի հետ (80/90), իսկ Անգլիայում մեկ միավոր կտավը՝ 1.2 միավոր գինու հետ (120/100): Ուստի Պորտուգալիան շահագրգռված կլինի միջազգային առևտրի մեջ այնքան ժամանակ, քանի դեռ կկարողանա մեկ միավոր գինու դիմաց ստանալ 0,88 միավորից ավելի կտավ, իսկ Անգլիան՝ մեկ միավոր գինու դիմաց տալ 1,2 միավորից պակաս կտավ: Այսպիսով, փոխշահավետ փոխանակության սահմանները տեղաբաշխված են 0,88 և 1,2 միավորների սահմաններում: Տվյալ սահմաններում իրականացվող ցանկացած փոխանակություն համարվում է շահավետ:

Դ. Ռիկարդոյի այս՝ բավականաչափ պարզեցված սխեմայի հիման վրա կարելի է հաջորդական փուլերով մոտենալ իրականությանը՝ ուշադրություն դարձնելով հետևյալ համգամանքների վրա.

- համեմատական ծախսերի փոդային արտահայտության (աշխատաժամանակի փոխարեն),
- սխեմայի մեջ ընդգրկել ավելի մեծ թվով երկրներ և ապրանքներ,
- հաշվի առնել տրանսպորտային ծախսերը,
- արտադրության գործընթացում կատարվող փոփոխություններով պայմանավորված արտադրության ծախսերի փոփոխությունները,
- յուրաքանչյուր երկրի ներսում արտադրության գործոնների՝ կապիտալի և աշխատուժի համեմատական կայունությունը:

Համեմատական առավելությունների տեսության կարևորագույն նվաճումը հետևյալն է. այն բացահայտեց արտաքին առևտրի շահավետությունը մասնակից բոլոր պետությունների համար՝ դեռ նետելով այն թեզը, թե մեկ երկիրը կարող է շահ ստանալ՝ վնաս պատ-

ճառելով մյուսներին: Ժամանակակից պայմաններում համեմատական առավելությունների տեսության նշանակությունն այն է, որ հնարավորություն է ընձեռվում երկրների արտաքին տնտեսական քաղաքականությունը կառուցել գիտական հիմքերի վրա: Այնուհանդերձ, Դ. Ռիկարդոն չպատասխանեց այն հարցին, թե ինչո՞ւ երկրներն ունեն այս կամ ապրանքի արտադրության համեմատական առավելություններ:

Արտադրության գործոնների հարաբերակցության տեսությունը: XX դարի 1930-ական թթ. շվեդ նորդասական տնտեսագետներ էլի Զենքշերը և Բերտիլ Օհլինը փորձեցին պատասխանել Դ. Ռիկարդոյի կողմից անավարտ թողնված հարցին: Ըստ նրանց՝ երկրների համեմատական առավելությունների հիմքում դրված է արտադրության տարբեր գործոններով այդ երկրների ապահովվածությունը: Է. Զեքշերի գլխավոր ներդրումը, որը հետագայում լրացվեց Բ. Օհլինի կողմից, այն է, որ միջազգային առևտուրը հիմնավորվում է տարբեր երկրների տնօրինության տակ գտնվող արտադրության գործոնների առատությամբ կամ հարաբերական սահմանափակվածությամբ: Երկրներն իրոք շահագրգռված են մասնագիտանալու այն ապրանքների արտադրության բնագավառում, որի համար ունեն ավելի բարենպաստ նախադրյալներ: Իսկ որտեղի՞ց են ի հայտ գալիս այդ նախադրյալները: Պատասխանը հետևյալն է. երկրի համար գերադասելի է այն ապրանքների արտադրությունը, որի համար առկա են ավելի «առատ» արտադրության գործոններ: Միջազգային առևտուրն այս դեպքում, ըստ Բ. Օհլինի, կդառնա «ավելցուկ գործոնների ուղղակի փոխանակություն պակաս գործոնների հետ»: Երբ Պորտուգալիան արտահանում է գինի, իսկ Անգլիան՝ կտավ, ապա տեղի է ունենում պորտուգալական հողերի փոխանակություն անգլիական կապիտալի հետ: Արժեքի աշխատանքային տեսությունը չի հերքվում. լրացվում է այն տրամաբանությամբ, որ աշխատանքին զուգահեռ արժեքի ստեղծման գործընթացին մասնակցում են նաև արտադրության այլ գործոնները:

Զեքշեր-Օհլին թեորեմը կարելի է ձևակերպել այսպես. յուրաքանչյուր երկիր արտահանում է այն գործոնահինտեսսիվ ապրանքները, որոնց արտադրության համար տնօրինում է հարաբերականորեն ավելցուկ արտադրության գործոնների և ներմուծում այն ապրանքները, որոնց արտադրության համար չունի արտադրության համապատասխան գործոններ: Այս սկզբունքով իրականաց-

վող միջազգային փոխանակությունը հանգեցնում է արտադրության գործոնների գների հավասարեցմանը: Արտադրության գործոնների գին ասելով նրանք հասկանում էին աշխատանքի համար աշխատավարձը, կապիտալի համար՝ տոկոսը, իսկ հողի համար՝ ռենտան:

Արտադրության գործոնների հարաբերակցության տեսությունը մեկ քայլ առաջ էր համեմատական առավելությունների տեսությունից: Այն ոչ միայն ընդունում է, որ երկրների միջև առևտուրը հենվում համեմատական առավելությունների վրա, այլև բացահայտում է համեմատական առավելությունների պատճառը, որն ամփոփված է երկրների արտադրության այս կամ այն գործոններով հագեցվածության մեջ:

Լեոնտևի «պարադոքսը»: Չեքչեր-Օհլինի տեսության ճշմարտացիությունը փորձեց ապացուցել ծագումով ռուս, ամերիկացի տնտեսագետ Վասիլի Լեոնտևը: ԱՄՆ-ի արտահանման և ներմուծման՝ կատարված կապիտալի և աշխատուժի ծախսերի հաշվարկի միջոցով մի քանի փորձնական թեստերից հետո նա եզրակացրեց, որ Չեքչեր-Օհլին տեսության պայմանները գործնականում չեն հաստատվում: Ենթադրվում էր, որ ԱՄՆ-ը արտահանում է կապիտալաւտար, ներմուծում՝ աշխատատար ապրանքներ, քանի որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո համարվում էր ամենահարուստ կապիտալիստական երկիրը: Արդյունքները չհամապատասխանեցին սպասումներին, ուստի այն ստացավ Լեոնտևի «պարադոքս» անվանումը: Պարզվեց, որ կապիտալի հարաբերական ավելցուկը չի արտացոլվում ամերիկյան արտաքին առևտրում. ԱՄՆ-ը արտահանում էր ավելի աշխատատար և պակաս կապիտալաւտար արտադրանք, քան ներմուծում է: Տնտեսագետը ենթադրում էր, որ տվյալ քանակությամբ կապիտալի ցանկացած համադրության պայմաններում ամերիկյան աշխատանքի մեկ մարդ-տարին համարժեք է եվրոպական աշխատանքի երեք մարդ-տարվան: Այսինքն՝ ամերիկյան աշխատուժի բարձր արտադրողականությունը պայմանավորված է նրա ավելի բարձր որակավորմամբ, որն էլ դրվեց «որակյալ աշխատուժի» մոդելի հիմքում:

Ըստ այդ տեսության՝ արտադրության գործընթացին մասնակցում են ոչ թե երեք, այլ չորս գործոններ. որակյալ աշխատուժ, անորակ աշխատուժ, կապիտալ և հող: Պրոֆեսիոնալ անձնակազմի և բարձր որակավորում ունեցող աշխատուժի հարաբերական ավել-

ցուկը մեծացնում է այն ապրանքների արտահանումը, որոնց արտադրության համար պահանջվում է որակյալ աշխատուժ: Ոչ որակյալ աշխատուժի ավելցուկը նպաստում է այն ապրանքների արտահանմանը, որոնց արտադրության համար բարձր որակավորում ունեցող աշխատուժ չի օգտագործվում:

Լեոնտևի «պարադոքսը» բացատրելու փորձերը նպաստեցին «կապիտալ» կատեգորիայի բացատրության նոր տեսությունների ձևավորմանը:

Միջազգային առևտրի արդի տեսությունները: Անցյալ դարի 60-ականների արտադրության գործոնների համալրումը նոր տարրերով՝ տեխնոլոգիաներով, գիտատար, բարձրտեխնոլոգիական ճյուղերի զարգացումը և դրանց արտադրանքի միջազգային փոխանակության սրընթաց աճը հանգեցրին նոր տեխնոլոգիական տեսությունների ձևավորմանը: Հարկ եղավ միջազգային առևտուրը բացատրել նոր դիրքերից: Առավել ուշադրության են արժանի Մ. Պոզների «Տեխնոլոգիական խզման», Ռ. Վերնոնի «Ապրանքի կենսափուլ», Մ. Պորտերի «Երկրների մրցակցային առավելությունների» տեսությունները⁴:

Մ. Պոզների «Տեխնոլոգիական խզման» տեսությունը կառուցված է մի գաղափարի վրա, ըստ որի՝ արտադրության գործոններով միանման հագեցվածության դեպքում երկրների միջև առևտրի զարգացումը պայմանավորված է այն տեխնիկական փոփոխություններով, որոնք ծագում են առևտուր անող երկրներից մեկի որևէ մեկ ճյուղում: Քանի որ տեխնիկական նորարարությունները սկզբնապես երևան են գալիս մեկ երկրում, հենց նա էլ ձեռք է բերում առաջնություն: Տեխնիկական նորարարությունների արդյունքում «տեխնոլոգիական խզում» է առաջանում այդ նորարարություններն օգտագործող և չօգտագործող երկրների միջև:

Նոր տեխնոլոգիան հնարավորություն է տալիս ապրանքներն արտադրել ավելի քիչ ծախսումներով: Եթե նորարարությունը ներառված է նոր ապրանքի մեջ, տեխնիկական առաջնայնություն ունեցող երկրի ձեռնարկատերը որոշակի ժամանակաշրջանում արտահանելով այդ ապրանքը՝ մենաշնորհային դիրք է հաստատում շու-

⁴ Տե՛ս M. Posner, "International Trade and Technical Change", Oxford Economic Papers, 1961; R. Vernon, "International Investment and International Trade in the Product Cycle", Quarterly Journal of Economics, May 1966. М. Портер., Международная конкуренция, М., Международные отношения, 1993:

կայում: Հետևաբար, շահավետ է արտադրել ոչ թե այնպիսի ապրանք, որպիսին արտադրում են բոլոր երկրները, այլ այնպիսին, որ ոչ մի երկիր չի արտադրում, և որոնց պահանջարկը մեծ է: Իսկ երբ այդ տեխնոլոգիան յուրացվում է այլ երկրների կողմից, ապա պետք է արտադրել մեկ այլ «անհայտ» ապրանք: Միջազգային առևտուրը զարգանում է, երբ որևէ երկիր արտադրում է նոր տեխնոլոգիայով «հագեցված» այնպիսի արտադրանք, որը ոչ մի այլ երկիր դեռևս չի արտադրել:

Ռ. Վեռնոնի «Ապրանքի կենսափուլ» մոդելը նորտեխնոլոգիական ուղղության առավել տարածված տեսությունն է, քանի որ աշխատանքի միջազգային բաժանման իրական վիճակը ավելի ստույգ է արտացոլում: Այդ տեսության համաձայն՝ յուրաքանչյուր նոր ապրանք անցնում է կյանքի չորս փուլերով՝

- մուտք դեպի շուկա,
- տարածում ներքին շուկայում,
- շուկայի հագեցում,
- «ծերացում» կամ «մահացում»:

Տեխնոլոգիաների զարգացման մակարդակն ու պահանջարկը յուրաքանչյուր փուլում տարբեր է: Առաջին փուլում ապրանքը նոր է մուտք գործում շուկա. դրա նկատմամբ պահանջարկը դեռևս փոքր է: Այն թանկ է, քանի որ նոր տեխնոլոգիան կարող է յուրացնել բարձր որակավորում ունեցող աշխատուժը, ուստի և սպառվում է միայն բարձր եկամուտներ ունեցող խավի կողմից: Առաջին փուլում արտահանման ծավալներն աննշան են:

Ապրանքի կյանքի երկրորդ փուլում այն շուկայում մեծ վարկանիշ է ձեռք բերում, և սկսվում է ապրանքի սերիական արտադրությունը: Բնականաբար գներն իջնում են: Այս փուլում ներքին շուկայում լայն սպառումը արտադրողներին մղում է դրանց արտադրությունը կազմակերպել այլ երկրներում:

Երրորդ փուլում ներքին շուկան հագեցնում է, արտադրության տեխնոլոգիաներն ամբողջությամբ ստանդարտացվում են, որը թույլ է տալիս օգտագործել պակաս որակյալ աշխատուժ, արտադրության ծախքերը կրճատվում են, սակայն շուկայի հագեցումն այլևս չի մեծացնում սպառման ծավալը: Արտերկրներում փորձ է արվում հասնելու այդ ապրանքի արտադրության ծավալների ընդլայնմանը:

Վերջին՝ չորրորդ փուլում ապրանքը «ծերանում» է, և արտադ-

րությունը կրճատվում է: Գների անկումը այլևս չի նպաստում պահանջարկի մեծացմանը:

Արտաքին առևտրի տեսությունների ընդհանուր հիմնախնդիրներից մեկը ազգային տնտեսությունների շահերի և ֆիրմաների շահերի համատեղումն է: Դա կապված է այն հարցի պատասխանից, թե կոնկրետ երկրների առանձին ֆիրմաներ որոշ ապրանքների միջազգային առևտրում և կոնկրետ ճյուղերում ինչպե՞ս են ստանում մրցակցային առավելություններ: Այդ հարցի պատասխանը փորձեց տալ ամերիկացի տնտեսագետ Մայքլ Պորտերը:

Մ. Պորտերը միջազգային առևտրի հիմնախնդիրների վերլուծության առնչությամբ մշակեց միանգամայն նոր մոտեցում, որի նախադրյալներից մեկը հետևյալն է. «Միջազգային շուկայում մրցակցում են ֆիրմաները, այլ ոչ թե երկրները: Անհրաժեշտ է հասկանալ, թե ինչպես է ֆիրման ստեղծում ու պահպանում իր մրցակցային առավելությունները, որպեսզի պարզաբանվի երկրի դերն այդ գործընթացում»⁵: Երկրի մրցունակությունը համաշխարհային շուկայում որոշվում է չորս հիմնական պայմաններով՝

- գործոնային,
- պահանջարկի,
- սպասարկող և «ազգակից» արտադրությունների վիճակի,
- որոշակի մրցակցային իրավիճակում ֆիրմայի ռազմավարության փոխկապվածությամբ և փոխազդեցությամբ:

4.3. Արտաքին առևտրային քաղաքականություն

Արտաքին առևտրային քաղաքականությունը երկրների կողմից իրականացվող միջոցառումների այն համակարգն է, որի միջոցով ընդլայնվում կամ սահմանափակվում են օտարերկրյա ապրանքների՝ տվյալ ազգային շուկա ներթափանցելու հնարավորությունները: Արտաքին առևտրային քաղաքականության նպատակներն են՝

- աշխատանքի միջազգային բաժանմանը տվյալ երկրի ներգրավման միջոցի և աստիճանի փոփոխությունը,
- արտահանման և ներմուծման ծավալների փոփոխությունը,
- արտաքին առևտրի կառուցվածքի փոփոխությունը,

⁵ M.E. Porter The Competitive Advantage of Nation. N.Y., 1990.

- երկրի ապահովումը անհրաժեշտ ռեսուրսներով (հումքով, էլեկտրաէներգիայով և այլն):

Արտաքին առևտրային քաղաքականության հիմնական նպատակը տվյալ երկրի համար առավելագույն շահ ապահովելն է, անկախ այն բանից, թե երկիրն ինչպիսի քաղաքականություն է վարում՝ ազատ առևտրայի՞ն, թե՞ հովանավորչական:

Հարյուրամյակների ընթացքում տնտեսագետների միջև շարունակվող վեճն այն մասին, թե տնտեսական աճի ապահովման տեսանկյունից արտաքին առևտրային քաղաքականության ո՞ր ուղղությունն է ռացիոնալ, վերջնական եզրահանգման առաջսօր չի արժանացել: Եթե հովանավորչությունը հնարավորություն է տալիս զարգացնել ազգային տնտեսությունը, ստեղծել նպաստավոր պայմաններ ներքին արտադրողներին օտարերկրյա մրցակցությունից պաշտպանելու համար, ապա ազատ առևտուրը թույլ է տալիս արտադրության ներքին ծախսերը համեմատել միջազգային ծախսերի հետ՝ ստեղծելով համաշխարհային մրցունակ ապրանքներ:

Արտաքին առևտրային քաղաքականությունը ազատ է, բաց, եթե ապրանքների տեղաշարժի ճանապարհին սահմանվող արգելքների մակարդակը նվազագույն է:

Հովանավորչությունը քաղաքականություն է, որը բարձր մաքսատուրքերի և ոչ սակագնային քաղաքականության մեթոդների օգտագործման ճանապարհով հայրենական արտադրությունը պաշտպանում է օտարերկրյա մրցակցությունից: Պատմական զարգացման տարբեր ժամանակաշրջաններում երկրներին բնորոշ էին արտաքին առևտրային քաղաքականության տարբեր համակարգեր: Հովանավորչություն՞ն, թե՞ ազատ առևտուր հարցադրման գործում տնտեսագետների շրջանակում ձևավորվել են մի շարք մտեցումներ: Հովանավորչության կողմնակիցներն առաջ են քաշում մի շարք փաստարկներ, որոնց միջոցով հիմնավորում են այդ քաղաքականության անհրաժեշտությունը:

Պետական անվտանգության մասին փաստարկը առաջադրվում է այն հիմնավորմամբ, թե երկրները պետք է իրենց տարածքներում զարգացնեն այնպիսի արտադրություններ, որոնք ռազմական բախումների ժամանակ հնարավորություն տան պահպանելու երկրի տնտեսական անկախությունը: Ասվածն առաջին հերթին վերաբերում է գյուղատնտեսությանը, նաև ռազմավարական նշանակություն ունեցող այնպիսի ճյուղերի զարգացմանը, ինչպիսիք են

էլեկտրաէներգիայի արտադրությունը, քիմիական արտադրության որոշ ճյուղերը: Սա բավականին ծանրակշիռ փաստարկ է, հատկապես գյուղատնտեսության առումով:

Հովանավորչությունը նպաստում է «նորելուկ» ճյուղերի զարգացմանը, կամ այն ունի դաստիարակչական նշանակություն: Այս փաստարկը կարելի է համարել բավականաչափ ծանրակշիռ, բայց թե ո՞ր ճյուղերը պետք է պաշտպանվեն օտարերկրյա մրցակցությունից, և այդ պաշտպանությունը որքան կշարունակվի, մանրակրկիտ վերլուծության կարիք ունեն, որպեսզի բացառվեն մասնավոր շահերին ծառայելու և խտրական առևտրային միջավայր ձևավորելու հնարավորությունները:

Օտարերկրյա կապիտալի ներգրավման մասին փաստարկը, որն առաջ էր քաշում Ա.Սմիթը, հիմնավորվում է նրանով, որ պատրաստի ապրանքների շարժի ճանապարհին սահմանվող մաքսատուրքերը ստիպում են օտարերկրյա ֆիրմաներին՝ արտահանման երկրներում ստեղծելու իրենց մասնաճյուղերը: Ներմուծված կապիտալը թույլ է տալիս բարձրացնելու արտադրության արդյունավետությունը. այս պարագայում հովանավորչության բարենպաստ ազդեցությունը, անշուշտ, կարող է դրսևորվել որոշակի պայմաններում.

- նոր ձևավորվող ճյուղերը պետք է զարգանան չօգտագործված բնական և մարդկային ռեսուրսների միջոցով,
- նոր արտադրությունները գոյություն ունեցող ճյուղերը չպետք է զրկեն նրանց տնօրինության տակ գտնվող աշխատուժից ու կապիտալից, և ի վնաս դրանց՝ տանեն արտադրության ծախքերի բարձրացմանը,
- սահմանվող մաքսատուրքերը չպետք է առնչվեն առաջին անհրաժեշտության ապրանքներին, քանի որ դրա պատճառով վնաս կկրեն հենց սպառողները:

Ամերիկացի տնտեսագետներից Ս. Կերեյան ու Մ. Փաթթենը հատուկ կարևորում են բնակչության կենսամակարդակի պաշտպանությունը, մատնանշելով, որ հովանավորչությունը պահպանում է աշխատավարձի բարձր մակարդակ՝ ի դեմս ցածր կենսամակարդակ ունեցող երկրների մրցակցության: Հենց այդ գաղափարն էր ընկած փոխհատուցման մաքսատուրքի հիմքում, որի պաշտպանությամբ 1912 թ. հանդես եկավ Փաթթենը: Իրոք, հովանավորչության միջոցով ներքին արտադրողների պաշտպանությունը հանգեցնում

է ներմուծվող ապրանքների գների բարձրացմանը: Դրանց սպառումը ներքին շուկայում կրճատվում է, այդ ապրանքների նկատմամբ պահանջարկը միաժամանակ նպաստում է ազգային արտադրության զարգացմանը, մեծանում է զբաղվածությունը: Բարելավվում են նաև առևտրային պայմանները, քանի որ սահմանափակելով օտարերկրյա ապրանքների մուտքը՝ երկիրը միաժամանակ կարող է խթանել արտահանումը:

Այս փաստարկը ճիշտ է այն դեպքում, եթե ներմուծվող ապրանքների նկատմամբ պահանջարկը ճկուն չէ, և եթե գործընկեր-երկրները չեն իրականացնում նմանատիպ միջոցառումներ տվյալ երկրի նկատմամբ:

Ջ.Մ. Քեյնսը գտնում էր, որ կարճաժամկետ հովանավորչությունը նպաստում է զբաղվածության աճին, իսկ երկարաժամկետի դեպքում այն վերածում է հարևանի հաշվին ապրելու քաղաքականության⁶:

Հովանավորչական քաղաքականության առավել ամփոփ տեսական ընդհանրացումը տրվել է ավստրալիացի տնտեսագետ Մաքս Կորդենի կողմից, որի աշխատությունները հսկայական դեր են խաղացել Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի՝ միջազգային առևտրային քաղաքականության վերլուծության համար: Մ. Կորդենը հովանավորչական քաղաքականության իրականացումը գնահատում է որպես այլընտրանքային գործընթաց, որը պետք է ծառայի այն իրականացնող երկրի կարճաժամկետ ռազմավարությանը, հիմնավորելով, որ հովանավորչությունը, որպես ազգային արտադրողների պաշտպանության քաղաքականություն, հաճախ կարող է ամբողջ տնտեսության համար ունենալ ոչ արդյունավետ հետևանքներ: Տնտեսության որոշ ճյուղերի նկատմամբ իրականացվող հովանավորչությունը, որպես կանոն, իր ազդեցությունն է թողնում այլ ճյուղերի վրա ևս, և արդյունքում շահում են այն ձեռնարկությունները, որոնց ի սկզբանե հովանավորչությունն ուղղված չէր⁷: Վերլուծելով այդ քաղաքականության համաշխարհային փորձը՝ Կորդենն առանձնացնում է հովանավորչության երեք մակարդակ.

1. Միակողմանի, երբ որևէ երկրի կառավարություն առևտրային

⁶St'u J.M.Keynes, Treatise on Money. Chap. XXIII:

⁷St'u M. W. Corden, The Theory of Protection, London, 1971, էջ 24:

քաղաքականության գործիքներ է օգտագործում՝ առանց համաձայնեցնելու կամ խորհրդակցելու գործընկեր-երկրների հետ:

2. Երկկողմ, որի դեպքում գործընկեր-երկրները համաձայնեցնում են միմյանց հետ առևտրային քաղաքականության միջոցառումները:

3. Բազմակողմ, երբ առևտրային քաղաքականությունը համաձայնեցվում և կարգավորվում է բազմակողմ համաձայնագրերի միջոցով:

Արտաքին առևտրային հովանավորչական քաղաքականության միտումները թույլ են տալիս առանձնացնել դրա մի քանի ձևեր.

- ընտրանքային հովանավորչություն (ուղղված է առանձին երկրների կամ ապրանքների դեմ),
- ճյուղային հովանավորչություն (պաշտպանում է որոշակի ճյուղեր, ամենից առաջ գյուղատնտեսությունը),
- կոլեկտիվ հովանավորչություն (իրականացնում են երկրների միությունները՝ դրանց մեջ չմտնող երկրների նկատմամբ),
- թաքնված հովանավորչություն (իրականացվում է ներքին տնտեսական քաղաքականության մեթոդների միջոցով):

Արտաքին առևտրային քաղաքականությունն ազատ է, բաց, եթե, իհարկե, ապրանքների տեղաշարժի ճանապարհին սահմանվող արգելքների մակարդակը նվազագույն է: Ազատ առևտուրը առանց մաքսատուրքերի կամ աննշան մաքսատուրքերով իրականացվող առևտուրն է, որի դեպքում պետությունը ձեռնպահ է մնում արտաքին առևտրի վրա ազդելուց՝ շուկային թողնելով հիմնական կարգավորողի դերը:

Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունի այն տեսակետը, ըստ որի՝ համեմատաբար բաց առևտրային ռեժիմ իրականացնող երկրներում ներմուծման մաքսատուրքերի միջին մակարդակը 10%-ից պակաս է, իսկ քանակական սահմանափակումները ծածկում են ներմուծման 25%-ից պակաս մասը:

Ազատ առևտրի կողմնակիցները, փաստարկներ բերելով հովանավորչության դեմ, պնդում են, որ հովանավորչությունը՝

• Տանում է ազգային տնտեսության քայքայման, ծնում է, այսպես կոչված՝ էկոնոմիկայի սկլերոզ: Օտարերկրյա ապրանքների ներմուծման կրճատումը թուլացնում է մրցակցային պայքարը, սպանում նորարարության ոգին:

• Հովանավորչությունը վնաս է հասցնում սպառողների շահերին: Մաքսատուրքերի միջոցով բարձրացվում են ներմուծվող ապրանքների գները, որը այլ հավասար պայմաններում հարվածում է սպառողական զամբյուղին:

• Հովանավորչությունը վնասում է միջազգային տնտեսական հարաբերություններին (ՄՏՀ-ին):

Իր ծայրահեղ ձևում հովանավորչությունը վերածում է տնտեսական ավտարկիայի, որի դեպքում երկրները ձգտում են սահմանափակել միայն այն ապրանքների ներմուծումը, որոնց արտադրությունը տվյալ երկրում հնարավոր չէ կազմակերպել: Արտահանումն իր հերթին թուլատրվում է այն չափով, որչափով հնարավոր է ապրանքների ներմուծումը:

Ազատ առևտրի կողմնակիցները պնդում են, որ`

• ազատ առևտուրը նպաստում է համեմատական առավելությունների հիման վրա միջազգային առևտրին երկրների մասնակցությամբ,

• այն նպաստում է աշխատանքի միջազգային բաժանման խորացմանը` արտադրության մասնագիտացումից բխող բոլոր դրական հետևանքներով,

• ազատ առևտուրը նպաստում է ներքին շուկայի ընդլայնմանը, զանգվածային արտադրության կազմակերպմանը: Ներքին շուկայի ազատությունն իջեցնում է ապրանքների գները, որի հետևանքով էլ ընդլայնվում է սպառողական շուկան,

• ազատ առևտուրը տանում է համաշխարհային տնտեսության մեջ մրցակցության սրմանը, որի հետևանքով ամբողջ համաշխարհային տնտեսության մասշտաբով գներն իջնում են: Դա բարենպաստ է հատկապես համաշխարհային տնտեսության թույլ օղակների տնտեսական զարգացման համար:

Անցյալ դարի 50-60-ական թվականներին համաշխարհային տնտեսությանը բնորոշ էր անցումը հովանավորչությունից դեպի հնարավորին չափ ազատականացում և ազատ առևտրային քաղաքականություն: 1970-ական թվականների սկզբներին տեղ գտան հակառակ միտումներ. երկրները սկսեցին «ցանկապատվել» միմյանցից ոչ միայն սակագնային, այլև ոչ սակագնային արգելքների միջոցով: Այնուհանդերձ, արտաքին առևտրային քաղաքականության գլխավոր միտումը, սկսած XX դարի կեսերից, ազատականացումն է, որը հավասարապես վերաբերվում է և՛ զարգացած, և՛ զար-

գացող երկրներին: Առևտրի ազատականացումն իրավամբ համարվում է զարգացած երկրների նախաձեռնությունը, որոնք էլ 1947 թ. հիմնեցին Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագիրը (ՍԱԳԳ): Ջարգացած երկրներն իրենց արտաքին առևտրային քաղաքականությունը ձևավորում են՝ ելնելով համաշխարհային տնտեսության կոնյուկտուրայից՝ հովանավորչական քաղաքականություն վարելով առավելապես ինտեգրացված խմբավորումների շրջանակներում, միաժամանակ կոչ անելով երրորդ աշխարհի երկրներին՝ բաց անել իրենց շուկաները օտարերկրյա ապրանքների առջև: Դրա հետ մեկտեղ զարգացած երկրներն իրենց առևտրային սահմանները այլ, պակաս զարգացած երկրների առջև բացում են ընտրանքային կարգով: Նրանք վախենում են, որ արտաքին առևտրի ազատականացումը ազգային անվտանգության տեսանկյունից կարող է վնաս պատճառել տնտեսության կենսական կարևոր ոլորտներին, ոլորտներ, որոնք հարաբերականորեն պակաս մրցունակ են և ավանդաբար պաշտպանվում են հովանավորչական պատնեշներով: Այստեղ հաշվի է առնվում նաև այն իրողությունը, որ արտաքին առևտրի ազատականացումը չի բխում այդ ոլորտներում զբաղված բանվորների, ֆերմերների և ձեռներեցների շահերից: Ներկայումս հովանավորչությունը կենտրոնանում է հարաբերականորեն ավելի նեղ շրջանակներում: Ջարգացած երկրների միջև առևտրային հարաբերություններում այն տարածվում է գյուղատնտեսության, տեքստիլի, հագուստի և պողպատի, զարգացած և զարգացող երկրների միջև՝ արդյունաբերական ապրանքների, իսկ զարգացող երկրների միջև՝ ավանդական արտահանման վրա:

Ժամանակակից տնտեսագետների մեծ մասը գտնում է, որ առևտրի ազատականացումից ստացվող նյութական առավելությունները գերազանցում են այն կորուստները, որ արտադրողներին գրկում է մրցակցային առավելություններից: Երկարաժամկետում դա նվազեցնում է երկրների տնտեսական արդյունավետության մակարդակը: Օրինակ, 1960-1970 թթ. Լատինական Ամերիկայի երկրներում հովանավորչական քաղաքականությունը ոչ միայն հանգեցրեց տարածաշրջանի երկրների տնտեսական անկմանը, այլև պատնեշեց նոր տեխնոլոգիաների մուտքն այդ շուկաներ:

Միևնույն ժամանակ զարգացած երկրները հարգում են իրենց առևտրային սահմանները, որոնք հարկադրաբար ստեղծվում են իրենց արտադրողների կողմից: Երկրները հարգում են իրենց առևտրային սահմանները, որոնք հարկադրաբար ստեղծվում են իրենց արտադրողների կողմից:

4.4. Արտաքին առևտրի կարգավորումը

Արտաքին առևտրային քաղաքականության կարգավորումն առնչվում է տնտեսական, քաղաքական, վարչական, իրավական, կազմակերպչական և այլ բնույթի մի շարք հիմնախնդիրների հետ: Սակայն միջազգային տնտեսագիտությունն առավելապես ուսումնասիրում է արտաքին առևտրային քաղաքականության միջոցառումների իրականացման տնտեսական նախադրյալներն ու հետևանքները:

Արտաքին առևտրի պետական կարգավորման գործիքներն ըստ իրենց բնույթի լինում են սակագնային և ոչ սակագնային: Արտաքին առևտրային քաղաքականության դասական և հիմնական գործիքը մաքսային սակագինն է, որը տվյալ երկրի կողմից կիրառվող մաքսատուրքերի համակարգված ցանկն է: Մաքսատուրքը հարկ է, որը երկրի մաքսային տարածքը հատելու պահին գանձվում է ապրանքների արտահանման կամ ներմուծման ժամանակ: Մաքսատուրքն իրականացնում է երեք գործառույթ.

- Ֆիսկալ կամ հարկաբյուջետային, որի դեպքում մաքսատուրքով հարկվում են ինչպես ներմուծվող, այնպես էլ արտահանվող ապրանքները. նպատակը պետական բյուջեն եկամուտներով ապահովելն է:

- Հովանավորչական կամ պաշտպանական, որը վերաբերում է ներմուծման մաքսատուրքերին՝ ներքին շուկան օտարերկրյա մրցակցությունից պաշտպանելու և ազգային արտադրողների համար բարենպաստ պայմաններ ձևավորելու նպատակով:

- Հաշվեկշռող, որը սահմանվում է միայն արտահանվող ապրանքների վրա. նպատակը ոչ ցանկալի արտահանման կանխումն է, այն դեպքում, երբ դրանց գները ինչ-ինչ պատճառներով ցածր են համաշխարհային գներից:

Առաջնորդվելով անկախ, բազմաձև տնտեսություն ձևավորելու մղումով, ինչպես նաև համաշխարհային տնտեսությունից հումքային կախվածությունը հաղթահարելու նպատակով, զարգացող երկրները արտաքին շուկաների հետ փոխհարաբերությունները փորձում են կարգավորել արտահանման մաքսատուրքերի միջոցով: Արտահանման մաքսատուրքերի կիրառումը կարելի է ընդունել որպես զարգացող երկրների արտաքին առևտրային քաղաքականության առանձնահատկություն, քանի որ զարգացած երկրները

այդպիսիք ընդհանրապես չեն կիրառում, իսկ որոշ զարգացած երկրներում արտահանման մաքսատուրքերի կիրառումն արգելվում է սահմանադրությամբ (օրինակ՝ ԱՄՆ-ում):

Արտահանման մաքսատուրքերի կիրառումը զարգացող երկրների կողմից կարելի է հիմնավորել մի քանի փաստարկներով.

- Զարգացող երկրները հիմնականում համաշխարհային շուկա հումք արտահանողներ են, ուստի հաճախ ընկնում են զարգացած երկրների տնտեսությունների՝ ժամանակ առ ժամանակ սկիզբ առած տնտեսական անկումների ազդեցության տակ: Սակայն արտահանման մաքսատուրքերը բարձրացնում են հումքի արժեքը և սահմանափակում արտահանման ծավալները՝ այդ ապրանքները համաշխարհային շուկայում դարձնելով պակաս մրցունակ:

- Այն դեպքում, երբ երկիրն ունի հումքի արտահանման մենաշնորհային առավելություն, արտահանման մաքսատուրքերի միջոցով բյուջեն ապահովվում է լրացուցիչ մուտքերով:

- Եթե երկիրը չի տնօրինում մենաշնորհային առավելությունների, ապա արտահանման մաքսատուրքերի միջոցով սահմանափակվում է հումքի արտահանումը, ներքին շուկայում բարձրանում են հումքային ապրանքների գները, ըստ այդմ՝ նորից ավելանում են բյուջետային մուտքերը:

Այս գործընթացները հատկապես կիրառվում են Ռուսաստանի Դաշնության արտաքին առևտրային քաղաքականության մեջ: Կիրառելով արտահանման մաքսատուրքերը 1992 թ.-ից մինչև դարավերջը, այնուհանդերձ, Ռուսաստանին հաջողվել է դրանց մակարդակը բավականին նվազեցնել: Այսպես, 1995 թ. 1992 թ. համեմատությամբ արտահանման մաքսատուրքերի ընդգրկման մակարդակը արտահանման ծավալի արժեքի մեջ նվազել է 28%-ով: Հարկ է նշել նաև, որ արտահանման մաքսատուրքերը համաշխարհային հումքային շուկայում գների բարձրացմանն են հանգեցնում այն դեպքում, եթե երկիրը մեծ է, իսկ արտահանման մաքսատուրքերն ունեն օպտիմալ մակարդակ: Հակառակ դեպքում գների չափից ավելի բարձրացումը գործընկեր-երկրներին կպարտադրի էմբարգոյի (արգելման) կիրառում:

Տեսականորեն, մաքսատուրքերը դասակարգվում և ուսումնասիրվում են՝ ելնելով մի շարք հատկանիշներից: Ըստ հարկման եղանակի՝ մաքսատուրքերը լինում են.

- Աղվալորային կամ արժեքային, որը հաշվարկվում է ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի նկատմամբ որոշակի տոկոսադրույքով (օրինակ, մաքսային արժեքի 10%-ը): Աղվալորային մաքսատուրքի գնահատելի կողմն այն է, որ ներմուծվող բոլոր ապրանքների համար ձևավորում են հարկման հավասար պայմաններ՝ անկախ դրանց արժեքից: Փոփոխվում է միայն բյուջե մուտքագրվող հարկի մեծությունը: Թույլ կողմն այն է, որ աղվալորային մաքսատուրքի հաշվարկման համար անհրաժեշտ է գնահատել ապրանքների մաքսային արժեքը, որը սովորաբար տեղիք է տալիս չարաշահումների ինչպես ներկրողների, այնպես էլ մաքսային ծառայությունների կողմից:

- Առանձնահատուկ մաքսատուրքով հարկվում են ստանդարտացված ապրանքները և հաշվարկվում ներմուծվող ապրանքների ծավալային միավորների նկատմամբ՝ հաստատագրված գումարով (օրինակ՝ 1 տոննա պղնձի դիմաց՝ 20 դոլար):

- Համակցված մաքսատուրքը ներառում է վերը նշված մաքսային հարկման երկու ձևերը (այսպես, մաքսային արժեքի 10 %-ը, որը չպետք է գերազանցի 1 տոննայի դիմաց 20 դոլարին):

Ըստ հարկման օբյեկտի՝ մաքսատուրքերը լինում են՝

- ներմուծման, որոնք սահմանվում են ներմուծվող ապրանքների վրա՝ ներքին շուկայում դրանք պակաս մրցունակ դարձնելու նպատակով,

- արտահանման. սահմանվում են այն ապրանքների վրա, որոնք դուրս են գալիս ազգային տնտեսության շրջանակներից: Սրանք օգտագործվում են հազվադեպ, սովորաբար այն դեպքերում, երբ որոշ ապրանքների ներքին կարգավորվող գների և համաշխարհային շուկայի ազատ գների միջև ձևավորվում է մեծ տարբերություն, երբ անհրաժեշտ է բյուջեն համալրել նոր մուտքերով, և երբ արտահանումը պետք է սահմանափակել,

- տրանզիտ կամ տարանցիկ մաքսատուրքերը սահմանվում են տվյալ երկրի տարածքով դեպի այլ երկրներ ապրանքների տեղափոխման դեպքում:

Ըստ բնույթի տարբերում են՝

- սեզոնային, որոնք օգտագործվում են սեզոնային բնույթ ունեցող ապրանքների միջազգային առևտրի օպերատիվ կարգավորման նպատակով: Սովորաբար դրանց գործողության ժամկետը սահմանվում է տարեկան մի քանի ամիս,

▪ **հակադեմպինգային.** սահմանվում է այն դեպքում, երբ ներմուծվող ապրանքների գները ներքին շուկայում ցածր են արտահանող երկրի գնից, և եթե այդպիսի ներմուծումը վնաս է պատճառում ազգային արտադրողներին,

▪ **փոխհատուցող** են կոչվում ներմուծման այն մաքսատուրքերը, որոնց արտադրության ժամանակ ուղղակի կամ անուղղակի օգտագործվել են սուբսիդիաներ, և դրանց ներմուծումը կրկին վնաս է պատճառում ազգային արտադրողներին:

Ըստ ծագման մաքսատուրքերը լինում են՝

• **ավտոնոմ.** սահմանվում են միակողմանի՝ երկրների կառավարությունների որոշմամբ,

• **պայմանագրային.** սահմանվում են բազմակողմ կամ երկկողմ հիմքի վրա՝ համագործակցող երկրների բանակցությունների արդյունքում (օրինակ՝ ՍԱԳԴ-ի շրջանակներում),

• **արտոնյալ.** սահմանվում են զարգացող երկրների հետ զարգացած երկրների առևտրային հարաբերությունները կարգավորելու նպատակով:

Ըստ մաքսատուրքերի դրույքաչափերի տարբերում են՝

• **կայուն,** որոնք պետական օրենսդրական մարմինների կողմից հաստատվելուց հետո ենթակա չեն փոփոխման,

• **փոփոխական,** որոնք վերանայվում են՝ կախված արտարժույթի փոխարժեքից, ներքին կոնյուկտուրայի փոփոխություններից մաքսատուրքեր հասկացությունները:

Ուրուգվայի ռաունդից հետո համաշխարհային առևտրի սակագնային սահմանափակումների ընդհանուր մակարդակն էականորեն նվազել է: Եթե զարգացած երկրներում մաքսատուրքերի միջին մակարդակը տատանվում է 1,7-2%-ի սահմաններում, ապա զարգացող երկրներում (բացառությամբ՝ նոր արդյունաբերական երկրների) դրանց ամենացածր մակարդակը 22,2% է⁸:

Ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման մաքսատուրքերը պարունակում են ներքին հակասություն: Մի կողմից՝ դրանք ներքին արտադրողներին պաշտպանում են մրցակցությունից, մյուս կողմից՝ ներքին արտադրողները, որոնք միևնույն ժամանակ սպառողներ են, ստիպված են ձեռք բերել մաքսային պաշտպանության հետևանքով թանկացված ապրանքներ: Այս հակասությունը

⁸ Business Guide to The Uruguay Round UNICTAD/ WTO 1996, Geneva, page 245-247.

մասամբ լուծվում է ներմուծման բաժնեմասերի միջոցով: Ներմուծման բաժնեմասը տվյալ երկրի մաքսային օրենսդրությամբ սահմանված ապրանքների ներմուծման որոշակի քանակության մաքսատուրքերի տոկոսադրույքն է (որը կոչվում է ներբաժնեմասային տոկոսադրույք), իսկ բաժնեմասից ավել ներմուծման դեպքում սահմանվում են ավելի բարձր տոկոսադրույքներ (վերբաժնեմասային տոկոսադրույք):

Երկրների միջև արտաքին առևտրի կարգավորման արդի միտումներից մեկն էլ այն է, որ բազմակողմ բանակցությունների հիման վրա ԱԳԿ-ի շրջանակներում մաքսատուրքերի դրույքաչափերը խիստ նվազում են: Հետևաբար, արտաքին առևտրի կարգավորման խնդրում երկրները հաճախ կանգնում են դժվարությունների առջև և, կախված կոնկրետ իրավիճակից՝ սակագնային կամ ոչ սակագնային արգելքների օգտագործման առումով հարկ է լինում կիրառել այլընտրանք: Հաճախ նախապատվությունը տրվում է ոչ սակագնային կարգավորման մեթոդներին, քանի որ քաղաքականապես դրանք ավելի ընդունելի են և, ի տարբերություն սակագնային արգելքների, սպառողների համար լրացուցիչ բեռ չեն. տալիս են ավելի արագ և արդյունավետ արդյունք այն առումով, որ կառավարությունը միակողմանիորեն կարող է սահմանել ոչ սակագնային արգելքներ, այն դեպքում, երբ դրանց փոփոխության հարցը ազգային ժողովի իրավասության խնդիր է:

Բացի դրանից, սրանք ավելի հարմար են ցանկալի արդյունք ստանալու տեսանկյունից, հատկապես որ ոչ սակագնային սահմանափակումները չեն կարգավորվում միջազգային համաձայնությունների միջոցով: Վերջին հանգամանքը երկրների կառավարություններին թույլ է տալիս գործել ավելի ազատ, քան նոր սակագնային արգելքներ սահմանելիս, որը վերահսկվում է Առևտրի համաշխարհային կազմակերպության կողմից:

Ոչ սակագնային կարգավորումն իրականացվում է քանակական սահմանափակումների, թաքնված հովանավորչության և ֆինանսական մեթոդների միջոցով:

Քանակական սահմանափակումները պետական ոչ սակագնային կարգավորման վարչական մեթոդ են, որոնք սահմանում են արտահանվող կամ ներմուծվող ապրանքների քանակն ու անվանացանկը: Նման սահմանափակումներ կարող են կիրառվել որևէ երկրի կառավարության թույլտվությամբ կամ որոշակի ապրանքներ

րի առևտուրը կոորդինացնող միջազգային համաձայնագրերի հիման վրա: Քանակական սահմանափակումների ձևերն են՝ քվոտավորումը, լիցենզավորումը և արտահանման «կամավոր» սահմանափակումները:

Քվոտավորման դեպքում պետական իրավասու մարմինների կողմից սահմանվում են որոշակի ժամանակահատվածում արտահանման/ներմուծման ենթակա ապրանքների ծավալը կամ քանակությունը: Ըստ գործողության ուղղությունների՝ քվոտաները (բաժնեմաս) լինում են արտահանման և ներմուծման:

Արտահանման քվոտաները սահմանվում են միջազգային կայունացման համաձայնագրերին համապատասխան, որոնցում հաստատվում է յուրաքանչյուր երկրի բաժինը որոշակի ապրանքների արտահանման ընդհանուր ծավալում: Դրա օրինակ կարող են հանդիսանալ նավթ արտահանող երկրների կազմակերպությունը (OPEC):

Ներմուծման քվոտաները սահմանվում են երկրների կողմից՝ ներքին արտադրողներին պաշտպանելու, առևտրային հաշվեկշիռը հավասարակշռելու, ներքին շուկայում առաջարկն ու պահանջարկը կարգավորելու համար, ուղղված են նաև այլ երկրների խտրական առևտրային քաղաքականության դեմ:

Ըստ ընդգրկման սահմանների տարբերում են գլոբալ և անհատական քվոտաներ հասկացությունները: Գլոբալ քվոտաները սահմանվում են որոշակի ապրանքների արտահանման կամ ներմուծման վրա որոշակի ժամանակահատվածում՝ անկախ նրանից, թե որ երկրից է այն ներմուծվում, կամ որ երկիր է արտահանվում:

Անհատական քվոտաները գլոբալ քվոտավորման շրջանակներում յուրաքանչյուր երկրի մասնաբաժնի սահմանումն է: Այս քվոտաները սահմանվում են երկկողմ համաձայնագրերի միջոցով և սովորաբար տեղ են գտնում քաղաքական, տնտեսական սերտ կապեր կամ այլ շահեր ունեցող երկրների միջև:

Լիցենզիաները երկրների իրավասու կազմակերպությունների թույլտվությունն է արտահանողներին կամ ներմուծողներին՝ որոշակի ժամանակահատվածում որոշակի քանակությամբ ապրանքներ արտահանելու կամ ներմուծելու համար: Լիցենզավորումն իր հերթին ընդունում է տարբեր ձևեր:

• Միանվագ լիցենզիան մեկ տարի ժամկետով տրվող գրավոր թույլտվությունն է արտահանման կամ ներմուծման մեկ գործարք

կատարելու մասին:

• Գլխավոր լիցենզիան մեկ տարվա ընթացքում այս կամ այն ապրանքի արտահանման կամ ներմուծման թույլտվությունն է՝ առանց գործարքների սահմանափակման:

• Գլոբալ լիցենզիան որոշակի ժամանակահատվածում կոնկրետ ապրանքի արտահանման կամ ներմուծման թույլտվությունն է աշխարհի ցանկացած երկիր՝ առանց քանակական սահմանափակումների:

• Ավտոմատ լիցենզիան տրվում է արտահանողից կամ ներմուծողից ստացված հայտարարագրի ստանալուց անմիջապես հետո, և այն փոփոխման ենթակա չէ:

Արտահանման «կամավոր» սահմանափակումները արտաքին առևտրի կարգավորման այնպիսի քանակական սահմանափակում են, որի դեպքում արտահանող երկիրն ինքնակամ սահմանափակում է արտահանումը՝ գործընկեր-երկրների կողմից ավելի կոշտ առևտրային սահմանափակումները շրջանցելու նպատակով:

Քանակական սահմանափակումների կողքին գոյություն ունեն և գործում են միջազգային առևտրի կարգավորման, այսպես կոչված՝ թաքնված մեթոդները: Ըստ մոտավոր գնահատականի՝ կարգավորման այդ մեթոդների թվաքանակն անցնում է 300-ից: Թաքնված հովանավորչության մեթոդներից առավել տարածվածներն են՝

- ներքին հարկերը և տուրքերը,
- տեխնիկական արգելքները,
- պետական գնումների շրջանակներում իրականացվող հովանավորչությունը,
- վերջնական արդյուքների մեջ տեղական բաղադրիչներ պարունակելու նկատմամբ պահանջը:

Ներքին հարկերը և տուրքերն ուղղված են ներմուծվող ապրանքների ներքին գնի աճին և դրանով՝ ներքին արտադրողների պաշտպանությանը: Դրանք կարող են սահմանվել ինչպես կենտրոնական, այնպես էլ տեղական պետական կառավարման մարմինների կողմից: Ներմուծվող ապրանքների համար սահմանվող հարկերը կարող են լինել ուղղակի (ավելացված արժեքի, ակցիզային հարկ, իրացված հարկ) և անուղղակի (մաքսային ձևակերպումների, գրանցման և այլ ձևականությունների դիմաց վճարումներ):

Տեխնիկական արգելքները ազգային, տեխնիկական, վարչական և այլ բնույթի այն նորմերն ու կանոններն են, որոնց կիրառումը

հնարավորություն է տալիս զգալիորեն կրճատել ապրանքների ներմուծումը տվյալ ազգային շուկա: Գործնականում կիրառվում են տեխնիկական բնույթի բազմաթիվ արգելքներ: Դրանք են՝ ազգային ստանդարտների պահպանման, ներմուծվող ապրանքների որակի սերտիֆիկատի ստացման նկատմամբ պահանջը, ապրանքների հատուկ տարայավորման, պիտակավորման, սանիտարահիգիենիկ նորմերի, շրջակա միջավայրի, սպառողների շահերի պահպանման նկատմամբ ազգային պահանջը և այլն:

Պետական գնումների շրջանակներում իրականացվող հովանավորչությունը պետական մարմիններին և ձեռնարկություններին պարտադրում է որոշակի ապրանքներ գնել միայն ազգային ձեռնարկություններից, նույնիսկ եթե դրանք ներմուծվողներից ավելի քանկ լինեն:

Վերջնական արդյունքի մեջ տեղական բաղադրիչներ պարունակելու նկատմամբ պահանջը թաքնված առևտրային քաղաքականության այնպիսի մեթոդ է, որի դեպքում օրենսդրորեն սահմանվում է վերջնական արտադրանքի այն մասը, որը պետք է արտադրվի ազգային արտադրողների կողմից, և եթե այն նախատեսված է վաճառել ներքին շուկայում: Սովորաբար տեղական բաղադրիչների պարունակության նկատմամբ պահանջն օգտագործվում է զարգացող երկրների կողմից՝ ներմուծման փոխարինման, իսկ հետագայում նաև ներմուծումից հրաժարվելու քաղաքականության շրջանակներում: Զարգացած երկրները այս քաղաքականությունը կիրառում են խուսափելու համար էժան աշխատուժ պահանջող արտադրությունները զարգացող երկրներ տեղափոխելուց, և դրանով իսկ բարձր պահելով զբաղվածության մակարդակը:

Արտաքին առևտրի ֆինանսական կարգավորման մեթոդներն են՝ սուբսիդավորումը, արտահանման վարկավորումը և դեմպինգը:

Սուբսիդավորումը ոչ սակագնային կարգավորման այն մեթոդն է, որի դեպքում դրամական փոխհատուցման ճանապարհով պետությունն աջակցում է ազգային արտադրողներին՝ ազգային արտադրության մրցակցությունը բարձրացնելու, վերջին հաշվով, վճարային հաշվեկշռի վիճակը բարելավելու նպատակով: Ըստ վճարման բնույթի՝ սուբսիդիաները լինում են ուղղակի և անուղղակի:

Ուղղակի է կոչվում դրամական այն փոխհատուցումը, որը տրվում է արտահանման գործարքն իրականացումից անմիջապես հետո՝ արտահանողի կատարած ծախսերի և եկամտի տարբերու-

թյան չափով: Ուղղակի սուբսիդիաները փաստորեն արտադրողին տրված դոտացիա է արտաքին շուկաներ դուրս գալու համար: 1960-ական թթ. ուղղակի սուբսիդավորման առարկան զարգացած երկրների թանկարժեք արդյունաբերական արտահանումն էր՝ նավերը, ավիացիոն տեխնիկան և այլն: Սակայն ուղղակի սուբսիդիաները ԱԳԿ-ի կանոններով արգելվում են, և դրանց օգտագործումն այնքան ակնհայտ է, որ առևտրային գործընկերներին նույնպես մղում է համանման գործողությունների: Ի տարբերություն դրա, անուղղակի սուբսիդիաները, որոնք տրվում են հարկային, ապահովագրական զեղչերի, շուկայականից ցածր տոկոսադրույքներով վարկերի և այլ ձևերով, վերահսկելի չեն: Սուբսիդիաները կարող են տրամադրվել ինչպես ներմուծման հետ մրցակցող ապրանքարտադրողներին, այնպես էլ արտահանողներին:

Ըստ իրացման ուղղությունների՝ սուբսիդիաները լինում են ներքին և արտահանման: Ներքին սուբսիդիան պետական բյուջեից տրված այն փոխհատուցումն է, որն ուղղված է ներքին շուկայում գործող արտադրությունների զարգացմանը: Արտահանման սուբսիդիան արտահանողներին տրված դրամական փոխհատուցումն է՝ արտաքին շուկաներ դուրս գալու և ազգային արտադրանքի մրցունակությունը հաստատելու նպատակով:

Արտահանման խթանման առավել տարածված մեթոդներից մեկը վարկային արտոնությունների տրամադրումն է ազգային արտահանողներին: Արտահանման վարկավորումն իրականացվում է հետևյալ ձևերով.

- Արտահանման սուբսիդավորում, որի դեպքում պետական բանկերը արտահանողներին տրամադրում են ցածր տոկոսադրույքներով վարկեր՝ որոշակի ապրանքների արտահանումը խթանելու նպատակով:
- Օտարերկրյա ներմուծողների վարկավորում, որի պարտադիր պայմանը ապրանքների գնումն է միայն վարկ տրամադրող երկրի ֆիրմաներից: Դրանք կոչվում են կապակցված վարկեր:
- Ազգային արտահանողների արտահանման ռիսկերի ապահովագրում:

Արտերկրների շուկաներում ազգային արտադրության ապրանքների մրցունակության բարձրացման ուղիներից մեկը դեմախինգն է: Դեմախինգը ենթադրում է արտաքին շուկաներում ապրանքների

ավելի ցածր գնով վաճառք, քան այդ ապրանքների ազգային շուկայի գներն են. նպատակը մրցակիցներին շուկայից դուրս մղելն է: Դեմպինգ կարելի է իրականացնել ինչպես առանձին ֆիրմաների սեփական ռեսուրսների, այնպես էլ պետության կողմից արտահանողներին տրվող վարկերի հաշվին: Գործնականում հանդիպում են դեպքեր, երբ արտահանվող ապրանքների գինը ցածր է ոչ միայն ազգային շուկայում ձևավորված գնից, այլև արտադրության ծախքերից: Դեմպինգի տնտեսական իմաստը ոչ թե միայն գների իջեցումն է, այլ գնային խտրականությունը. միևնույն ապրանքի տարբեր գներով վաճառքը տարբեր շուկաներում: Գներն իջեցվում են մի շուկայում, սակայն այլ շուկաներում դրանք կարող են ավելի բարձր լինել: Գների իջեցումը որպես մրցակցային պայքարի միջոց կիրառելի է, եթե տվյալ մատակարարը կոնկրետ շուկայում ունի մենաշնորհային դիրք:

Ազգային շուկան օտարերկրյա ներմուծողների նման գործողություններից զերծ պահելու ուղին հակադեմպինգային միջոցառումներն են: Միջազգային առևտրային պրակտիկայում գոյություն ունի դեմպինգի ոչ բարենպաստ տնտեսական հետևանքների կանխման երկու հիմնական եղանակ. հակադեմպինգային մաքսատուրքերի սահմանում և արտահանողների կողմից գնային պարտավորությունների ստանձնում, ըստ որի՝ նրանք հրաժարվում են ցածր գներով ապրանքներ մատակարարելուց:

Սուբսիդիաների, փոխհատուցման մաքսատուրքերի և դեմպինգի կիրառման դեպքերը համաշխարհային տնտեսության մեջ հաճախակիացել են, չնայած ներքին շուկան օտարերկրյա մրցակցությունից պաշտպանելուն կողմնորոշված նշված միջոցառումներն ԱՅԿ-ի կողմից խստիվ արգելվում են: Սուբսիդիա է դիտվում ինչպես պետության կողմից արտահանման խթանման նպատակով տրված դրամական օգնությունը, այնպես էլ վարկային արտոնյալ տոկոսադրույքներով ֆինանսավորումը, հարկային և վարկային զեղչերը, հարկերի վերադարձը, տրանսպորտային ցածր սակագները, բարձրացված գներով պետական գնումները կամ ցածր գներով ապրանքների ու ծառայությունների վաճառքը պետությանը: Պետություններին չի արգելվում ձեռնարկություններին տրամադրել վարկեր կամ վարկային երաշխիքներ, եթե դա արվում է սովորական պայմաններով: ԱՅԿ-ի ուրուզվածական ռաունդի ուղեցույցում նշված է, որ սանկցիաների առիթ կարող են հանդիսանալ միայն

առանձնահատուկ սուբսիդիաները, որոնցից օգտվում են ոչ թե բոլոր արտադրողները, այլ առանձին ձեռնարկությունները: Առավել վտանգավոր են այն առանձնահատուկ սուբսիդիաները, որոնք նպատակաուղղված են արտահանման խթանմանն ու ներմուծման փոխարինմանը: Սուբսիդիաներից վնաս կրող երկրներն իրավասու են կիրառելու փոխհատուցման միջոցառումներ:

Սուբսիդիաների օգտագործման կապակցությամբ ԱՅԿ-ի կողմից հետաքննություն չի իրականացվում այն դեպքում, երբ դրա չափերը չեն գերազանցում ապրանքների արժեքի 1%-ը, ինչպես նաև երբ ներմուծվում են փոքր խմբաքանակներով ապրանքներ: Համաձայնագրում որոշ բացառություններ են արվում բոլոր զարգացող երկրների համար, իսկ պակաս զարգացած երկրներին սուբսիդիաների կիրառումը թույլատրելի է:

4.5. Միջազգային առևտրի ապրանքային, ճյուղային և աշխարհագրական կառուցվածքը

Միջազգային առևտրում տեղի ունեցող փոփոխությունների վերլուծությունը ենթադրում է երկու ասպեկտների դիտարկում. առաջին՝ ամբողջությամբ դրա աճի տեմպերի, երկրորդ՝ ապրանքային և աշխարհագրական կառուցվածքի տեղաշարժերի ուսումնասիրություն: Ինչ վերաբերում է առաջինին, ապա անհրաժեշտ է փաստել, որ համաշխարհային ապրանքաշրջանառության կայուն առաջանցիկ տեմպերը միջազգային առևտրի նոր որակական հատկանիշների արտացոլումն են՝ կապված համաշխարհային շուկայի տարողունակության և նորամուծ տեխնոլոգիաների նկատմամբ աճող պահանջարկի մեծացման հետ: Այդ շուկային բնորոշ են նաև պատրաստի արդյունաբերական ապրանքների առևտրի ընդլայնման բավականին բարձր տեմպերը, իսկ դրանց շրջանակներում մեքենաների և սարքավորումների, հատկապես կապի միջոցների, էլեկտրական և էլեկտրոնային տեխնիկայի, համակարգիչների առևտուրը: Արտադրական կոոպերացման շրջանակներում շատ ավելի արագ ընդլայնվում է կոմպլեկտային սարքավորումների, հանգույցների և ագրեգատների փոխանակությունը: Այս ամենը չէր կարող արմատական տեղաշարժեր չառաջացնել միջազգային առևտրի աշխարհագրական կառուցվածքում:

Սկսած XX դարի երկրորդ կեսից ապրանքների միջազգային առևտուրը զարգանում է բարձր տեմպերով: Անցած հարյուրամյակի ընթացքում՝ 1900-2000 թթ., համաշխարհային արտահանումն աճել է ավելի քան 35 անգամ, այդ թվում Ասիայում՝ 87, իսկ Արևմտյան Եվրոպայում՝ 22 անգամ (տե՛ս թիվ 2 աղյուսակը):

Աղյուսակից հետևում է, որ մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը Գերմանիայի արտահանումը փոքր-ինչ գերազանցում էր ԱՄՆ-ի արտահանմանը, իսկ Մեծ Բրիտանիան այդ առումով համաշխարհային առաջատարն էր: 1950 թ. բացարձակ առաջատար է դառնում ԱՄՆ-ը, որի արտահանումը գերազանցում էր աշխարհի խոշոր տերությունների համախառն արտահանումը: Սակայն 1950-ական թթ. Արևմտյան Եվրոպային հաջողվում է համաշխարհային շուկայում գրավել կայուն դիրքեր, իսկ դարավերջին եվրոպական արտահանումը մոտ երեք անգամ գերազանցում էր ամերիկյան արտահանմանը:

Աղյուսակ 2⁹

**Համաշխարհային ապրանքային արտահանման
աշխարհագրությունը և կառուցվածքը**

(մլրդ ԱՄՆ դոլար)

Երկրները	1900	1938	1950	1990	2000
Ամբողջ աշխարհը	255.0	570.0	775.0	5985.0	9040.0
ԱՄՆ	33.3	63.0	328.5	777.5	1070.0
Ճապոնիա	4.2	33.4	10.4	430.0	550.0
Արևմտյան Եվրոպա	137.5	275.0	245.0	2420.0	3035.0
Գերմանիա	21.5	64.1	36.5	600.0	710.0
Մեծ Բրիտանիա	38.5	76.0	66.0	320.0	400.0
Ասիա	28.5	60.5	60.0	1055.0	2485.0
Չինաստան:	8.0	14.0	14.0	270.0	700.0
Լատինական Ամերիկա	8.5	31.5	50.0	405.0	735.0
Արևելյան Եվրոպա	14.5	18.5	16.0	125.0	85.0
Ռուսաստան	13.0	37.0	90.5	155.0	90.0

⁹ Տե՛ս Мировая экономика за 100 лет. МЭМО.2001.# 9:

Առևտրի համաշխարհային կազմակերպության փորձագետների գնահատականների համաձայն՝ 2000 թ. համաշխարհային ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համեմատությամբ աճեց 10%-ով, որը 1990-ական թթ. ամենաբարձր ցուցանիշն էր: Այդ ժամանակաշրջանից սկսած և մինչև այսօր ապրանքների համաշխարհային շուկայում գլխավոր մրցակիցներ են արդյունաբերական զարգացած՝ հատկապես եռամիության (ԱՄՆ, Արևմտյան Եվրոպա, ճապոնիա) երկրները: Վերջիններիս 2000 թ բաժին է ընկել համաշխարհային համախառն արտահանման 51.5%-ը, որը սակայն 1990 թ. համեմատությամբ 9.1%-ով նվազել է: 2001 թ. նախորդ տարվա համեմատությամբ համաշխարհային ապրանքաշրջանառության ծավալները ևս 4%-ով կրճատվեցին, սակայն հետագա տարիներին դրանք ցուցադրում են աճի միտում, որը 2005 թ. կազմեց 21.2 տրլն դոլար՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 14.6%-ով¹⁰:

Աղյուսակ 3¹¹

Ապրանքների համաշխարհային արտահանման և ներմուծման տասը քառաչատարները 2005 թվականին

	Երկրները	Արտահանումը (մլրդ դոլար)	Տեսակարար կշիռը	Ներմուծումը (մլրդ դոլար)	Տեսակարար կշիռը
1	Գերմանիա	969.9	9.3	773.8	7.2
2	Միացյալ Նահանգներ	904.4	8.7	1732.4	16.1
3	Չինաստան	762.0	7.3	660.0	6.1
4	Ճապոնիա	594.9	5.7	514.9	4.8
5	Ֆրանսիա	460.2	4.4	497.9	4.6
6	Նիդեռլանդներ	402.4	3.9	359.1	3.3
7	Միացյալ Թագավորություն	382.8	3.7	510.2	4.7
8	Իտալիա	367.2	3.5	379.8	3.5
9	Կանադա	359.4	3.4	319.7	3.0
10	Բելգիա	334.3	3.2	318.7	3.0
	Ամբողջ աշխարհը	10431.0	100.0	10783.0	100.0

¹⁰ World Trade in 2005. Overview, page 17.

¹¹ World Trade in 2005. Overview, page 17.

2005 թ. Եվրոպական տարածաշրջանում ակնհայտ հաջողությունների հասավ Գերմանիան, որին հետպատերազմյան ժամանակաշրջանից ի վեր հաջողվում է պահպանել առաջատար դիրքեր համաշխարհային արտահանման ընդհանուր ծավալում (տե՛ս թիվ 3 աղյուսակը): Գերմանիայի գլխավոր մրցակիցը Միացյալ Նահանգներն է, որին կրնկակոխ հետևում է վերջին հինգ տարիների ընթացքում արտաքին առևտրում լուրջ հաջողություններ գրանցած Զինաստանը:

Այնուհանդերձ, ապրանքների համաշխարհային շուկայում գլխավոր մրցակիցներ շարունակում են մնալ ԱՄՆ-ը, Եվրոպական Միությունը և ճապոնիան, որոնց բաժին է ընկնում համաշխարհային արտահանման 60%-ից ավելին:

Ըստ առանձին տարածաշրջանների՝ ապրանքների միջազգային առևտրի աճի տեմպերը 2000-2005 թթ. դրսևորել են հետևյալ միտումը (տե՛ս թիվ 4 աղյուսակը):

Աղյուսակ 4¹²

Ապրանքների համաշխարհային առևտրի աճի տեմպերն ըստ առանձին տարածաշրջանների (2005 թ.)

	Արտահանում <i>Տարեկան տոկոսային փոփոխությունները</i>			Ներմուծում <i>Տարեկան տոկոսային փոփոխությունները</i>		
	2000-2005	2004	2005	2000-2005	2004	2005
Աշխարհը	10	22	13	10	22	13
Գյուտիս. Ամերիկա	4	14	12	6	16	14
Եվրոպա	11	20	8	10	20	9
ԵՄ 25	10	19	8	10	20	9
Անցումային անկախ երկրներ	18	36	28	22	31	25
Ռուսաստան	18	35	33	23	28	29
Աֆրիկա	15	30	29	14	29	19
Կենտր. Արևելք	15	32	35	14	31	17
Ասիա	11	25	16	12	27	16
Զինաստան	25	35	28	24	36	18
Ճապոնիա	4	20	5	8	27	14

¹² World Trade in 2005. Overview, page 16.

ժամանակակից պայմաններում որոշակի առանձնահատկություններ դրսևորում է նաև միջազգային առևտրի ապրանքային կառուցվածքը: Այսպես, XX դարի սկզբին ապրանքների համաշխարհային շուկայի կառուցվածքում առանձնանում էին երկու ենթախմբեր: Առաջին ենթախումբն ընդգրկում էր բազային ապրանքների շուկան (գյուղատնտեսական մթերքներ, փայտանյութ, վառելիք, հանքահումք), իսկ երկրորդը՝ պատրաստի ապրանքների շուկան: Առաջին ենթախումբը զարգացող և նախկին սոցիալիստական համակարգի երկրների գործունեության տարածքն էր, երկրներ, որոնք մասնագիտացել էին հումքատար և աշխատատար ապրանքների արտահանման մեջ: Երկրորդ ենթախմբի ապրանքների արտադրությունը զարգացած երկրների առավելությունն էր:

XX դարի երկրորդ կեսին գիտատեխնիկական առաջադիմության պայմաններում էլեկտրոնիկայի, ավտոմատացման, հեռահաղորդակցության, կենսատեխնոլոգիաների զարգացումը երկրորդ ենթախումբը տրոհեց ևս երեք «ենթահարկերի»:

Առաջին «ենթահարկը» ցածր տեխնոլոգիական ապրանքների շուկան է, որտեղ ներառվում է սև մետալուրգիայի, տեքստիլի, կարի, կոշիկի և թեթև արդյունաբերության այլ ճյուղերի արտադրանքը: Այս շուկայի հիմնական մասնակիցները զարգացող երկրներն են:

Երկրորդ «ենթահարկի» մեջ մտնում է միջին տեխնոլոգիական ապրանքների արտադրանքը՝ հաստոցներ, տրանսպորտային միջոցներ, ռադիոտեխնիկական և պլաստիկ զանգվածային ապրանքներ, կենցաղային քիմիայի և փայտամշակման արտադրանք և այլն: Միջին տեխնոլոգիական ապրանքների արտադրության և արտահանման հիմնական դերակատարները նոր արդյունաբերական երկրներն են:

Երրորդ «ենթահարկը» բարձրտեխնոլոգիական ապրանքների՝ տիեզերական տեխնիկայի, գրասենյակային ավտոմատացված սարքավորումների և տեղեկատվական տեխնոլոգիաների, էլեկտրոնիկայի, դեղագործական, ճշգրիտ չափիչ ապարատների, էլեկտրասարքավորումների շուկան է: Վերջին տասնամյակների ընթացքում համաշխարհային շուկայի երրորդ «ենթահարկն» արագորեն զարգանում է, դրա տեսակարար կշիռը համաշխարհային արտահանման մեջ 1990-ական թթ. 18.5 %-ից 2005 թ. հասավ 21.4%-ի¹³: Այս

¹³ World Trade in 2005. Overview, page 15.

շուկան բարձր մրցակցային շուկա է հատկապես զարգացած երկրների համար:

Համաշխարհային ապրանքային կառուցվածքում գյուղատնտեսական մթերքների արտահանման տեմպերը 2004 և 2005 թթ. համապատասխանաբար կազմել են 3.5 և 5.5%, հանքային վառելիքինը՝ 5.5 և 2.5%, իսկ արդյունաբերական ապրանքներինը՝ 11.3 և 7.0%¹⁴: Վերջին տարիներին հանքային վառելիքի արտահանման աճի տեմպերի նվազումը բացատրվում է դրա հիմնական արդյունահանման տարածաշրջանի՝ Մերձավոր Արևելքի երկրների (հատկապես՝ Իրաքի և Իրանի) քաղաքական անկայուն վիճակով և համաշխարհային շուկայում նավթի գների նշանակալից տատանումներով: Արդյունաբերական ապրանքների արտահանման տեմպերի նվազման պատճառն այն է, որ երկրները ներկայումս նախապատվությունը տալիս են պարենային ինքնապահովմանը:

4.6. Հայաստանի Հանրապետության տեղը միջազգային առևտրային հարաբերությունների համակարգում

Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրային քաղաքականությունը ձևավորվել և իրականացվում է կառավարության կողմից՝ ազատական սկզբունքների հիման վրա, որը նպատակաուղղված է ՀՀ ինտեգրմանը համաշխարհային տնտեսությանը:

1990-ական թթ. ՀՀ արտաքին տնտեսական կապերում տեղի ունեցան էական տեղաշարժեր, որոնք դարձան նոր տիպի գործընկերական հարաբերությունների հիմնական գործոնը: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո խզվեցին նախկին կոոպերացված տնտեսական կապերը, բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ կազմալուծվեցին՝ վերջնական արտադրանք թողարկելու հնարավորությունների բացակայության պատճառով: Պատերազմը, շրջափակումը, տնտեսական բարեփոխումների ոլորտում տեղ գտած բացթողումներն արդեն անկախացման առաջին տարիներին արտաքին առևտրային շրջանառությունը կրճատեցին ավելի քան 16 անգամ:

Սկսած 1995 թ.-ից ՀՀ տնտեսության կայունացումը որոշակի

¹⁴ World Trade in 2005. Overview, page 19.

դրական ազդեցություն է թողել արտաքին առևտրային հարաբերությունների վրա: ՀՀ արտաքին առևտրային կապերի զարգացումն ուղեկցվում է ինչպես աշխարհագրական ընդլայնմամբ, այնպես էլ ապրանքային կառուցվածքի փոփոխություններով: 2000-2006 թթ. ՀՀ ՀՆԱ միջին տարեկան 10% աճն ուղեկցվեց արտաքին առևտրային շրջանառության 17.75% աճով: Արտահանման և ներմուծման միջին տարեկան աճը այդ նույն ժամանակամիջոցում համապատասխանաբար կազմել է 17.02 և 19.07%:

Անկախացմանը հաջորդող տարիներին Հայաստանը առևտրատնտեսական համագործակցության համաձայնագրեր է կնքել ավելի քան 100 երկրների հետ: ԱՊՀ անդամ-երկրների՝ Ռուսաստանի, Ղրղզստանի, Թուրքմենիայի, Վրաստանի, Ուկրաինայի, Բելառուսի, Ղազախստանի հետ կնքվել են ավելի քան 70 երկկողմանի առևտրատնտեսական պայմանագրեր: Ազատ առևտրի երկկողմանի համաձայնագրեր է ստորագրվել ԱՊՀ վեց երկրների հետ: Առևտրի և համագործակցության համաձայնագրեր են ստորագրվել Եվրամիության անդամ-երկրների (ԵՄ), ԱՄՆ-ի, Կանադայի, Արգենտինայի, Չինաստանի, Հնդկաստանի, Իրանի, Արևելյան Եվրոպայի և Մերձավոր Արևելքի մի շարք երկրների հետ, որոնք հիմնականում ԱՀԿ անդամ են: Վերջին տարիներին ՀՀ հիմնական առևտրային գործընկերները ներկայացված են ստորև բերված աղյուսակում (տե՛ս թիվ 5 աղյուսակը):

ԱՊՀ անդամ-երկրներից ՀՀ-ի հիմնական առևտրային գործընկերը Ռուսաստանն է: Չնայած Ռուսաստանի հետ առևտրի ծավալներն անընդհատ աճում են, այնուհանդերձ, դրանց տեսակարար կշիռն ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալում դրսևորում է նվազման միտում: Այսպես, 1993 թ. 37,5%-ից արտահանման տեսակարար կշիռը նվազելով՝ 2006 թ. կազմել է 12,1%, իսկ ներմուծումը՝ 1993 թ. 30,6%-ից 2006 թ. կազմել է 16,6%: ԱՊՀ երկրներ ընդհանուր արտահանման մեջ Ռուսաստանի բաժինը ևս նվազել է՝ 2003 թ. 69,2%-ի դիմաց 2006 թ. կազմելով 57,3%:

Աճի միտում է դրսևորում առևտրաշրջանառությունը Ուկրաինայի հետ, որը 2006 թ.-ին նախորդ տարվա համեմատ աճել է 63,7%-ով, իսկ արտահանումը՝ 64,8%-ով: 2003-2006 թթ. արտահանման աճի միտում է դրսևորվել ԱՊՀ գրեթե բոլոր երկրների հետ առևտրում, ինչի հետևանքով նույն ժամանակահատվածում այն,

ընդհանուր առմամբ, ավելացել է 80%-ով: Սա վկայում է, որ ՀՀ-ն աստիճանաբար վերականգնում է իր ավանդական շուկաները:

Աղյուսակ 5¹⁵

ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքն ըստ հիմնական գործընկեր-երկրների

Երկրները	Արտահանում			Ներմուծում		
	2000	2003	2006	2000	2003	2006
Ռուսաստան	14.8	13.9	12.1	14.0	16.4	16.6
Բելգիա	24.9	18.3	10.8	9.0	10.2	7.2
Իսրայել	5.8	21.0	10.6	—	9.7	3.9
ԱՄՆ	12.6	8.3	6.5	11.0	8.0	6.2
Իրան	10.0	3.3	2.6	9.0	5.3	6.0
ԱՄԷ	1.7	2.4	0.5	4.0	4.5	6.6
Մեծ Բրիտանիա	3.4	5.9	0.7	6.0	4.5	3.4
Ուկրաինա	1.1	1.1	2.2	1.4	3.5	5.0
Գերմանիա	4.3	6.5	14.7	4.0	3.4	3.9
Շվեյցարիա	2.9	4.7	7.1	3.0	3.3	3.9
Իտալիա	0.9	2.8	2.9	2.0	3.1	3.5
Թուրքիա	0.4	0.2	0.2	4.5	3.0	4.0
Վրաստան	5.3	2.3	5.4	2.0	3.0	3.4
Հունաստան	0.9	0.8	-	6.1	2.4	3.7
Նիդեռլանդներ	0.8	3.2	12.6	1.4	0.9	3.0


ՀՀ արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքի ուսումնասիրությունը վկայում է նաև, որ տնտեսական զարգացման և բնակչության սոցիալական վիճակի որոշակի բարելավմանը զուգընթաց այն դրսևորել է դեպի տնտեսապես զարգացած երկրներ ուղղվածության միտում (եՄ երկրներ, Շվեյցարիա, ԱՄՆ, Կանադա և այլն):

ՀՀ արտահանման և ներմուծման տեսակարար կշիռն ըստ երկրների խմբերի 1993-2006 թթ. ներկայացված է գծապատկեր

¹⁵ Աղյուսակը կազմվել է ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար-դեկտեմբերին, էջ148-149 և ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2006թ. հունվար-դեկտեմբերին, էջ140-147 տվյալների հիման վրա:

1-ում: Եվրամիության երկրների հետ առևտրի տեսակարար կշիռը վերջին տասնամյակի ընթացքում աստիճանաբար աճել է: 1998 թ. սկսած՝ Եվրամիության հետ առևտրի տեսակարար կշիռը գերազանցեց ԱՊՀ երկրների հետ առևտրի նույն ցուցանիշը: Եթե 1998 թ. ԵՄ երկրներ արտահանման ծավալները կազմում էին ամբողջ արտահանման 34,6%-ը, իսկ ներմուծման ծավալների 28,7%-ը, ապա 2006 թ. այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմեցին 47,0% և 30,2%:

ՀՀ արտահանման կառուցվածքը ըստ նշանակման երկրի



Գծապատկեր 1

Եվրամիության երկրներից Հայաստանի հիմնական գործընկերներն են Բելգիան, Ֆրանսիան, Գերմանիան, Հունաստանը, Իտալիան, Նիդեռլանդները, Մեծ Բրիտանիան:

Չնայած վերջին տարիներին ՀՀ արտահանման ծավալները աճում են, այնուհանդերձ, արտահանման աճի բազան դեռևս մնում է սահմանափակ, քանի որ արտադրական հնարավորությունների սահմաններում արտադրված ապրանքները, որոնք կարող են արտահանվել, շատ դեպքերում չեն բավարարում միջազգային շուկայի պահանջները: ՀՀ արտահանման կառուցվածքն ըստ հիմնական ապրանքախմբերի ներկայացված է աղյուսակ 6-ում:

Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ խումբն ինչպես ներմուծման, այնպես էլ արտահանման մեջ հսկայական

բաժին է զբաղեցնում: Սա հիմնականում բացատրվում է այն փաստով, որ ներմուծվող թանկարժեք և կիսաթանկարժեք քարերն ու մետաղները վերամշակվում և հղկվում են տեղական ձեռնարկու-թյուններում, այնուհետև՝ արտահանվում եվրոպա: Այս խմբի արտադրանքը ՀՀ արտահանման ընդհանուր ծավալում կազմում է 31,9 %, ներմուծման ծավալում՝ 14,2 %: ՀՀ արտաքին առևտրի մեկ այլ խոշոր բաժինը կազմում է *հանքահումքային արտադրանքը*: Այս ճյուղի արտահանման ոլորտում վերջին տարիներին արձանագրվել է որոշակի աճ, իսկ 2006 թ. նախորդ տարվա համեմատությամբ դրա արտահանումն ավելացել է ավելի քան 45%-ով:

Աղյուսակ 6

ՀՀ արտահանման կառուցվածքն ըստ հիմնական ապրանքախմբերի

(%-ներով)

Ապրանքախմբերը	1993	1998	2003	2006
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ	26.2	24.1	51.2	31.9
Ոչ թանկարժեք մետաղներ և նրանցից պատրաստված իրեր	3.4	18.3	13.2	30.0
Հանքահումքային արտադրանք	1.5	10.1	7.3	13.5
Պատրաստի սննդի արտադրանք	6.7	7.6	10.5	9.5
Մանածագործական իրեր	9.5	6.2	4.6	3.5
Պլաստիկ զանգվ. և դրանից պատրաստ. իրեր, կաուչուկ և ռետինե իրեր	2.8	3.7	0.7	2.8
Սարքեր և ապրանքներ	1.6	1.7	4.1	2.3
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	16.2	18.5	2.9	2.1
Այլ ապրանքախմբեր	32.1	9.9	5.5	6.4
Ընդամենը	100	100	100	100

ՀՀ արտահանման մեջ մեծ տեսակարար կշիռ ունի նաև *պատրաստի սննդի արտադրանքը*՝ մոտ 9.5%: Սակայն 2006 թ. այս ապրանքախմբի արտահանման ծավալը ոչ միայն չի աճել, այլև որոշ չափով անկում է ապրել՝ կազմելով նախորդ տարվա ցուցանիշի 98.4%-ը: Չնչին տեսակարար կշիռ ունեն արտահանման համար

ավանդական այնպիսի ուղորտները, ինչպիսիք են *մանածագործական իրերի, մեքենաների սարքավորումներն ու մեխանիզմները*։ Ընդ որում՝ դրանք երկուսն էլ վերջին տարիներին ունեն նվազման միտում։

Ներմուծման ծավալներում ամենամեծ տեսակարար կշիռն ունի *հանքահումքային արտադրանք* ապրանքախումբը, որը կազմում է համախառն ներմուծման 16.7%-ը։ Այս ապրանքախմբի ներմուծման ծավալները վերջին չորս տարիների ընթացքում աճել է ավելի քան 2 անգամ։ Սա դրական միտում է, քանի որ այս ապրանքախմբի մեջ են մտնում նաև ներմուծվող էներգակիրները, իսկ դրանց ներմուծման ծավալների աճը վկայում է տնտեսության զարգացման և աշխուժացման մասին։

Ներմուծման ընդհանուր ծավալների մեջ, բացի թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ խմբից, բավականին մեծ տեսակարար կշիռ են կազմում նաև *մեքենաներն ու սարքավորումները*, որոնց ներմուծումն աճում է բավականին բարձր տեմպերով։ Օրինակ, 2006 թ. նախորդ տարվա համեմատությամբ այն աճել է 31.2%-ով, ինչը դրական երևույթ է։ Մեծ է նաև *տրանսպորտային միջոցների* ներմուծման տեսակարար կշիռը։

4.7. Միջազգային առևտրի կարգավորումը

Ապրանքների միջազգային առևտուրը համաշխարհային հանրության կողմից սկսել է կարգավորվել դեռևս հետպատերազմյան ժամանակաշրջանում, երբ ուժի մեջ մտավ (1948 թ.) Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագիրը (ՍԱԳԳ)։ Ենթադրվում էր, որ 23 երկրների ստորագրած ժամանակավոր այդ համաձայնագրին հետագայում կհաջորդեր Միջազգային առևտրային կազմակերպության ձևավորումը։ Սակայն զարգացումներն ընթացան այլ ուղիով։ Չնայած Միջազգային առևտրի կազմակերպության կանոնադրությունն արդեն պատրաստ էր, սակայն մի շարք երկրների պառլամենտներ, այդ թվում և Միացյալ Նահանգների, հրաժարվեցին հաստատումից։ Արդյունքում՝ 1948-1995 թթ. ՍԱԳԳ-ը մնաց միջազգային առևտուրը կարգավորող միակ ու գլխավոր ֆորումը։ ՍԱԳԳ-ի չրջանակներում ընթանում էին բազմակողմ բանակցություններ՝ ռաուդնդ-

ներ: Դրանցից վերջինի՝ Ուրուգվայական ռաուճի արդյունքում 1995 թ. հունվարի 1-ին 125 երկրների կողմից ստորագրվեց Մարակեշի փաստաթուղթը, և ձևավորվեց Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ):

Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծումը կարելի է համարել միջազգային առևտրային համակարգի օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքը, ապրանքների և ծառայությունների առևտրի, անդամ-երկրների միջև առևտրային վեճերի կարգավորման, ստանդարտ արտաքին առևտրային փաստաթղթերի մշակման բազմակողմ համաձայնությունների և կարգավորման մեխանիզմը, որն ուղղված էր միջազգային տնտեսական հարաբերությունների ամբողջական և արդյունավետ կառուցվածքի ձևավորմանը: ՍԱԳՀ-ն հետագա փոփոխություններով ու լրացումներով ներկայումս հայտնի է «ՍԱԳՀ-1994» անվանումով, և ընկած է ԱՀԿ-ի իրավական փաստաթղթերի հիմքում: ՍԱԳՀ-ի և ԱՀԿ-ի սկզբունքային տարբերությունն այն է, որ ՍԱԳՀ-ն կանոնների պարզ ժողովածու էր, բազմակողմ համաձայնագիր՝ ոչ մեծ քարտուղարությամբ: Որպես համաձայնագիր՝ ՍԱԳՀ-ի կողմերը մասնակցում էին դրա իրացմանը, որը սահմանափակվում էր միայն ապրանքների առևտրով: Իսկ ԱՀԿ-ն մշտական գործող միջազգային կազմակերպություն է՝ կազմված նախարարական համաժողովից, գլխավոր խորհրդից, մասնագիտացված խորհուրդներից և քարտուղարությունից: ԱՀԿ Համաձայնագրերի համակարգը կարելի է դիտարկել որպես միջազգային օրենսդրություն, որը սահմանում է ապրանքների ու ծառայությունների փոխանակության կանոնները: Այդ համաձայնագրերին կից ձևավորվել են չորս հավելվածներ, որոնցից հիմնարար է համարվում հավելված 1-ը: Այստեղ ներառված են «ՍԱԳՀ-1994»-ը, Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագիրը, Մտավոր սեփականության իրավունքի առևտրային ասպեկտների համաձայնագիրը, գյուղատնտեսության, տեքստիլի և հագուստի արտաքին առևտուրը կարգավորող մի շարք համաձայնագրեր, սուբսիդիաների, հակադեմպինգային և փոխհատուցման միջոցառումների մասին համաձայնագրերը¹⁶:

ԱՀԿ-ում որոշումների հիմնական մասը ընդունվում են քվեարկությամբ՝ կոնսենսուսի հիման վրա: Այն դեպքերում, երբ կոնսեն-

¹⁶ WTO Agreements; The Legal Texts. Cambridge 1999, page 17-383.

սուսը հնարավոր չէ, ԱՅԿ Համաձայնագիրը թույլ է տալիս որոշում ընդունել ձայների մեծամասնությամբ՝ «մեկ երկիր՝ մեկ ձայն» սկզբունքով: ԱՅԿ բարձրագույն մարմինը Նախարարական համաժողովն է, որը հրավիրվում է ոչ ուշ, քան երկու տարին մեկ անգամ: Նախարարական համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում ԱՅԿ-ն ամենօրյա աշխատանքներն իրականացնում է Գլխավոր խորհուրդը (նստավայրը՝ ժնև), որը նիստեր գումարում է տարին մի քանի անգամ, և համարվում է առևտրային քաղաքականության վերանայման, ինչպես նաև վեճերի կարգավորման մարմին:

ԱՅԿ-ի գործունեությունը կառուցվում է երկու գլխավոր սկզբունքների վրա. ոչ խտրական առևտուր և հրապարակայնություն: Ոչ խտրական առևտուրը նշանակում է մի կողմից՝ հավասար հարաբերություններ առևտրային գործընկերների հետ, որի շրջանակներում յուրաքանչյուր երկիր առևտրային գործընկերներին տրամադրում է ոչ պակաս բարենպաստ պայմաններ, քան տրամադրել է թեկուզ մեկ երկրի: Սա է առավել բարենպաստության ռեժիմի տրամաբանությունը: Մյուս կողմից՝ օտարերկրյա ծագման ապրանքները ներքին շուկայում օգտվում են նույն արտոնություններից և զեղչերից, որոնք տարածվում են հայրենական ապրանքների վրա: Սա ազգային ռեժիմն է: Համաձայն հրապարակայնության սկզբունքի՝ բոլոր երկրները պարտավորվում են պարբերաբար և լրիվ ծավալով ԱՅԿ այլ անդամներին տեղյակ պահել իրենց առևտրային քաղաքականության միջոցների կիրառման մասին:

ԱՅԿ-ի գործունեությունն ու էվոյուցիան ցուցադրում է գլոբալացման և հովանավորչության ուժերի միջև բարդ միահյուսումն ու փոխազդեցությունը, որում գլոբալացման կողմնակիցները ձգտում են փնտրել համաշխարհային շուկա դուրս գալու օպտիմալ ելքեր, իսկ հովանավորչության կողմնակիցները բազմաբնույթ արգելքների միջոցով սահմանափակում են շուկաների թափանցելիությունը:

Առևտրի ազատականացման ուղղությամբ ԱՅԿ-ի գործունեությունը հիմնականում ուղղված է մաքսատուրքերի դրույքաչափերի նվազեցմանը և ոչ սակագնային արգելքների վերացմանը: Ընդ որում՝ ԱՅԿ անդամները պարտավորվել են վերացնել ոչ սակագնային արգելքները՝ դրանք մաքսային համարժեքով փոխարինելու ճանապարհով, որն անվանվում է *առևտրային սահմանափակումների սակագնացում*:

Մաքսատուրքերի նվազեցման մեխանիզմը ներառում է դրանց ամրագրման ինստիտուտը, որի դեպքում երկիրը պարտավորվում է կոնկրետ ապրանքների մաքսատուրքերը այդ ամրագրման մակարդակից վեր չբարձրացնել: Այսպես, եթե երկիրը պարտավորվել է որևէ կոնկրետ ապրանքի մաքսատուրքը չբարձրացնել 15%-ից, նշանակում է այդ ապրանքի մաքսատուրքի ամրագրման մակարդակը 15%-ն է: Եթե գործող մաքսատուրքը 10% է, ապա այն կարող է բարձրանալ մինչև 15%, բայց միայն ԱՀԿ շահագրգիռ անդամ-երկրների հետ բանակցություններից հետո՝ առաջարկելով համար-ժեք առևտրաքաղաքական զեղչեր: Յուրաքանչյուր երկրի մաքսատուրքերի ամրագրման և նվազեցման պարտավորությունները գրանցված են անհատական ցանկում: Առևտրային արգելքների նվազման կապակցությամբ բանակցությունները իրականացվում են երկկողմ, խմբային և բազմակողմ հիմքի վրա: Եթե երկիրը մեկ այլ երկրից ցանկանում է ստանալ այս կամ այն ապրանքի արտահանման զեղչեր, ապա իր կողմից ևս առաջարկում է մեկ այլ ապրանքի ներմուծման զեղչի պարտավորություն: Այլ խոսքով, զեղչերը տրվում են փաթեթային որոշման միջոցով, սակայն ԱԲԴ-ի շնորհիվ այդ զեղչերից օգտվում են ԱՀԿ անդամ բոլոր երկրները:

Քանակական սահմանափակումներ կիրառելու հարցում ԱՀԿ-ն ունի խիստ դիրքորոշում, քանի որ այն համարում է ծայրահեղ միջոցառում: ԱՀԿ-ն գտնում է, որ քանակական սահմանափակումները կարող են օգտագործվել այն դեպքում միայն, եթե այլ թույլատրելի միջոցառումներն արդյունավետ չեն: Տնտեսապես հետամնաց այն երկրներին, որտեղ բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտները չեն գերազանցում 1000 դոլար մակարդակը, տրամադրվում են քանակական սահմանափակումների կիրառման ավելի արտոնյալ պայմաններ: Դա հատկապես կարևոր է վճարային հաշվեկշռի կարգավորման համար:

Հայաստանի Հանրապետությունը անկախացումից ի վեր որդեգրել է ազատական տնտեսական քաղաքականություն, որի հիմնական նպատակը արտահանման և ներմուծման մեխանիզմների պարզեցումն է, ապրանք արտադրողների շահերի պաշտպանությունը, առաջին հերթին՝ արտահանման խթանման ճանապարհով արտաքին տնտեսական կապերի ընդլայնումն ու սպառողների շահերի պաշտպանությունը: Այս առումով կարևորվում էր անդամակցումը ԱՀԿ-ին:

1992 թ. Հայաստանը դիմել էր Առևտրի և սակագների գլխավոր համաձայնագրի քարտուղարություն՝ դիտորդի կարգավիճակ ստանալու համար: Մեկ տարի անց տրվեց ԱՍԳՀ-ին անդամակցելու դիմումը, իսկ 1994 թ. սկսվեցին անդամակցության բանակցությունները: Սակայն 1995 թ. ԱՀԿ-ի կազմավորումից հետո Հայաստանը ստիպված եղավ նոր դիմում ներկայացնելու, այս անգամ արդեն ԱՀԿ-ին անդամակցելու նպատակով: Բանակցությունները տևեցին մոտ 8 տարի, և 2003 թ. փետրվարի 5-ին ՀՀ-ն դարձավ ԱՀԿ-ի լիիրավ անդամ: Այս քայլը ավանդական արտահանման շուկաների կրճատման պայմաններում հետապնդում է հնարավոր նոր շուկաներ ներթափանցելու և այնտեղ ամրապնդվելու առաջնային նպատակ: ԱՀԿ-ին անդամակցությունը առավել մեծ հնարավորություններ է ընձեռում տեղական արտադրողների շահերը պաշտպանելու, նրանց մրցունակությունը ներքին ու արտաքին շուկաներում բարձրացնելու համար:

Դառնալով ԱՀԿ անդամ՝ Հայաստանը ստանձնել է պարտավորությունների մի ամբողջ համալիր, որոնք վերաբերում են մաքսային սակագների և ոչ սակագնային կարգավորման բնագավառում դրույքաչափերի պարբերաբար իջեցմանը, տնտեսական արգելքներ չկիրառելուն, ապրանքների որակի միջազգային չափանիշների ընդունմանը և օրենսդրական դաշտի փոփոխմանը:

4.8. Ծառայությունների համաշխարհային շուկան

Ապրանքների, կապիտալի, աշխատուժի շուկաների կողքին զարգանում և իր կայուն տեղն է գրավում **ծառայությունների համաշխարհային շուկան**: Ըստ գոյություն ունեցող գնահատականների՝ ներկայումս ծառայությունները կազմում են համաշխարհային ՀՆԱ-ի 80%-ը, սակայն ոչ բոլոր ծառայություններն են ներգրավված միջազգային առևտրում: Դրանց բաժինն ու դերը միջազգային փոխանակության մեջ էականորեն աճել է ամենից առաջ ծառայությունների նոր ձևերի հաշվին, և որոնց թիվը, ընդհանուր առմամբ, անցնում է 600-ից: Ծառայությունների շուկայի նման բազմազանությունն առաջացնում է «ծառայություն» հասկացության միասնական սահմանման դժվարություն: Թերևս առավել ընդունելի կարելի է

համարել ՄԱԿ-ի կողմից մշակված հետևյալ սահմանումը. *Ժառայությունները ինստիտուցիոնալ միավորումներում տեղի ունեցող վիճակի փոփոխություններ են, որոնք իրականացվում են մեկ այլ ինստիտուցիոնալ միավորի հետ փոխադարձ համաձայնությունների և գործողությունների հիման վրա:*

Քանի որ ժառայությունները բազմաբնույթ են, ուստի հնարավոր չէ դրանք միավորել և ներկայացնել մեկ խմբի միջոցով՝ ժառայությունների առևտուրը բխեցնելով համեմատական առավելություններից: Ծառայությունների առևտրում առանցքային նշանակություն ունի այն, որ ինչ-որ պահի պետք է տեղի ունենա գնողի և վաճառողի ֆիզիկական շփումը: Միայն այդ դեպքում ժառայությունների միջազգային առքուվաճառքը կհամարվի կայացած:

Գոյություն ունեն ժառայությունների միջազգային գործարքների իրականացման մի քանի մեխանիզմներ: Դրանք են՝

- Գնորդի շարժունակությունը. մի երկրի քաղաքացին գալիս է մեկ այլ երկիր՝ քաղաքացի հանդիսացող ժառայություններ վաճառողի մոտ:
- Վաճառողի շարժունակությունը. ժառայություններ վաճառողները, որոնք մի երկրի քաղաքացի են, մեկնում են մեկ այլ երկրի՝ քաղաքացի հանդիսացող ժառայություններ գնողների մոտ:
- Գնորդի և վաճառողի միաժամանակյա շարժունակությունը, կամ հենց ժառայությունների շարժունակությունը: Սա նշանակում է, որ գնորդն ու վաճառողը կամ միաժամանակ են օգտագործում ժառայությունը (հեռախոսակապ), կամ հանդիպում են երրորդ երկրում (միջազգային համաժողով):

ՄԱԿ-ի միջազգային ստանդարտացված արդյունաբերական դասակարգման համաձայն ժառայությունները չվաճառվող ապրանքներ են, այսինքն՝ արտադրվում և սպառվում են տվյալ երկրի տարածքում: Դրանք են՝

- կոմունալ ժառայություններն ու շինարարությունը,
- մանրածախ և մեծածախ առևտուրը, ռեստորանները, հյուրանոցները, տուրիստական բազան,
- փոխադրումները (ուղևորությունները), բեռների պահպանությունն ու կապը, ֆինանսական միջնորդությունը,
- պաշտպանությունը և պարտադիր սոցիալական ժառայությունները,

- կրթությունը, առողջապահությունը և հասարակական աշխատանքը,
- այլ կոմունալ, սոցիալական և անձնական ծառայությունները: Վաճառվող ծառայությունները դասակարգվում են հետևյալ կերպ.

- տրանսպորտ (մարդատար և բեռնատար),
- ուղևորություններ (անձնական և գործնական),
- կապ,
- շինարարություն,
- ապահովագրություն,
- ֆինանսական ծառայություններ,
- համակարգչային և տեղեկատվական ծառայություններ,
- լիցենզիոն վճարներ և ռոյալթի,
- այլ բիզնես ծառայություններ (միջնորդական ծառայություններ, լիզինգ, այլ գործնական, պրոֆեսիոնալ և տեխնիկական ծառայություններ),
- անձնական, մշակութային և հանգստի ծառայություններ ,
- կառավարական ծառայություններ:

Տարբերում են նաև գործոնային և ոչ գործոնային ծառայություններ հասկացությունները: Գործոնային են կոչվում այն ծառայությունները, որոնք կապված են արտադրության գործոնների՝ կապիտալի, աշխատուժի միջազգային շարժի հետ (ներդրումներից ստացված եկամուտներ, ռոյալթի և լիցենզիոն վճարներ, ոչ ռեզիդենդներին վճարվող աշխատավարձ և այլն): Ոչ գործոնային ծառայությունների մեջ մտնում են մնացած բոլոր ծառայությունները:

Քանի որ ծառայությունների իրացումը հաճախ ուղեկցվում է ապրանքների վաճառքով կամ ներդրումների իրականացմամբ, ուստի կախված սպառողին ծառայություններ ներկայացնելու եղանակից՝ դրանք լինում են՝

- ծառայություններ՝ կապված ներդրումների հետ, որոնք բանկային, հյուրանոցային և մասնագիտական են,
- ծառայություններ՝ կապված առևտրի հետ. տրանսպորտ, ապահովագրություն,
- ծառայություններ՝ կապված ներդրումների և առևտրի հետ, միաժամանակ՝ համակարգչային և տեղեկատվական, անձնական, մշակութային և հանգստի:

Միջազգային վիճակագրությունը վկայում է, որ ծառայությունների առևտուրը համաշխարհային տնտեսության առավել արագ զարգացող ոլորտներից մեկն է (տե՛ս թիվ 7 աղյուսակը):

Աղյուսակ 7¹⁷

Վաճառվող ծառայությունների աշխարհի առաջատար արտահանողները և ներմուծողները 2005 թ.

(մլրդ ԱՄՆ դոլար)

Երկրները	Ընդհանուր ծավալը 2005	Արտահանման տարեկան տոկոսային աճը			Ընդհանուր ծավալը 2005	Արտահանման տարեկան տոկոսային աճը		
		2000-2005	2004	2005		2000-2005	2004	2005
Աշխարհը	2415	10	20	10	2345	10	19	10
Հյուս. Ամերիկա	422	5	13	10	366	6	15	9
Հարավ. և Կենտ. Ամերիկա	68	8	16	19	70	5	15	21
Եվրոպա	1245	12	19	8	1120	11	17	8
ԵՄ (25)	1121	12	19	8	1038	11	16	7
ԱՊՀ	42	20	29	20	62	21	28	19
Աֆրիկա	57	13	20	12	69	13	19	21
Կենտր. Ասիա	55	11	14	13	85	12	20	18
Ասիա	525	11	26	14	573	9	24	12
Ճապոնիա	108	8	25	14	133	3	21	2
Չինաստան	74	20	34	19	83	18	31	16
«Ասիայի 6 վագրերը»	216	8	20	9	213	8	21	12

2005 թ. ծառայությունների համաշխարհային արտահանումը կազմել է ապրանքների համաշխարհային արտահանման 23.8%-ը, որը 2003 թ. համեմատությամբ աճել է 4.3 %-ով: Ընդհանուր առմամբ, ծառայությունների աճի տեմպերը զերազանցում են ապ-

¹⁷ World Trade in 2005. Overview. Page 16

րանքների միջազգային առևտրի աճի տեմպերին: Դրա պատճառները բազմաբնույթ են: Տրանսպորտային ծախսերի կտրուկ նվազումը նպաստեց ծառայություններ արտադրողների և սպառողների շարժունակության մեծացմանը, արբանյակային և հեռահաղորդակցության այլ միջոցների նոր ձևերի ներդրումը մի շարք դեպքերում հնարավորություն է տալիս բացառել գնորդի և վաճառողի անձնական շփումը, տեխնոլոգիական գործընթացներն իրենց հերթին մեծացնում են պահանջարկն այն ծառայությունների նկատմամբ, որոնք նախկինում ունեին ապրանքային ձև: Վերջինս վերաբերում է ֆինանսական, բանկային և ապահովագրական ծառայություններին:

Սակայն ծառայությունների առևտրի աշխարհագրական տեղաբաշխումը ծայրաստիճան բևեռացված է՝ ի օգուտ զարգացած երկրների: Այսպես, ծառայությունների համաշխարհային շուկայում առաջատարներ են հինգ երկրներ՝ ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Ֆրանսիան և ճապոնիան: Դրանց բաժին է ընկնում ծառայությունների համաշխարհային արտահանման 48.9 և ներմուծման՝ 47%-ը:

Զարգացող երկրներին բնորոշ է ծառայությունների արտաքին առևտրի բացասական սալդո: Այնուհանդերձ, դա չի նշանակում, թե այդ շուկայում դրանք որոշակի ակտիվություն չունեն: Վերջին տարիներին բավականին մեծացել է Զինաստանի դերը, որի կողմից ծառայությունների արտահանման բաժնեմասը 2005 թ. գրեթե հավասարվել է Նիդեռլանդների ցուցանիշին (3.1%), իսկ ներմուծման գծով նա առաջ է անցել մի շարք ցարգացած երկրներից¹⁸: Ռուսաստանը, ինչպես նաև ԱՊՀ մյուս երկրները, տնօրինում են տուրիզմի, տրանսպորտային, ֆինանսական ծառայությունների իրականացման ծանրակշիռ ներուժը, սակայն տնտեսական համապատասխան մեխանիզմների բացակայությունը թույլ չի տալիս իրացնել դրանք:

¹⁸ Վերլուծությունները կատարվել են World Trade in 2005. Overview. Page 19 տվյալների հիման վրա:

Գրականություն

1. Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցության ազդեցությունը Հայաստանի արտաքին առևտրատնտեսական համակարգի վրա; ԵՊՀ, Եր. ԱՌՏ, 2004:
2. **Е. Ф. Авдокушин**, Международные экономические отношения, М., 1999.
3. **В.А. Дергачев**, Международные экономические отношения, ЮНИТИ, М., 2005.
4. **Евдокимов и др.**, Международные экономические отношения, М., 2003.
5. **А. Киреев**, Международная экономика: часть 1, М., 1998.
6. **М. Портер**, Международная конкуренция, М., Международные отношения, 1993.
7. Business Guide to The Uruguay Round UNICTAD/ WTO 1996, Geneva, page 245-247.
8. **Corden M. W.**, The Theory of Protection, London 1971.
9. **Posner M.**, International Trade and Technical Change, Oxford Economic Papers, 1961.
10. **Vernoy R.**, "International Investment and International Trade in the Product Cycle", Quarterly Journal of Economics, May 1966.
11. World Trade in 2005. Overview.
12. WTO, Trade Policy Review Body 2006.

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺԸ

5.1. Կապիտալի միջազգային միգրացիան

Ժամանակակից տնտեսագիտությունն արտադրության գործոնները դասակարգում է չորս խմբի՝

ա) հող,

բ) կապիտալ,

գ) աշխատանք (մեր կարծիքով ոչ թե աշխատանք, այլ աշխատուժ, և շարադրանքում մենք կօգտագործենք աշխատուժ հասկացությունը),

դ) տեխնոլոգիա:

Սովորաբար հողը և կապիտալը անվանում են նյութական, իսկ աշխատուժը և տեխնոլոգիան՝ մարդկային գործոն:

Առաջին գործոնի մեջ ներառում են այն ամենը, ինչը տրվում է բնության կողմից (գյուղատնտեսության և շինարարության համար օգտագործվող տարածքներ, հող, օգտակար հանածոներ, օդ, ջուր, քար, անտառանյութ, ավազ, ինչպես նաև չվերականգնվող բնական որոշ ռեսուրսներ)՝ մարդու արտադրական գործունեության համար:

Կապիտալ հասկացության տակ նկատի ունեն կուտակված պաշարները (արտադրական, դրամական և ապրանքային ձևերով), որոնք օգտագործվում են նյութական բարիքներ արտադրելու համար:

Աշխատուժը մարդու ֆիզիկական, հոգևոր և մտավոր ընդունակությունների ամբողջությունն է, որն օգտագործվում է որևէ բարիք ստեղծելու համար:

Տեխնոլոգիան (այդ թվում՝ գործարարի ձեռնարկատիրական գործունեություն կազմակերպելու ունակությունը) գործնական նպատակների հասնելու գիտական մեթոդներ են:

Արտադրության գործոնները (բացի հողից) ենթակա են միգրացիայի և՛ երկրի ներսում, և՛ երկրների միջև (միջազգային կամ միջպետական):

Ստորև հերթականությամբ քննարկենք վերոհիշյալ արտադրության գործոնների միջազգային միգրացիան:

5.1.1. Կապիտալի միջազգային միգրացիայի էությունը. դրան նպաստող գործոնները

Միջազգային տնտեսական հարաբերությունների հիմնական ձևերից է կապիտալի միջազգային միգրացիան, որը դարձել է ոչ միայն ժամանակակից համաշխարհային տնտեսությունը բնութագրող կարևոր հատկանիշներից մեկը, այլև որոշիչ դեր է խաղում ՄՏՀ-ի ամբողջ համակարգում:

Կապիտալի միջազգային միգրացիան հանդես է գալիս երկրների կողմից կապիտալի արտահանմամբ և ներմուծմամբ: Կապիտալի արտահանումը տվյալ երկրից նրա մի մասի դուրս բերումն է՝ ավելի բարձր շահույթ ստանալու ակնկալիքով ներդնելու մյուս երկրների տնտեսություններում: Կապիտալ արտահանողներին նաև հետաքրքրում է քաղաքական և սոցիալական շահեր: Բացահայտ ձևով քաղաքական շահեր են հետապնդում հատկապես միջազգային և տարածաշրջանային ֆինանսավարկային կազմակերպությունները:

Կապիտալի արտահանումը երկկողմանի գործընթաց է, որի արդյունքում տեղի է ունենում խաչաձև ներդրումներ: Հետևապես, կապիտալի միջազգային միգրացիան երկրների միջև կապիտալի հանդիպակաց շարժն է:

Կապիտալն արտահանում կամ ներմուծում են ինչպես դրամական, այնպես էլ ապրանքային ձևերով, որոնք միմյանցից տարբերվում են: Դրամական ձևով կապիտալի արտահանման նպատակը ավելի բարձր շահույթի ստացումն է:

Կապիտալի արտահանումը որպես տնտեսական երևույթ առաջացել է ավելի ուշ, քան միջազգային առևտուրը և աշխատուժի միջազգային միգրացիան: Կապիտալի արտահանումը տեղի է ունեցել կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացմանը զուգընթաց (XVIII և XIX դարեր):

Կապիտալի արտահանումը կարևոր դեր է խաղում ազգային տնտեսությունների փոխադարձ կապի և կախվածության ուժեղացման, տնտեսական կյանքի և արտադրության միջազգայնացման գործում: Այն մեծ չափով նպաստում է արտադրության ճյուղային,

տեխնոլոգիական և դետալային մասնագիտացման խորացմանը, տարբեր երկրների ձեռնարկությունների միջև սերտ համագործակցության հաստատմանը:

Համաշխարհային տնտեսության գլոբալացման արդի պայմաններում էլ ավելի է բարձրանում կապիտալի արտահանման նշանակությունը: Այդ մասին է վկայում այն փաստը, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կապիտալի արտահանման տեմպերն աճել են բավական արագ՝ առաջ անցնելով ոչ միայն արդյունաբերականորեն զարգացած երկրների համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ-ի) արտադրության, այլև համաշխարհային ապրանքաշրջանառության աճի տեմպերից: 2000 թ. աշխարհի մասշտաբով ՕՌԽ-ների աճը կազմել է 18%, միջազգային առևտրինը՝ 13, ՀՆԱ-ինը՝ 2,5¹:

Երկրների մասնակցությունը կապիտալի միջազգային միգրացման գործընթացներին չափվում է հետևյալ ցուցանիշներով.

- կապիտալի արտահանման և ներմուծման ծավալներով,
- օտարերկրյա կապիտալով ձեռնարկությունների և դրանցում գբաղվածների թվաքանակով,
- բնակչության մեկ շնչի հաշվով ՕՌԽ-ների միջին ցուցանիշով,²
- կապիտալի ներմուծման և արտահանման գործակիցներով, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների նկատմամբ պահանջարկի գործակցով:

Կապիտալի ներմուծման գործակիցը հաշվարկվում է՝

$$K_{նգ} = \frac{K_{ն}}{ՀՆԱ} \times 100\%,$$

որտեղ՝ $K_{ն}$ – ն տվյալ երկիր ներմուծված կապիտալն է:

Կապիտալի արտահանման գործակիցը հաշվարկվում է՝

$$K_{ազ} = \frac{K_{արտ}}{ՀՆԱ} \times 100\%,$$

որտեղ՝ $K_{արտ}$ -ը տվյալ երկրից արտահանված կապիտալն է:

¹ Տե՛ս В. Загашяли, Ю. Шишков, Мировая торговля и международные инвестиции, МЭ и МО, 2000, #8 էջ 19:

² Այդ ցուցանիշի մասին տե՛ս սույն ձեռնարկի I գլուխ, էջ 17:

Օտարերկրյա ներդրումների նկատմամբ պահանջարկի գործակիցը՝

$$K_{\text{պ}} = \frac{K_0}{K_{\text{պ}}} \times 100\%,$$

որտեղ՝ K_0 -ն օտարերկրյա կապիտալի բաժինն է ներդրվող կապիտալում, $K_{\text{պ}}$ -ն՝ կապիտալ ներդրումների նկատմամբ տվյալ երկրի պահանջարկը:

Կապիտալի միջազգային միգրացիայի հիմնախնդիրը միշտ էլ եղել է տնտեսագիտական բոլոր դպրոցների ուշադրության կենտրոնում, որոնց ներկայացուցիչները, սկսած անգլիացի տնտեսագետ Ջ. Միլից, մինչ այժմ փորձել են գիտականորեն բացահայտել կապիտալի միջազգային միգրացիայի վրա ազդող գործոնները:

Վերջիններս դասակարգվում են երկու խմբի.

- տնտեսական,
- քաղաքական:

Տնտեսականին վերաբերում են՝

- որոշ երկրներում առաջանում է կապիտալի կուտակման հարաբերական ավելցուկ, որն անհրաժեշտություն է առաջացնում այն արտահանել³,
- կապիտալի սեփականատերերն իրենց կապիտալն արտահանում են ուրիշ երկրներ՝ ստանալու ձեռնարկատիրական բարձր շահույթ կամ տոկոս,
- համաշխարհային տնտեսության տարբեր օղակներում կապիտալի առաջարկի և պահանջարկի անհամապատասխանությունը,
- կապիտալ ներմուծող երկրներում էժան հումքի և աշխատուժի առկայությունը,

³ Տնտեսագիտական շատ դպրոցների ներկայացուցիչներ կապիտալի արտահանման հիմնական պատճառը համարում են տվյալ երկրում առաջացող կապիտալի հարաբերական ավելցուկը: Խոշոր ֆիրմաները XIX դարի վերջին քառորդից սկսած բարձր շահույթներ ստանալու միջոցով կուտակում են հսկայական դրամական կապիտալ, որը դժվարացնում է նրա շահութաբեր օգտագործումը իրենց երկրներում, քանի որ արտադրության ծավալի մեծացումը կոճվարացնել արտադրանքի վաճառքը, կիջեցներ գները և կկրճատեր շահույթը: Այս պայմաններում առաջանում է «ավելցուկ» կապիտալի արտահանման անհրաժեշտությունը: Եթե «ավելցուկ» կապիտալը ներդրվի հենց տվյալ երկրում, ապա դա կհանգեցնի ոչ միայն կապիտալների մրցակցության ուժեղացմանը, այլև կիջեցնի գործող ամբողջ կապիտալի շահույթի նորման:

- զարգացող երկրների կողմից օտարերկրյա կապիտալի ներգրավման անհրաժեշտությունը,
- կապիտալ ներմուծող երկրներում ներդրումային բարենպաստ միջավայրի առկայությունը և այլն:

Քաղաքական գործոններին վերաբերում են՝

- կապիտալի արտահանման ազատականացումը,
- զարգացող երկրներում իրականացվող ինդուստրացումը և տնտեսական բարեփոխումները,
- զարգացող երկրների կողմից զբաղվածության մակարդակի բարձրացմանն ուղղված քաղաքականությունը:

5.1.2. Կապիտալի միջազգային միգրացիայի ձևերը

Տվյալ երկրից դուրս հոսող կապիտալը տարբեր հատկանիշների հիման վրա դասակարգվում է.

Ըստ սեփականության ծագման աղբյուրի՝

- պետական (պաշտոնական),
- մասնավոր (ոչ պետական),
- միջազգային և տարածաշրջանային,
- խառը:

Պետական կապիտալը պետական բյուջեի կամ կառավարական հատուկ ֆոնդերի հաշվին արտասահմանյան երկրներին տրվող նվիրատվություններն են, օգնությունները, դրամաշնորհները, ինչպես նաև պետական փոխառությունները և այլն:

Մասնավոր կապիտալը ֆիրմաների, բանկերի և այլ կազմակերպությունների միջոցներն են, որոնք արտահանվում են նրանց ղեկավար մարմինների որոշումների հիման վրա:

Միջազգային և տարածաշրջանային կապիտալները տնօրինվում են միջազգային կամ տարածաշրջանային տնտեսական կազմակերպությունների (ՀԲ, ԱՄՀ, ԵՄ, ՋՎԵԲ և այլն) կողմից:

Ըստ արտահանվող օբյեկտի՝

- դրամական,
- ապրանքային:

Երկրորդ դեպքում արտահանման օբյեկտ է ծառայում մեքենան, սարքավորումը, արտոնագիրը և այլն, իհարկե, եթե դրանք արտա-

հանվում են հիմնական կապիտալում ներդնելու նպատակով: Ապրանքային կապիտալի մեջ են մտնում նաև ապրանքային վարկերը:

Ըստ ներդրման ժամկետների՝

- կարճաժամկետ (մեկ տարուց պակաս),
- միջին ժամկետ (մեկից մինչև հինգ տարի),
- երկարաժամկետ (հինգ տարուց ավելի, առավելագույնը՝ 50 տարի):

Ըստ օրինականության՝

- լեզալ (օրինական),
- ոչ լեզալ (անօրինական):

Երկրորդ տեսակը նաև կոչվում է կապիտալի փախուստ, որն արտահանվում է՝ շրջանցելով և՛ պետական, և՛ միջազգային համապատասխան օրենքները:

Ըստ օգտագործման բնույթի՝

- ձեռնարկատիրական (արտադրողական),
- փոխատվական:

Առաջին դեպքում կապիտալի սեփականատերը եկամուտ ստանում է շահույթի կամ դիվիդենդի ձևով, երկրորդ դեպքում՝ տոկոսի ձևով:

Ձեռնարկատերերի արտադրատնտեսական գործունեության վրա հսկողություն իրականացնելուց կախված՝ ձեռնարկատիրական ձևով արտահանվող կապիտալն իր հերթին հանդես է գալիս՝

- օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ-ների),
- պորտֆելային ներդրումների ձևով:

Առաջինն այն է, երբ արտահանող երկրի կապիտալի հաշվին ներմուծող երկրում կառուցվում կամ գնվում է նոր ձեռնարկություն: Երկրորդը՝ երբ տեղական կապիտալի մասնակցությամբ կազմակերպվում է համատեղ ձեռնարկություն:

Առաջին ձևով կապիտալ ներդնողը ստանում է երկարաժամկետ տնտեսական շահ: ՕՈՒՆ-ները ներդնողին տալիս են սեփականության իրավունք կամ ամբողջ ընկերության, կամ էլ բաժնետոմսերի այնպիսի քանակի (վերահսկիչ ծրարի) նկատմամբ, որ նրան (ներդնողին) հնարավորություն է տալիս ամբողջովին վերահսկել տվյալ ընկերության արտադրատնտեսական գործունեությունը: Յետևապես, արտասահմանյան ներդնողը հսկողություն է սահմանում այն օբյեկտի նկատմամբ, որտեղ ներդրել է իր կապիտալը: Նման ձևով կապիտալ արտահանում են հիմնականում մասնավոր ձեռ-

նարկատերերը, բացառիկ դեպքերում՝ նաև պետական ֆիրմաները: Իհարկե բացառված չէ, որ ուղղակի արտասահմանյան ներդրումները հանդես գան նաև փոխատվական կապիտալի արտահանման ձևով, որը կապված է ներկորպորատիվային միջազգային վարկերի շարժման հետ:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ՕՈՒՆ-ների ձևով կապիտալ արտահանողները միջազգային բիզնեսում մեծ փորձ ունեցող խոշոր ֆիրմաներն են, որոնք արտասահմանյան շուկաներում իրենց հավասար մրցակիցներ չունեն:

Պորտֆելային ներդրումները կապիտալի ներդրումներն են արտասահմանյան արժեթղթերում և եվրոֆինանսական գործիքներում: Նման ձևով կապիտալ արտահանողները վերահսկողության իրավունք չունեն ներդրված օբյեկտների նկատմամբ, քանի որ արտասահմանյան բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերը նրանք ձեռք են բերում այն չափով, որը հնարավորություն չի տալիս տվյալ ընկերության նկատմամբ ունենալ սեփականության իրավունք: Նման ներդրումներ կատարում են դարձյալ մասնավոր ձեռնարկատերերը, թեև պետությունը ևս կարող է ձեռք բերել արտասահմանյան արժեթղթեր և եվրոֆինանսական գործիքներ: Պորտֆելային ներդրումների ձև է նաև արտասահմանյան կապիտալի մասնակցությունը համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը: Վերջինս արտասահմանյան ներդրողների համար ապահովում է ավելի ցածր ռիսկայնություն: Այդ ուղիով կապիտալն արտահանում են հատկապես տնտեսապես այնքան էլ ոչ հզոր ֆիրմաները:

Փոխատվական կապիտալի արտահանումը ֆինանսավարկային ռեսուրսների արտահանումն է մի երկրից մյուսը՝ որոշակի ժամկետով և վերադարձելիության պայմանով: Այդ ռեսուրսները, որպես վարկ, ուրիշ երկրներին տրամադրվում են դրամական ու ապրանքային ձևերով՝ տոկոս ստանալու նպատակով:

Փոխատվական կապիտալի արտահանումն իրականացվում է միջազգային փոխառությունների, վարկերի, բանկային դեպոզիտների, արտասահմանյան ֆինանսական ինստիտուտների հաշիվներում միջոցներ փոխանցելու և այլ ձևերով:

Փոխատվական կապիտալի ձևով արտահանման օբյեկտ է ծառայում հիմնականում պետական (պաշտոնական) կապիտալը:

Փոխատվական կապիտալի համաշխարհային շուկայի բաղադրիչներն են՝

– դրամական շուկա՝ կարճաժամկետ (1 օրից մինչև 1 տարի) դրամական-փոխատվական գործառնություններ խոշոր բանկերի միջև,

– կապիտալի շուկա, որն ընդգրկում է 2 հատված.

ա) միջին և երկարաժամկետ արտասահմանյան վարկերի շուկա, բ) եվրովարկերի շուկա՝ եվրոարժույթով տրվող վարկեր (1 տարուց մինչև 15 տարի),

– ֆինանսական շուկա՝ արժեթղթերի էմիսիա և առք ու վաճառք, ինչպես նաև դրանց հետ վստահելի այլ գործառնություններ:

Փոխատվական կապիտալի ձևով արտահանումը ժամանակակից միջազգային վարկային համակարգի հիմքն է: Միջազգային վարկը փոխատվական կապիտալի շարժն է միջազգային տնտեսական հարաբերությունների ոլորտում՝ կապված արտարժութային և ապրանքային ռեսուրսները տոկոսով ոչ ռեզիդենտներին տալու հետ:

Միջազգային վարկը նպաստում է երկրների միջև ապրանքափոխանակության աճին և հնարավորություն է տալիս արտաքին ֆինանսական աղբյուրների միջոցներն ուղղել ազգային տնտեսությունների զարգացմանը:

Միջազգային վարկի ձևով կապիտալի արտահանումը համաշխարհային տնտեսության վրա ունենում է երկակի ազդեցություն. մի կողմից՝ այն ապահովում է կապիտալի միջազգային վերարտադրությունը և դրանով բարձրացնում միջազգային տնտեսական կապերի արդյունավետությունը, մյուս կողմից՝ նման կապիտալի անվերահսկելի հոսքերի հետևանքով հաճախ են խախտվում երկրների վճարային հաշվեկշիռների անհավասարակշռվածությունները, որի արդյունքում տեղի են ունենում արժութային փոխարժեքների զգալի տատանումներ: Միջազգային տնտեսական կազմակերպությունները հիմնական վարկատուներն են: Միջազգային վարկերի կեսը միջբանկային վարկերն են, 30%-ը՝ միջկառավարական վարկերը, 20%-ը՝ այլ կազմակերպությունների վարկերը:

Համաշխարհային վարկային շուկայում գլխավոր վարկատուներն են՝ Ճապոնիան, Շվեյցարիան, Գերմանիան, Թայվանը: Միջկառավարական վարկերի խոշոր ստացողներ են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Կանադան, Մեքսիկան, Ավստրալիան, Իսպանիան:

Միջազգային փորձը ցույց է տվել, որ ռեցիպիենտ երկրի համար ավելի ձեռնտու է կապիտալը ներմուծել ձեռնարկատիրական ձևով,

քան փոխատվական: Ինչո՞ւ: Որովհետև ձեռնարկատիրական կապիտալը խթանում է կապիտալ ներմուծող երկրի արտադրության զարգացմանը, ստեղծում լրացուցիչ աշխատատեղեր, նպաստում է նոր տեխնոլոգիաների, միջազգային մենեջմենթի, նոու-հաունների ներդրմանը, ինչպես նաև ռեցիպիենտ երկրում այն շարունակում է գործել բավական երկար ժամանակ:

Կապիտալը մի երկրից մյուսն է հոսում նաև տնտեսական օգնությունների ձևով: Վերջիններս զարգացած երկրների կողմից զարգացող երկրներին անհատույց կամ արտոնյալ վարկերի ձևով տրամադրվող միջոցներն են: Օգնությունների 2/3-ը տրամադրվում է անհատույց, 1/3-ը՝ արտոնյալ վարկերի ձևով: Ամենից շատ օգնություններ տրամադրում են ԱՄՆ-ն ու ճապոնիան: Օգնությունների գրեթե քառորդ մասն ուղղվում է ռազմական նպատակների համար: Արտոնյալ վարկեր և անհատույց միջոցներ շատ է ստանում հատկապես Իսրայելը:

Տնտեսական օգնություններ տրամադրելուց առաջ յուրաքանչյուր երկիր հետապնդում է տարբեր նպատակներ: Այսպես, ԱՄՆ-ը օգնություններ տրամադրելիս ամենից առաջ հաշվի է առնում՝

- իր ազգային անվտանգության ապահովումը,
- օգնություն ստացող երկրներում բաց շուկայական տնտեսության ձևավորման օժանդակումը և ժողովրդավարության զարգացման նպաստումը:

Կապիտալի արտահանման վերոհիշյալ ձևերը դարձել են աշխարհատնտեսական կապերի զարգացման և խորացման շարժիչ ուժերը: Կապիտալի միջազգային շարժի բազմազան ձևերը սովորաբար սահմանվում են տվյալ երկրի ներդրումային (ինվեստիցիոն) և բանկային օրենքներով:

Կապիտալի արտահանման և ներմուծման հետ խիստ կապված է «Միջազգային ներդրումային դիրք» հասկացությունը: Վերջինս վիճակագրական հաշվետվություն է, որտեղ ժամանակի որոշակի պահի դրությամբ ցույց են տրվում տվյալ երկրի արտաքին ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները:

Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային դիրքը*
1997-2005 թթ.

(մլն ԱՄՆ դոլար)

	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005
ՁՈՒՏ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԻՐՔԸ	-563.4	-908.9	-1118.8	-1300.3	-1434.2	-1512.4	-1577.3	-1686.3	-1759.4
Ակտիվներ	382.3	416.4	488.9	529.4	544.2	685.1	786.9	978.3	1130.5
Ուղղակի ներդրումներ արտերկրներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.4	0.4	2.7	10.3
Պորտֆելային ներդրումներ	0.6	0.2	0.1	19.3	8.9	4.5	4.4	4.6	6.0
Այլ ներդրումներ	141.8	124.1	185.8	196.0	204.1	248.0	278.0	421.0	440.4
Առևտրային վարկ	0.0	0.0	20.6	40.6	61.0	68.1	66.0	73.1	85.1
Վարկեր	19.1	19.7	20.1	26.1	20.9	33.5	29.2	60.1	59.1
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	122.4	104.1	144.9	128.1	121.9	144.1	180.8	282.5	288.6
Այլ ակտիվներ	0.3	0.3	0.2	1.2	0.3	2.4	1.9	5.4	7.6
Պահուստային ակտիվներ									
Դրամական ոսկի	0.4	0.4	0.4	0.0	12.5	15.7	0.0	0.0	0.0
Փոխառության հա- տուկ իրավունքներ	37.6	27.0	40.7	21.6	10.3	30.2	18.9	12.0	10.2
Հատուկ դիրք ֆոնդում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Արտարժությալի ակտիվներ	201.5	256.0	261.8	292.6	308.5	386.4	485.2	537.9	663.6
Արժույթ և ավանդներ	174.2	233.0	220.0	266.7	258.8	333.5	387.0	385.4	365.9
Արժեթղթեր	16.9	11.0	30.0	25.8	49.6	52.9	98.2	152.5	297.7
Արժությալի ակտիվներ	0.3	8.7	0.2	0.0	0.0	0.0	0.0	0.1	0.0
Պարտավորություններ	948.6	1325.3	1607.7	1829.7	1978.3	2197.5	2364.2	2664.7	1889.9
Ուղղակի ներդրումներ արտերկրներից	10.4	312.7	421.4	513.1	579.8	684.5	793.4	1005.1	1279.4
Պորտֆելային ներդրումներ	21.2	3.4	4.5	4.8	5.9	5.8	6.4	4.2	4.5
Այլ ներդրումներ	821.0	1009.2	1181.9	1311.8	1392.6	1507.2	1564.4	1655.3	1606.0
Առևտրային վարկ	78.5	170.2	230.4	268.5	269.6	235.0	229.7	208.6	171.9
Վարկեր	693.7	771.9	863.9	932.3	1005.3	1111.8	1194.7	1289.0	1290.2
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	42.1	51.1	71.7	76.4	83.6	74.1	78.8	98.3	108.5
Այլ պարտավ.	6.7	15.9	15.8	34.6	34.1	86.4	61.3	59.4	34.4

* Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, WWW.armstat.am

Ակտիվների տեսակներն են՝

- ուղղակի ներդրումներ,
- պորտֆելային ներդրումներ,
- այլ ներդրումներ (միջին և կարճաժամկետ միջազգային վարկեր և փոխառություններ),
- պահուստային ակտիվներ:

Պարտավորությունների մեջ մտնում են ոչ ռեզիդենտների կողմից կատարված ուղղակի, պորտֆելային և այլ ներդրումները:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների տարբերությունը ժամանակի որոշակի պահի դրությամբ ցույց է տալիս տվյալ երկրի զուտ միջազգային ներդրումային դիրքը: Եթե վերջինս դրական է, ապա տվյալ երկիրը հանդես է գալիս վարկատուի, բացասականի դեպքում՝ վարկառուի դերում: Միջազգային ներդրումային դիրքը ներկայացնում ենք ՀՀ-ի օրինակով (տես թիվ 1 աղյուսակը):

Աղյուսակի տվյալները վկայում են, որ ՀՀ-ի զուտ միջազգային ներդրումային դիրքը միշտ էլ եղել է բացասական: 1997թ. համեմատությամբ 2005 թ. այն աճել է ավելի քան 3 անգամ:

Այսպիսով, երկրի «միջազգային ներդրումային դիրքը» տվյալ երկրի սեփականություն հանդիսացող արտաքին ֆինանսական ակտիվների (որոնք գտնվում են արտասահմանյան երկրներում) համեմատությունն է այն ֆինանսական ակտիվների նկատմամբ, որոնք տիրապետում են արտասահմանցիները տվյալ երկրում:

5.1.3. Կապիտալի միջազգային միգրացիայի շարժընթացը, աշխարհագրական ուղղությունները և ժամանակակից առանձնահատկությունները

Նախ՝ անդրադառնանք կապիտալի միջազգային միգրացիայի համառոտ պատմությանը: Թեև կապիտալի արտահանումը տեղի է ունեցել կապիտալիստական արտադրահարաբերությունների զարգացմանը զուգընթաց, այնուամենայնիվ, այն զանգվածային բնույթ է կրել XIX դարի վերջին, երբ վերազգային կորպորացիաների (մոնոպոլիաների) առաջացումը ստեղծեց կապիտալի հարաբերական «ավելցուկ», որի կիրառումը տվյալ երկրում չէր կարող ապահովել բարձր շահույթ: Հետևապես, ՎԱԿ-երին ձեռնտու էր սեփական ձեռ-

նարկություններ ստեղծել տարողունակ ներքին շուկա ունեցող երկրներում, որը նրանց հնարավորություն էր ընձեռում ազատվել ապրանքների փոխադրման ծախսերից և տարբեր տեսակի մաքսերի վճարումից:

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ կապիտալի հիմնական արտահանողներ էին Անգլիան, Ֆրանսիան և Գերմանիան, որոնց կողմից արտասահմանում զետեղված կապիտալը հասնում էր 175-200 մլրդ ֆրանկի, և 5% շահույթի նորմայի դեպքում տարեկան բերում էր 8-10 մլրդ ֆրանկի շահույթ: Միայն Ռուսաստանում զետեղված ֆրանսիական փոխառվական կապիտալը կազմում էր 10 մլրդ ֆրանկ: Սակայն XX դարի սկզբներին կապիտալի արտահանման արագ աճը կասեցվեց՝ Ռուսաստանում տեղի ունեցած բոլշևիկյան հեղաշրջման պատճառով: Այն նեղացրեց կապիտալի արտահանման շրջանակները:

Կապիտալի արտահանման աշխարհագրական ուղղություններն ու շրջանակները փոխվեցին նաև Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ ստեղծվեց համաշխարհային սոցիալիստական համակարգը, և 60-ական թվականների սկզբներին վերջնականապես կործանվեց գաղութատիրությունը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո կապիտալիստական աշխարհի ֆինանսական կենտրոնը Եվրոպայից տեղափոխվեց ԱՄՆ: 1970 թ. արտահանվող կապիտալի կառուցվածքում ԱՄՆ-ի բաժինը կազմում էր 64,2, Անգլիայինը՝ 20,6, Ֆրանսիայինը՝ 9,2, ԳՖՀ-ինը՝ 4%: Ետպատերազմյան ժամանակաշրջանում ամերիկյան ուղղակի ներդրումների 60%-ը բաժին էր ընկնում արևմտյան կիսագնդի երկրներին, որից 1/3-ը՝ Կանադային: ԱՄՆ-ի ներդրումները Արևմտյան Եվրոպայի երկրներում կազմում էր նրա ընդհանուր ներդրումների 20%-ը: ԱՄՆ-ը խոշոր ներդրումներ էր կատարում նաև Մերձավոր Արևելքի երկրներում, Աֆրիկայում, Ավստրալիայում և ճապոնիայում: Հիշյալ ժամանակաշրջանում արագ էր աճում նաև Անգլիայի, Ֆրանսիայի, ճապոնիայի, 50-ական թվականների վերջերից նաև ԳՖՀ-ի արտասահմանյան ներդրումները:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության գնահատականներով՝ 1980-ական թվականների ՕՈՒՆ-ների միջին տնտեսական աճը կազմել է 34%, այն դեպքում, երբ նույն ժամանակաշրջանում համաշխարհային առևտրի տնտեսական աճի տեմպերը չեն գերազանցել 7-8%-ը:

1980-ական թվականների վերջերից սկսած ԽՍՀՄ-ի և համաշխարհային սոցիալիստական համակարգի փլուզումից հետո կապիտալի միջազգային միգրացիայի շրջանակները նորից մեծացան: Տարեցտարի աճում է ՕՈՒՆ-ների ծավալը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում, նաև Ռուսաստանում: Լեհաստանում ՕՈՒՆ-ների տարեկան ծավալը գերազանցում է 10 մլրդ ԱՄՆ դոլարը: Օտարերկրյա կապիտալը գրավիչ է հատկապես Չինաստանի տնտեսության համար (2005-ին այն ներմուծել է 65 մլրդ ԱՄՆ դոլարի կապիտալ):

Ներկա պայմաններում աննախադեպ չափերի են հասել կապիտալի միջազգային միգրացիայի մասշտաբները: Զարգացած երկրներից արտահանվող և նույն երկրներ ներմուծվող կապիտալը հասնում է հսկայական չափերի: Արագ են աճում հատկապես օտարերկրյա ուղղակի ներդրումները, որոնք կազմում են համաշխարհային ներքին ներդրումների 8%-ը: Այսպես, եթե 1995 թ. ՕՈՒՆ-ների արտահոսքն ու ներհոսքը միասին վերցրած ամբողջ աշխարհում կազմել է 636 մլրդ, ապա 2000-ին այն հասել էր ռեկորդային մակարդակի՝ կազմելով 2 տրլն 654 մլրդ, իսկ 2005-ին այն իջավ մինչև 1 տրլն 695 մլրդ ԱՄՆ դոլարի⁴: Դա նշանակում է, որ ՕՈՒՆ-ների շարժընթացը 1995-ից մինչև 2000 թվականն ունեցել է աճի բարձր տեմպեր, իսկ դրանից հետո տարբեր պատճառներով աստիճանաբար նվազել է: ՕՈՒՆ-ների համար 2000 թ. իրավ եղել է ռեկորդային տարի, որից հետո 2001-ին ՕՈՒՆ-ների համաշխարհային հոսքերը 2000-ի համեմատությամբ կրճատվել են 41, 2002-ին՝ 17,0, 2003-ին՝ 17,6%-ով⁵: 2000 թվականը շրջադարձային է եղել նաև այն առումով, որ մի կողմից մեծացել են կապիտալի հոսքերը դեպի զարգացող երկրներ (242 մլրդ դոլար), մյուս կողմից՝ աշխուժացել է զարգացող երկրների կապիտալի արտահանումը (100 մլրդ ԱՄՆ դոլար):

2001 թ. սկսած ՕՈՒՆ-ների նվազման պատճառները հետևյալն են՝

- նախորդ տարիների նկատմամբ 2001-2003 թթ. վերազգային համաձուլումների և կլանումների նվազումը,

⁴ - <http://limfstatistics.org/limfilmf/Brouser.aspx>
- International Financial statistics (IFS) 2006
- UNCTAD database - UNCTAD, FOILTNC database
⁵ Տե՛ս նույն տեղը:

- համաշխարհային տնտեսության նշանակալի անկումը, որն ընդգրկեց համաշխարհային ֆինանսական հիմնական կենտրոնները,
- զարգացող երկրների ֆինանսական շուկաների անկայունությունը:

ՕՈՒՆ-ների համաշխարհային հոսքերի նվազման միտումը տեսել է ընդամենը 3 տարի, 2004 թ. սկսած այն նորից աճման միտում է ունեցել՝ կապված հիմնականում վերազգային համաձուլումների և կլանումների նոր ալիքի առաջացման հետ:

ՕՈՒՆ-ների հիմնական արտահանողներ և ներմուծողներ են ԱՄՆ-ը (Ռեյգանի ժամանակաշրջանից սկսած), Գերմանիան, Ճապոնիան, Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան: 2000 թ. նշված երկրների կողմից ՕՈՒՆ-ների արտահոսքը և ներհոսքը միասին վերցրած համապատասխանաբար կազմել են՝ 480, 270, 40, 217 և 368 մլրդ ԱՄՆ դոլար⁶: Այդ նույն երկրների ՕՈՒՆ-ները (արտահոսք + ներհոսք) 2005-ին համապատասխանաբար կազմել են՝ 119, 79, 48, 204, 262 մլրդ ԱՄՆ դոլար⁷:

Արտադրության միջազգայնացման և գլոբալացման ազդեցության տակ ներկա պայմաններում ոչ միայն մեծանում են կապիտալի արտահանման մասշտաբները, այլև դրա դրսևորման ձևերում, կառուցվածքում և աշխարհագրական ուղղություններում տեղի են ունենում էական փոփոխություններ, որոնք արտահայտում են համաշխարհային տնտեսության զարգացման առանձնահատկությունները: Դրանցից հիմնականներն են՝

- Մի շարք զարգացած երկրներ (օրինակ՝ ԱՄՆ, Անգլիա), որոնք ավանդաբար եղել են կապիտալի խոշոր արտահանողներ, այժմ հանդես են գալիս նաև որպես հիմնական ներմուծողներ: Այսպես, ՕՈՒՆ-ների ներհոսքը ԱՄՆ 1995-ին կազմել է 58, 2000-ին՝ 321, 2005-ին՝ 110 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ Մեծ Բրիտանիայինը համապատասխանաբար՝ 22, 122 և 159 մլրդ ԱՄՆ դոլար⁸: Ընդ որում, ԱՄՆ ՕՈՒՆ-ների ներհոսքը (2 անգամ՝ 2000 թ., 12 անգամ՝ 2005 թ.) գերազանցել է արտահոսքին⁹: Գերմանիայից ՕՈՒՆ-ների արտահոսքը 2000-ին կազմել է 60, ներհոսքը՝ 210 մլրդ ԱՄՆ դոլար, Մեծ Բրիտա-

⁶ Տե՛ս նույն տեղը:

⁷ Տե՛ս նույն տեղը:

⁸ Տե՛ս նույն տեղը:

⁹ Տե՛ս նույն տեղը:

նիայից համապատասխանաբար՝ 246 և 122 մլրդ ԱՄՆ դոլար: Իսկ 2005-ին ՕՈՒՆ-ների արտահոսքը Մեծ Բրիտանիայից կազմել է 103, իսկ ներհոսքը՝ 159 մլրդ ԱՄՆ դոլար¹⁰:

– Ուժեղացել է կապիտալի միգրացիան արդյունաբերապես զարգացած երկրների միջև: Ճապոնիան իր կապիտալն արտահանում է ԱՄՆ, վերջինս էլ՝ ճապոնիա: Արևմտյան Եվրոպայի երկրներն իրենց կապիտալն արտահանում են ԱՄՆ, իսկ վերջինս՝ Արևմտյան Եվրոպայի երկրներ: ԱՄՆ-ում օտարերկրյա ներդրումները կատարվում են ավտոմոբիլաշինության, քիմիական արդյունաբերության և այլ ճյուղերում: Արդյունաբերապես զարգացած երկրներին բաժին է ընկնում ՕՈՒՆ-ների համաշխարհային հոսքերի 75-80, իսկ զարգացող երկրներին՝ 0-25%-ը: Դա պայմանավորված է նրանով, որ նախ՝ զարգացող երկրներում աստիճանաբար անբարենպաստ է դառնում ներդրումային միջավայրը, երկրորդ՝ գիտատեխնիկական նորագույն նվաճումների ներդրման հետևանքով արտադրության առաջատար ճյուղերի զարգացումը պահանջում է բարձր որակավորում ունեցող աշխատուժ և բնակչության բարձր վճարունակություն, իսկ վերջիններս կա՛մ գրեթե բացակայում, կա՛մ էլ անհամեմատ ցածր են զարգացող երկրներում, երրորդ, որ զարգացած երկրների տարողունակ շուկաները մեծապես նպաստում են, որպեսզի այդ երկրներում ներդրվող կապիտալը ետ գնվի կարճ ժամանակահատվածում:

Չարգացած երկրների միջև կապիտալի փոխադարձ թափանցումներն ամրապնդում են նրանց տնտեսական կապերն ու համագործակցությունը, նպաստում արտադրության միջազգային մասնագիտացման և կոոպերացման խորացմանը:

– Կապիտալի միջազգային միգրացիայի ժամանակակից առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ կապիտալ արտահանում են ոչ միայն արդյունաբերապես զարգացած երկրները, այլ նաև նոր ինդուստրիալ, նավթ արտահանող և զարգացող այլ երկրներ (Սինգապուր, Սյոնգոն, Հարավային Կորեա, Բրազիլիա, Սաուդյան Արաբիա, Արաբական Միացյալ Էմիրություններ, Քուվեյթ և այլն): Նավթ արտահանող կազմակերպության մեջ մտնող երկրները, որպես կանոն, իրենց կապիտալներն արտահանում են փոխատվական կապիտալի ձևով, այն էլ հիմնականում ԱՄՆ, իսկ

¹⁰ Նույն տեղը:

Հարավարևելյան Ասիայի նոր ինդուստրիալ երկրները՝ ձեռնարկատիրական կապիտալի ձևով:

– Կապիտալի միգրացման գործընթացների մեջ են ընդգրկել նաև նախկին սոցիալիստական (Լեհաստան, Չուեզարիա, Չեխիա և այլն), ինչպես նաև ԱՊՀ երկրներն ու Չինաստանը: Միայն Ռուսաստանն է, որ կապիտալը և՛ ներմուծում, և՛ արտահանում է, ընդ որում՝ կապիտալի արտահոսքը հաճախ գերազանցում է ներհոսքին:

– Մեծացել է պետությունների և միջազգային ֆինանսատնտեսական կազմակերպությունների (Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ և այլն) կողմից արտահանվող կապիտալի բաժինը:

– Այժմ կապիտալը շատ դեպքերում արտահանվում է ոչ թե ֆինանսական ռեսուրսների, այլ ոչ նյութական ակտիվների (առևտրային մարկա, ֆիրմայի անվանում, լիցենզիաների, ինչպես նաև կառավարման, մարքեթինգային և արտադրական նոուհաուների) ձևով:

– Մասնավոր կապիտալի արտահանումն աճում է ավելի բարձր տեմպերով, քան պետական կապիտալի արտահանման աճն է:

– Կապիտալի արտահանման ժամանակակից միտումներից մեկն էլ այն է, որ աճում է կապիտալի արտահանումը արտադրողական ձևով, այսինքն՝ մասնակցությունը ձեռնարկատիրական գործունեություններին ուղղակի ներդրումների միջոցով:

5.1.4. Կապիտալի միգրացիայի սոցիալ-տնտեսական հետևանքները արտահանող և ներմուծող երկրներում

Կապիտալի միջազգային միգրացիան կապիտալ արտահանող և ներմուծող երկրների վրա ունենում է և՛ դրական, և՛ բացասական հետևանքներ: Կապիտալի միգրացիայի դրական կողմերն արտահանող երկրների համար հետևյալներն են.

1) կապիտալի արտահանումը ոչ միայն կասեցնում է շահույթի նորմայի իջեցումը կապիտալ արտահանող երկրներում, այլև այն կապիտալ ներմուծող երկրներից բերում է զգալիորեն ավելի բարձր շահույթ,

2) կապիտալ արտահանող ֆիրմաներին հնարավորություն է տալիս բարձրացնելու արտադրած ապրանքների և իրենց երկրների մրցունակությունը,

3) կապիտալ արտահանող երկրները ոչ միայն բարձր շահույթ են ստանում, այլև ամրապնդում են իրենց տնտեսական ու քաղաքական դիրքերը կապիտալ ներմուծող երկրներում,

4) կապիտալի արտահանումն իր հերթին նպաստում է արտադրության միջազգային մասնագիտացման և կոոպերացման խրաջմանը,

5) կապիտալի միջազգային միգրացիան մեծացնում է երկրների միջև փոխադարձ ապրանքաշրջանառությունը և խթանում համաշխարհային առևտրի զարգացումը,

6) համաշխարհային տնտեսության գլոբալացման պայմաններում կապիտալի միջազգային միգրացիայի միջոցով բարձրանում է միջազգային տնտեսական կապերի արդյունավետությունը,

7) կապիտալի արտահանման միջոցով ուժեղանում է տնտեսապես հետամնաց երկրների կախվածությունը զարգացած երկրներից:

Կապիտալ արտահանող երկրի համար կապիտալի արտահանումն ունենում է նաև բացասական հետևանքներ: Այսպես՝

➤ կապիտալի արտահանումն իջեցնում է ներքին կապիտալ ներդրումները, որն էլ դանդաղեցնում է տվյալ երկրի տնտեսական զարգացումը մյուս պետությունների համեմատությամբ,

➤ նպաստում է գործազրկության ավելացմանը,

➤ վատթարացնում է կապիտալ արտահանող երկրի վճարային հաշվեկշիռը, քանի որ կապիտալը դուրս է գալիս տվյալ երկրից:

Կապիտալի միգրացիայի դրական հետևանքները կապիտալ ներմուծող (ռեցիպիենտ) երկրների համար հետևյալն է՝

- նպաստում է երկրի տնտեսական աճին ինչպես քանակական, այնպես էլ որակական առումով,
- ստեղծում է նոր աշխատատեղեր, իջեցնում գործազրկության մակարդակը,
- երկիրը ձեռք է բերում նորագույն տեխնոլոգիաներ, կիրառում մեներջմենթի և մարքեթինգի ժամանակակից մեթոդներ և նպաստում երկրի ԳՏԱ-ին,
- բարելավում է երկրի վճարային հաշվեկշիռը,
- տնտեսապես հետամնաց երկրներում է՛լ ավելի են զարգա-

նում շուկայական հարաբերությունները,

- կապիտալի արտահանումը բարձրացնում է հետամնաց երկրների բնակչության կենսամակարդակը, նպաստում նրանց բնական հարստությունների արտադրողական օգտագործմանը:

Կապիտալ ներմուծող երկրի համար կապիտալի միգրացիան ունենում է նաև բացասական հետևանքներ.

- տեղական գործարարներին դուրս է մղում շահութաբեր ճյուղերից և կասկածի տակ դնում երկրի տնտեսական ու քաղաքական անկախությունը: Այսպես, ամերիկյան ֆիրմաները չափից ավելի ագրեսիվ են իրենց պահում Կանադայում և սպառնում զգալի վտանգ, որ կանադացիները որոշ ճյուղերի նկատմամբ կկորցնեն իրենց ազգային հսկողությունը: Ահա թե ինչու Կանադայում կան ուժեր, որոնք խիստ դիմադրում են ԱՄՆ-ի հետ ինտեգրման հետագա խորացումը,
- կապիտալի ներմուծումը աղտոտում է տվյալ երկրի շրջակա միջավայրը,
- տնտեսական և քաղաքական կախման մեջ է պահում կապիտալ արտահանող երկրից,
- փոխատվական կապիտալի ձևով ներմուծումը մեծացնում է երկրի արտաքին պարտքը,
- կապիտալ ներմուծող երկրների ազգային եկամտի զգալի մասը (մոտ 15%-ը) տոկոսների, շահույթի և այլ ձևերով հոսում է զարգացած երկրներ,
- ՎԱԿ-երի կողմից տրանսֆերտային գների օգտագործումը կրճատում է ռեցիպիենտ երկրի հարկային մուտքերն ու մաքսային վճարումները,
- փոխատվական կապիտալի արտահանման ժամանակ վարկ վերցնող երկիրը ստիպված է լինում վարկի մի մասը ծախսել կապիտալ արտահանող երկրների ապրանքները գնելու համար,
- թույլ զարգացած երկրների տնտեսությունները զարգանում են միակողմանիորեն՝ հիմնականում հանքային հումքի և գյուղատնտեսական արտադրության ուղղությամբ:

5.1.5. *ՀՀ-ի մասնակցությունը կապիտալի միջազգային միգրացման գործընթացներին*

ՀՀ-ում այժմ առաջնային են դարձել տնտեսական աճի և բնակչության կենսամակարդակի բարձրացման հիմնախնդիրները, սակայն դրանց լուծման ներքին հնարավորությունները (բյուջետային միջոցներ, խնայողություններ, վարկային ռեսուրսներ և այլն) խիստ սահմանափակ են: Այս առումով առայժմ կարևորվում է օտարերկրյա ներդրումների, հատկապես ՕՈՒՆ-ների դերը, քանի որ դրանք ՀՀ մտնող այնպիսի միջոցներ են, որոնց հաշվին հնարավորություններ են ստեղծվում բարելավել գործող ձեռնարկությունների մի մասի արտադրատնտեսական գործունեությունը, հիմնադրել նոր ձեռնարկություններ, ներգրավել ժամանակակից տեխնոլոգիաներ և կառավարման ու մենեջմենթի առաջավոր փորձը, և, ընդհանրապես, անհրաժեշտ պայմաններ ապահովել մեր երկրի տնտեսության զարգացման համար: Այլ խոսքով, ՕՈՒՆ-ներն ինչ-որ չափով ապահովում են այն ամենի ներհոսքը, ինչի կարիք այսօր գոյում է ՀՀ-ն տնտեսական աճ ապահովելու համար:

ՕՈՒՆ-ներն ունեն և՛ դրական, և՛ բացասական կողմեր: Խնդիրն այն է, որ ՀՀ-ն ոչ միայն օգտվի ՕՈՒՆ-ների և ժամանակակից տեխնոլոգիաների մուտքի դրական կողմեթից, այլև դիմակայի դրանց բացասական ազդեցություններին:

ՀՀ-ում ՕՈՒՆ-ների դրական հետևանքներն են՝

- բարձրացնում է արտադրողականությունը տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում,
- հանրապետությունը ստանում է նոր տեխնոլոգիաներ և նպաստում աշխատուժի որակի բարձրացմանը,
- երկիր են մտնում նոու-հաուները,
- լայն մասշտաբներ են ընդունում ՀՀ-ի միջազգային արտադրական կապերը,
- ստեղծվում են նոր աշխատատեղեր և այլն:

Ավելի կարճ ասած, ՕՈՒՆ-ները ՀՀ-ի համար հանդես են գալիս որպես տնտեսական աճի հիմնական գործոն: Նշանակում է՝ ՀՀ-ի կառավարությունը պետք է օգտագործի ՕՈՒՆ-ների խթանման այնպիսի մեխանիզմներ (հարկային արտոնություններ, նպաստներ, ենթակառուցվածքների բարելավում, աշխատուժի որակավորման բարձրացում, ՕՈՒՆ-ների խթանման գործակալությունների ստեղ-

ծում, գործարարության միջավայրի բարելավում և այլն), որոնց միջոցով հնարավոր լինի օտարերկրյա ներդրողների ուշադրությունը բևեռել Հայաստանի վրա:

Օտարերկրյա ներդրումների աշխուժացումը ՀՀ-ում սկսվել է 1997 թ., քանի որ մինչ այդ մեր երկիրը գտնվում էր ճգնաժամային վիճակում:

Վերջին տասնամյակում ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների մասին պատկերացում կարելի է կազմել աղյուսակ 2-ում բերված տվյալներից:

Աղյուսակ 2

Օտարերկրյա ներդրումների շարժընթացը ՀՀ-ում 1995-2005 թթ.

(մլն ԱՄՆ դոլար)¹¹

	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Օտարերկրյա ներդրումներ	24,4	17,6	52,0	247	148	190	122,5	218	230	306	400	444
որից՝ ՕՈՒՆ-ներ	24,4	17,6	52,0	232	130,3	120	76	141	154	227	244	251

Աղյուսակի տվյալները վկայում են, որ 1998 թ. տեղի է ունեցել օտարերկրյա ներդրումների (հատկապես ՕՈՒՆ-ների) կտրուկ աճ, որը պայմանավորված է եղել միջազգային մրցույթով սեփականաշնորհված ձեռնարկությունների (ՀՀ-ի տեղեկամուսնիկացիայի, «Արմենիա» և «Անի» հյուրանոցների) վաճառքով: Դրանից հետո ՕՈՒՆ-ների ծավալը երեք տարի շարունակ աստիճանաբար նվազել է՝ կապված, մի կողմից՝ ՌԴ-ում տեղի ունեցած ֆինանսական, մյուս կողմից՝ ՀՀ-ի քաղաքական ճգնաժամների հետ: ՕՈՒՆ-ների ակտիվությունը նորից բարձրացել է 2002 թվականից, իսկ 2006-ին այն հասել է բավական մեծ չափերի (251 մլն ԱՄՆ դոլար)՝ գերազանցելով 1998-ի մակարդակը (232) 20 մլն ԱՄՆ դոլարով:

¹¹ Տես ՀՀ-ի սոցիալ-տնտեսական վիճակը (սկսած 1995 թ.), Հայաստանի վիճակագրական տարեգրքերը (սկսած 1997 թ.) և ՀՀ-ի սոցիալ-տնտեսական վիճակը 2006 թ. հունվար-փետրվար, Եր., 2007, էջ 76: WWW. armstat. am., հրապարակումներ:

ՀՀ-ում ՕՈՒՆ-ների հիմնական մասն ուղղվում է արդյունաբերությանն ու ծառայություններին, իսկ առևտրին՝ 10%-ը: Օտարերկրյա ներդնողները ՀՀ-ում ներդրումներ կատարում են այն ճյուղերում, որտեղ կան մրցակցային կամ համեմատական առավելություններ և արտահանման մեծ ներուժ:

Օտարերկրյա ներդնողներին առավելապես հետաքրքրում են ՀՀ-ի տնտեսության հետևյալ ճյուղերը՝

- տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- հեռահաղորդակցություն,
- հանքարդյունաբերություն,
- զբոսաշրջություն և այլն:

Նման ոլորտները ՕՈՒՆ-ներին ապահովում է ոչ միայն գերշահույթ, այլև իրենց ներդրումները նրանք ետ են գնում ավելի կարծ ժամանակաշրջանում:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ՕՈՒՆ-ների ներգրավման գործում որոշակի առավելություններ ունեն սփյուռք ունեցող երկրները: Բացառություն չէ և Հայաստանը: ՀՀ-ում ՕՈՒՆ-ների բաշխվածության վերլուծությունից պարզվում է, որ առավել խոշոր ներդրումներ կատարել են այն երկրները, որտեղ կան հայկական մեծ համայնքներ: Վիճակագրական տվյալները փաստում են, որ 1995-2005 թթ. Հայաստանում օտարերկրյա ներդրումների գրեթե 2/3-ը կատարվել է սփյուռքահայերի կողմից: Ռուսաստանի, ԱՄՆ-ի և Իրանի հայերի կողմից ներդրումները կազմել են սփյուռքահայերի ընդհանուր ներդրումների 60%-ը: Ջգալի են նաև Ֆրանսիայի, Սիրիայի և Լիբանանի հայերի կատարած ներդրումները: Սփյուռքահայերի ներդրումները բուռն ձևով աճել են 2002 թ. սկսած:

Այսպիսով, ՀՀ-ն ևս ինչ-որ չափով մասնակցում է կապիտալի միջազգային միգրացիոն գործընթացներին, բայց որպես կապիտալ ներմուծող, այն էլ հիմնականում ՕՈՒՆ-ների ձևով: Վերջիններս 1995-2005 թթ. աճել են 10 անգամից ավելի: Եթե 1995 թ. ՕՈՒՆ-ների ներհոսքը ՀՀ կազմել է ընդամենը 25, 2000-ին՝ 125, ապա 2006-ին՝ հասել է 251 մլն ԱՄՆ դոլարի¹²:

Զնայած ՕՈՒՆ-ների նշանակալի աճին, այնուամենայնիվ, ՀՀ-ի ներդրումային միջավայրը դեռևս մնում է անբարենպաստ: Այդ է

¹² Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք, Եր., 1996, Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք, Եր., 2003, էջ 510, 511, Հայաստանի վիճակագրական տեղեկագիրք, Եր., 2006, էջ 513, 514:

վկայում հենց այն փաստը, որ բնակչության մեկ շնչի հաշվով ՕՈՒՆ-ների բացարձակ ծավալով երկիրը բավական ետ է մնում ԱՊՀ մի շարք երկրներից, անգամ՝ Ադրբեջանից ու Վրաստանից:

Ներդրումային միջավայրը բարելավելու համար անհրաժեշտ է ամենից առաջ ուշադրություն դարձնել այն գործոնների վրա, որոնք, իսկապես, խոչընդոտում են ՕՈՒՆ-ների ներհոսքը Հայաստան: Ներդրումային միջավայրի վրա ազդում են բազմաթիվ գործոններ, որոնցից առավել կարևորներն են՝

- քաղաքական,
- տնտեսական,
- աշխարհագրական-բնակլիմայական,
- ենթակառուցվածքային,
- սոցիալ-մշակութային,
- ժողովրդագրական,
- տեղեկատվական,
- սեփականության իրավունքի պաշտպանության և այլն:

Թվարկված գործոններից յուրաքանչյուրը կարևոր դեր է խաղում ներդրումային միջավայրի վրա, թեպետ դրանցից ամեն մեկի ազդեցությունը տարբեր չափերի է: Այսպես, օրինակ, ՀՀ-ի 15 տարիների փորձը ցույց է տվել, որ քաղաքական ցնցումներն ու տարածաշրջանային անկայուն իրավիճակը լուրջ խոչընդոտ են եղել ՕՈՒՆ-ների ներգրավման համար:

Տնտեսական խոչընդոտների թվին են պատկանում նաև Հայաստանի ներքին փոքր շուկան, որի հետ կապված հիմնախնդիրը կարելի է լուծել ոչ միայն արտասահմանյան ուղղվածություն ունեցող արտադրության ընդլայնմամբ, այլև տարածաշրջանի երկրների հետ ազատ առևտրի գոտիների ստեղծմամբ: Տնտեսական խոչընդոտների շարքը համալրում են նաև կաշառակերությունը, բյուրոկրատական քաշքշուկները, պետական պաշտոնյաների կամայականությունները, տեղական գործարարների հետ անարդար մրցակցությունը և այլն: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետազոտությունները ցույց են տվել, որ Հայաստանը դասվում է կոռուպցիայի բարձր մակարդակ ունեցող երկրների շարքին: Գործարարների շուրջ 40%-ը կաշառք է տալիս պետական տարբեր պաշտոնյաներին:

Ներդրումային միջավայրի կարևոր տարր է աշխարհագրական-բնակլիմայական գործոնը: Հայաստանը, ի տարբերություն տարա-

ծաշրջանի մյուս երկրների (Ադրբեջան և Վրաստան), որոնց աշխարհագրական դիրքի առավելություններն անհերքելի են, բուլղոբլին աչքի չի ընկնում ոչ կլիմայական պայմաններով, ո՛չ էլ բնական հարստություններով:

ՕՈՒՆ-ների ներգրավման կարևոր գործոններից է զարգացած ենթակառուցվածքների առկայությունը, որով Հայաստանը դարձյալ ետ է մնում ԱՊՀ անդամ մյուս երկրներից:

Սոցիալ-մշակութային, ժողովրդագրական, տեղեկատվական և սեփականության իրավունքի պաշտպանության գործոնները նույնպես իրենց ազդեցությունն ունեն ներդրումների ներհոսքի վրա:

Կապիտալը Հայաստան է հոսում նաև պորտֆելային ներդրումների, փոխատվական կապիտալի և տնտեսական օգնությունների ձևերով: Իսկ ինչ վերաբերում է կապիտալի արտահանմանը, ապա ՀՀ-ն դրանում մասնակցում է շատ փոքր չափով, այն էլ հատկապես կապիտալի փախուստի ձևով:

Կապիտալի ներհոսքի մեջ բավական մեծ տեսակարար կշիռ ունի նաև փոխատվական կապիտալը: Այդ է վկայում ՀՀ-ի արտաքին պարտքը. 2006 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել է 1205,6 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված երաշխիքների գծով պարտքը՝ 1041,9 մլն ԱՄՆ դոլար, իսկ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունները՝ 163,7 մլն ԱՄՆ դոլար¹³:

¹³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պետական պարտքը, տարեկան հաշվետվություն, 2006, եր., 2007, էջ15:

Գրականության

1. Ա. Մարկոսյան, Դ. Հախվերդյան, Գ. Նազարյան, Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Եր., 2002:
2. Զ.Ա. Թադևոսյան, Կապիտալի և աշխատուժի միգրացիա, Եր., «Տնտեսագետ», 2005:
3. Զ.Ա. Թադևոսյան, Կապիտալի միջազգային միգրացիա (դասախոսությունների տեքստ), Եր., «Տնտեսագետ», 2003:
4. Թ. Թորոսյան, Միջազգային տնտեսագիտություն, ևստումնական ձեռնարկ, Եր., 2005:
5. Е.Ф. Авдокушин, Международные экономические отношения: учебник, М., “Юрист”, 2001.
6. С.В. Фомишин, Международные экономические отношения, гл 12 Ростов-на-Дону, “Феникс”, 2006.
7. Международные экономические отношения: учебник, под редакцией И.П. Фаминского, гл 12, 13,14,15,16,17, “Экономист”, 2004.
8. Международные экономические отношения: учебник, под ред. Б.М. Смитиенко, гл 16, 17, 18, 19, 20, М., ИНФРА-М, 2007.
9. Международные экономические отношения: учебник, под общей редакцией В.Е.. Рыбалкина, М., 1997.
10. Международные экономические отношения: учебник, под редакцией Н.Н. Ливенцева, гл 6, М., “Перспект”, 2005.
11. Международные экономические отношения: учебник, под редакцией А.И. Евдокимова, гл 17, 18, М., “Перспект”, 2004.
12. Н.А. Миклашевская, А.В. Холопов, Международная экономика: учебник, гл. 5.1, М., “Дело и сервис”, 1998.

5.2. Աշխատուժի միջազգային միգրացիա

5.2.1. *Աշխատուժի միջազգային միգրացիայի էությունը, պատճառները և ձևերը*

Բնակչության տեղաշարժը մի տարածաշրջանից մյուսը կոչվում է միգրացիա: «Միգրացիա» եզրը ծագել է լատիներեն migrato բառից, որը հայերեն թարգմանվում է վերաբնակեցում, տեղափոխություն, տեղաշարժ կամ պարզապես՝ գաղթ: Տեղաշարժը կատարվում է երկրների միջև մարդկանց արտահոսքով և ներհոսքով: Նման մարդկանց անվանում են միգրանտներ: Բնակչության էմիգրացիոն (արտագաղթի) և իմիգրացիոն (ներգաղթի) հոսքերի գումարը կոչվում է համախառն միգրացիայի ծավալ:

Մեկ երկրի տարբեր տարածաշրջանների միջև տեղի ունեցող բնակչության տեղաշարժն անվանում են ներքին (ներպետական) միգրացիա, իսկ տարբեր երկրների միջև՝ միջազգային (միջպետական կամ արտաքին) միգրացիա: «Աշխատուժի միջազգային միգրացիա» հասկացության տակ նկատի ունենք աշխատունակ բնակչության տեղաշարժը մեկ երկրից դեպի մեկ այլ երկիր, որի հետևանքով տեղի է ունենում աշխատանքային ռեսուրսների վերաբաշխում համաշխարհային տնտեսության տարբեր օղակների միջև:

Աշխատուժի միջազգային միգրացիան զանգվածային բնույթ է կրել դեռևս XV դարի 40-ական թվականներից, երբ սևամորթ ստրուկների աշխատանքը շահագործելու նպատակով Աֆրիկայից նրանց տեղափոխել են եվրոպական երկրներ: Այդ գործընթացները շարունակվել են նաև XVI դարի կեսերը, երբ դարձյալ Աֆրիկայից սևամորթ ստրուկներով «բեռնված» նավերն ուղղություն են վերցրել դեպի Արևմուտք՝ Կարիբյան ավազան:

Աշխատուժի միջազգային միգրացիան մեծ չափերի է հասել կապիտալիզմի արշալույսին, երբ տնտեսապես քայքայված գյուղացիները զանգվածաբար փախչում էին քաղաքներ՝ իրենց աշխատուժը վաճառելու նոր ծնունդ առնող կապիտալիստական ֆաբրիկաներում:

XIX դարի երկրորդ քառորդից սկսած պարբերաբար կրկնվող տնտեսական ճգնաժամների և գործազրկության պատճառով *աշխատուժի միգրացիան ընդունել է միջազգային բնույթ:*

XX դարի երկրորդ կեսից աշխատուժի միջազգային միգրացիան դարձել է համաշխարհային հանրության կյանքի անբաժանելի մասը: Դրան նպաստել են նաև երկրների միջև տրանսպորտի և կապի միջոցների զարգացումն ու էժանացումը, միջազգային տեղեկատվական համակարգի ընդլայնումը: Վերջինիս միջոցով շատ կարճ ժամանակամիջոցում մարդիկ տեղեկանում են աշխարհի տարբեր տարածաշրջաններում աշխատանքի պայմանների, վարձատրության չափի, աշխատատեղերի առկայության մասին և կատարելով ընտրություն՝ տեղափոխվում են այնտեղ: Արդյունքում՝ ձևավորվում է աշխատուժի համաշխարհային շուկան, որը ներառում է տարբեր ուղղություններով աշխատանքային ռեսուրսների հոսքերը (որոնք կտրում-անցնում են ազգային սահմանները): Աշխատուժի միջազգային շուկան միավորում է աշխատուժի ազգային և տարածաշրջանային շուկաները, որոնք գոյություն ունեն աշխատունակ մարդկանց միգրացիայի ձևով:

Աշխատուժի համաշխարհային շուկայի ձևավորման հիմնական պատճառը սկզբնական շրջանում եղել է բարձր որակավորում ունեցող աշխատուժի հավաքագրումը: Նման քաղաքականություն ժամանակին վարել են ԱՄՆ-ը և Գերմանիան:

Աշխատուժի միջազգային շուկաները դարձել են աշխարհի մասշտաբով աշխատուժը (ըստ որում՝ բարձր որակավորում ունեցող) համաշխարհային արտադրության մեջ տեղաբաշխելու խոշոր կենտրոններ, որոնց մեծ չափով նպաստում են վերազգային կորպորացիաները: Ներկա ժամանակաշրջանում աշխատուժի միջազգային հոսքերի ուղղությունները հիմնականում որոշվում են ՎԱԿ-երի կապիտալի գործառույթյանը, այն կապիտալի, որն ազատ մուտք է գործում աշխարհի բոլոր անկյունները:

Աշխատուժի միջազգային միգրացիան ժամանակակից տնտեսական կյանքի միջազգայնացման գործընթացների կարևորագույն կողմերից մեկն է: Շուկայական տնտեսության պահանջներից ելնելով՝ աշխատունակ մարդիկ ստիպված իրենց աշխատանքի կիրառման առավել շահավետ ոլորտներ են փնտրում ոչ միայն ազգային տնտեսության, այլև ամբողջ համաշխարհային տնտեսության շրջանակներում: Այլ խոսքով, երկրների միջև տնտեսական կապերի ուժեղացումն ու սոցիալ-քաղաքական այլ պատճառները պատմականորեն ձևավորել են մի երկրից դեպի մյուսն աշխատունակ մարդկանց մշտական արտահոսք և ներհոսք, որոնք ստացել են *աշ-*

խատուծի միջազգային միգրացիա անվանումը:

Այսպիսով, աշխարհի բնակչության մի մասի տեղաշարժը ձևավորվում է տարբեր երկրներից բնակչության էմիգրացիայի և իմիգրացիայի հոսքերից: Էմիգրացիայի ժամանակ մարդիկ իրենց բնօրրաններից դուրս են գալիս և գնում ուրիշ երկրներ՝ մշտապես կամ որոշակի ժամանակով աշխատելու և ապրելու նպատակով: Նման երկրներին անվանում են դոնոր երկրներ, որոնք աշխատանքային ռեսուրսներ են մատակարարում մյուս երկրներին: Իսկ իմիգրացիան ուրիշ երկրներից մարդկանց մուտքն է տվյալ երկիր: Աշխատանքային ռեսուրսներ ընդունող նման երկրներին անվանում են ռեցիպիենտ երկրներ: Չեռնապես, սխալված չենք լինի, եթե աշխատուծի միջազգային միգրացիան համառոտ բնորոշենք որպես վարձու աշխատողների (հիմնականում բանվորների) արտահանման և ներմուծման անընդհատ գործընթաց:

Աշխատուծի միջազգային միգրացիայի հետևանքով աճում է համաշխարհային արտադրության ընդհանուր ծավալը, քանի որ ավելի արդյունավետ են օգտագործվում աշխատանքային ռեսուրսները՝ վերջիններիս միջերկրային վերաբաշխման հաշվին: Իհարկե այդ կարևորագույն տնտեսական ռեսուրսի (աշխատուծի) վերաբաշխումը տարբեր երկրների միջև ենթադրում է նաև այս կամ այն երկրի տնտեսական ներուծի ուժեղացում կամ թուլացում:

Աշխատուծի միջազգային միգրացիան պայմանավորված է և՛ տնտեսական, և՛ ոչ տնտեսական բնույթի գործոններով: Տնտեսական գործոնները հիմնականում կապված են երկրների տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունների հետ:

Աշխատուծի միջազգային միգրացիայի հիմնախնդիրներն ուսումնասիրողներից շատերը համարում են, որ աշխատուծի միջազգային տեղաշարժերի գլխավոր պատճառն աշխատավարձի մակարդակների ազգային տարբերություններն են, որոշ երկրներում՝ ավելի բարձր աշխատավարձը: Ցածր աշխատավարձ վճարող երկրներից աշխատուծը հոսում է ավելի բարձր աշխատավարձ վճարող երկրներ: Այսպես, Մեքսիկայից աշխատուծի հոսքը դեպի ԱՄՆ հասել է աննախադեպ չափերի և մինչ օրս չի դադարում, որովհետև նույն քանակի ու որակի աշխատանքի համար ԱՄՆ-ում անհամեմատ բարձր են գնահատում, քան Մեքսիկայում:

Աշխատուծի միգրացիայի հիմնական պատճառը ոմանք համարում են զարգացող երկրներում բնակչության աճի բարձր տեմպե-

րը, որի արդյունքում նրանց զգալի մասը արտագաղթում է զարգացած երկրներ: Իհարկե դա չի համապատասխանում իրականությանը, որովհետև դոնոր երկրների շարքին է դասվում նաև բնակչության աճի ցածր տեմպեր ունեցող երկրների մի մասը, որի ցայտուն օրինակը հենց Հայաստանի Հանրապետությունն է, որտեղից 1990-ականների սկզբներից մինչ օրս չի դադարում բնակչության զանգվածային արտագաղթը:

Մեր կարծիքով, աշխատուժի միջազգային միգրացիայի հիմնական պատճառն այն է, որ մարդիկ իրենց ապրելու և կենսագործունեության պայմանները բարելավելու նպատակով ստիպված հեռանում են հայրենիքից, որպեսզի ոչ միայն իրենք գոյատևեն, այլև օտար երկրներում մեծ դժվարություններով ձեռք բերած վաստակի մի մասն ուղարկեն հայրենիք՝ պահպանելու ընտանիքի մյուս անդամների գոյությունը, իսկ եթե հնարավոր է՝ պայմաններ ստեղծեն իրենց մոտ տանելու հարազատներին: Այլ խոսքով, *մարդկանց միգրացիան հիմնականում պայմանավորված է աշխատանքի և կյանքի տանելի պայմանների որոնման նպատակով:*

Աշխատուժի միջերկրային տեղաշարժերը որոշող տնտեսական բնույթի գործոնների թվին են պատկանում նաև ՎԱԿ-երի գործելակերպը, աղքատությունը, որոշ երկրներում՝ հարաբերական գերբնակչության բարձր մակարդակը, սոցիալ-տնտեսական պայմանների էական տարբերությունները, զարգացած երկրների՝ էժան աշխատուժի լրացուցիչ պահանջը, ԳՏԱ-ն, ազգային տնտեսությունների կառուցվածքային վերակառուցումները, տարածաշրջանների տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունները, զբաղվածությունը, սոցիալական ծառայությունների մակարդակը, ենթակառուցվածքների զարգացման տեմպերը, կապիտալի արտահանումը և այլն, և այլն:

Աշխատուժի միջազգային միգրացիայի վրա նաև մեծ ազդեցություն են ունենում տնտեսապես զարգացած երկրների աշխատուժի շուկաների առանձնահատկությունները: Նման երկրներում ձևավորվում են աշխատուժի հետևյալ շուկաները.

ա) առաջնային շուկա, որն սպասարկում է գիտատար արտադրությունները բարձր աշխատավարձով, և որտեղ տեղի է ունենում հիմնականում ազգային աշխատուժի առք ու վաճառք,

բ) երկրորդային շուկա, որն սպասարկում է բարձր որակավորում չպահանջող աշխատատար ծյուղերը, որոնցում տեղի են ունե-

նում արտերկրների աշխատուժի առք ու վաճառք, և որտեղ բարձր է էժան աշխատուժի նկատմամբ պահանջարկը: Հենց դա էլ կայուն պահանջարկ է ներկայացնում օտարերկրյա աշխատուժի նկատմամբ, որի արդյունքում կատարվում է բնակչության ներհոսք տնտեսապես զարգացած երկրներ:

Աշխատուժի միջազգային միգրացիային մեծապես նպաստում են նաև նախկին միգրանտները, ովքեր զգալի աջակցություն են ցույց տալիս նորեկող ընտանիքներին և դրանով նվազեցնում ներգաղթի հետ կապված ծախսերն ու ռիսկերը, մեծացնում նրանց տեղափոխման և ընդունման հնարավորությունները: Այլ կերպ ասած՝ արտերկրներում ավելի վաղ հաստատված ընտանիքները (նախկին միգրանտները) ձգում կան քաշում-տանում են իրենց հարազատներին, մերձավորներին ու ընկերներին:

Բազմաթիվ այլ գործոնների հետ միասին աշխատանքային ռեսուրսների տեղաշարժերի հիմքում ընկած է նաև աշխատուժի առաջարկի ու պահանջարկի հարաբերակցությունը՝ աշխարհի երկրների միջև աշխատուժի օպտիմալ տեղաբաշխման պահանջը: Գիտատեխնիկական առաջընթացը և որոշ երկրներում տնտեսության զարգացման բարձր տեմպերը ձևավորում են աշխատուժի լրացուցիչ պահանջարկ, որը լրացվում է միգրանտների հաշվին:

Աշխատուժի միջազգային միգրացիայի վրա ազդող ոչ տնտեսական գործոնների շարքին պետք է դասել քաղաքական, ազգային, կրոնական, էթնիկական, բնապահպանական, կրթական-մշակութային և հոգեբանական գործոնները, ինչպես նաև բնական աղետները, պատերազմները, ազգամիջյան ընդհարումները, պետական քաղաքականությունը, մարդու իրավունքների չարաշահումները, դատաիրավական կառույցների բացակայությունը, երկրների խաղաղությանը սպառնացող վտանգները, քաղաքական անկայունությունը, ռասայական ու ազգային խտրականություններից և քաղաքական հետապնդումներից փախուստը և այլն, որոնց հետևանքով տեղի են ունենում հարկադիր վերաբնակեցումներ:

Արտերկրների աշխատուժի օգտագործումը համաշխարհային տնտեսական մեխանիզմի նորմալ գործունեությունն ապահովելու անհրաժեշտ տարրերից մեկն է: Առանձին երկրների կախվածությունն աշխատող միգրանտներից այնքան մեծ է, որ առանց նրանց անհնար է մի շարք երկրների ազգային տնտեսությունների որոշ ճյուղերի նորմալ գործունեությունը:

Այսպիսով, երկրների միջև տնտեսական կապերի ուժեղացումն ու սոցիալ-քաղաքական բազմաբնույթ պատճառները ձևավորել են մի երկրից մյուսը աշխատուժի արտահոսք և ներհոսք: Միգրացիոն հոսքերի ծավալման հիմնական պատճառը եղել և մնում է տնտեսական գործոնը, որի մի մասը նպաստում է արտագաղթին, մյուսը՝ ներգաղթին:

Աշխատուժի միջազգային միգրացիան տնտեսական հարաբերությունների առավել բարդ տարրերից է, քանի որ այն ընդգրկում է կենդանի մարդկանց, ովքեր աշխատելու և մշտապես կամ ժամանակավորապես բնակվելու նպատակով մի վայրից մի այլ վայր են տեղափոխվում: Նման մարդկանց Աշխատանքի միջազգային կազմակերպությունը դասակարգում է.

1) պայմանագրով աշխատողներ, ովքեր ունեն ցածր որակավորում և կատարում են սեզոնային աշխատանքներ,

2) բարձր որակավորում և աշխատանքի գործնական փորձ ունեցող աշխատողներ (որոնց մեջ մտնում է նաև պրոֆեսորադասախոսական կազմը),

3) անլեզավ (անօրինական) միգրանտներ, ովքեր զբաղվում են տարբեր տեսակի աշխատանքային գործունեությամբ,

4) միգրանտներ, ովքեր զարգացող երկրներից արդյունաբերապես զարգացած երկրներ տեղափոխվածներն են՝ մշտական բնակություն հաստատելու նպատակով,

5) փախստականներ, ովքեր իրենց կյանքը վտանգված համարելով՝ ստիպված լքում են հայրենիքը և գաղթում այլ երկրներ:

Ըստ ուղղությունների միգրանտները դասակարգվում են.

➤ զարգացող և նախկին սոցիալիստական երկրներից դեպի արդյունաբերապես զարգացած երկրներ,

➤ արդյունաբերապես զարգացած երկրների միջև,

➤ զարգացող երկրների միջև,

➤ բարձր որակավորում ունեցող աշխատուժի միգրացիան արդյունաբերապես զարգացած երկրներից դեպի զարգացող երկրներ:

Տարածքային ընդգրկման առումով տարբերում ենք՝

▪ միջամաքային,

▪ ներգամաքային:

Ըստ որակավորման մակարդակի միգրանտները բաժանվում են՝

▪ բարձր որակավորում ունեցող,

▪ ցածր որակավորում ունեցող:

Ըստ տևողության՝

- անվերադարձ. երբ մարդիկ նոր բնակավայր են տեղափոխվում մշտական ապրելու նպատակով,
- ժամանակավոր. երբ մարդիկ նոր բնակավայր են տեղափոխվում 2 տարի ժամկետով:

Ըստ օրինականության՝

- լեգալ կամ օրինական,
- ոչ լեգալ կամ անօրինական (չփաստաթղթավորված):

Տնտեսագետներն առանձնացնում են նաև միգրացիայի հետևյալ ձևերը՝

- աշխատանքային,
- ընտանեկան,
- հանգստյան,
- զբոսաշրջության:

Դրանց մեջ վճռական դերն անշուշտ պատկանում է աշխատանքային միգրացիային, քանի որ սեփանակատերը փնտրում է իր աշխատուժի արդյունավետ օգտագործումը ոչ միայն հայրենի երկրում, այլև նրա սահմաններից դուրս:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ.Ե. Խոջաբեկյանը, այլ տնտեսագետներ, միգրանտներին դասակարգում են հետևյալ համակարգում՝

1. Անվերադարձ միգրանտներ, երբ նրանք փոխում են մշտական բնակվելու վայրը:

2. Սեզոնային միգրանտներ, երբ աշխատունակ մարդիկ փող վաստակելու նպատակով իրենց երկրների սահմաններից դուրս են գալիս ժամանակավորապես:

3. Գոմանակային գաղթ, որը կապված է հարևան բնակավայրերի միջև աշխատողների և ուսանողների ամենօրյա տեղաշարժերի հետ:

4. Միջադեպային գաղթ, որն ունի ավելի մեծ մասշտաբներ բնակչության բոլոր խավերի ընդգրկման առումով: Այն, որ արտագաղթողների շարքերը համալրվում են արտասահմանում գործուղման մեջ գտնվող, հիվանդանոցներում բուժվող, առողջարաններում հանգստացող, կարճատև դասընթացներում սովորող և այլ անձինք, ովքեր ժամանակավորապես են բացակայում իրենց ընտանիքներից¹⁴:

¹⁴ Տե՛ս Վ.Ե.Խոջաբեկյան, Հայաստանի բնակչության վերարտադրությունը XIX-XX դարերում և XXI դարի շեմին, Եր., 2001, էջ 254-255:

Գիտատեխնիկական հեղափոխության ծավալմանը զուգահեռ աշխատուժի միգրացիոն գործընթացներում առավել կարևոր տեղ է գրավում բարձր որակավորում ունեցող աշխատողների տեղաշարժը, որն ստացել է ուղեղների արտահոսք անվանումը, ըստ որի տնտեսագետները նկատի ունեն մտավոր աշխատանքով զբաղվածների և բարձր որակավորում ունեցող մասնագետների միջազգային միգրացիան: «Ուղեղների արտահոսքը» բացասաբար է անդրադառնում հատկապես թույլ զարգացած երկրների վրա, որոնք անդառնալիորեն կրում են հսկայական չափերի կորուստներ: Մինչդեռ տնտեսապես զարգացած երկրների համար խիստ ձեռնառու է թույլ զարգացած երկրներից ձեռք բերել պատրաստի մասնագետներ, քան կատարել ծախսեր նման մասնագետներ պատրաստելու համար:

Զարգացող երկրների համար «ուղեղների արտահոսքը» տնտեսական, սոցիալական, քաղաքական և բարոյական մեծ կորուստ է. երկիրը զրկվում է բարձր որակավորում ունեցող աշխատանքային ռեսուրսների մի մասից: Հենց դա է պատճառը, որ զարգացող երկրների կառավարությունները ձգտում են իրականացնել այնպիսի միգրացիոն քաղաքականություն, որը հիմնականում կանխի իրենց երկրներից որակավորված աշխատուժի արտահոսքը դեպի այլ երկրներ:

Նախկինում, որպես կանոն, բարձր որակավորում ունեցող մասնագետները զարգացող երկրներից տեղափոխվել են զարգացած երկրներ: Հետագայում տեղի է ունեցել (և ունենում է) հակառակ գործընթացը. զարգացած երկրներից է փորձառու մասնագետների հոսքը ուղղվում դեպի զարգացող երկրներ՝ կապված այդ երկրներում բարձր տեխնոլոգիական արտադրությունների աստիճանական կազմակերպման հետ:

Այլ երկրներից բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման մեծ փորձ ունի ԱՄՆ-ը, որը XX դարի վերջին քառորդում գրեթե 300 հազար բարձրորակ մասնագետների (արտագաղթած զարգացող երկրներից և Արևմտյան Եվրոպայից) ապահովել է աշխատանքով¹⁵: Արտերկրների բարձրորակ մասնագետներ ներգրավելու հաշվին ԱՄՆ-ը XX դարի վերջին քառորդում տնտեսել է

¹⁵ Стів Экономическая теория, под ред. В. М. Видяпина, Г. П. Журавлевой, М., 1997, էջ 67:

15 մլրդ դոլար՝ կրթության և գիտության բնագավառներում կատարվելիք ծախսերի տնտեսման հաշվին¹⁶: Գիտնականների և բարձր որակավորում ունեցող այլ մասնագետների ներմուծման հաշվին ԱՄՆ-ը տարեկան շահում է 80-100 մլրդ դոլար¹⁷:

Սոցիալիստական համակարգի փլուզումից հետո բարձր որակավորում ունեցող աշխատուժի միջազգային շուկան համալրվել է Արևելյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ-ի հանրապետություններից արտագաղթող աշխատուժով: Այսպես, վերջին գրեթե երկու տասնամյակում Ռուսաստանի համար մեծ հիմնախնդիր է դարձել ոչ միայն «կապիտալի փախուստը», այլ մեծ քանակությամբ գիտնականների և բարձրորակ աշխատողների արտահոսքը երկրից: Այդ ժամանակաշրջանում Մոսկվայի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի 10%-ից ավելին աշխատանքը թողել և արտագաղթել է Գերմանիա, ԱՄՆ, Իսրայել, Չինաստան, Արգենտինա, Բրազիլիա և այլ երկրներ:

ՀՀ-ն նույնպես ընդգրկված է բարձր որակավորում ունեցող աշխատուժի միջազգային միգրացման գործընթացներում: Ջանգվածային արտագաղթի հետևանքով հանրապետությունից հեռացել և շարունակում են հեռանալ շատ տաղանդավոր ու շնորհալի գիտնականներ ու մասնագետներ: 1992 թ. մինչև այժմ հանրապետությունից արտագաղթել է գիտական աստիճան ունեցող մոտ 400 մասնագետ: Դա մեզ համար մեծ կորուստ է, քանի որ բարձրորակ նման մասնագետների պատրաստումը բավական թանկ հաճույք է ցանկացած երկրի համար: Ցավոք, այսօր էլ նման մարդկանց արտագաղթը չի դադարում, ուստի հարկ է մտածել այդ լուրջ խնդրի մասին և կիրառել կոնկրետ միջոցառումներ՝ կանխելու որակյալ աշխատուժի արտահոսքը: Հանրապետության տասնյակ ու տասնյակ բուհեր այնքան շրջանավարտներ է թողարկում, որ մեր տնտեսությունը ի վիճակի չէ լուծել նրանց աշխատանքի տեղավորման հարցը, ուստի ավելանում է բարձրագույն կրթությամբ գործազուրկների թիվը, և նրանք ստիպված բռնում են արտագաղթի ճամփան:

Բարձր որակավորում ունեցող մասնագետների համար, ինչպես նշեցինք, աշխատատեղերը քիչ են. դրանց նկատմամբ պահան-

¹⁶ Տե՛ս Ե.Փ.Ավдокушин, Международные экономические отношения: учебное пособие, 5-е издание, М., 2000, էջ 124:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 185:

ջարկ ներկայացնող կազմակերպություններն ու գիտահետազոտական ինստիտուտները հիմնականում չեն գործում: Պատահական չէ, որ ՀՀ-ում պաշտոնապես գրանցված գործազուրկների ընդհանուր թվաքանակի մեջ բարձրագույն, միջնակարգ մասնագիտական և ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողների տեսակարար կշիռը կազմում է 90%-ից ավելին:

Այսպիսով, «ուղեղների արտահոսքը», որպես կանոն, դոնոր երկրների վրա չնայած ունենում է բացասական հետևանքներ, սակայն պետք է նաև ընդգծել, որ ինչպես սովորական օրինական աշխատանքային միգրացիան, այնպես էլ «ուղեղների արտահոսքը» ինչ-որ չափով կարող է շահավետ լինել տվյալ երկրի համար, եթե այն չի վտանգում ազգային անվտանգությունը:

5.2.2. Աշխատուժի միջազգային միգրացիայի շարժընթացը և ձգողության համաշխարհային կենտրոնները

XX դարի երկրորդ կեսից սկսած բնակչության զանգվածային միգրացիան դարձել է համաշխարհային հանրության կյանքի բնորոշ կողմերից մեկը: Իր մասշտաբներով այն բուլորովին չի զիջում կապիտալի միջազգային միգրացիային: Ավելին, արդի ժամանակաշրջանում նրա աճման տեմպերն ավելի են բարձրացել: Այսպես, 1960 թ. աշխատավոր գաղթականները աշխարհում կազմում էին 3,2, 1995-ին՝ 35, իսկ 1997 թ. արդեն գերազանցում էին 40 մլն-ն: Եթե նկատի ունենանք, որ յուրաքանչյուր աշխատող գաղթականի խնամքի տակ էր ևս 3 հոգի, ապա պարզ թվաբանությամբ պետք է ենթադրել, որ 1990-ականներին գաղթական բնակչությունն աշխարհում գերազանցում էր 120 մլն մարդուց¹⁸:

ՄԱԿ-ի տվյալներով միջազգային միգրանտների թիվը 2000 թ. հասել էր 175 մլն-ի¹⁹: Համաշխարհային բանկի տվյալներով աշխարհում միգրանտների թիվը 2005 թ. հաշվվում էր 200 մլն²⁰, որը կազմում էր երկրագնդի բնակչության գրեթե 3,2 %-ը:

¹⁸ Տե՛ս Ե.Տ. Աкопова, О.И. Воронкова, Н.А. Гавриленко, Мировая экономика и международные экономические отношения: для студентов вузов, Ростов на Дону, 2000, էջ 329:

¹⁹ Տե՛ս И.П. Цепенко, Роль мигрантов в экономике развитых стран, Мировая экономика и международные отношения, журнал, 2004, N 5, էջ 27:

²⁰ Տե՛ս WWW. Газета, RU, 17. 11.2005

Աշխարհում առանձնանում են որոշակի տարածաշրջաններ, որոնք ըստ էության աշխատուժի ձգողության կենտրոններ են: Դրանց մի մասը ավանդական է, որը ձևավորվել է XVIII-XIX դարերում, մյուսները նոր են: Ավանդական կենտրոնները հետևյալներն են.

1. *Արևմտյան Եվրոպայի երկրներ*, որտեղ աշխատուժի միգրացիայի ինտենսիվ գործընթացներն ուժեղացել են հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ որոշ երկրների աշխատունակ մարդկանց օգտագործել են Եվրոպայի արդյունաբերապես զարգացած երկրներում: Միգրանտների և նրանց ընտանիքների անդամների թիվը Արևմտյան Եվրոպայի երկրներում գերազանցել է 13 մլն-ն: Աշխատուժի հիմնական ներմուծողներ են Գերմանիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Շվեյցարիան, Բելգիան, Նիդեռլանդները: Այդ երկրներում տնտեսության ճյուղերի մի մասը գտնվում է աշխատուժի ներմուծումից կախյալ վիճակում: Արևմտյան Եվրոպայի երկրներին աշխատուժ են մատակարարում Թուրքիան, Իտալիան, Արևելյան Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրները, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ-ի նորանկախ պետությունները:

Եվրոպական Միության մեջ մտնող երկրներին բնորոշ է միգրացիայի երկու մակարդակ՝

ա) աշխատուժի միգրացիան Եվրամիության անդամ երկրների միջև,

բ) աշխատուժի միգրացիան աշխարհի մյուս երկրների հետ:

Եվրամիության ինտեգրացման միավորման մեջ միգրանտների 40%-ից ավելին նրա անդամ-երկրներից են, որտեղ գոյություն ունի աշխատուժի միասնական շուկա, որը նպաստավոր պայմաններ է ստեղծում աշխատուժի ազատ տեղաշարժի համար:

2. *Աշխատուժի ձգողության մյուս կարևորագույն կենտրոնը ԱՄՆ-ն է*, որը տարեկան ընդունում է ավելի շատ միգրանտներ, քան աշխարհի մյուս երկրները միասին վերցրած: ԱՄՆ-ը ընդունում է և՛ որակավորում չունեցող, և՛ բարձր որակավորմամբ աշխատուժ: Առաջինն ընդունում է Մեքսիկայից և Կարիբյան ավազանի երկրներից, իսկ երկրորդը՝ աշխարհի բոլոր երկրներից: ԱՄՆ-ում արտերկրների աշխատուժը կազմում է երկրի ամբողջ աշխատուժի 5%-ը: XX դարի 50-ական թվականներից մինչև այսօր ԱՄՆ-ը էլ ավելի է ակտիվացրել բարձր որակավորում ունեցող աշխատուժի

ընդունման քաղաքականությունը: Նրա աշխատանքային ռեսուրսները հիմնականում ձևավորվել են միգրանտների հաշվին: Միգրանտների կազմում բավական մեծ տեղ ունեն եվրոպական երկրներից և Չինաստանից գաղթածները: Դեպի ԱՄՆ աշխատուժի ներհոսքի հիմնական պատճառը եղել է այն, որ այդ երկիրը ապահովել է աշխատանքի առավել բարենպաստ պայմաններ և կյանքի բարձր կենսամակարդակ:

3. *Աշխատուժի ձգողության ավանդական կենտրոններից մյուսը Ավստրալիան է*, որտեղ աշխատում են 200 հազարից ավելի արտերկրացիներ: Ավստրալիան աշխատուժը ներմուծել է հիմնականում Արևելյան և Հարավարևելյան Ասիայի, Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներից: Այդ երկիրն առաջին հերթին ընդունում է այն միգրանտներին, ովքեր ներդրումներ են կատարում իրենց երկրի տնտեսությունում: XX դարի 60-70-ական թվականներին տարբեր տարածաշրջանների տնտեսական զարգացման առանձնահատկությունները ձևավորել են աշխատուժի ձգման նոր կենտրոններ: Դրանցից են՝

- Ասիական նոր արդյունաբերական երկրները, որոնց աշխատուժ մատակարարողներն են Չինաստանը, Վիետնամը, Լաոսը և այլն:

- Մերձավոր Արևելքի և Պարսից ծոցի նավթ արդյունահանող երկրները, որոնք դարձել են աշխատուժի ձգողության հզոր կենտրոններ: Աշխատուժի այդ շուկան և՛ ցածր, և՛ բարձր որակավորում ունեցող աշխատուժ է ընդունում Եգիպտոսից, Հնդկաստանից, Պարսկաստանից, նաև արաբական երկրներից:

- Լատինական Ամերիկայում աշխատուժի ձգողության հիմնական երկրներն Արգենտինան և Վենեսուելան են, որոնք աշխատուժ ներմուծում են տարածաշրջանի մյուս երկրներից, ասիական և աֆրիկյան պետություններից, նախկին ԽՍՀՄ-ի հանրապետություններից և սոցիալիստական երկրներից:

- Աշխատուժն իրեն է ձգում նաև Հարավային Աֆրիկյան, հատկապես Հարավաֆրիկյան Հանրապետությունը, որտեղ միգրանտներն աշխատանքի են անցնում ավաստի, ոսկու և ուրանի արդյունահանող ճյուղերում:

- Սոցիալիստական համակարգի փլուզումից հետո աշխատուժի ներմուծման կենտրոններ են դարձել Ռուսաստանը, Չեխիան, Լեհաստանը և այլն: Ընդ որում՝ Ռուսաստանը հանդես է գալիս որ-

պես աշխատուժ ընդունող և արտահանող երկիր: Աշխատուժի հոսքը դեպի Մոսկվա այսօր էլ չի դադարում, այն էլ և՛ Ռուսաստանի տարբեր տարածաշրջաններից, և՛ ԱՊՀ երկրներից (այդ թվում՝ ՅՅ-ից): Որոշ աղբյուրների վկայությամբ՝ ՌԴ-ում օրինական կարգով ապրում են 1,5 մլն-ից ավելի հայեր, միայն Կրասնոդարի երկրամասում՝ 800 հազար: Իսկ Մոսկվայում օրինական և ոչ օրինական կարգով ապրող հայերի թիվը գերազանցում է 600 հազարը: Ռուսաստանն աշխատուժ ընդունում է նաև Չինաստանից, Վիետնամից, Յուսիսային Կորեայից և ասիական այլ երկրներից: Ռուսաստանից գաղթում են հիմնականում բարձր որակավորում ունեցող մասնագետները: Աշխատուժի արտահանումից Ռուսաստանը կարող էր ստանալ մեծ չափերի հասնող արտաթույթ: Եթե արտասահմանում Ռուսաստանն ունենար 1,5 մլն աշխատող միգրանտներ, ապա տարեկան նա կարող էր ստանալ 10-20 մլրդ դոլարի արտաթույթ²¹:

5.5.3. Աշխատուժի միջազգային միգրացիայի սոցիալ-տնտեսական հետևանքները աշխատուժ արտահանող և ներմուծող երկրներում

Աշխատուժի միջազգային միգրացիան ռեցիպիենտ և դոնոր երկրների տնտեսական ու սոցիալական զարգացման վրա ունենում է և՛ դրական, և՛ բացասական ազդեցություն: Ռեցիպիենտ երկրների համար դրական կողմերը հետևյալն են.

1. Այդ երկրները միգրանտների հաշվին ունենում են ավելի էժան աշխատուժ, որը տեղական ֆիրմաներին հնարավորություն է տալիս կրճատել արտադրության ծախսերը և համաշխարհային շուկայում բարձրացնել իրենց արտադրած ապրանքների մրցունակությունը: Միգրանտների աշխատանքի ցածր վարձատրությունը մի կողմից՝ բարձրացնում է տվյալ ֆիրմայի շահույթի նորման, մյուս կողմից՝ էժան աշխատուժի առկայությունը ճնշում է գործադրում երկրի աշխատավարձի ընդհանուր մակարդակի վրա՝ էժան աշխատուժի ներհոսքից ռեցիպիենտ երկրների ձեռնարկատերերը հնարավորություն են ստանում որոշ չափով զսպել աշխատավարձի աճը:

²¹ St'u E.Ф. Авдокушин, Международные экономические отношения: учебное пособие, 5-е издание, М., 2000, էջ 183:

2. Ընդունող երկիրն ստանում է պատրաստի աշխատուժ՝ ավելի քիչ ծախսեր կատարելով միգրանտների կրթության և նրանց մասնագիտական որակավորման բարձրացման համար: Ամենակարևորը, որ ռեցիպիենտ երկրներում նորացվում և ավելանում է ամենաթանկ կապիտալը՝ աշխատանքային ռեսուրսը: Միգրանտներն իրենց հետ բերում են նոր գաղափարներ, մասնագիտական ունակություններ և փորձ, դրանք ներդնում են արտադրության մեջ և առաջընթաց են մտցնում առանձին ճյուղերի զարգացման գործում: Այլ խոսքով, ռեցիպիենտ երկրներն արտերկրների աշխատուժն օգտագործում են որպես իրենց արտադրական հզորությունների զարգացման գործոն:

3. Միգրանտներն ընդլայնում են ներքին սպառողական շուկան, քանի որ նրանք իրենց հերթին ներկայացնում են ապրանքների ու ծառայությունների լրացուցիչ պահանջարկ, որն էլ խթանում է արտադրության աճը և ստեղծում լրացուցիչ զբաղվածություն:

4. Երկիրն ընդունում է բարձր որակավորում ունեցող աշխատուժ, որը հնարավորություն է տալիս բարձրացնել տնտեսության գիտատար ճյուղերի արդյունավետությունը և առաջատար դիրքեր ունենալ միջազգային տնտեսական մրցակցության մեջ:

5. Միգրանտների բանկային հաշիվներում կուտակված միջոցներն օգտագործվում են տվյալ երկրի տնտեսության զարգացման համար:

6. Միգրանտները բարելավում են զարգացած շատ երկրների ժողովրդագրական կառուցվածքը, այն երկրների, որոնք վաղուց են տառապում «ծերացմամբ»։ Նրանք նպաստում են ազգերի «երիտասարդացմանը»: Ջարգացած երկրներում նոր ծնված երեխաների 10%-ից ավելին միգրանտների ընտանիքներում են, իսկ որոշ երկրներում այդ ցուցանիշն ավելի բարձր է: Օրինակ, Լյուքսեմբուրգում այն կազմում է 38%²²:

7. Աշխատող միգրանտները, որպես կանոն, գտնվում են ակտիվ աշխատանքային տարիքում, որոնք ոչ միայն չեն ստանում սոցիալական օժանդակություն, այլև իրենց մուծած հարկերով հարաբերականորեն իջեցնում են ռեցիպիենտ երկրների տեղական աշխատողների հարկային բեռը: Բացի այդ, օտարերկրյա բանվորները հիմնականում ոչ ապահովվում են կենսաթոշակով, ոչ էլ նրանց

²² Տե՛ս Է.Փ. Авдокушин, նշվ. աշխ., էջ 176:

նկատի են ունենում տարբեր բնույթի սոցիալական ծրագրերի իրականացման ժամանակ:

8. Միգրանտները նպաստավոր պայմաններ են ստեղծում՝ ռեցիպիենտ երկրների տնտեսությունների մեջ կատարելու կառուցվածքային փոփոխություններ: Արտադրության որոշ ճյուղերում միգրանտները նպաստում են, այսպես կոչված՝ «նեղ տեղերի» հաղթահարմանը և ապահովում վերարտադրության նորմալ գործընթացն ամբողջ երկրի մասշտաբով:

9. Միգրանտների վճարած հարկերի հաշվին ավելանում են ռեցիպիենտ երկրի պետական բյուջեի եկամուտները:

10. Միգրանտները ավելացնում են տվյալ երկրի աշխատուժի առաջարկը, որի հետևանքով աճում է այդ երկրում արտադրվող ազգային եկամուտը: Վերջինիս աճի այդ մասն անվանում են իմիգրացիոն ավելցուկ, որի մեծությունը կախման մեջ է իմիգրանտների որակական կազմից: Իմիգրացիայի «ավելցուկը» առավելագույնի է հասնում այն ժամանակ, երբ բոլոր իմիգրանտները ձեռք են բերում բարձր որակավորում:

11. Աշխատուժի՝ որպես տնտեսական ռեսուրսի ներմուծումը մեծացնում է ռեցիպիենտ երկրի արտադրական ներուժը, և արտադրական հնարավորությունների կորը տեղափոխվում է դեպի աջ:

Ռեցիպիենտ երկրների համար աշխատուժի ներմուծումն ունի նաև բացասական կողմեր, որոնցից ստորև թվարկենք մի քանիսը.

ա. տեղական բնակչության և իմիգրանտների (եկվորների) միջև հաճախակի առաջացող տարածայնությունները հասցնում են տարբեր աստիճանի բախումների, որոնց հետևանքներն անկանխատեսելի են,

բ. ռեցիպիենտ երկրում հաճախ ծագում են սոցիալական լարվածության և ազգամիջյան թշնամանքներ,

գ. իմիգրանտների առկայությունը նպաստում է ցածր որակավորում ունեցող աշխատողների աշխատավարձի իջեցմանը, քանի որ աշխատուժի շուկայում աճում է նրանց առաջարկը,

դ. միգրանտների մեծ հոսքերը բարձրացնում են գործազրկության մակարդակը և բացասական ազդեցություն ունենում զարգացած երկրների աշխատավորների տնտեսական դրության վրա,

ե. միգրանտները հայրենիք վերադառնալիս իրենց հետ տանում են ձեռք բերած արտադրական փորձը և կապիտալը: Վերջինս իր

բացասական ազդեցությունն է ունենում ռեցիպիենտ երկրների վճարային հաշվեկշիռների վրա:

Ջարգացող երկրները 2005 թ. ստացել են 167 մլրդ ԱՄՆ դոլարի դրամական փոխանցումներ, որը կազմել է աշխատանքային միգրացիայի ամբողջ դրամական փոխանցումների 71%-ը²³:

Իսկ ի՞նչ ազդեցություն է ունենում աշխատուժի միջազգային միգրացիան դոնոր երկրների վրա: Նախ՝ թվարկենք առավելապես դրական կողմերը:

1. Աշխատունակ բնակչության մի մասի արտագաղթը ինչ-որ չափով բարելավում է դոնոր երկրի աշխատուժի շուկան, կրճատում գործազրկությունը, մասնակիորեն թեթևացնում է զբաղվածության սուր հիմնախնդիրը, թուլացնում տվյալ երկրի սոցիալական լարվածությունը, կրճատում պետության կողմից կատարվող սոցիալական ծախսերը:

2. Աշխատող միգրանտները զգալի դրամական միջոցներ են փոխանցում հայրենիք՝ իրենց հարազատներին: Այդ միջոցների (տրանսֆերտների) հաշվին բարձրանում է բնակչության եկամուտների մակարդակը և դրական ազդեցություն ունենում երկրի ֆինանսական վիճակի, հատկապես նրա վճարային հաշվեկշռի բարելավման վրա: Տրանսֆերտների անընդհատ հոսքը հայրենիք դիտվում է որպես ազատ փոխարկելի արտարժույթի ստացման կարևոր աղբյուր: Աշխատուժի արտահանումից տվյալ երկիրն ստանում է արտարժույթ,

- երբ միջնորդ ֆիրմաները իրենց ստացած շահույթի մի մասը հարկերի ձևով վճարում են պետությանը,
- միգրանտները իրենց հարազատներին ուղարկում են արտարժույթային միջոցներ (տրանսֆերտներ),
- միգրանտները հայրենիք վերադառնալու ժամանակ իրենց հետ բերում են կանխիկ արտարժույթային միջոցներ:

Ըստ Արևմուտքի հետազոտողների՝ աշխատուժի արտահանման արդյունավետությունը մի քանի անգամ գերազանցում է ապրանքների և ծառայությունների արտահանման արդյունավետությանը: Տրանսֆերտների (անհատույց փոխանցումների) դերը հատկապես բարձր է զարգացման միջին մակարդակ ունեցող երկրների համար, որոնցում այդ աղբյուրի հաշվին ստացած արտարժույթային միջոց-

²³ Stic u Gazeta: Ru, 17, 11, 2005:

ներն առանձին տարիներին գերազանցել են արտաքին տնտեսական գործունեության մյուս ձևերի գծով ստացված մուտքերին:

3. Միգրանտներն արտասահմանում ստանում են անվճար ուսում, ձեռք են բերում աշխատանքային փորձ և գիտելիքներ, ծանոթանում ԳՏԱ-ի նորագույն նվաճումներին և հայրենիք են վերադառնում բարձր որակավորմամբ, իրենց հետ բերում նոր գիտելիքներ, արտադրական բարձր մշակույթ, նյութական արժեքներ և կուտակված կապիտալ:

Իսկ որո՞նք են աշխատուժի միգրացիայի առավել բացասական կողմերը դոնոր երկրների համար:

1. Երկիրը կորցնում է ակտիվ տարիքում գտնվող աշխատանքային ռեսուրսների մի մասը, նվազում է նրա պաշտպանունակությունը, փոխվում է բնակչության ժողովրդագրական կազմը և այլն:

2. Երկիրը կորցնում է այն միջոցները, որոնք ծախսվել են աշխատունակ մարդկանց կրթության և մասնագիտական որակավորման բարձրացման վրա, քանի որ էմիգրանտներն ուսում ստանալով իրենց երկրների հարկատուների հաշվին՝ հայրենիքից հեռանալուց հետո մեծացնում են ուրիշ երկրների կապիտալը:

3. Տեղի է ունենում «ուղեղների արտահոսք», որի հետևանքով դոնոր երկիրը կորցնում է իր ամենաթանկ կապիտալի մի մասը:

4. Մեծանում է երկրի աշխատավորների հարկային բեռը, քանի որ նրանք ստիպված են վճարել ավելի շատ հարկեր՝ ապահովելու համար պետության բոլոր տեսակի ծախսերի ֆինանսավորումը:

Այսպիսով, աշխատուժի միջազգային միգրացիան արտահանող և ներմուծող երկրների վրա ունենում է և՛ դրական, և՛ բացասական հետևանքներ: Տնտեսագետների մեծամասնությունն այն կարծիքին է, որ դոնոր երկրները կորցնում են ավելի շատ, քան ձեռք են բերում աշխատուժի արտահանումից, իսկ ռեցիպիենտ երկրները, ընդհակառակը, ավելի շատ շահում են, քան կորցնում: Սակայն որքան էլ մեծ լինի միգրանտների մուտքի կամ ելքի երկրների ստացած դրական ազդեցությունը, միևնույնն է, աշխատուժի զանգվածային տեղաշարժերը և՛ ռեցիպիենտ, և՛ դոնոր երկրներում առաջացնում են տարբեր խնդիրներ, որոնց լուծումը պարտադիր ենթադրում է աշխատուժի միջազգային միգրացիայի պետական, միջպետական, տարածաշրջանային և միջազգային կարգավորում: Դրանց լուսաբանմանն անդրադառնանք ստորև:

5.2.4. Աշխատուժի միջազգային միգրացիայի պետական, միջպետական, տարածաշրջանային և միջազգային կարգավորումը

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ աշխատուժի միգրացիայի դրական կողմերն ավելի շատ կլինեն այն ժամանակ, երբ տարբեր մակարդակներով կարգավորվեն միգրացման գործընթացները:

Պետական մակարդակով դրանց կարգավորումը կապված է աշխատուժի միգրացիայի գործընթացներին պետությունների անմիջական միջամտության հետ: Աշխարհի գրեթե բոլոր պետություններն աշխատուժի միգրացիան կարգավորում են՝ ձեռնարկելով ոչ միայն սահմանափակող միջոցառումներ, այլև պոտենցիալ (ներուժային) միգրանտների հոսքերից առանձնացնում են իրենց տնտեսություններին խիստ անհրաժեշտ մարդկանց և իրենց երկրներ նրանց աստիճանաբար տեղափոխելու համար դիմում են համապատասխան միջոցների: Ջարգացած երկրներում գործում են պետական հատուկ մարմիններ, որոնք լուծում են աշխատուժի տեղաշարժի հետ կապված հիմնախնդիրները: Դրանք են՝

- արտաքին գործերի նախարարություն, որը միգրանտներին տալիս է մուտքի թույլտվություն,
- արդարադատության նախարարություն, որն իրականացնում է միգրանտների մուտքի ռեժիմը,
- աշխատանքի նախարարություն, որը վերահսկողություն է սահմանում արտասահմանյան աշխատուժի օգտագործման նկատմամբ:

Մի շարք երկրներում միգրանտներին մուտքի թույլտվություն տրվում է նաև գործատուի և ապագա միգրանտների միջև կնքվող պայմանագրի ու աշխատանքի նախարարության եզրակացության հիման վրա: Եզրակացությունների մեջ հիմնավորվում է հրավիրվող անձանց մուտքի անհրաժեշտությունը: Իսկ որոշ երկրներում իմիգրանտների մուտքի թույլտվությունը համաձայնեցվում է ներքին գործերի նախարարության և տվյալ ճյուղի արհմիութենական մարմինների հետ: ԱՄՆ-ում աշխատուժի միգրացիայով զբաղվում են հյուպատոսական հարցերի գծով բյուրոն, արդարադատության նախարարությունում գործող միգրացիայի ծառայությունը և աշխատանքի նախարարությունը: Աշխատուժի միգրացիայի կարգա-

վորման գծով նմանատիպ մարմիններ են ստեղծվել Գերմանիայում, Նորվեգիայում, Իսպանիայում և այլ երկրներում:

Աշխատուժի միգրացիայի գործընթացները կարգավորելու նպատակով պետությունները մշակել են միգրանտների սահմանափակումների այնպիսի համակարգ, որը ներառում է նրանց մասնագիտական որակավորման աստիճանը, առողջական վիճակը, բնակվելու և աշխատելու ժամկետները, ազգային պատկանելիությունը, չքույլատրվող ձեռնարկությունների ցանկը, իմիգրանտների առավելագույն թվաքանակը, աշխատանքի ընդունվելու համար վճարումների կատարումը, տվյալ երկրում գործարարների կողմից կատարվող ներդրումների չափերը և այլն:

Աշխատուժի միգրացիայի կարգավորման ոլորտները երկուսն են.

- իմիգրացիայի կարգավորում,
- էմիգրացիայի կարգավորում:

Պետական մակարդակով միգրացիայի հոսքերի կարգավորման համար կիրառվում են տարբեր մոդելներ: Որոշ երկրներ միգրացիայի մասին օրենքներ չունեն, չեն իրականացնում պետական հատուկ քաղաքականություն և միգրացիայի հոսքերի ձևավորման գործն ամբողջությամբ թողնում են շուկայի վրա, այսինքն՝ միգրացիայի գործընթացների նկատմամբ վարում են բացարձակապես չմիջամտելու քաղաքականություն: Շատ երկրներ համապատասխան օրենքներով և այլ միջոցներով կիրառում են պետական հատուկ միգրացիոն քաղաքականություն: Միգրացիոն հոսքերի կարգավորման այդ ռեժիմը կոչվում է կարգավորվող պետական համակարգ: Նման մոդելի կիրառմամբ բավականին թուլանում է շուկայի ազդեցությունը միգրացիայի հոսքերի ձևավորման վրա: Իսկ որոշ երկրներում աշխատուժի միգրացիոն գործընթացների վրա իրականացնում են *պետական-մենաշնորհային քաղաքականություն*, որի դեպքում իմիգրանտներին վերաբերող բոլոր գործընթացները վերահսկվում են պետության կողմից: Նշված մոդելները միմյանցից տարբերվում են պետության միջամտության աստիճանով, որն էլ պայմանավորված է տվյալ երկրի առանձնահատկություններով:

- Իմիգրացիոն քաղաքականությունը բաժանվում է երկու մասի՝
- մուտքի թույլտվության քաղաքականություն,
 - վերահսկող քաղաքականություն:

Առաջինի նպատակն է առանձնացնել իր երկրին անհրաժեշտ ապագա միգրանտներին, իսկ երկրորդինը՝ ապահովել նրանց օրինական մուտքը: Ռեցիպիենտ երկրները իմիգրացիոն քաղաքականություն իրականացնելիս արտերկրացիների մուտքը թույլատրում են այն ժամանակ, երբ նրանց նկատմամբ ունեցած պահանջարկը հնարավոր չէ բավարարել տեղական աշխատողներով: Իմիգրացիայի քաղաքականության երկրորդ մասն իրականացվում է երկրների սահմանների վերահսկման, մուտքի թույլտվության փաստաթղթեր տրամադրող ծառայությունների ստեղծման, կարգը խախտող միգրանտների նկատմամբ համապատասխան պատժամիջոցների սահմանման և այլ միջոցներով:

Միգրացիայի կարգավորման մյուս կողմը էմիգրացիայի կարգավորումն է, որը նախորդի նման պետք է լինի բազմակողմանի և թափանցիկ: Դոնոր երկիրը պետք է պաշտպանի էմիգրանտների շահերը արտերկրներում, իհարկե նկատի ունենալով նաև ռեցիպիենտ երկրի շահերը:

Էմիգրացիոն քաղաքականությունն ուղղված է իրականացնելու տնտեսական, սոցիալական և ռազմավարական նպատակներ: Էմիգրացիան պետականորեն կանոնակարգելու համար պետությունը պետք է ստեղծի տվյալ հարցերով զբաղվող կազմակերպություններ և մարքեթինգային ծառայություններ, հավաքագրի տեղեկատվություն աշխատուժի արտաքին շուկաների մասին, ռեցիպիենտ երկրների հետ կնքի երկկողմ համաձայնագրեր, վերահսկի և սահմանափակի «ուղեղների արտահոսքը», արգելի որոշ կատեգորիաների մարդկանց էմիգրացիան, պայքարի անօրինական արտագաղթի դեմ, ապահովի նպաստավոր պայմաններ որակյալ մասնագետների վերադարձի համար, ստեղծի հատուկ ծառայություններ՝ ռեէմիգրանտներին աշխատանքի տեղավորելու համար և այլն:

Էմիգրացիայի հետ կապված վերոհիշյալ միջոցառումների իրականացումը բավական դժվար է, քանի որ այն կատարվում է թույլ զարգացած երկրներից, որտեղ գոյություն ունեցող ենթակառուցվածքները չեն կարող ապահովել արդյունավետ էմիգրացիոն քաղաքականություն:

Այսպիսով, ռեցիպիենտ երկրները պատասխանատվություն են կրում միգրանտների ներգրավման և օգտագործման համար, իսկ դոնոր երկրները կարգավորում են էմիգրանտների հոսքերը և պաշտպանում նրանց շահերը արտերկրում: Երկրների մեծ մասը

իրականացնում է իմիգրացիոն, մյուսները՝ էմիգրացիոն քաղաքականություն: Բայց, որպես կանոն, իմիգրացիոն քաղաքականությունն է որոշում աշխատուժի միգրացիայի միտումները:

Աշխատուժի միջազգային միգրացիան, որպես գլոբալացման գործոն, պահանջում է փոխհամաձայնեցված միջպետական կառավարում, ինչը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ լուծել միգրացիոն գործընթացների առաջացրած խնդիրները, որոնք վերաբերում են և՛ ընդունող, և՛ արտահանող երկրների հարաբերություններին: Այլ կերպ ասած՝ աշխատուժ ընդունող և արտահանող երկրների միջև անհրաժեշտ է շարունակական երկխոսություն, որի ընթացքում նրանք պետք է համաձայնության գան այնպիսի խնդիրների շուրջ, որոնք երկու կողմերի համար էլ շահավետ են: Այդ խնդիրներից են միգրացիայի որակական կազմը, ռեցիպիենտ երկրների կառավարությունների կողմից բոլոր միգրանտների նկատմամբ հավասար վերաբերմունքը, ընդունող երկրի հասարակության հետ իմիգրանտներին ինտեգրելը, ռեմիգրացիոն հոսքերի ձևավորումը, սահմանների վերահսկումը և այլն: Նշված խնդիրները լուծելու համար ռեցիպիենտ և դոնոր երկրները համաձայնության են գալիս յուրաքանչյուր կողմի անելիքների մասին, որի համար նման երկրների միջև կնքվում են երկկողմ և բազմակողմ միջպետական պայմանագրեր, որոնք ուղղված են երկու կողմերի համար փոխշահավետ պայմանների ստեղծմանը: Նման բնույթի պայմանագրերը լայնորեն տարածված են Արևմտյան Եվրոպայի երկրներում, որոնց միջև վերջերս բանակցություններ են ընթացել միասնական միգրացիոն քաղաքականության հարցի շուրջ: Բանակցությունների արդյունքը եղել է այն, որ 1991 թ. Վիեննայի կոնֆերանսում որոշում է ընդունվել բոլոր միջոցներով կանխել միգրանտների անկառավարելի հոսքերը նախկին ԽՍՀՄ-ի հանրապետություններից: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո էմիգրացիայի աննախադեպ աճը ԱՊՅ երկրներին ստիպել է աշխատուժի միգրացիայի կարգավորման համար պայմանագրեր կնքել արևմտյան երկրների հետ:

Պետությունների միջև երկկողմ և բազմակողմ միջպետական պայմանագրերը հատկապես կարևոր են ռեմիգրացման գործընթացների կառավարման համար, քանի որ շատ դեպքերում ռեցիպիենտ երկրները միակողմանի որոշում են ընդունում հարկադիր ռեմիգրացիայի վերաբերյալ, որը հակասում է և՛ դոնոր, և՛ ռեցիպի-

ենտ երկրների շահերին:

Աշխատուժի միգրացիայի կարգավորումը բարձր մակարդակ է ապահովում ինտեգրացիոն միավորումների ներսում, քանի որ դրանցում ներգրավված երկրները գտնվում են տնտեսական զարգացման գրեթե միևնույն աստիճանի վրա: Ինտեգրացման միավորումների ներսում միգրացիան հավասարակշռում է նրանց աշխատուժի շուկան և միաժամանակ ապահովում տնտեսական առաջընթաց:

Աշխատուժի միջազգային միգրացիայի տարածաշրջանային կարգավորմամբ զբաղվում են Եվրոպայի խորհուրդը (1949 թ.), Եվրամիությունը (1957 թ.), Ազատ առևտրի եվրոպական ասոցիացիան (1960 թ.), Շենգենյան խումբը (1995 թ.) և այլն: Եվրոպայի խորհուրդը 1950 թ. ընդունել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, որի հիմնական նպատակը միգրանտների ընտանիքների վերամիավորման և նրանց նկատմամբ խտրականության բացառման ապահովումն է: Աշխատուժի միջազգային միգրացիայի հարցերը միշտ էլ եղել են Եվրամիության ուշադրության կենտրոնում: Այդ դասական ինտեգրացիոն միավորումը պայմաններ է ստեղծել՝ իր մեջ մտնող երկրների շրջանակներում միգրանտների ազատ տեղաշարժերի համար: Եվրամիությունը ոչ միայն երաշխավորում է անդամ պետությունների քաղաքացիների ազատ տեղաշարժը, այլև նրանց զբաղվածության և բնակության իրավունքը ԵՄ-ի շրջանակներում: Իսկ 1988 թ. սկսած ԵՄ անդամ պետությունների բարձրագույն կրթության վկայականներն ընդունվում են Միության մյուս երկրներում:

Եվրոպայի խորհուրդը և Եվրոպական միությունը օրինակ են ծառայել աշխատուժի միգրացիան կարգավորող տարածաշրջանային այլ միավորումների ստեղծման համար, որոնցից կարելի է նշել ՆԱՖՏԱ-ն (1994 թ.) ՄԵՐԿՈՍՒՐ-ը (1991 թ.), Արևմտաաֆրիկյան տնտեսական և արժուքային միությունը (1994 թ.), ԱՄԵԱՆ-ը, Անդյան պակտը և այլն: Այդ ինտեգրացման միավորումները նպաստավոր պայմաններ են ստեղծում աշխատուժի ազատ տեղաշարժի համար, իհարկե, իրենց ինտեգրացման միավորումների շրջանակներում:

Աշխատուժի միգրացիայի հիմնախնդիրներով զբաղվում են նաև մի շարք միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են Միավորված ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ), Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ) և այլն: Այդ կազմակերպություն-

ները հրավիրում են միջազգային կոնֆերանսներ և մշակում համա-
ձայնագրեր: Վերջիններիս ստորագրությամբ երկրները պարտա-
վորվում են կատարել դրանց պայմանները, որոնք ուղղված են աշ-
խատուժի միջազգային միգրացիայի կարգավորմանը: ՄԱԿ-ի նա-
խաձեռնությամբ 1954 թ. Յոնում հրավիրված միջազգային կոնֆե-
րանսում առաջին անգամ քննարկվել են աշխատուժի միգրացիայի
և տնտեսական աճի միջև կորելացիոն կապին վերաբերող հարցեր:
Նույն կոնֆերանսում մասնակից երկրներին առաջարկվել է առավել
մեծ ուշադրություն դարձնել միգրացիայի կարգավորմանը: 40 տա-
րի հետո՝ 1994 թ., Կահիրեում տեղի ունեցած կոնֆերանսում
առանձնահատուկ ուշադրություն է դարձվել բնակչության միգրա-
ցիայի պատճառները բացահայտելու խնդրին: Համաժողովը մեկ
անգամ ևս ընդգծել է ռեցիպիենտ և դոնոր երկրների համագործակ-
ցության խիստ անհրաժեշտությունը, որն ուղղված պետք է լինի
երկու կողմերի շահերի բավարարմանը:

Աշխատուժի միգրացիայի միջազգային կարգավորման դերը
հիմնականում կատարում է Աշխատանքի միջազգային կազմակեր-
պությունը (ԱՄԿ-ԻԼՕ), որն ստեղծվել է 1919 թ., Ազգերի լիգային
առընթեր: ԱՄԿ-ի նախաձեռնությամբ 1949 թ. ընդունված կոնվենցի-
ան՝ «Միգրացիա՝ աշխատելու նպատակով», պաշտպանում է
միգրանտների շահերը ընդունող երկրներում: Կոնֆերանսը նշել է,
որ միգրանտ աշխատողների իրավունքները չպետք է տարբերվեն
տեղացիների իրավունքներից: Կոնֆերանսը նաև կոչ է արել ռեցի-
պիենտ երկրների կառավարություններին՝ նպաստելու օրինական
միգրանտների մուտքն իրենց երկրներ և պաշտպանելու նրանց
իրավունքները: ԱՄԿ-ի կողմից ընդունված կոնվենցիաներն օգտա-
գործում են պետությունները՝ աշխատուժի միգրացիայի կարգա-
վորմանը վերաբերող օրենքների ընդունման ժամանակ: Աշխա-
տավոր միգրանտների մասին ԱՄԿ-ի կոնվենցիաների հիմնական
գաղափարներից է նաև այն, որ պետությունները պետք է հավասար
վերաբերմունք ցուցաբերեն բոլոր միգրանտների նկատմամբ՝ ան-
կախ նրանց ազգային ու ռասայական պատկանելիությունից, հա-
վատամքից, սեռից և այլն:

Միգրանտների իրավունքների պաշտպանությանն է նվիրված
նաև Մանիլայում 1992 թ. ընդունված կոնվենցիան:

Աշխատուժի միջազգային միգրացիայի կարգավորման գործում
աստիճանաբար աճում է Աշխատանքի միջազգային կազմակեր-

պության (ԱՄԿ-ԼՕ) դերը, որն իր առջև դրել է ոչ միայն աշխատուժի միգրացիայի կարգավորման, այլև այդ գծով տեղեկատվության հավաքագրման և փորձի փոխանակման նպատակ:

Աշխատուժի միջազգային միգրացիայի հետ կապված որոշ խնդիրներ գտնվում են Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) ուշադրության կենտրոնում, որի կողմից ընդունված որոշումներում ընդգծվում են աշխատող միգրանտների ֆիզիկական վիճակին վերաբերող հատուկ նորմերի ընդունումը, ինչպես նաև արտերկրներում աշխատող միգրանտների ու նրանց ընտանիքի անդամների կրթության ֆինանսավորման անհրաժեշտությունը:

Աշխատուժի միգրացիայի միջազգային կարգավորման ոլորտում առավել կարևոր դեր են խաղում ՄԱԿ-ի թիվ 97՝ «Աշխատանքային միգրանտների մասին», թիվ 118՝ «Սոցիալական ապահովության բնագավառում երկրի քաղաքացիների, արտերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց իրավահավասարության մասին» և թիվ 143՝ «Միգրացիայի բնագավառում չարաշահումների և աշխատանքային միգրանտների համար հավասար հնարավորություններ ու վերաբերմունք ապահովելու մասին» կոնվենցիաները, ինչպես նաև «Աշխատանքային միգրանտների իրավական կարգավիճակի մասին» Եվրոպական կոնվենցիան:

Աշխատուժի միգրացիայի միջազգային կարգավորմամբ լուծվում են այնպիսի խնդիրներ, որոնք պաշտպանում են միգրանտների շահերը, նպաստում նրանց ընտանիքների վերամիավորմանը, կրճատում անլեգալ միգրացիոն հոսքերը:

Նշենք նաև, որ ինչպիսին էլ լինի պետությունների, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների վերաբերմունքը աշխատուժի միջազգային միգրացիայի հիմնախնդիրների նկատմամբ, միևնույն է, համաշխարհային տնտեսության զարգացման տեսանկյունից աշխատուժի շարժունակության աստիճանի բարձրացումն այնպիսի գործընթաց է, որը և՛ առանձին երկրի, և՛ ամբողջ աշխարհի համակարգով կարող է նպաստել ժողովուրդների սոցիալ-տնտեսական շահերի իրականացմանը: Արդի դարաշրջանում չի կարելի հզոր պատնեշներ դնել աշխատուժի միջազգային հոսքերի դեմ, քանի որ դրա ազատ տեղաշարժերի սահմանափակումը հակասում է գլոբալացման հիմնախնդիրներին:

5.2.5. ԳԳ-ի մասնակցությունը աշխատուժի միջազգային միգրացման գործընթացներին

Աշխարհի շատ ժողովուրդների նման հայերը նույնպես ունեն միգրացիայի հին ավանդույթներ: Անհիշելի ժամանակներից են հայերին բռնությամբ տեղահան արել իրենց պատմական հայրենիքից ու վերաբնակեցրել Պարսկաստանում, Թուրքիայում, արաբական երկրներում և այլուր: Հայ բնակչության զանգվածային տեղաշարժեր եղել են հատկապես XIX և XX դարերում: XX դարի սկզբին Բաքվի նավթարդյունաբերության աշխատողների 1/5-ը հայ գաղթականներ էին²⁴: Նման գործընթացները տարերայնորեն շարունակվել են նույն դարի 70-80-ական թվականներին: Նախկին ԽՍՀՄ-ում արտագնա աշխատանքի մեկնողների կազմում հայերի տեսակարար կշիռը եղել է համեմատաբար բարձր. նրանք մեկնում էին Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուս, այլ հանրապետություններ: Սեզոնային աշխատանքի մեկնողների թիվը տարեկան կազմում էր մի քանի տասնյակ հազար²⁵:

1980-ական թվականների վերջերից հայ բնակչության միգրացման գործընթացների մեջ տեղի ունեցավ բեկումն՝ կապված Սպիտակի երկրաշարժի (1988 թ.), Ադրբեջանում հայերի նկատմամբ գործած ոճրագործությունների (1988-1991 թթ), դարաբաղյան ագատագրական պայքարի (1991-1994 թթ.), ինչպես նաև ԽՍՀՄ-ի փլուզման (1991 թ.) հետ: Արտագաղթի գործընթացի ինտենսիվությունը բարձր է եղել հատկապես 1993-1994 թթ. (այդ ժամանակաշրջանում տարեկան արտագաղթում էր ավելի քան 200 հազար մարդ),²⁶ որը պայմանավորված էր սոցիալ-տնտեսական և քաղաքական տարբեր գործոններով:

1999 թ. հոկտեմբերի 27-ից հետո հանրապետությունում նորից բարձրացավ բնակչության արտագաղթի ինտենսիվությունը, քանի որ զանգվածային արտագաղթին, տնտեսականի հետ մեկտեղ, մեծ չափով նպաստեցին քաղաքական ու բարոյահոգեբանական տարաբնույթ գործոնները:

²⁴ Տես Վ.Ե. Խոջաբեկյան, նշվ. աշխ., էջ 132:

²⁵ Նույն տեղում, էջ 262:

²⁶ ԳԳ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից ԳԳ կառավարությանն առընթեր Միգրացիայի և փախստականների վարչությանը տրամադրված տվյալները 1992-2002 թթ. համար:

Այն, որ նոր տնտեսական հարաբերությունների ձևավորման ժամանակահատվածում ՀՀ-ից արտագաղթը հասել է հսկայական չափերի, ոչ ոք չի կասկածում: Այնուհանդերձ, հավաստի տվյալների բացակայության պատճառով գրեթե հնարավոր չէ ներկայացնել արտագաղթած բնակչության ճշգրիտ թիվը:

Այսպես, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության տվյալների համաձայն 1992-2002 թթ. օդային տրանսպորտով հանրապետությունից մեկնողների թիվը 671 հազարով գերազանցել է ժամանողների թվին²⁷: Ակադեմիկոս Վ. Խոջաբեկյանի հաշվարկներով՝ 1991-2000 թթ. ՀՀ բնակչության միջպետական տեղաշարժերի բացասական մնացորդը կազմել է 1 300 000 մարդ²⁸: Կան այլ ուսումնասիրություններ, որոնցում բերված տվյալները գրեթե չեն համընկնում վերոհիշյալ աղբյուրներում ներկայացված տվյալների հետ: Իսկ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) պաշտոնական տվյալները միանգամայն այլ են, որը, մեր կարծիքով, չի արտացոլում բնակչության արտագաղթի իրական պատկերը:

Ներկայումս արտագաղթը շարունակվում է. այն դարձել է սովորական երևույթ: Ըստ էության, դա վկայում է այն մասին, որ բնակչության միջպետական միգրացիայի գործընթացներում Հայաստանը վերածվել է դոնոր երկրի:

ՀՀ-ից արտագաղթը միշտ էլ ունեցել է և շարունակում է ունենալ սոցիալ-տնտեսական այնպիսի հետևանքներ, որոնց բացահայտումը պահանջում է ամենից առաջ պարզել արտագաղթի պատճառները: Նկատի ունենալով, որ դրանք բավական շատ են, ուստի ստորև ներկայացնենք առավել կարևորները, որոնք զանգվածային արտագաղթի պատճառ են դարձել հատկապես անցյալ դարի 90-ական թվականներին:

1. Սպիտակի երկրաշարժը, ՀՀ-ի սահմանամերձ շրջաններում և Լեռնային Ղարաբաղում տարիներ ձգձգված պատերազմը, մինչև օրս շարունակվող պատերազմական իրավիճակը, տնտեսական ճգնաժամը, շրջափակումը և այլն:

2. Հայաստանը չէր կարող (այսօր էլ չի կարող) աշխատանքով ապահովել տնտեսապես ակտիվ տարիքի բնակչության մի զգալի

²⁷ Տե՛ս նույն տեղը:

²⁸ Տե՛ս Վ.Ե. Խոջաբեկյան, նշվ. աշխ., էջ 308:

մասին: Նրանցից շատերը գործազուրկ էին: Որոշ փորձագետների վկայությամբ՝ ՀՀ-ում գործազրկության մակարդակն իրականում եղել է ավելի բարձր, քան ներկայացրել են պաշտոնական մարմինները: Գործազրկության բարձր մակարդակը կպահպանվի նաև առաջիկայում, որը պայմանավորված կլինի տարբեր բնույթի գործոններով:

3. Աշխատատեղերի ստեղծման նկատմամբ բացակայում էր աշխատունակ բնակչության հավատը: Աշխատատեղեր ստեղծելու համար անհրաժեշտ էին հսկայական չափերի կապիտալ ներդրումներ, մինչդեռ Հայաստանում ներդրումները շատ քիչ էին, քանի որ լիովին կանոնակարգված չէր իրավական դաշտը, օրենքը չէր գործում բոլորի համար, բացակայում էր դրա իշխանությունը. օրենքն ուժ ուներ միայն խեղճերի ու թույլերի համար:

4. Հանրապետությունում բացակայում են ոչ միայն կյանքի համար անհրաժեշտ սոցիալ-կենցաղային պայմանները, այլ նաև սեփականության և կյանքի անձեռնմխելիության երաշխավորման համար օրենքները:

5. Հասարակության բևեռացման էլ ավելի խորացումը, զինվորական ծառայությունից խուսափելու երիտասարդների մղումը, հանրապետությունում տիրող բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտը և այլ պատճառներ խիստ հիասթափեցրել էին շատերին, որոնք գերադասում էին օր առաջ հեռանալ հայրենիքից:

6. Հանրապետությունում ժողովրդի հիմնական մասի սոցիալական անապահովությունը, կյանքի ցածր մակարդակը, տնտեսական վիճակի բարելավման և աշխատատեղերի ստեղծման հեռանկարների մասին մարդկանց անվստահությունը, Արևմուտքի կողմից անուղղակիորեն իրականացվող խոչընդոտները, ռեսուրսների և տարածքի սղության պատճառով տարածուն (էքստենսիվ) տնտեսությամբ զբաղվելու անհնարինությունը և այլ գործոններ մեր բնակչության մի ստվար հատվածին ստիպել էին աշխատանք գտնելու նպատակով լքել հարազատ բնօրրանը:

7. Պետական չինովնիկների անմարդկային վերաբերմունքը իրենց սեփական ժողովրդի նկատմամբ, երբ 1992-1995 թթ. (այդ տարիների ցուրտ ու մութ ձմեռվա ամիսներին) էլեկտրաէներգիան բնակչությանը մատակարարվում էր օրական 2-3 ժամ, իսկ առանձին օրեր առհասարակ չէր մատակարարվում: Դա այն դեպքում, երբ 1993 թ. էլեկտրաէներգիա արտադրվել է 290 մլն կվտ/ժամով

ավելի, քան 1997-ին, երբ բոլոր սպառողները էլեկտրաէներգիայից օգտվում էին այն չափով, ինչ չափով ուզում էին: Սակայն մինչ օրս ոչ մի իշխանավոր չի ուզել և չի էլ ուզում այն ժամանակվա պետական չինովնիկների կողմից ժողովրդի դեմ կատարած հանցագործություններին տալ համապատասխան զնահատական:

Արտագաղթի պատճառները բավական շատ են. բոլորը չես թվարկի:

Ընդգծենք նաև, որ արտագաղթողների մեծ մասը եղել և մնում է երիտասարդությունը, որի մասին վկայում են ոչ միայն պաշտոնական վիճակագրական տվյալները, այլ տարբեր սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները:

Արտագաղթի սոցիալ-տնտեսական հետևանքները ՀՀ-ի վրա ունեցել են և՛ դրական, և՛ բացասական ազդեցություն:

Նախ՝ թվարկենք դրական հետևանքներն առանձի-առանձին:

1. Արտագաղթը ինչ-որ չափով բարելավել է ՀՀ աշխատուժի շուկան: Այն երկրներում (այդ թվում՝ ՀՀ-ում), որտեղ աշխատուժի շուկան ավելցուկային է, ապա արտագաղթի հետևանքով, որպես կանոն, նշանակալի չափով կրճատվում է տվյալ երկրի գործազուրկների թիվը: Թեպետ արտագաղթը մասամբ թուլացրել է լարվածությունը ՀՀ-ի աշխատուժի շուկայում, այնուամենայնիվ, գործազրկության մակարդակը Հայաստանում դեռևս մտահոգիչ է: ԱՊՀ երկրների մեջ Հայաստանը գործազրկության մակարդակով Ռուսաստանի, Ուկրաինայի և Ղազախստանի հետ բաժանում է 3-րդ-4-րդ տեղերը: Միջին հաշվով ՀՀ-ն տարեկան ունեցել է 9-12% գործազրկության մակարդակ: Այն ցանկացած երկրի, այդ թվում և մեր հանրապետության համար տնտեսության վիճակը բնութագրող կարևոր ցուցանիշներից է: Գործազրկության մակարդակի և տնտեսական աճի միջև գոյություն ունի կորելացիոն կապ. ըստ ամերիկյան անվանի տնտեսագետ Ա.Օուլթենի օրենքի՝ բնական գործազրկության նկատմամբ փաստացի գործազրկության 1% աճը հանգեցնում է երկրի պոտենցիալ ՀՆԱ-ի նկատմամբ իրական ՀՆԱ-ի 2-3% նվազման, կամ, ընդհակառակը, փաստացի գործազրկության 1% նվազմամբ իրական համախառն ներքին արդյունքը աճում է 2-3%-ով²⁹:

²⁹ Стів Курс экономической теории, М., 2000, էջ 406:

2. Աշխատող միգրանտները (արտագաղթողները) տարբեր ուղիներով իրենց հարազատներին են փոխանցել (և փոխանցում են) զգալի ֆինանսական միջոցներ: Նրանց փոխանցումները (տրանսֆերտները) նպաստում են մեր երկրի ֆինանսական վիճակի բարելավմանը: Ե՛իշտ է, փոխանցված դրամական միջոցներն անմիջականորեն չեն մտնում պետական գանձարան, այնուամենայնիվ, դրանք բարձրացնում են բնակչության եկամուտների մակարդակը և որոշ դրական ազդեցություն թողնում երկրի վճարային հաշվեկշռի վրա:

3. ԴՅ-ից արտագաղթողների ճնշող մեծամասնությունը եղել են աշխատանքային ակտիվ տարիքում գտնվող գործազուրկները: Արտագաղթը որոշ չափով կրճատել է պետության ծախսերը կրթության, առողջապահության և սոցիալ-տնտեսական այլ ուղղություններով:

4. Դայ միգրանտները արտերկրներում ձեռք են բերում աշխատանքային փորձ ու գիտելիքներ, ծանոթանում են տեխնիկայի և տեխնոլոգիաների նորագույն նվաճումների ու նոու-հաուսների հետ և հայրենիք են վերադառնում ավելի բարձր որակավորում ստացած, ինչպես նաև ավելի բարձր արտադրական մշակույթ և բիզնես կազմակերպելու ունակություններով: Արդյունքում՝ երկիրն անվճար ստանում է բարձր որակավորում ունեցող լրացուցիչ աշխատուժ:

5. Էմիգրացիոն հոսքերը հնարավորություն են տվել որոշ չափով խուսափելու որակյալ աշխատուժի բարոյական արժեզրկումից, թեև հանրապետությունից «ուղեղների արտահոսքը» մինչ օրս չի դադարում:

Իսկ որո՞նք են աշխատուժի էմիգրացիայի բացասական հետևանքները ԴԴ-ի համար:

1. Դայաստանից հեռացել և շարունակում են հեռանալ բարձր որակավորում ունեցող անձինք (դրա բացասական հետևանքները ավելի կզգացվեն մոտ ապագայում): «Ուղեղների արտահոսքը» տեղի է ունենում կա՛մ աշխատանք փնտրելու համար, կա՛մ զարգացած երկրներում հայ երիտասարդները գնում են բարձրագույն կրթություն ստանալու նպատակով, բայց այլևս չեն վերադառնում: Նշյալ երևույթն առկա է այնպիսի ժամանակաշրջանում, երբ հանրապետությունն ազգային տնտեսության զարգացման համար բարձրորակ մասնագետների խիստ կարիք է զգում: «Ուղեղների արտահոսքի» հետևանքով ԴԴ-ն կորցնում է իր ամենաթանկ կա-

պիտալի (մարդկային կապիտալի) մի մասը: Թե դա ի՞նչ արժե ՀՀ-ի համար, առայժմ չի հաշվարկվել: Օրինակ, Ռուսաստանի Դաշնությունը «ուղեղների արտահոսքից» տարեկան կորցնում է 50-60 մլրդ ԱՄՆ դոլար, քանի որ ռուս գիտնականների 1/3-ը աշխատում է արտերկրներում³⁰:

2. Ձանգվածային արտագաղթի հետևանքով Հայաստանը ֆինանսական կորուստներ է կրել (և շարունակում է կրել) այն պատճառով, որ արտագաղթածները եղել են նրանք, ովքեր կրթություն և մասնագիտական պատրաստություն են ստացել պետական միջոցների հաշվին, բայց միգրանտի կարգավիճակով հարկ վճարում են արտասահմանյան երկրներում:

3. Վերջին տարիներին արտագաղթի հոսքերը ներառել են աշխատանքային միգրանտների ընտանիքների անդամներին ևս, այն միգրանտների, ովքեր 1990-ականներին արտագաղթել են՝ մշտական բնակություն հաստատելու նպատակով: Դա նշանակում է, որ նախկին աշխատանքային էմիգրացիան դարձել է արտագաղթը խթանող գործոն:

4. Արտագաղթի հետևանքով ինչ-որ չափով մեծացել է հանրապետության աշխատավորների հարկային բեռը, որովհետև նրանք ստիպված են վճարել ավելի շատ հարկեր, որպեսզի ապահովեն պետության բոլոր պահանջմունքները, այդ թվում՝ հասարակական բարիքների արտադրության ֆինանսավորումը, մանավանդ որ, որպես կանոն, Հայաստանի անենախոշոր գործարար-օլիգարխները հարկեր վճարում են նվազագույն չափով:

5. Արդյունաբերապես զարգացած նախկին ՀՀ-ն վերածվել է սպառող երկրի: Բազմաթիվ գործոնների ազդեցությամբ իջել է թողարկվող արտադրանքի մրցունակությունը:

6. Հանրապետության տնտեսության շատ ոլորտներում նշանակալիորեն մեծացել է աշխատանքային օրվա տևողությունը և աշխատանքի ինտենսիվությունը: Գերլարված աշխատանքից ինչ շահում է երիտասարդ հասակում, ավելին կորցնում է հետագայում: Դեռևս կենսաթոշակի տարիքի չհասած՝ նման մարդու աշխատանքային լարվածությունն իջնում է հասարակականորեն նորմալ միջին մակարդակից ցածր, և ժամանակից բավական շուտ թողնում է իր ակտիվ աշխատանքային կյանքը: Ահա թե ինչու են մարդիկ

³⁰ Տե՛ս Ե.Շ. Ахوپова, О.И. Воронкова, Н.А. Гавриленко, նշվ. աշխ., էջ 335:

պայքարել 8-ժամյա աշխատանքային օրվա և հնգօրյա աշխատանքային շաբաթվա համար: Իսկ այժմ Ֆրանսիայի աշխատավորները պայքարում են չորսօրյա աշխատանքային ռեժիմի անցնելու համար:

7. ԴՅ-ն կորցրել է առավել աշխատունակ տարիքում գտնվող աշխատանքային ռեսուրսների զգալի մասը: Մինչդեռ ցանկացած երկրի գլխավոր հարստությունը նրա աշխատանքային ռեսուրսներն են: Դրանք ավելացնելու նպատակով կատարվող ներդրումները փոխհատուցվում են արագորեն և դառնում նոր ներդրումների աղբյուր, քանի որ աշխատունակ մարդն իր գործունեությամբ ստեղծում է բարիք ոչ միայն իր, այլև հասարակության համար՝ հարստացնելով տվյալ երկիրը:

Տնտեսապես ակտիվ բնակչության զգալի մասի արտագաղթի հետևանքով տեղի է ունեցել հանրապետության աշխատանքային ռեսուրսների «ծերացում», քանի որ արտագաղթողների մեջ բարձր է եղել մինչև 49 տարեկանների, հատկապես երիտասարդների տեսակարար կշիռը:

8. ԴՅ-ից արտագաղթը որոշակի ազդեցություն է ունեցել բնակչության գենոֆոնդի և թվաքանակի վրա: Խիստ նվազել է ծննդաբերությունը և բնական աճը 1988 թ. համեմատությամբ: Վերջին 1,5 տասնամյակում ԴՅ-ի բնակչության բնական աճը 1000 բնակչի հաշվով կազմել է ընդամենը 2,7-3,4 մարդ: Բնակչության աճի նվազումը դարձել է ազգային անվտանգության կարևոր խնդիր, քանի որ արտագաղթողները հիմնականում չեն վերադառնում և ծուլվում են այլ ազգերի ու ազգությունների հետ:

9. ԴՅ-ից արտագաղթը հասցրել է նրան, որ աշխարհի հայերի ընդհանուր թվաքանակի մեջ իջել է հայաստանաբնակ հայերի տեսակարար կշիռը: Այժմ հայերի թվաքանակը աշխարհում կազմում է 9.5 մլն, որից 6,3 մլն-ն ապրում է Հայաստանից դուրս՝ ավելի քան 75 երկրներում:

Արտագաղթը ԴՅ-ից որոշակի ազդեցություն է ունեցել նաև բնակչության սեռատարիքային կազմի, երեխաների և տարեցների տեսակարար կշիռների, ընտանիքների միջին մեծության, քաղաքային և գյուղական բնակչության թվաքանակի հարաբերակցության, բնակչության շերտավորման և այլնի վրա: Բնակչության արտագաղթը չի բխում նաև երկրի պաշտպանունակության և ռազմական հզորացման շահերից: Արտագաղթի այդ բացասական կողմն

ավելի կզգացվի 2010 թ սկսած, քանի որ այդ ժամանակ գորակոչի տարիքի տղաները կլինեն 1992 թ. հետո ծնված երեխաները:

Հայ բնակչության արտագաղթի հետևանքներից մեկն էլ այն է, որ ռեցիպիենտ շատ երկրներում ձևավորվում են նոր հայկական համայնքներ, որոնք մի կողմից՝ իրենց սովորույթներն են թելադրում տեղական բնակչությանը, մյուս կողմից՝ հենց իրենք են ինտեգրվում տեղացիների հետ: Աշխարհում տեղի ունեցող նման գործընթացները արագացնում են վերազգային հասարակության ձևավորումը, որի դրական և բացասական կողմերն ի հայտ կգան ժամանակի ընթացքում:

Վերջին 1,5 տասնամյակի ընթացքում հայերի զանգվածային արտագաղթն առաջացրել է տարբեր բնույթի խնդիրներ, որոնց լուծումը անպայման ենթադրում է արդյունավետ միգրացիոն քաղաքականություն: Այդ հանգամանքը նկատի ունենալով ՀՀ կառավարությունը վերջերս ակտիվ գործունեություն է ծավալել բնակչության միգրացիոն գործընթացները պետականորեն կարգավորելու ուղղությամբ, որի դրսևորումներից մեկը «Հայաստանի Հանրապետությունում բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգի մասին» ՀՀ կառավարության կողմից 2004 թ. հունիսի 25-ին ընդունած որոշումն է: Հայեցակարգը «... Մոտակա և տևական հեռանկարում միգրացիոն գործընթացների զարգացումները վերահսկելի և նախընտրելի ուղղություններով ապահովելու համար ՀՀ իշխանության մարմինների դիրքորոշումների, խնդիրների ու դրանց լուծմանն ուղղված մոտեցումների համակարգ է»³¹, որում տրված են պետական միգրացիոն քաղաքականության առավել կարևոր խնդիրները և դրանց լուծմանն ուղղված հիմնական մեխանիզմները: Այդ կարևոր փաստաթղթում նաև նշված են այն սկզբունքները, որոնցով ղեկավարվելով, հնարավոր կլինի որոշ չափով նվազեցնել ՀՀ բնակչության արտագաղթը, այսինքն՝ իրականացնելու պետության միգրացիոն քաղաքականության գերխնդիրը:

ՀՀ պետական միգրացիոն քաղաքականության մեջ կիրառվում է կարգավորող պետական համակարգի ռեժիմ, քանի որ մեր ժողովուրդը դեռևս ունի արտագաղթելու ձգտում և ի վիճակի չէ արտագաղթի գործընթացն ինքնուրույն կարգավորել այնպես, որ չվնասի

³¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարության միստերի արձանագրությունը, 25 հունիսի 2004, թիվ 24:

երկրի շահերին: Ռեժիմի կարևոր պահանջներից է և այն, որ աշխատուժի էմիգրացիան կազմակերպվի վերադարձի պայմանով, ինչը հնարավորություն կտա երկրում մշտապես ունենալ անհրաժեշտ քանակությամբ բնակչություն: Նման քաղաքականության իրականացումը հնարավոր է համապատասխան օրենքների ընդունմամբ, որոնք կնախատեսեն, թե էմիգրանտները քանի՞ ամիս կամ քանի՞ տարի պետք է մնան արտերկրներում: Իսկ դա իր հերթին անհրաժեշտություն է առաջացնում համապատասխան միջպետական համաձայնագրերով կարգավորել միգրացիոն գործընթացների հետևանքով առաջացող խնդիրները՝ կապված էմիգրանտների շահերի պաշտպանության, ռեէմիգրացիայի հոսքերի կարգավորման, անօրինական միգրացիայի կանխարգելման հետ: Սակայն ԶԶ-ի վիճակն այսօր այնպիսինն է, հատկապես գործազրկության բարձր մակարդակի առկայությունը, որ, մի կողմից՝ ռեէմիգրացիոն հոսքերի խթանումն այժմ չի բխում մեր երկրի շահերից, իսկ մյուս կողմից՝ չի կարելի ձգձգել նման հոսքերի ստեղծումը, քանի որ հղի է վտանգավորությամբ՝ կապված երկրի ռազմական զարգացման շահերի և բնակչության բնականոն վերարտադրության հետ: Նման պայմաններում խնդրի լուծման տարբերակներից է էմիգրացիոն հոսքերի քվոտավորումը, այն, որ պետությունը կազմակերպի աշխատանքային էմիգրացիան և սահմանի էմիգրանտների օպտիմալ թվաքանակը: Իսկ գործազրկության բարձր մակարդակը մեղմելու համար անհրաժեշտ է, որ առաջնությունը տրվի տնտեսության զարգացման էքստենսիվ (տարածուն) ուղիներին: Կարելի է կիրառել նաև միգրացիայի «բարտերային» տարբերակը, որի դեպքում մեր էմիգրանտներին ընդունող երկիրը պետք է նրանց տրամադրի արտոնյալ պայմաններ, նկատի ունենալով, որ մենք կպարտավորվենք իրենց երկրից ներմուծել ներդրումային ապրանքներ: Նման տարբերակի կիրառումը կնպաստի արտադրության զարգացմանը՝ առանց կախվածության մեջ լինելու օտարերկրյա ներդրողներից:

Այսպիսով, տարբեր ձևերով արտագաղթի պետական կարգավորումը հնարավորություն կտա ոչ միայն ինչ-որ չափով մեղմել արտագաղթի բացասական հետևանքները, այլև իջեցնել արտագաղթի հիմնական պատճառը՝ գործազրկության բարձր մակարդակը, և բարենպաստ պայմաններ ստեղծել ԶԶ տնտեսության տարբեր ճյուղերի ինտենսիվ զարգացման համար:

Գրականություն

1. Ա. Մարկոսյան, Դ. Հախվերդյան, Գ. Նազարյան Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Եր., 2002:
2. Գ.Ս. Աղաջանյան, Արտագաղթի ժողովրդագրական հետևանքները ՀՀ-ում, «Բանբեր ԵՊՏԻ-ի», Եր., 2004, թիվ 3:
3. Գ.Ս. Աղաջանյան, Արտագաղթի սոցիալ-տնտեսական հետևանքները ՀՀ-ում, «Բանբեր ԵՊՏԻ», 2005, թիվ 2:
4. Զ.Ա. Թաղևադյան, Կապիտալի և աշխատուժի միգրացիա, Եր., «Տնտեսագետ», 2005:
5. Թ. Թորոսյան, Միջազգային տնտեսագիտություն, ուսումնական ձեռնարկ, Եր., 2005:
6. Е.Ф. Авдокушин, Международные экономические отношения: учебник, гл 16, М., “Юрист”, 2001.
7. С.В. Фомишин, Международные экономические отношения, Ростов-на-Дону, гл 11, “Феникс”, 2006.
8. Международные экономические отношения: учебник, под ред. И.П. Фаминского, гл 11, “Экономист”, 2004.
9. Международные экономические отношения: учебник, под ред. Б.М. Сметтенко, гл 21, М., ИНФРА-М, 2007.
10. Международные экономические отношения: учебник, под общей ред. В.Е.. Рыбалкина, М., 1997.
11. Международные экономические отношения: учебник, под ред. Н.Н. Ливенцева, гл 8, М., “Проспект”, 2005.
12. Международные экономические отношения: учебник, под ред. А.И. Евдокимова, гл 21, 22, 23, 24, М., “Проспект”, 2004.
13. Н.А. Миклашевская, А.В. Холопов, Международная экономика: учебник, гл. 5.2, М., “Дело и сервис”, 1998.
14. Г.П. Овчинников, Международная экономика: учебное пособие, гл. 5, СПб, 1999.
15. Доменик Сальваторе, Международная экономика: учебник, гл. 12, М., 1998.
16. А. Киреев, Международная экономика: в двух частях, М., 1998 и 1999.

5.3. Տեխնոլոգիաների միջազգային փոխանակություն

5.2.1. Տեխնոլոգիաների միջազգային փոխանցման էությունը

Միջազգային տնտեսագիտությունում տեխնոլոգիաների միջազգային փոխանցումը դիտվում է մի կողմից՝ որպես ապրանքների առևտուր (որպես առանձնահատուկ ապրանք), մյուս կողմից՝ որպես արտադրության գործոն: Տեխնոլոգիան աշխատուժի հետ միասին համարվում է մարդկային գործոն, որն օգտագործվում է արտադրության նյութաիրային գործոնների (հող և կապիտալ) հետ միասին ապրանք արտադրելու համար: Տեխնոլոգիան բնութագրվում է որպես գործնական նպատակների իրականացման գիտական մեթոդներ³²: Գոյություն ունի տեխնոլոգիաների երեք խումբ.

- ա) ապրանքի արտադրության տեխնոլոգիա,
- բ) գործընթացի տեխնոլոգիա,
- գ) կառավարման տեխնոլոգիա:

Տեխնոլոգիա եզրն առաջացել է հունարեն «*techē*» բառից, որը նշանակում է արվեստ, վարպետություն:

Տեխնոլոգիան՝ որպես գիտատեխնիկական գիտելիքների համակարգված ամբողջություն, իրենից ներկայացնում է ոչ նյութական գործոն: Սակայն միջազգային տնտեսական փոխանակությունում այն ներկայանում է կոնկրետ առարկայացված ապրանքի տեսքով: Տեխնոլոգիան ապրանքի է վերածվում այն դեպքում, երբ ստեղծվում են մտահղացման-առևտրականացման համար իրական նախադրյալներ:

Տեխնոլոգիաների միջազգային փոխանցումը երկրների միջև գիտատեխնիկական նվաճումների փոխանակությունն է առևտրային կամ անհատույց հիմունքներով³³:

Տեխնոլոգիաների փոխանակության բոլոր ձևերը պայմանավորված են տեխնոլոգիաների բովանդակությամբ և արտացոլում են դրա ծագման, ծաղկման, ծերացման և նորով փոխարինման գործընթացները: Տարբերում են տեխնոլոգիաների հետևյալ ձևերը՝

- յուրահատուկ,
- առաջադիմական,

³² Տե՛ս *А.П. Киреев*, *Международная экономика*, М., 1999, ч. 1, էջ 342:

³³ Տե՛ս նույն տեղում, էջ 342:

- ավանդական,
- բարոյապետ մաշված:

Յուրահատուկ տեխնոլոգիան պաշտպանված է արտոնագրով կամ պարունակում է *նոու-հաու*, որն անհնար է դարձնում դրա օգտագործումը մրցակիցների կողմից: Այն օժտված է նորույթով, բարձր տեխնիկական մակարդակով և կարող է օգտագործվել բացարձակ մենաշնորհի պայմաններով: Ի տարբերություն յուրահատուկ տեխնոլոգիայի, որն ունի բացարձակ առավելություն այդ ճյուղի նմանատիպ տեխնոլոգիաների նկատմամբ, *առաջադիմական* տեխնոլոգիան ունի հարաբերական առավելություն: Բացի այդ՝ դա պաշտպանված չէ արտոնագրով և չունի վառ արտահայտված նոու-հաու, սակայն գնորդին ապահովում է լրացուցիչ շահույթ: *Ավանդական* տեխնոլոգիան գնորդին չի ապահովում տեխնիկատնտեսական էական առավելություններ, և շահույթը քիչ է: Սրա առավելությունը գնորդի համար համեմատաբար ցածր գինն է: Ավանդական տեխնոլոգիան ստեղծվում է առաջադիմական տեխնոլոգիայի լայնամասշտաբ տարածման և ծերացման արդյունքում: *Բարոյապետ մաշված* տեխնոլոգիան չի ապահովում արտադրանքի միջին որակն ու տեխնիկատնտեսական ցուցանիշները, այդ պատճառով էլ այսպիսի տեխնոլոգիայի օգտագործումն ավելի է խորացնում գնորդի տեխնոլոգիական հետամնացությունը:

5.3.2. Տեխնոլոգիաների համաշխարհային շուկայի բնորոշ գծերը և առանձնահատկությունները

Տեխնոլոգիաների համաշխարհային շուկաների զարգացումը կախված է նոր գիտելիքների արմատավորումից, որի արդյունքում փոփոխվում է արտադրության յուրաքանչյուր գործոնի արտադրողականությունը: Նոր տեխնոլոգիաները նվազեցնում են միավոր արտադրանքի վրա կատարված ծախսումները և դրանով իսկ թուլացնում երկրի կախվածությունը բնական գործոններից: Տեխնոլոգիաների համաշխարհային շուկայում առաջատար երկրներն են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, Ֆրանսիան և Գերմանիան: Այս երկրները արտահանում են տեխնոլոգիաների համաշխարհային շուկայի ծավալի 60%-ը³⁴:

³⁴ Տե՛ս Ի.Պ. Гурова, *Мировая экономика, учебник*, М., 2007, էջ 192:

Վերը թվարկված երկրները եղել են և այժմ էլ այս ոլորտի առաջատարներ են, այնուամենայնիվ, Հարավային Կորեան, Թայվանը, Սինգապուրը, Հնդկաստանը և մի շարք այլ երկրներ երկու տասնամյակ է, ինչ բարձր տեխնոլոգիաների համաշխարհային շուկայում հաջողությամբ կարողանում են մրցել առաջատարների հետ: Այս երկրները հանդիսանալով լիցենզիաների և արտոնագրերի ձևով նոր տեխնոլոգիաների մաքուր ներմուծողներ, գրավում են տեխնոլոգիաների համաշխարհային շուկան՝ դառնալով օտարերկրյա արտոնագրերով և լիցենզիաներով արտադրված տեխնոլոգիատար ապրանքների զուտ արտահանողներ:

Տեխնոլոգիաների համաշխարհային շուկա թափանցելու ուղին այս երկրների համար բավական պարզ է: Ունենալով ոչ բավարար զարգացած գիտատեխնիկական ներուժ և ծառայությունների ոլորտ, սակավ էներգետիկ և հումքային ռեսուրսներ՝ զարգացող երկրներն իրենց ներուժը կենտրոնացրել են բարձր տեխնոլոգիական և հեռանկարային նորույթներ ձեռք բերելու համար: Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի զարգացող երկրները, որ չեն կարող ինքնուրույն ճանապարհի հարթել տեխնոլոգիաների համաշխարհային շուկայում, կոոպերացվում են զարգացած երկրների կորպորացիաների հետ, հանդես գալով որպես առանձին դետալների, մասերի արտադրության մատակարարներ: Մի շարք երկրներ, որոնք այժմ հասել են ակնհայտ հաջողությունների (Չինաստան, Իսրայել, Ասիայի նոր արդյունաբերական երկրները), իրենց զարգացման ուղին հարթել են այս ճանապարհով³⁵:

Գիտատեխնիկական նվաճումները ձեռք են բերվում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների (ԳՀՓԿԱ) կատարման արդյունքում: ԳՏԱ-ն, երկրի տնտեսական առավելությունները կախված են ԳՀՓԿԱ-ին հատկացվող ռեսուրսների ծավալից և դրանց տարածման ու օգտագործման մասշտաբներից: Համաշխարհային տնտեսությունում բավականին արագ են աճում ԳՀՓԿԱ-ին հատկացվող գումարները՝ առաջ անցնելով ՀՆԱ-ի և կապիտալ ներդրումների աճի տեմպերից: Տարբեր երկրներում տարբեր են ԳՀՓԿԱ-ին հատկացվող գումարների մեծությունն ու այդ ոլորտում ներգրավված հետազոտողների քանակը, ինչպես նաև երկրների տարբեր ոլորտներում մասնագիտացման տեխնոլո-

³⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 191:

գիաների զարգացումը, որն էլ պայմանավորված է տեխնոլոգիաների միջազգային բաժանմամբ:

Ջարգացած երկրներում նոր կամ կատարելագործված տեխնոլոգիաների, նորույթ պարունակող արտադրանքների, սարքավորումների վրա կատարված ծախսերը կազմում են ՀՆԱ-ի 40%-ը³⁶:

Գիտության մեջ ներդրումները պետության անմիջական մենաշնորհը չեն: Արդյունաբերապես զարգացած երկրներում ԳՏԱ-ում ներդրումների մեծ մասը բաժին է ընկնում մասնավոր հատվածին: Օրինակ՝ Ջեներալ Մոթորսը գիտական հետազոտություններին տարեկան հատկացնում է 10 մլրդ, Ֆորդը՝ 7 մլրդ, Այ-Բի-էՄ-ը՝ 4 մլրդ ԱՄՆ դոլար:

5.3.3. Իրավական պաշտպանությունը որպես տեխնոլոգիաների առևտրային իրացման արդյունավետ պայման

Պետությունն ապահովում է անհատների և կազմակերպությունների ստեղծագործական աշխատանքի արդյունքների պաշտպանությունը՝ տալով սեփականության իրավունք: Սեփականության իրավունքի օբյեկտների մեջ յուրահատուկ տեղ են գրավում մտավոր սեփականության օբյեկտները, որոնք մարդկային մտածողության ստեղծագործություններ են: Դրանք ստորաբաժանվում են՝

- հեղինակային իրավունքով պաշտպանվող ստեղծագործություններ.- գրական և գեղարվեստական գործեր, կոմստրուկտորական գծագրեր, տվյալների հիմնապաշար, բոլոր տեսակի էլեկտրոնային հաշվիչ մեքենաների ծրագրեր, դերասանների կատարողական գործունեություն և այլն,

- արդյունաբերական սեփականություն.- հայտնագործություններ, օգտակար մոդելներ, արդյունաբերական նմուշներ, ապրանքային և սպասարկման նշաններ, ֆիրմային նշաններ, նոու-հաու և այլն:

Գրեթե բոլոր երկրներում նոր տեխնոլոգիան պաշտպանվում է իրավական գործիքներով: Տեխնոլոգիաների իրավական պաշտպանության գործիքներից են՝

³⁶ Տե՛ս Ի.Պ. Գամինսկի, *Международные экономические отношения*, М., 2004, էջ 361:

1. Արտոնագիրը (patent). - փաստաթուղթ է, որը պետականորեն հաստատում է տեխնիկական լուծման հայտնագործություն լինելը և ամրագրում սեփականատիրոջ բացառիկ իրավունքները ապրանքանիշով: Արտոնագիրը պետական լիազոր մարմնի կողմից տրվում է հայտնագործողին կամ իրավահաջորդին՝ սեփական դիմումի հիման վրա: Արտոնագրի գործողության ժամկետը սահմանվում է ազգային օրենսդրությամբ, սովորաբար՝ 15-20 տարի ժամանակով: Արտոնագրի բացառիկ իրավունքն այն է, որ նա գյուտն օգտագործելու մենաշնորհի իրավունք է ստանում: Եթե հայտնագործությունը օգտագործվում է առանց արտոնագրի տիրոջ թույլտվության, ապա վերջինս կարող է հայց ներկայացնել դատարանին և փոխհատուցում ստանալ: Նա նաև իրավունք ունի օտարել իր իրավունքը և այլ անձանց թույլատրել օգտագործել իր հայտնագործությունները: Արտոնագիրը պաշտպանում է սեփականատիրոջ իրավունքները միայն արտոնագրի տրման երկրում, սակայն վերջերս, օրինակ, Արևմտյան Եվրոպայում գործում է եվրոպական արտոնագրային համակարգը:

Հայտնագործությունների և գյուտերի արտոնագրային պաշտպանության ժամանակ, բացի արտոնագրի տիրոջ շահերից, պետությունը հաշվի է առնում նաև սեփական և հասարակական շահերը: Արտոնագիրը տրվում է միայն որոշակի ժամկետով, որը սահմանվում է յուրաքանչյուր երկրի ազգային օրենսդրությամբ: Այդ ժամկետից հետո հայտնագործությունը դառնում է հասարակական բարիք, և ցանկացած մարդ կարող է օգտվել դրանից:

2. Վերարտադրելիության իրավունքը (copyright) տարածվում է արվեստի ցանկացած ստեղծագործության վրա, անկախ ձևից, արժեքից և նշանակությունից՝ հոդված, գիրք, տեխնիկական նկարագրություն, նկար, տեսա-լսա-արտադրություն: Վերարտադրելիության իրավունք նշանակում է՝ առանց հեղինակի կամ նրա իրավահաջորդի համաձայնության, ոչ ոք երբևէ չի կարող օգտագործել իրավունքով պաշտպանված օբյեկտը:

3. Հեղինակային իրավունքը տարածվում է ստեղծագործական գործունեության արդյունք համարվող գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունների վրա՝ անկախ ստեղծագործության նշանակությունից ու արժանիքներից, ինչպես նաև այն արտահայտելու եղանակից: Հեղինակային իրավունքը իրավական գործիք է, որի շնորհիվ գրական, գեղարվեստական, երաժշտական

և այլ ստեղծագործության հեղինակը ստանում է իրավունք՝ վերահսկելու իր աշխատանքի արդյունքի վաճառքը կամ դրա օգտագործումը երրորդ անձանց կողմից: Հեղինակային իրավունքի շնորհիվ հեղինակը ստանում է իր աշխատանքի վերարտադրման, բաշխման, վերամշակման և ցուցադրման բացառիկ իրավունք: Երկու և ավելի քաղաքացիների համատեղ ստեղծագործական աշխատանքով արարված ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքը հեղինակներին է պատկանում համատեղ: Հեղինակը կամ այլ իրավատերը պայմանագրով կնքված ստեղծագործությունն օգտագործելու իր բոլոր իրավունքները կարող է փոխանցել այլ անձի: ՀՀ-ում հեղինակային իրավունքը գործում է հեղինակի կյանքի ընթացքում, և նրա մահից հետո՝ հեղինակի մահվանը հաջորդող տարվա հունվարի 1-ից հաշված 50 տարվա ընթացքում (որոշ երկրներում՝ 75-100 տարի): ՀՀ-ում, որպեսզի ստեղծագործողը իր համար ապահովի բացառիկ հեղինակային իրավունք, նա պետք է հրատարակվող ստեղծագործության յուրաքանչյուր օրինակի վրա տեղադրի հեղինակային իրավունքի նշանը՝ շրջանակի մեջ վերցված լատիներեն «С» տառը, իր ազգանվան և ստեղծագործության առաջին հրապարակության տարեթվի հետ մեկտեղ: Եթե ստեղծագործություններն օգտագործվում են առանց այդ նշանի, ապա դրանք կարող են ազատ օգտագործվել: Այդպես է ընդունված նաև ԱՄՆ-ում:

Հեղինակային իրավունքը պաշտպանվում է ազգային օրենքներով, իսկ միջազգային մակարդակում՝ Բեռնի կոնվենցիայով (1886 թ.) և Միջազգային կոնվենցիայով (1952 թ.):

Ի տարբերություն հեղինակային իրավունքի օբյեկտների՝ գյուտերի, արդյունաբերական սեփականության օբյեկտների պաշտպանությունն ավելի խիստ է: Որպես օրենք, արգելվում է պահպանվող օբյեկտի չվավերացված նմանակումը:

4. Ապրանքային նշանը (trademark) սահմանված կարգով գրանցված տվյալ ֆիրմայի խորհրդանիշն է, որը ծառայում է մեկ ֆիրմայի ապրանքները և ծառայությունները մեկ այլ ֆիրմայի համասեռ ապրանքներից ու ծառայություններից տարբերելու համար: Այն մտավոր սեփականության օբյեկտների շարքին է դասվում և այժմ աշխարհում տարածվածներից մեկն է: Ապրանքանիշը տառային, բառային, գրաֆիկական կամ կոմբինացված նշանակում է, որը դրվում է ապրանքի կամ փաթեթավորման վրա՝ արդյունաբե-

րական և առևտրային ընկերությունների կողմից իրենց ապրանքների անհատականացման նպատակով:

Ապրանքանիշը օգնում է պաշտպանել ապրանքը անբարեխիղճ մրցակիցների գործողություններից և խուսափել կեղծումներից, որոնք հաճախ ազդում են ֆիրմայի վարկանիշի վրա:

Նոր ապրանքանիշի ստեղծման համար բավականին մեծ գումարներ են պահանջվում, քանի որ սխալ ապրանքանիշի ընտրությունը կարող է վնաս պատճառել ընկերությանը: Օրինակ, IBM ընկերությունը փոստային ցանցով ապրանքների առաքման ոլորտում ավելի հաջող մրցակցային դիրք գրավելու համար ստեղծեց Amber ապրանքանիշը, սակայն այս նախագիծը չաշխատեց և երկու տարի անց փակվեց, որի հետևանքով IBM-ը կրեց ահռելի կորուստներ, իսկ, օրինակ, Pentium ապրանքանիշի ստեղծման համար ծախսվել է 100.000 ԱՄՆ դոլար:

5. Առևտրային գաղտնիքը կամ նոու-հաուս տեխնիկական, կազմակերպչական, առևտրային և ցանկացած այլ տիպի տեղեկություն է, որն իրական արժեք է ներկայացնում երրորդ անձանց ոչ հասուլիներու պատճառով: Այս դեպքում հենց նոու-հաուս տերն է միջոցներ ձեռնարկում՝ այն գաղտնի պահելու համար: Առևտրային գաղտնիքի իրավական պաշտպանության առանձնահատկությունն այն է, որ պետությունը ոչ թե տրամադրում է օգտագործման բացառիկ իրավունք, այլ թույլ է տալիս տեղեկության անօրինական ձեռքբերման դեպքում ստանալ պատճառված վնասի հատուցումը: Այդպիսի անօրինական մեթոդներ են արդյունաբերական լրտեսությունը, պայմանագրի պայմանների՝ չիրապարակման մասին կետերի խախտումները և այլն: Ի տարբերություն արտոնագրերի, առևտրային գաղտնիքները իրական արժեք են ներկայացնում այն դեպքում, երբ հուսալիորեն պաշտպանված են հրապարակումից:

Ամենահայտնի օրինակը Կոկա-կոլա ըմպելիքի բաղադրությունն է, որը գաղտնի է պահվում 1886 թ. սկսած: Բաղադրատոմսը հայտնի է միայն երկու պաշտոնատար անձանց, ում անունները նույնպես չեն հրապարակվում: Այն պահվում է բանկի չիրկիզվող դեպոզիտային գանձապահարանում:

Գիտատեխնիկական, արտադրական, կառավարչական, առևտրային, ֆինանսական կամ այլ տիպի գաղտնիքներն ու փորձը, որ կիրառվում է գիտահետազոտական աշխատանքների, մրցունակ ապրանքների արտադրության, իրացման և շահագործման ժամա-

նակ, պաշտպանված չեն փաստաթղթերով, և առքուվաճառքի առարկա են միջազգային առևտրային հարաբերություններում, միավորված են նոու-հաու հասկացության տակ³⁷: Նոու-հաուն կարող է լինել կոնստրուկտորական, տեխնոլոգիական, արտադրական, կառավարչական, առևտրային և ֆինանսական: Այն բացառիկ իրավունքի օբյեկտ չէ, և ցանկացած անձ ճանաչվում է որպես օրինական սեփականատեր, եթե իր միջոցներով և օրինական ճանապարհով է ձեռք բերել: Ոչինչ չի խանգարում երկու և ավելի անձանց ամբողջովին օրինական հիմունքներով օգտագործել, տնօրինել և տիրապետել միևնույն նոու-հաուն: Ի տարբերություն բացառիկ իրավունքի օբյեկտների՝ նոու-հաունին բնորոշ է պետական գրանցման, հետևաբար նաև արտադրական սեփականության նկատմամբ սեփականատիրոջ բացառիկ իրավունքը ամրագրող փաստաթղթի բացակայությունը: Նոու-հաունի բովանդակությունը որոշող միակ փաստաթուղթը պայմանագիրն է: Տեխնոլոգիաների փոխանցման ժամանակ, եթե առկա է նոու-հաու, ապա կողմերը պետք է պայմանավորվեն դրա գաղտնիքը չբացահայտելու մասին: Հակառակ դեպքում վճարվում են մեծ տուգանքներ:

5.3.4. Միջազգային առևտրում մտավոր գործունեության անմիջական արդյունքների փոխանցման ձևերը

Տեխնոլոգիաների միջազգային փոխանցման զարգացումը պայմանավորված է երկրների գիտատեխնիկական զարգացվածության մակարդակների տարբերություններով: ԳՏԱ-ի բարձր տեմպերը XX դարի երկրորդ կեսին հանգեցրին նրան, որ վերջին տասնամյակների ընթացքում միջազգային առևտրի ապրանքաշրջանառության մեջ զգալի տեղ գրավեցին տեխնոլոգիաների միջազգային փոխանակությունը: Տեխնոլոգիաների միջազգային փոխանակությունը դիտարկվում է երկու մակարդակներում³⁸:

1. Լայն իմաստով՝ որպես ցանկացած գիտատեխնիկական գիտելիքների և արտադրական հմտությունների փոխանակում երկրների միջև:

2. Նեղ իմաստով՝ որպես կոնկրետ տեխնոլոգիական գործընթացների վերարտադրությանն առնչվող գիտատեխնիկական գի-

³⁷ Տե՛ս **А. И. Елдокин**, *Международные экономические отношения*, М., 2003, т. 75:

³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 201:

տելիքների և փորձի փոխանակում:

Տեխնոլոգիաները փոխանակվում են առևտրային և ոչ առևտրային եղանակներով:

Լայն իմաստով տեխնոլոգիաների փոխանակությունը իրականացվում է ոչ առևտրային ճանապարհով: Տեխնոլոգիական այսպիսի փոխանակությունը կատարվում է հետևյալ ձևերով. գիտատեխնիկական հրապարակումներ, ցուցահանդեսների, գիտաժողովների և տոնավաճառների կազմակերպում, գիտնականների միջազգային հանդիպումներ, մասնագետների միգրացիա, ուսանողների փոխանակում և ուսուցում այլ երկրներում, միջազգային կազմակերպությունների գործունեություն, որը ուղղված է գիտության ու տեխնիկայի բնագավառում համագործակցության զարգացմանը և այլն:

Նեղ իմաստով տեխնոլոգիական փոխանակությունները կատարվում են առևտրային ճանապարհով. մեքենաների ու տարբեր արդյունաբերական ապրանքների մատակարարում, տեխնիկական օգնության ցուցաբերում, ինժինիրինգային ծառայություններ, մասնագետների պատրաստում և վերապատրաստում, կառավարման պայմանագրեր:

Տեխնոլոգիաների միջազգային փոխանցման հիմնական ձևը լիցենզիաների առևտուրն է, որն իրականացվում է լիցենզիայի համաձայնագրերի հիման վրա: («Լիցենզիա» բառը լատիներենից թարգմանաբար նշանակում է՝ *որևէ գործողություն կատարելու թույլտվություն:*)

Տեխնոլոգիաների փոխանակության առումով լիցենզիա նշանակում է որոշակի պայմաններով՝ լիցենզիայի օբյեկտի օգտագործման թույլտվություն³⁹: Առևտրային հիմքի վրա կատարվող տեխնոլոգիաների փոխանցման մեծ մասը իրականացվում է լիցենզիոն համաձայնագրերի ձևով, ըստ որի՝ լիցենզիարը՝ տեխնոլոգիայի սեփականատերը, լիցենզիատին է տրամադրում թույլատրելի առարկայի՝ արտոնագրված տեխնոլոգիայի օգտագործման իրավունքը որոշակի ժամկետով:

Միջազգային պրակտիկայում կիրառվում են լիցենզիոն համաձայնագրերի հետևյալ երեք ձևերը՝

- ա) բացառիկ,
- բ) հասարակ,

³⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 205:

գ) ամբողջական:

Բացառիկ լիցենզիայի վաճառքի դեպքում լիցենզիատին (գնորդ) տրվում է լիցենզիայի օբյեկտը օգտագործելու բացառիկ իրավունք՝ համաձայնագրում նշված պայմանների համաձայն: Լիցենզիարը (վաճառող) արդեն չի կարող նմանատիպ լիցենզիաներ տրամադրել երրորդ անձանց, սակայն կարող է ինքնուրույն օգտագործել լիցենզիայի օբյեկտը կամ լիցենզիաներ վաճառել երրորդ անձանց՝ պայմանագրում նշված կետերին չհակասելու դեպքերում: Բացառիկ լիցենզիաները առավել հաճախ են կիրառվում լիցենզիաների միջազգային առևտրում:

Հասարակ լիցենզիայի վաճառքի դեպքում լիցենզիարը պահպանում է լիցենզիայի՝ օբյեկտը ինքնուրույն օգտագործելու և երրորդ անձանց նմանատիպ լիցենզիաներ տրամադրելու իրավունքը: Հասարակ լիցենզիաները հիմնականում տրամադրվում են լայն սպառման ապրանքների արտադրության ոլորտում, որտեղ դժվար է իրականացնել արտադրանքի հստակ հաշվառում, քանի որ դրանց պահանջարկն այնքան մեծ է, որ լիցենզիաների մի քանի գնորդների՝ լիցենզիատների առկայությունը միևնույն շուկայում չի հանգեցնում վերջիններիս շահերի բախմանը:

Ամբողջական լիցենզիայի վաճառքի դեպքում լիցենզիարը պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում ամբողջապես զրկվում է լիցենզիայի օբյեկտը օգտագործելու իրավունքից: Վաճառվում են հիմնականում փոքր ընկերությունների կողմից: Փաստացի, ամբողջական լիցենզիա նշանակում է արտոնագրի վաճառք:

Տարբերում են ինքնուրույն և ուղեկցող լիցենզիաներ: Առաջինը ենթադրում է տեխնոլոգիայի փոխանցում անկախ դրա նյութական կրողից: Երկրորդը՝ կախումային բնույթ ունի և տրամադրվում է տեխնոլոգիական սարքավորումների, խորհրդատվական ծառայությունների հետ:

Տեխնոլոգիաների միջազգային փոխանցման ձևերից են.

1) արտոնագրային համաձայնագրեր. - միջազգային առևտրային գործարք է, երբ արտոնագրի սեփականատերը զիջում է տեխնոլոգիայի օգտագործման իրավունքը արտոնագրի գնորդին,

2) լիցենզիոն համաձայնագրեր. - միջազգային առևտրային գործարք է, երբ նորարարության սեփականատերը թույլատրում է մյուս կողմին որոշակի ժամանակահատվածում օգտագործել տվյալ

տեխնոլոգիան,

3) **Ֆրանչայզինգը** - գոյություն ունեն ֆրանչայզինգի բազմաթիվ սահմանումներ: Այն կարելի է ներկայացնել որպես տեխնոլոգիական փոխանցման ձև, խոշոր և մանր բիզնեսի ինտեգրման ձև, խոշոր ֆիրմայի և նրա փոքր գործընկերոջ միջև⁴⁰: Այլ կերպ ասած՝ իրավատերը թույլ է տալիս օգտագործել իր ապրանքանիշը պայմանով, որ օգտագործողը այդ անվան տակ պետք է իրացնի միայն տվյալ ֆիրմայի արտադրանքը կամ տվյալ տեխնոլոգիայով արտադրված ապրանքները՝ դրա դիմաց ստանալով մայր ֆիրմայի տեխնիկական, առևտրային, գովազդային, խորհրդատվական և այլ տիպի աջակցություն: Տարբերում են ֆրանչայզինգի հետևյալ տեսակները՝

Արտադրական: Այս դեպքում իրավատերը այլ ձեռնարկության է վաճառում որոշակի ապրանքանիշով որոշակի ապրանքի արտադրության համար անհրաժեշտ տեխնոլոգիան և հումքը: Այն տեղի ունի հիմնականում ոչ ալկոհոլային խմիչքների արտադրության ոլորտում: Օրինակ՝ «Ջովք» և «Մաագա» ընկերությունների միջև կնքված պայմանագիրը:

Ապրանքային: Օգտագործողը խոշոր ընկերությունից՝ իրավատիրոջից, գնում է համապատասխան ապրանքանիշի ապրանքների վաճառքի և սպասարկման իրավունքը: ՀՀ-ում ֆրանչայզինգի օրինակ է «Եվրոնոթորս» ընկերությունը, որը զբաղվում է BMW մեքենաների վաճառքով և սպասարկմամբ:

Գործարար: Այս դեպքում լիցենզիան ընդգրկում է՝ արտադրատնտեսական գործընթացի բոլոր փուլերը՝ սկսած հումքի և տեխնոլոգիայի ձեռք բերումից մինչև կազմակերպական աշխատանքների հաշվառման ու վարման ձևերը: Ֆրանչիզա ստացողը մեծ արդյունք կարող է ստանալ, քանի որ ձեռք է բերում կառավարչական փորձ և տեխնիկական գիտելիքներ: Իսկ իրավատիրոջ համար գործարքի այս ձևը շահավետ է, քանի որ հնարավոր է դառնում փոքր ծախսերով վերահսկել տվյալ երկրի շուկան:

4) **Ինժինիրինգը** տեխնոլոգիաների միջազգային փոխանցման ինքնուրույն ձև է, որն իրենից ներկայացնում է գործունեության տեսակների համախումբ: Այն ուղղված է տարբեր նախագծերի իրականացման հետ կապված ներդրումների օպտիմալացմանը և ծախ-

⁴⁰ Տե՛ս И.П. Фаминский, 02վ. աշխ., էջ 377:

սերի կրճատմանը: Ինժինիրինգը տեխնոլոգիական և գիտատեխնիկական մշակումների օգտագործման ծառայություն է⁴¹:

Ինժինիրինգային ծառայությունները բաժանվում են՝ երկու հիմնական խմբի՝

- ծառայություններ՝ կապված որևէ տեխնոլոգիական գործընթացի նախապատրաստման հետմիջնախագծային, նախագծային, հետնախագծային,
- ծառայություններ, որոնց նպատակն է արտադրական գործընթացի լրիվ ապահովումը և արտադրանքի իրացման կազմակերպումը:

Ինժինիրինգային ծառայություններն իրականացվում են ինժեներախորհրդատվական ֆիրմաների, արդյունաբերական և շինարարական ընկերությունների կողմից: Ռեինժինիրինգային կազմակերպությունները առևտրաարտադրական կառավարման, տնտեսական օբյեկտների վերակառուցման, դրանց մրցունակության և ֆինանսական կայունության բարձրացման ինժեներախորհրդատվական ծառայություն է:

Տեխնոլոգիաների միջազգային փոխանցումը նպաստում է ֆիրմաների մրցունակության բարձրացմանը ազգային և համաշխարհային շուկաներում: Լիցենզիոն առևտուրը համարվում է տեխնոլոգիաների միջազգային փոխանցման հիմնական ձևը: Լիցենզիաները վաճառվում են լիցենզիոն համաձայնագրերի հիմքի վրա, որոնց վաճառքը թույլ է տալիս արագացնել նոր շուկաների յուրացումը և մասամբ փոխհատուցել սեփական ծախսերը, որոնք կատարվել են հետազոտությունների և մշակումների հիման վրա:

Լիցենզիոն առևտրի ձևերն են՝

1. *Արտոնագրային լիցենզիան* փաստաթուղթ է, որի դեպքում արտոնագրի սեփականատերը գնորդին է փոխանցում արտոնագրից օգտվելու իրավունքը՝ առանց նոու-հաուլի:

2. *Ոչ արտոնագրային լիցենզիան* փաստաթուղթ է, որով լիցենզիատը նոու-հաուլից օգտվելու իրավունք է ստանում՝ առանց հայտնագործության արտոնագրի:

3. *Ոչ բացառիկ լիցենզիան* փաստաթուղթ է, որի դեպքում լիցենզիարը վաճառում է արտոնագրից օգտվելու իրավունքը՝ պահպանելով տվյալ տարածքում այլ լիցենզիատներին վաճառելու իրա-

⁴¹ Նույն տեղում, էջ 379:

վունքը:

4. *Բացառիկ լիցենզիան* փաստաթուղթ է, որի դեպքում լիցենզիատը ստանում է արտոնագրված տեխնոլոգիայից օգտվելու մենաշնորհային իրավունք, իսկ լիցենզիարը զրկվում է տվյալ տարածքում և՛ արտոնագրված տեխնոլոգիան, և՛ նոու-հաուն այլ լիցենզիատներին վաճառելու իրավունքից:

5. *Լրիվ լիցենզիան* փաստաթուղթ է, որի դեպքում լիցենզիատը որոշակի ժամանակահատվածում ստանում է տվյալ արտոնագրի կամ նոու-հաուի օգտագործման մենաշնորհային իրավունք և նախատեսում է նաև այդ նույն ժամանակահատվածում լիցենզիարի արտոնագրից հրաժարում:

Լիցենզիաների վաճառքը ենթադրում է դրանց դիմաց վճարումների ստացում: Լիցենզիոն վճարը փոխահատուցում է լիցենզիարին լիցենզիատի կողմից համաձայնագրի առարկայի օգտագործման դիմաց⁴²:

Լիցենզիոն վճարումներն են.

- *Ռոյալթի*. - լիցենզիարի շահույթից պարբերաբար կատարվող մասհանումներն են համաձայնագրի կիրառման ժամանակահատվածում՝ կախված ստացվող շահույթի չափից: Ռոյալթին հիմնականում լինում է ֆիքսված (ամրագրված) դրույքների ձևով և կազմում է շահույթի ծավալի 3-5%-ը:

- *Պաուշալային վճար*. - կայուն ֆիքսված գումար է, որը սահմանվում է փորձագետների գնահատմամբ տեխնոլոգիաների օգտագործման դիմաց: Վճարման այս ձևը կիրառվում է սարքավորումների համալիր մատակարարումների ժամանակ, երբ տեխնոլոգիաների արժեքը մտնում է սարքավորումների արժեքի մեջ:

- *Մասնակցություն շահույթին*. -լիցենզիարի օգտին լիցենզիատի ստացած շահույթի որոշակի մասի փոխանցում՝ սովորաբար 30%-ի չափով, եթե լիցենզիան բացառիկ է, և 10%-ի չափով, եթե լիցենզիան ոչ բացառիկ է:

- *Մասնակցություն սեփականությանը*. - լիցենզիատի կողմից ձեռնարկության բաժնետոմսերի մի մասի փոխանցում լիցենզիարի օգտին՝ տրված լիցենզիայի օգտագործման դիմաց: Առավել բնորոշ է ՎԱԿ-երին, որոնք ձգտում են վերահսկել իրենց տեխնոլոգիան կիրառող օտարերկրյա ֆիրմաներին:

⁴² Տե՛ս Ա.Պ. Կ, *բես*, նշվ. աշխ., էջ 351.

5.3.5. Տեխնոլոգիաների փոխանցման միջպետական և պետական կարգավորումը

Արտադրական, ձեռնարկատիրական, արտաքին տնտեսական գործունեությունն անհնար է հաջողությամբ իրականացնել՝ առանց մտավոր սեփականության պաշտպանության և օգտագործման խնդիրների լուծման: Այդ պատճառով ստեղծվել են մի շարք տարածաշրջանային և համաշխարհային կազմակերպություններ, որոնք կարգավորում են մտավոր գործունեության արդյունքների պաշտպանությունը, իրականացնում նորագույն տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվության հավաքումն ու տարածումը, աջակցում տեխնոլոգիաների փոխանցման գործընթացի պարզեցմանը:

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (ՄՄՀԿ) ստեղծվել է 1970 թ.՝ 1967 թ. Ստոկհոլմում կնքված մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին կոնվենցիայի իրականացման արդյունքում: Այն ՄԱԿ-ի մասնագիտացված կառույց է, նստավայրը՝ ժնև: ՄՄՀԿ-ն սկզբնավորվել է Փարիզյան կոնվենցիայի ընդունումով (1883 թ.) և գրականության ու արվեստի ստեղծագործությունների պաշտպանության Բեռնի կոնվենցիայով (1886 թ.):

ՄՄՀԿ-ն իրականացնում է հետևյալ գործառույթները.

- աջակցում է զարգացող երկրներում մտավոր ստեղծագործական գործունեությունների, տեխնոլոգիաների փոխանակության պարզեցմանը՝ կապված արդյունաբերական սեփականության հետ, որը նպատակ ունի արագացնել տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը՝ հաշվի առնելով մյուս հաստատությունների և մարմինների իրավասությունները, որոնք մտնում են ՄԱԿ-ի կազմի մեջ;

- աջակցում է նոր միջազգային պայմանագրերի կնքմանը, ազգային օրենսդրությունների միասնականացմանը, իրավական և տեխնիկական աջակցության ցուցաբերմանը զարգացող երկրներին:

ՄՄՀԿ-ի անդամ կարող են լինել Փարիզյան և Բեռնյան միության անդամները, ինչպես նաև ՄԱԿ-ի և նրա մասնագիտացած կազմակերպության ցանկացած անդամ: ԴՅ-ն ևս անդամակցում է ՄՄՀԿ-ին:

5.3.6. Հայաստանի Հանրապետության մասնակցությունը տեխնոլոգիաների համաշխարհային շուկային

1992 թ. իունվարին կազմավորվել է Հայաստանի Հանրապետության արտոնագրային վարչությունը՝ Հայարտոնագիրը (ներկայումս՝ Մտավոր սեփականության գործակալություն), որն անմիջապես ձեռնամուխ եղավ արդյունաբերական սեփականության օբյեկտների պաշտպանությունն ապահովող ազգային օրենսդրական դաշտի ձևավորման աշխատանքներին: 2002 թ. մարտին ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և առևտրի նախարարության համակարգի բարեփոխումների և միջառք պետական մարմինների վերակազմակերպման մասին» թիվ 197 որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր արտոնագրային վարչությունն ու հեղինակային իրավունքների ազգային գործակալությունը միացան և վերակազմավորվեցին ՀՀ արդյունաբերության և առևտրի նախարարության առանձնացված ստորաբաժանման կարգավիճակ ունեցող Մտավոր սեփականության գործակալության: Վերջինիս հիմնական խնդիրները հայտերի ընդունումն ու քննարկումն են, ԱՍ օբյեկտների գրանցումը, միջազգային համագործակցության իրականացումը, գերատեսչության աշխատանքների համակարգումը և նոր տեխնոլոգիաների ներդրումը: «Արտոնագրերի մասին» ՀՀ նոր օրենքով (2004) կարգավորվում է գյուտերի, օգտակար սարքերի, արդյունաբերական նմուշների ստեղծման, իրավական պաշտպանման և օգտագործման հետ կապված գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունները: Սույն օրենքին համապատասխան՝ ՀՀ մտավոր սեփականության գործակալությունն ընդունում է ԱՍ օբյեկտների հայտեր, անցկացնում փորձաքննություն, տալիս է արտոնագրեր, իրականացնում արտոնագրերի պահպանությունը և այլ գործունեություն:

2004 թ. Հայաստանի Հանրապետությունը միացավ վեց միջազգային պայմանագրերի՝ Արտոնագրային գործընթացի նպատակով միկրոօրգանիզմների ավանդադրման միջազգային ճանաչման մասին Բուդապեշտի պայմանագրին, Նշանների գրացման համար ապրանքների ու ծառայությունների միջազգային դասակարգման Նիցցայի համաձայնագրին, Միջազգային արտոնագրային դասակարգման մասին Ստրասբուրգյան համաձայնագրին, Նշանների

պատկերային տարրերի միջազգային դասակարգումը հիմնադրող Վիեննայի համաձայնագրերին, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության հեղինակային իրավունքի պայմանագրին և Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կատարումների ու հնչյունագրերի պայմանագրին: ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը տրամադրում է 3 տիպի արտոնագրեր. գյուտի արտոնագիր՝ 20 կամ 10 տարի, արդյունաբերական նմուշի արտոնագիր՝ 15 տարի, օգտակար մոդելի արտոնագիր՝ 10 տարի ժամկետներով: Չնայած բազմաթիվ համաձայնագրերին ու կոնվենցիաներին, մտավոր սեփականության պաշտպանության հիմքն է ՏՐԻՊՍ-ը՝ Մտավոր սեփականության իրավունքների առևտրային ասպեկտների վերաբերյալ համաձայնագիրը, որն ընդունվել է Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում և ուժի մեջ է մտել 1995 թ. հունվարի 1-ից: Համաձայնագիրը կարգավորում է իրավունքների լայն շրջան, հեղինակային իրավունքներ, ապրանքային նշաններ, աշխարհագրական անվանումներ, արտադրական նմուշներ, արտոնագրեր, ինտեգրալ աղյուսակների տեխնոլոգիաներ, առևտրային գաղտնիքներ:

Տեխնոլոգիաների միջազգային փոխանցման պետական կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից առավել կարևորներն են՝

- *Տեխնոլոգիական առաջատարությունը պահպանելու ձգտումը:* Առաջատար երկրները տեխնոլոգիատար ապրանքների արտադրության գծով մյուսների նկատմամբ ունեն հարաբերական առավելություններ: Սակայն երկրները ստիպված են հսկայական ծախսեր կատարել դրանց պահպանման համար: Եվ այն երկրները, որոնք չեն ձգտում տեխնոլոգիական առաջատարության, կարող են ուղղակի կրկնօրինակել կամ ձեռք բերել պատրաստի տեխնոլոգիա:

- *Ազգային անվտանգության ապահովումը:* Պետական վերահսկողությունը հիմնականում ուղղված է ռազմական և երկակի նշանակության տեխնոլոգիաների՝ թշնամական քաղաքականություն վարող երկրներ չթափանցելուն:

- *Միջազգային համաձայնագրերի պայմանները:* Բազմակողմ համաձայնագրերի իրականացման նպատակով անդամ-երկրները պետական վերահսկողություն են իրականացնում այն՝ տեխնոլոգիաների վաճառքի նկատմամբ, որոնք կարող են օգտագործվել

քիմիական, բակտերիոլոգիական և հրթիռային զենքերի ստեղծման համար⁴³։

Տեխնոլոգիաների ներմուծման և արտահանման ուղղակի պետական կարգավորումը իրականացվում է արտահանման վերահսկողության մարմինների կողմից՝ մաքսային մեթոդներով։ Տեխնոլոգիաների փոխանցման անուղղակի կարգավորումը երկրների մեծ մասում իրականացվում է արտոնագրերի և առևտրային նշանների պետական գրանցման համակարգի միջոցով։ Որոշ դեպքերում այս կամ այն տեխնոլոգիատար ապրանքը արտահանելու համար պահանջվում է կառավարության հատուկ թույլտվություն։ Ընդունող երկրներն առավել հաճախ տեխնոլոգիաների ներմուծումը կարգավորում են միայն օրինականության և իրավակարգի պահպանման անհրաժեշտությունից ելնելով՝ արգելելով միայն հասարակության համար վտանգավոր տեխնոլոգիաների ներմուծումը։ Յուրաքանչյուր երկիր ձգտում է առաջադիմական տեխնոլոգիաները պահպանել զզգային տնտեսության սահմաններում՝ դրանց արտահանման արգելքների ու սահմանափակումների միջոցով։

Հայաստանում շուկայական հարաբերությունների զարգացումը կախված է տնտեսական շրջանառության մեջ մտավոր սեփականության, մասնավորապես՝ արդյունաբերական սեփականության օբյեկտների ներգրավման աճից։ Ժամանակակից պայմաններում նորագույն տեխնոլոգիայի յուրացումը թույլ կտա լուծել արտադրության տեխնիկա-տեխնոլոգիական հիմքերի նորացման և զանգվածային գործազրկության հաղթահարման խնդիրները։ Այս ոլորտի զարգացման համար շահագրգիռ են նաև միջազգային ֆինանսական կառույցները, մասնավորապես ՀԲ-ն պատրաստ է միջոցներ տրամադրել Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) զարգացման համար։ Հայաստանի տնտեսության զարգացման գլխավոր նախապայմաններից մեկը ժամանակակից տեխնոլոգիաների հենքի վրա վերարտադրական ողջ համալիրի հետևողական արդիականացումն է։ Քիչ թե շատ տևական հեռանկարում, առանց այդ խնդրի լուծման, փոքր տարածք, սակավ բնական պաշարներ ու էներգակիրներ ունեցող երկրի համար զարգացման նման տարբերակը այլընտրանք չունի, քանզի առանց արդիական տեխնոլոգիաների անհնար կլինի դիմանալ տարածաշրջանային

⁴³ St'u H.Փ. Чесотарев, Мировая экономика: учебник. М., 2007, էջ 97:

ուժեղ մրցակցությանը և բնակչության համար արդի քաղաքակա-
նության ձեռք բերումներին համահունչ կենսամակարդակ ապահո-
վել: Կառավարության գործունեության ծրագրում գիտատար և
բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված ոլորտը սահմանվել է որ-
պես նախընտրելի գերակայություն⁴⁴:

Քանի որ տեխնոլոգիաների ծագումն ու դրանց տարածական
ընդարձակումը ազգային սահմաններ չի ճանաչում, այդ պատճա-
ռով էլ ազգային ընկերությունների համար առավել բարենպաստ
կլիմի ինտեգրվել առաջատար վերազգային ընկերություններին:

Ներկա պայմաններում որոշակի նախադրյալներ կան տնտեսու-
թյան բարձր տեխնոլոգիական հատվածը վերականգնելու և մի-
ջազգային շուկա ներթափանցելու համար: Կարելի է հիմնվել այն
փաստի վրա, որ ՀՀ-ն դեռևս տնօրինում է բարձրակարգ գիտահե-
տազոտական ներուժի և ժամանակակից տեխնոլոգիաները յու-
րացնելու կարողությունների: Հատկապես հեռանկարային կարող
են լինել լազերային, միկրո- և ռադիոէլեկտրոնային, կենսաբանա-
կան տեխնոլոգիաները, որոնց ենթակառույցները Հայաստանում
ստեղծված են: ՀՀ-ում բարձր տեխնոլոգիական արտադրություննե-
րի մեջ հեռանկարային է միկրոէլեկտրոնային սխեմաների ար-
տադրության զարգացումը, որտեղ որոշակի ներդրումների ար-
դյունքում հնարավոր է մոտ ապագայում դուրս գալ միջազգային
շուկաներ:

Բավականին լուրջ նախադրյալներ կան տեղեկատվական տեխ-
նոլոգիաների զարգացման համար: Հայաստանում ներկայումս
գործող տեղեկատվական տեխնոլոգիաներին առնչվող ընկերու-
թյունների ծառայություններն ընդգրկում են այդ բնագավառը ներ-
կայացնող շուկայի գրեթե բոլոր հատվածները (համակարգչային
ցանցերի ծրագրային ապահովման միջոցների ստեղծում, համա-
կարգչային կառուցվածքի ծրագրավորում և այլն):

Ինչպես մշում է ակադեմիկոս Վլ. Խոջաբեկյանը, գիտությունը
գիտատեխնիկական առաջընթացի կարևորագույն շարժիչ ուժն է,
որն արտադրական ոլորտը ապահովում է տեխնոլոգիական նո-
րագույն մշակումներով⁴⁵:

⁴⁴ Տե՛ս «Տեղեկատվական տեխնոլոգիաները՝ Հայաստանում գերակա ճյուղ», թիվ 2,
2002, էջ 3:

⁴⁵ Տե՛ս В.Е. Холжавекян, “Общество и экономика”, N5-6, Е., 2004, էջ 51:

Հայաստանում բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացման օրինակ է մեքենայական գործընթացների արդյունաբերական դիզայնի և ծրագրային կառավարման սարքերի մշակման ու ներդրման «Վիասֆեր տեխնոլոգի» ՓԲԸ-ն: Այստեղ մշակված «Տեխնոլոգիական ինովացիոն (ներդրման) կենտրոնի» ստեղծման ծրագրով նախատեսվում է 93 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրում, որի իրագործմամբ այնտեղ է հիմնվի տեխնոլոգիական ինկուբատոր, որն իր բուն խնդիրներից զատ իրականացնելու է կադրերի ուսուցման և խորհրդատվական ու մարքեթինգային ծառայությունների գործառույթներ⁴⁶:

2000 թվականին ՏՏ արդյունաբերությունը ՀՀ կառավարության կողմից հայտարարվեց տնտեսության զարգացման զերակա ճյուղերից մեկը, և աջակցություն ցուցաբերվեց ՏՏ գլխավոր ռազմավարության մշակմանը, որը ձեռնարկվեց 2001 թ. փետրվարին՝ աշխատանքներում ներգրավելով հանրապետության պետական, մասնավոր և հասարակական ոլորտների ներկայացուցիչներին, միջազգային կազմակերպություններին՝ ներառյալ Համաշխարհային բանկը և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը: Ռազմավարական ծրագիրը վերջնական տեսքի է բերվել 2001 թ. մայիսին և ընթացքի մեջ է նույն թվականի հուլիսից: 2001 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվեց նաև ՀՀ տեղեկատվական (ինֆորմացիոն) տեխնոլոգիաների արդյունաբերության զարգացման հայեցակարգը:

Ոլորտի ընկերությունները գործում են ԱՄՆ-ի, եվրոպական և ռուսական կապիտալների ներգրավմամբ (համապատասխանաբար 70%, 15%, 15%)⁴⁷: ՏՀՏ ոլորտում գործող մեկ մասնագետի հաշվով միջին տարեկան արտադրողականությունը արտերկրների ընկերությունների մայր ձեռնարկություններում կազմում է 100 000, իսկ որոշ ընկերություններում՝ 160 000 ԱՄՆ դոլար: Այս գումարի մոտ 20 000 ԱՄՆ դոլարն է միայն մնում՝ հանրապետությունում՝ աշխատավարձերի, սոցիալական վճարումների և այլ ծախսերի տեսքով: ՏՏ արդյունաբերության ընդհանուր տարեկան եկամուտը

⁴⁶ Տե՛ս Վ. Լ. Կիրակոսյան, Համաշխարհային տնտեսությանը ՀՀ ինտեգրման ուղիները, Եր., 2007, էջ 96:

⁴⁷ Ա.Յ. Վարդանյան, Ա.Ս. Գրիգորյան, ՀՀ տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման հիմնախնդիրները արդի փուլում, Եր., 2004, էջ 531:

կազմում է 50 մլն ԱՄՆ դոլար՝ նվազագույնը 20% տարեկան աճով⁴⁸։

SS արդյունաբերության զարգացումը կարող է եռակի դեր խաղալ Հայաստանի տնտեսական զարգացման մեջ, նախ՝ որպես արդյունաբերության հեռանկարային ճյուղ, երկրորդ՝ որպես անհրաժեշտ արտադրական արդիական հենք այլ ճյուղերի զարգացման համար, և երրորդ՝ որպես ենթակառուցվածք ներդրումների ներգրավման համար։

Այսօր Հայաստանում գործում են տեղեկատվական տեխնոլոգիաներով զբաղվող ավելի քան 280 ընկերություններ, որոնցից շուրջ 50-ը թողարկում է ծրագրային ապահովման մեխանիզմներ շուկայի համար։ Այս ընկերություններից 15-ը արտերկրների ընկերությունների մասնաճյուղեր են, որոնք ապահովված են իրացման շուկաներով։ Հայկական ընկերությունների մի մասը, բացի ծրագրավորման աշխատանքներից, զբաղվում է նաև համակարգչային սարքավորումների աջբուլանդաջով, ինչպես նաև ինտերնետային կապի տրամադրմամբ և այդօրինակ այլ ծառայությունների մատուցմամբ։

Սկսած 1998 թվականից՝ ըստ անկախ դիտորդների ուսումնասիրությունների ու գնահատումների՝ Հայաստանը զգալի ներուժ ունի՝ զարգացնելու իր ներկայությունը աշխարհի տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունաբերությունում⁴⁹։

ՀՀ-ում SS և այլ ճյուղերի միջև կոոպերացիան համեմատաբար մեծ չափերով կիրառվում է միայն ֆինանսական և բանկային ոլորտներում։ Գոյություն ունեն բազմաթիվ հայկական ընկերություններ, որոնք ընդգրկված են այս գործում, սակայն առաջատարը Հայկական ծրագրերի ընկերությունն է։ Սա մեր շուկայում գործող առաջին ընկերությունն է, որն ապաստարկում է առևտրային բանկերի մեծ մասին (16 բանկ), ինչպես նաև բազմաթիվ այլ ընկերություններին, որոնցից են՝ Արմենթելը, Երևանի կոնյակի ու զարեջրի գործարանները, Coca-Cola-ն, Չանգեզուրի և Ագարակի պղնձամուլիբդենային գործարանները և այլն։ Ընկերությունը հիմնվել է 1987 թ., տարեկան դրամաշրջանառությունը կազմում է մոտ 300.000 ԱՄՆ դոլար, 99%-ով աշխատում է ներքին շուկայում։ Այստեղ աշխատում են բարձր որակավորում ունեցող 45 ծրագրավորողներ։ Բանկային

⁴⁸ Տե՛ս նույն տեղը։

⁴⁹ Վ.Լ. Կիրակոսյան, նշվ. աշխ., էջ 97։

համակարգը սպասարկում են մասն հետևյալ ընկերությունները՝ L-Soft, Link, FV&G և Խաղիսխ-Պրո:

Պաշտոնական տվյալներով SS բնագավառում այսօր 33-ում զբաղված են բարձրորակ ավելի քան 2.500 ծրագրավորողներ: Բացի այդ, Հայաստանում կան համակարգչային ծրագրավորման և 15.000-20.000 մասնագետներ, որոնք 5-6 ամիս վերապատրաստվելու դեպքում կարող են միջազգային չափանիշներին համապատասխանող ծրագրեր պատրաստել:

Հայաստանում SS զարգացման գործընթացը խթանում են մասն միջազգային կազմակերպություններն ու օտարերկրյա մասնավոր ֆիրմաները: Օրինակ, ամերիկյան խոշոր Leda Systems ընկերության հայաստանյան մասնաճյուղը Երևանի պետական ճարտարագիտական համալսարանում բացել է իր բազային միջոցապարտամենտային ամբիոնը, որտեղ պատրաստված տեղեկատվական և ծրագրավորման բնագավառի երիտասարդ մասնագետները կաշխատեն նույն ընկերության ստորաբաժանումներում:

Տնտեսության նորագույն մոդելների գերակշիռ մասում նշվում է, որ երկրի տնտեսական աճի և զարգացման կարևորագույն գրավականն են դարձել 3 T-ները՝ Technology (տեխնոլոգիա), Talant (տաղանդ) և Tolerance (հանդուրժողականություն):

Մեր երկրի գիտության և բարձր տեխնոլոգիաների զարգացման կարևորագույն գրավականը մտավոր ներուժն է: Գիտական հայտնագործություններն ու նորարարական առաջարկները դարձել են երկրի տնտեսական զարգացման շարժիչ ուժ և ապահովում են նրա ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը:

Գրականություն

1. Ա. Սարկոսյան, Դ. Հախաբուրջյան, Գ. Նազարյան, Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, գլուխ 9.3, Եր., 2002, էջ 161:
2. Վ.Լ. Կիրակոսյան, Համաշխարհային տնտեսությանը ՀՀ ինտեգրման ուղիները, գլուխ 3, Եր. 2007, էջ 85:
3. Е.Ф. Авдокушин, Международные экономические отношения, гл. 9, М., 2004, стр. 200:
4. И.П. Гурова, Мировая экономика, гл. 9, М., 2007, стр. 177.
5. А.И. Евдокимов, Международные экономические отношения, гл. 4, М., 2003, стр. 75.
6. А.А. Киреев, Международная экономика, ч.1, гл. 11, М., 1999, стр. 341.
7. И.В. Малкова, Мировая экономика, раздел 4, гл. 1, М., 2005, стр. 186.
8. И.П. Фаминский, Международные экономические отношения, гл. 10, стр. 359.
9. Е.Ф. Чеботарев, Мировая экономика, гл. 8.4, М., 2007, стр. 97.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**6.1. Արժուքային հարաբերությունների էությունը
և դերը միջազգային տնտեսական հարաբերությունների
համակարգում**

Երկրների միջև տնտեսական հարաբերությունների զարգացումը, արտադրական, գիտատեխնիկական համագործակցության խորացումը ծնում են դրանց սպասարկման միասնական միջոցի ձևավորման անհրաժեշտություն, ինչն էլ, իր հերթին, հանգեցնում է երկրների միջև արժուքային հարաբերություններին: Արժուքային հարաբերությունները առանձին երկրների տնտեսավարող կազմակերպությունների միջև վճարահաշվարկային գործառնությունների իրականացման առնչությամբ ձևավորված հարաբերություններ են, որոնց կարգավորումն իրականացվում է արժուքային համակարգի ձևավորման ճանապարհով:

Միջազգային տնտեսական հարաբերությունների առավել շարժունակ ձևերից մեկը միջազգային արժուքային հարաբերություններն են, որոնք ծագել են համաշխարհային տնտեսական բազմաբնույթ կապերի սպասարկման նպատակով փողն օգտագործելու ժամանակ: Միջազգային արժուքային հարաբերությունները հասարակական հարաբերությունների համակարգ են, որոնք ձևավորվել են համաշխարհային շուկայում արտարժույթի գործունեության շնորհիվ: Արժուքային հարաբերությունների առանձին տարրեր հանդես են եկել դեռևս անտիկ աշխարհում՝ մուրհակների և դրամափոխության ձևով:

Միջազգային արժուքային հարաբերությունների զարգացումը պայմանավորված է արտադրողական ուժերի զարգացմամբ, համաշխարհային շուկայի ստեղծմամբ, աշխատանքի միջազգային բաժանման խորացմամբ, տնտեսական կապերի միջազգայնացմամբ և այլն:

Արժուքային հարաբերությունների հետ կապված հիմնախնդիր-

ների բացահայտման համար խիստ կարևորվում են արժույթ (արտարժույթ), ինչպես նաև արժութային համակարգ, արժութային շուկաներ և արժութային քաղաքականություն հասկացությունների ու դրանց փոխադարձ կապի տնտեսագիտական բովանդակության համակողմանի բացահայտումը:

Միջազգային արժութային հարաբերությունները միջնորդավորվում են միջազգային տնտեսական հարաբերություններով, որոնք վերաբերում են արտադրության, բաշխման, փոխանակման, սպառման գործընթացներին՝ միջազգային մակարդակում: Արժութային հարաբերությունների և վերարտադրության միջև, փաստորեն, առկա է ուղիղ և հակադարձ կապ: Արժութային հարաբերությունների համար օբյեկտիվ հիմքը հասարակական վերարտադրության գործընթացն է, որն առաջացնում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի միջազգային շարժ: Չնայած միջազգային վերարտադրության համեմատ արժութային հարաբերությունները երկրորդային են, վերջիններս բավականին անկախ են և ունեն հակադարձ ազդեցություն: Միջազգային արժութային հարաբերությունները մեծ ազդեցություն ունեն վերարտադրության գործընթացների վրա, հատկապես տնտեսական ինտեգրման խորացման և գլոբալացման պայմաններում:

6.2. Ազգային և համաշխարհային արժութային համակարգերը. դրանց տարրերը

Արժութային համակարգը կարելի է սահմանել որպես արժութաֆինանսական հարաբերությունների կազմակերպման ձև, որն ամրագրված է ազգային օրենսդրությամբ և միջպետական համաձայնագրերով: Վերջինիս դեպքում արդեն գործ ունենք համաշխարհային արժութային համակարգի հետ:

Արժութային համակարգը կարելի է ներկայացնել տնտեսական և կազմակերպաիրավական տեսանկյունից: Տնտեսական տեսանկյունից արժութային համակարգը արժութատնտեսական հարաբերությունների ամբողջությունն է, որը ձևավորվել է տնտեսական կապերի միջազգայնացման արդյունքում: Կազմակերպաիրավական տեսանկյունից արժութային համակարգը արժութային հարաբերությունների կազմակերպման պատմաիրավական ձև է, որն ամրա-

գրված է ազգային օրենսդրությամբ՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան:

Արժութային համակարգն իր զարգացման ընթացքում ձևավորել է հետևյալ մակարդակները՝ ազգային, տարածաշրջանային, համաշխարհային:

Ազգային արժութային համակարգ: Պատմականորեն սկզբում ձևավորվել է ազգային արժութային համակարգը: Այն կազմում է տվյալ պետության դրամական համակարգի բաղկացուցիչ մասը (չնայած համեմատաբար ինքնուրույն է և դուրս է գալիս ազգային տնտեսության սահմաններից), որի շրջանակներում օգտագործվում են արժութային պաշարները, և իրականացվում է միջազգային վճարային շրջանառությունը: Ազգային արժութային համակարգի տարրերն են՝

- ազգային արժութային միավորը,
- ազգային արժութի փոխարժեքի ռեժիմը,
- ազգային արժութի գնողունակության պարիտետը (հավասարաիրավությունը),
- ազգային արժութի փոխարկելիության պայմանները (աստիճանը),
- արժութային շուկայի և ոսկու շուկայի կարգավորման ռեժիմները,
- երկրի միջազգային հաշվարկների կարգավորումը,
- միջազգային արժութային իրացվելիության ազգային կարգավորումը,
- միջազգային վարկային շրջանառության միջոցների օգտագործման ազգային կարգավորումը,
- ազգային այն կազմակերպությունները, որոնք կարգավորում են տվյալ երկրի արժութային հարաբերությունները:

Ազգային արժութային համակարգը ամրագրվում է ազգային օրենսդրությամբ՝ հաշվի առնելով նաև միջազգային իրավունքի համապատասխան նորմերը: Այս համակարգի առանձնահատկությունները պայմանավորված են տվյալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացածության մակարդակով, ներտնտեսական կապերի բնույթով և այլն:

Ազգային արժութային համակարգը հետապնդում է արժութային պաշարները հավաքագրելու և կառավարելու, երկրի առևտրատնտեսական կապերը միջնորդավորելու, այլ երկրների հետ վճար-

րահաշվարկային գործառնություններ իրականացնելու նպատակներ:

Տարածաշրջանային արժուքային համակարգը առանձին տարածաշրջանի երկրների միջև միջպետական համաձայնագրերի հիման վրա իրականացվող արժուքային հարաբերություններն են, որոնք կարգավորվում և կառավարվում են միջպետական համապատասխան կազմակերպությունների կողմից: Տարածաշրջանային արժուքային համակարգի դասական օրինակ է Եվրոպական արժուքային համակարգը:

Համաշխարհային արժուքային համակարգը կոչված է կարգավորելու միջազգային արժուքային հարաբերությունների համակարգը, որը հիմնվում է մասնակից երկրների ազգային արժուքային համակարգերի վրա և պայմանավորված է համաշխարհային շուկայի իրավիճակով, զարգացման միտումներով: Այս համակարգի տարրերն են՝

- միջազգային արժուքային միջոցները (միջազգային պահուստային միջոցները՝ ոսկին, SDR-ը, Եվրոն, ԱՄՆ դոլարը, իենը, ֆունտը և մյուս ազատ փոխարկելի արժույթները),
- արժույթների փոխարժեքների ռեժիմների կարգավորումը,
- միջազգային հաշվարկների հիմնական ձևերի միասնականացումը,
- արժույթների փոխադարձ փոխարկելիության պայմանները,
- արժուքային սահմանափակումների բազմակողմ կարգավորումը,
- միջազգային արժուքային իրացվելիության բազմակողմ կարգավորումը,
- միջազգային վարկային շրջանառության միջոցների օգտագործման կանոնների միասնականացումը,
- համաշխարհային արժուքային և ոսկու շուկաների կարգավորման ռեժիմները,
- համաշխարհային արժուքային հարաբերությունները կարգավորող միջազգային կազմակերպությունները:

6.3. Համաշխարհային արժուրթային համակարգի էվոլյուցիան

Համաշխարհային արժուրթային համակարգի ձևավորումը արդյունաբերական հեղաշրջման և համաշխարհային տնտեսական համակարգի ձևավորման արդյունք է: Այն իր զարգացման ընթացքում անցել է երեք փուլ:

Ոսկե ստանդարտ (1879-1934): Այս փուլին բնորոշ էր ոսկյա դրամների ազատ հատումը և դրանց շրջանառությունը, նաև թղթադրամների ազատ փոխարկումը ոսկե ձուլածոներով ու ոսկեդրամներով: Թուլլատրվում էր ոսկու ազատ տեղաշարժը: Ներքին դրամաշրջանառությունն ապահովելու համար անհրաժեշտ փողի քանակը որոշվում էր ոսկու պաշարների հիման վրա: Ոսկու գինը ֆիքսված (ամրագրված) էր և կարող էր տատանվել $+ -1$ տոկոս պարիտետի (հավասարաիրավության) շրջանակներում: Փաստորեն, շրջանառության մեջ գտնվող դրամն ապահովված էր ոսկով, ուստի վճարային հաշվեկշիռը կարգավորվում էր ինքնաբերաբար:

Այդ համակարգի առավելությունները փողի շրջանառության կայունացման իրավիճակն էր, գնաճի բացառումը, իսկ թերությունները՝ տվյալ երկրի տնտեսության խիստ կախվածությունը համաշխարհայինից, ինչպես նաև ներքին տնտեսական քաղաքականության ազատ ընտրության բացակայությունը: Համակարգի նշված բնութագրիչները հանգեցնում են հետևյալին՝ հնարավոր չէ՞ արդյոք պահպանելով դրա դրական կողմերը, վերացնել բացասականը: Այս հարցի պատասխանը փորձեց տալ ոսկե-դևիդային արժուրթային համակարգը:

Ոսկե-դևիդային (բրետոն-վուդսյան) համակարգ (1944-1971թթ.): Արժուրթային այս համակարգի դեպքում (ստացել է այս անունը, որովհետև համաշխարհային փողի դեր էր կատարում ոսկուն հավասարեցված ԱՄՆ դոլարը) ևս պահպանվեց ներքին տնտեսական քաղաքականության կախվածությունը վճարային հաշվեկշռի իրավիճակից:

Այս համակարգի հիմքում նույնպես ընկած էր ոսկին: Միակ արժուրթը, որն ուղղակիորեն ուներ ոսկու պարունակություն, ԱՄՆ դոլարն էր: Մյուս արժուրթները նախ՝ համեմատվում էին դոլարի հետ, ապա նոր դրա միջոցով՝ ոսկու: ԱՄՆ-ի դաշնային պահուստային համակարգը մյուս պետությունների կենտրոնական բանկերից

գնում կամ դրանց վաճառում էր ոսկի՝ ամրագրված (ֆիքսված) գնով (35\$ = 1 ունցիա ոսկի):

Արժութային փոխարժեքը կարելի էր կայունացնել՝ օգտագործելով ոսկի կամ ԱՄՅ-ի վարկերը, իսկ վճարային հաշվեկշռի վիճակը կարելի էր բարելավել ազգային արժույթի փոխարժեքի փոփոխության հաշվին: Դա համակարգի կարևոր առավելություններից մեկն էր, թերևս ամենակարևորը, որը բացառվում էր ոսկե ստանդարտի համակարգում: Բրետոն-վուդսյան համակարգը հնարավորություն էր տալիս պետությանը ինքնուրույն փոփոխելու ազգային արժութային փոխարժեքը՝ պարիտետի 10%-ի շրջանակներում: Եթե փոխարժեքը պետք է փոփոխվեր 10%-ից ավելի, ապա միայն ԱՄՅ-ի համաձայնությամբ: 1970-ական թվականներին այս համակարգն արդեն իսկ կանգնած էր փլուզման եզրին: Ֆիքսված փոխարժեքների առկայությունը ԱՄՅ-ի անդամ-երկրներից պահանջում էր վարել միանման տնտեսական և արժութային քաղաքականություն, ինչը դարձել էր անհնար և անիրական: Համակարգի փլուզման երկրորդ հիմնական պատճառն այն էր, որ ԱՄՅ-ի անդամ-երկրներում գնաճի տեմպերը տարբեր էին: Երրորդ պատճառն այն էր, որ ոսկու համաշխարհային առաջարկը բավարար չէր Բրետոն-վուդսյան համակարգի գործառույթների իրականացման համար:

Համակարգի փլուզմանը նպաստեց նաև այն, որ այդ տարիներին գնալով խորանում էր ԱՄՆ դոլարի նկատմամբ անվստահությունը, և այն արագորեն փոխանակվում էր ոսկով: Վերոհիշյալ հիմնախնդիրները հանգեցրին ոսկե-դևիզային համակարգի փոխարինմանը նոր համակարգով:

Լողացող արժութային փոխարժեքների համակարգ (Յամայական վալյուտային համակարգ, 1971 թ.): Նոր համակարգի ձևավորման հետ մեկտեղ իրավական տեսանկյունից դադարեցվեց դրա կապը ոսկու հետ: Ոչ մի արժույթ այլևս չունի ոսկու պարունակություն և պաշտոնապես չի փոխանակվում ոսկով, թեպետ այդ կապը փաստացի պահպանվում է: Արժութային համակարգի այս բարեփոխումն ուղղված էր ԱՄՆ դոլարի, որպես առանձնահատուկ պահուստային արժույթի մենաշնորհի վերացմանը:

Նոր համակարգը, որը գործում է մինչև այսօր, հիմնված է լողացող փոխարժեքի ռեժիմի վրա: Արժութային փոխարժեքի տատանումը ենթակա է ոչ միայն շուկայական տարերային ուժերին, այլև պետության կողմից իրականացվող արժութային քաղաքականու-

թյանը: Ուստի այս համակարգը ենթադրում է ոչ միայն արժութային փոխարժեքի տատանման հնարավորություն, այլև դրա պետական կարգավորում:

6.4. Արժույթը և դրա տեսակները: Արժութային փոխարկելիություն

Արժույթը արժութային համակարգի հիմքն է, ազգային արժութային համակարգում՝ ազգային արժույթը, իսկ համաշխարհային արժութային համակարգում՝ պահուստային արժույթները, ինչպես նաև միջազգային հաշվարկային միավորները: Իտալերենից թարգմանաբար «valuta» նշանակում է «գին, արժեք»:

«Արժույթ» հասկացությունը ապահովում է ազգային և համաշխարհային տնտեսությունների կապը և փոխներգործությունը: Արժույթը փողի նոր ձև չէ, այլ դրա գործառույթի հատուկ եղանակն է ու որակը: Երբ ազգային դրամը, դուրս գալով երկրի սահմաններից, սպասարկում է միջազգային առևտրային և վարկային հարաբերությունները, այսինքն՝ օգտագործվում է ՄՏԳ-ում, վեր է ածվում արժույթի: Այսպիսով, արժույթը լայն իմաստով ցանկացած ապրանք է, որն ընդունակ է իրականացնել միջազգային փոխանակության միջոցի գործառույթ, իսկ նեղ իմաստով՝ դրամական զանգվածի կանխիկ մասը, որը շրջանառվում է թղթադրամների և մետաղադրամների ձևով:

Ըստ ազգային պատկանելիության տարբերում են «ազգային արժույթ» և «արտասահմանյան արժույթ» հասկացությունները:

Ազգային արժույթը տվյալ պետության համապատասխան իրավական ակտերով սահմանված դրամական միավորն է, այսինքն՝ տվյալ երկրի օրինական վճարամիջոցը: Օրինակ, ԱՄՆ-ի դոլարը, ռուսական ռուբլին, հայկական դրամը և այլն:

Արտասահմանյան արժույթն այլ երկրի դրամական միավորն է, որն օրինական կամ անօրինական ձևով շրջանառվում է տվյալ երկրի տարածքում: Օրինակ՝ ԱՄՆ-ի դոլարը Ռուսաստանում: Արտասահմանյան արժույթը սովորաբար օգտագործվում է միջազգային հաշվարկներում, արժութային շուկայի առջ ու վաճառքի առարկա է, պահպանվում է բանկային հաշիվներում, բայց, որպես

կանոն, տվյալ պետության օրինական վճարման միջոց չէ: Բարձր զնաճի և տնտեսության ճգնաժամային իրավիճակներում սովորաբար ազգային արժույթը դուրս է մղվում առավել կայուն արտասահմանյան արժույթների կողմից, այսինքն՝ տեղի է ունենում տնտեսության դուլարիզացիա:

Արժութային համակարգի և կոնկրետ արժույթի բնութագրման համար չափազանց կարևորվում է արժութային փոխարկելիությունը: Արժութային փոխարկելիությունը ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հնարավորությունն է ազատ, առանց սահմանափակումների ազգային արժույթը փոխանակելու արտասահմանյան արժույթի հետ, ինչպես նաև այն օգտագործելու իրական և ֆինանսական ակտիվներով գործարքներում: Երկրների արժութային փոխարկելիության մակարդակների տարբերությունը կախված է ազգային արժույթի փոխանակության ուղղությամբ պետության կողմից կիրառվող սահմանափակումներից:

Լայն իմաստով արժութային փոխարկելիությունը ներքին շուկան համաշխարհային շուկային միացնելու ուղղակի մեխանիզմ է, որը ենթադրում է բազմաբնույթ և բազմակողմ հարաբերություններ և արտաքին մրցակցության համար տնտեսության բացության բավարար աստիճան:

Արժութային փոխարկելիությունը մի կողմից՝ լինում է լրիվ և մասնակի, իսկ մյուս կողմից՝ ներքին և արտաքին:

Լրիվ փոխարկելիությունը ենթադրում է և՛ ընթացիկ, և՛ կապիտալի գործառնությունների գծով ցանկացած սահմանափակումների բացակայություն:

Ընթացիկ գործառնությունների սահմանափակումների թվին են դասվում ապրանքների և ծառայությունների առևտրի, եկամուտների և դրամական փոխանցումների (տրանսֆերտների) միջպետական փոխանցումների հետ կապված սահմանափակումները:

Ըստ կապիտալի գործառնությունների սահմանափակումները կապիտալի շարժի՝ ուղղակի և պորտֆելային ներդրումների, վարկերի և գրանտների հետ կապված սահմանափակումներն են:

Մասնակի փոխարկելիությունը ենթադրում է արժութային որոշակի սահմանափակումների առկայություն:

Ներքին փոխարկելիությունը ռեզիդենտի իրավունքն է՝ արտասահմանյան արժույթով գործառնություններ իրականացնելու երկրի ներսում: Ներքին փոխարկելիությունը ներառում է ինչպես ընթա-

ցիկ, այնպես էլ կապիտալի գործառնություններ, բայց չի նախատեսում մի քանի արժույթների զուգահեռ շրջանառություն երկրի ներսում: Բոլոր զարգացած երկրներն ունեն ներքին փոխարկելիություն, այսինքն՝ արտասահմանյան արժույթը կարող է ազատ ընդունվել որպես վճարման միջոց, եթե դրան համաձայն են գնորդը և վաճառողը:

Արտաքին փոխարկելիությունը ռեզիդենտների իրավունքն է՝ իրականացնելու արտասահմանյան արժույթով գործառնություններ ոչ ռեզիդենտների հետ:

Ըստ փոխարկելիության աստիճանի՝ տարբերում են լրիվ փոխարկելի, մասնակի փոխարկելի և ոչ փոխարկելի արժույթներ: Ժամանակակից տնտեսական հարաբերությունների պայմաններում մի շարք երկրներ ունեն լրիվ փոխարկելի ազգային արժույթներ, այսինքն՝ առանց արժութային սահմանափակումների: Այդ արժույթներն են՝ ԱՄՆ դոլարը, կանադական դոլարը, ճապոնական իենը, Եվրամիության եվրոն, բրիտանական ֆունտը և շվեյցարական ֆրանկը:

Մասնակի փոխարկելի է այն երկրների ազգային արժույթը, որտեղ սահմանվում են սահմանափակումներ մի շարք արժութային գործառնությունների նկատմամբ: Որպես կանոն, այդ արժույթները հնարավոր է փոխանակել միայն մի շարք արտարժույթներով, բայց ոչ բոլորով: Մասնավորապես՝ Քուվեյթի դինարը, ԱՄԷ-ի դիրխամը, Յոնկոնգի դոլարը, Սինգապուրի դոլարը, ռուսական ռուբլին և այլն:

Ոչ փոխարկելի է այն արժույթը, որի գործառնությունները տարածվում են միայն տվյալ երկրում, բացի այդ, այն փոխարկվում է արտարժույթներով խիստ սահմանափակումներով:

Ազգային արժույթի հատուկ տեսակ է պահուստային արժույթը, որով երկրները պահում են իրենց միջազգային պահուստային ակտիվները, որն էլ օգտագործվում է վճարային հաշվեկշռի բացասական հաշվեմնացորդի ծածկման համար: Պահուստային արժույթը նաև հիմք է այլ երկրների արժութային փոխարժեքի կարգավորման և արժութային պարիտետի (պաշտոնապես սահմանված հարաբերակցություն) որոշման, արժութային ներխուժումների իրականացման նպատակներով: Պահուստային արժույթի կարգավիճակ ստանալու օբյեկտիվ նախապայմաններն են՝ համաշխարհային տնտեսությունում ոսկե-արժութային պահուստներում տվյալ երկրի գերիշխող դերը, ֆինանսական կազմակերպությունների (բանկային,

վարկային և այլն) զարգացած ցանցի առկայությունը, այդ թվում՝ փոխատվական կապիտալի կազմակերպված և ճկուն շուկայում արժուքային լրիվ փոխարկելիության առկայությունը: Իսկ որպես սուբյեկտիվ նախապայման հանդես է գալիս ակտիվ արտաքին քաղաքականությունը, այդ թվում՝ արժուքային և վարկային:

Պահուստային արժույթ ունենալը թողարկող երկրին տալիս է մի շարք առավելություններ, մասնավորապես՝ վճարային հաշվեկշռի պակասուրդը ազգային արժույթով ծածկելու, համաշխարհային շուկայի մրցակցային պայքարում ռեզիդենտների դիրքերի ամրապնդման հնարավորություն: Միաժամանակ պահուստային արժույթը տվյալ երկրի տնտեսության վրա դնում է որոշակի պարտավորություններ, ինչպես, օրինակ՝ պահպանել ազգային արժույթի հարաբերական կայունությունը, չիրականացնել դալավացիա, բացառել արժուքային և արտաքին տնտեսական այլ սահմանափակումները:

6.5. Արժուքային փոխարժեք: Արժուքային գնանշում

Յուրաքանչյուր արժույթ ունի գին, որն արտահայտվում է մեկ այլ երկրի դրամական միավորով: Հենց այդ գինն էլ անվանվում է *արժույթի փոխարժեք*: Արժուքային փոխարժեքի հիմքում ընկած է գնողունակության պարիտետը, որը համեմատվող երկրների արժույթների հարաբերակցությունն է՝ հաշվարկված այդ երկրներում արտադրված ապրանքների և ծառայությունների գների հարաբերակցությամբ:

Արժուքային փոխարժեքն անհրաժեշտ է հետևյալ նպատակներով՝

- 1) ապրանքների և ծառայությունների, կապիտալի և տեխնոլոգիաների միջազգային շարժերի արժուքային սպասարկում,
- 2) համաշխարհային և ազգային շուկաներում գների համեմատություն (համադրում),
- 3) տարբեր տնտեսավարող կազմակերպությունների, այդ թվում՝ բանկերի արտարժուքային հաշիվների պարբերաբար վերագնահատում և այլն:

Արժուքային փոխարժեքների սահմանման ռեժիմի երկու հիմնական տարբերակներն են՝

1. Պետությունը որոշակի մակարդակում հաստատագրում է արժույթի փոխարժեքը՝ իր վրա վերցնելով նրա կայունությունը պահպանելու պարտավորությունը: Նման փոխարժեքը անվանվում է *ֆիքսված (ամրագրված) փոխարժեք*, որը սահմանվում է արժութային քաղաքականությամբ:

2. Պետությունը թույլ է տալիս, որ արժութային փոխարժեքը ազատ տատանվի («լողացող»)՝ առաջարկի և պահանջարկի փոխազդեցության արդյունքում: Սա արդեն *լողացող արժութային փոխարժեքն է*:

Բնական է, որ այս երկու ծայրահեղ տարբերակների միջև գործնականում հնարավոր են բազմաթիվ համակցություններ: Համաձայն ԱՄՅ-ի դասակարգման՝ անդամ-երկրների արժույթները, կախված դրանց փոխարկելիության աստիճանից, բաժանվում են հետևյալ տեսակների՝ *ֆիքսված փոխարժեք*, *սահմանափակ ճկուն փոխարժեք*, *լողացող փոխարժեք*:

Փոխարժեքը կարող է ֆիքսվել հետևյալ ձևերից մեկով՝

- փոխարժեքի ֆիքսում մեկ արտարժույթի նկատմամբ: Այսպիսի ֆիքսում ունեն Արգենտինան, Վենեսուելան, Լիբերիան, Նիգերիան, Լիտվան, Թուրքմենստանը և այլն,
- այլ երկրների փոխարժեքի օգտագործումը որպես օթինական վճարման միջոց: Այսպես՝ Սան-Մարինոյում օգտագործում են իտալական լիրան, Կարիբատիում՝ ավստրալիական դոլարը, Լիբերիայում, Մարշալյան կղզիներում և Միկրոնեզիայի Դաշնակցային Նահանգներում՝ ԱՄՆ դոլարը,
- արժութային կառավարում-արտարժույթի նկատմամբ ազգային արժույթի փոխարժեքի ֆիքսում, ընդ որում՝ ազգային արժույթի թողարկումը ամբողջությամբ ապահովված պետք է լինի արտարժույթի համապատասխան պաշարներով: Արժութային կառավարում գոյություն է ունեցել մոտ 70 երկրներում, այդ թվում՝ Ռուսաստանում,
- ազգային արժույթի փոխարժեքի ֆիքսում հիմնական առևտրային գործընկեր-երկրի արժույթի նկատմամբ: Այս դեպքում տվյալ երկրի կառավարությունը սովորաբար պահում է այդ գործընկեր-երկրի արժույթի որոշակի պաշարներ: Այդ իսկ պատճառով երբեմն փոխարժեքի ֆիքսման այս ձևը համարում են արժութային կառավարման տարատեսակ,

- ազգային արժույթի փոխարժեքի ֆիքսում արտարժութային որևէ զամբյուղի նկատմամբ: Այսպիսի ֆիքսում ունեն Բանգլադեշը, Բոտսվանան, Բուրունդիան, Կիպրոսը, Իսլանդիան, Քուվեյթը, Մավրիտանիան և այլ երկրներ: Չամբյուղում արժույթների տեսակարար կշիռները սովորաբար համապատասխանում են այդ երկրի՝ զամբյուղում ներառված երկրների հետ ունեցած արտաքին տնտեսական հարաբերությունների տեսակարար կշիռներին,

- սահմանափակ ձևում արժութային փոխարժեք-ազգային արժույթների միջև պաշտոնական սահմանված հարաբերակցություն: Այս դեպքում թույլատրվում է արժութային փոխարժեքների ոչ մեծ տատանումներ՝ հաստատված կանոնների համաձայն:

Տարբերում են լողացող արժութային փոխարժեքի հետևյալ տարատեսակները՝

- կարգավորվող արժութային փոխարժեք, որը փոփոխվում է տնտեսական որոշակի ցուցանիշների փոփոխություններին համապատասխան: Փոխարժեքի սահմանման այսպիսի մեթոդ կիրառվում է Չիլիում, Էկվադորում, Նիկարագուայում,

- կառավարելի լողացող արժութային փոխարժեք, որը սահմանվում է ԿԲ-ի կողմից, այլ ոչ թե արժութային շուկայում՝ որոշակի փոփոխությունների հնարավորությամբ: Այդ փոփոխությունները անկախ բնույթ չունեն և հաշվի են առնում այնպիսի մակրոտնտեսական ցուցանիշներ, ինչպիսիք են վճարային հաշվեկշռի վիճակը, միջազգային պահուստների ծավալը, ազգային և համաշխարհային արժութային շուկաների զարգացման միտումները: Այս մեթոդը կիրառվում է աշխարհի մոտ 38 երկրներում, այդ թվում՝ Ալժիրում, Անգոլայում, Բրազիլիայում, Կամբոջայում, Կոլումբիայում, Եգիպտոսում, Պակիստանում, Չինաստանում և այլուր,

- ազատ լողացող արժութային փոխարժեք, որը որոշվում է արժութային շուկայում՝ առանց պետության միջամտության, առաջարկի և պահանջարկի հարաբերակցության արդյունքում: Պետությունը կարող է իրականացնել միայն արժութային ներխուժումներ (արտարժույթի առք ու վաճառք ազգային արժութային շուկայում)՝ նպատակ ունենալով հարթեցնել ազգային արժութային փոխարժեքի ուժեղ տատանումները: Այս ձևով սեփական արժութային փոխարժեքները սահմանում են տնտեսապես զարգացած երկրները:

Արժութային փոխարժեքների էվոյուցիան ցույց է տալիս, որ գնալով մեծանում է այն երկրների թիվը, որոնք կիրառում են լո-

ղացող փոխարժեքի տարբեր ձևեր, և կրճատվում է այն երկրների թիվը, որոնք կիրառում են ֆիքսված արժութային փոխարժեք: Ներկայումս աշխարհի երկրների միայն մոտ 1/3-ն է կիրառում ֆիքսված արժութային փոխարժեք:

Տնտեսական զարգացման տեմպերի և ապագայի համար տնտեսական կանխատեսման ու ծրագրավորման համար օգտագործվում են արժութային փոխարժեքների հաշվարկային մի քանի ձևեր: Դրանք անվանական և իրական արժութային փոխարժեքներն են, որոնք միմյանցից տարբերվում են գնաճի հաշվարկման ձևից կախված:

Անվանական արժութային փոխարժեքը երկու երկրների արժույթների փոխարժեքն է, այսինքն՝ ազգային արժույթի միավորի գինն է՝ արտահայտված արտարժույթի միավորի որոշակի քանակությամբ:

Այստեղից հետևում է, որ անվանական փոխանակային կուրսը արտարժույթի և ազգային արժույթի հարաբերությունն է, որը ներկայացվում է հետևյալ բանաձևով՝

$$E_n = C_f / C_d,$$

որտեղ՝ E_n -ը արժույթի անվանական կուրսն է, C_f -ը՝ արտասահմանյան արժույթը, C_d -ն՝ ազգային արժույթը:

Օրինակ՝ եթե ԱՄՆ դոլարի և դրամի անվանական փոխարժեքը կազմում է 1 դոլար = 350 դրամ, ապա սա նշանակում է՝ միջազգային արժութային շուկաներում կարող ենք 1 դոլարը փոխանակել 350 դրամով:

Իրական արժութային փոխարժեքը վերափոխված անվանական արժութային փոխարժեքն է՝ հաշվի առած գների մակարդակի փոփոխությունը սեփական երկրում և այն երկրում, որի նկատմամբ գնանշվում է ազգային արժույթը:

$$E_r = E_n \cdot P_f / P_d,$$

որտեղ՝ E_r -ը իրական արժութային փոխարժեքն է, P_f -ը արտերկրի գների համաթիվը, P_d -ն՝ սեփական երկրի գների համաթիվը:

Բանաձևը ցույց է տալիս, որ արժույթի իրական փոխարժեքը որոշելու համար ապրանքների զամբյուղի գինը արտասահմանում արտահայտում են ազգային արժույթի անվանական կուրսով և հարաբերում նույնպիսի զամբյուղի գինն՝ սեփական երկրում:

Իրական արժութային փոխարժեքի համաթիվը ցույց է տալիս դրա շարժընթացը՝ հաշվի առնելով գնաճի տեմպերը երկու երկրնե-

րում էլ: Եթե սեփական երկրում գնաճի տեմպը գերազանցում է արտասահմանյանին, ապա ազգային արժույթի իրական փոխարժեքը կգերազանցի անվանականին:

Արտերկրների դրամական միավորների նկատմամբ ազգային դրամական միավորի փոխարժեքի սահմանումն իրականացվում է *արժութային գնանշման* միջոցով: Գոյություն ունի արժութային գնանշման երկու մեթոդ՝

ա) ուղղակի, որի դեպքում արտերկրների արժույթի միավորի փոխարժեքն արտահայտվում է ազգային արժույթի որոշակի քանակությամբ,

բ) անուղղակի, որի դեպքում որպես հիմք ընդունվում է ազգային արժույթի միավորը, որի փոխարժեքն արտահայտվում է արտերկրի արժույթի որոշակի քանակությամբ:

Երկրների մեծամասնությունը կիրառում է արժութային գնանշման ուղղակի մեթոդը, սակայն, օրինակ, Մեծ Բրիտանիան օգտագործում է հակադարձ գնանշումը, ԱՄՆ-ը՝ և՛ ուղղակի, և՛ հակադարձ գնանշումը:

Իսկ այն դեպքում, երբ երկու երկրների արժույթները միմյանց հետ չեն փոխանակվում, կամ այդ փոխանակությունը իրականացվում է աննշան ծավալով, կիրառվում է *կրոս փոխարժեքը*, որը ստացվում է հաշվարկային եղանակով, որևէ երրորդ՝ գործընկերների արժույթի օգնությամբ և իրենից ներկայացնում է երկու արժույթների հարաբերակցություն, որը բխում է երրորդ արժույթի նկատմամբ այդ արժույթների հարաբերակցությունից:

Բացի այդ, ըստ արժութային գործառնությունների իրականացման ժամկետների, տարբերում են *սփոթ փոխարժեք*, որն օգտագործվում է կանխիկ գործառնությունների դեպքում, *ֆորվարդային փոխարժեք*, որն օգտագործվում է ժամկետային գործառնությունների դեպքում:

6.6. Արժուքային փոխարժեքի վրա ազդող գործոնները

Ինչպես և ցանկացած ապրանքի գին, արտարժույթի գինը՝ փոխարժեքը, որոշվում է դրա առաջարկով և պահանջարկով: Հետևաբար արտարժույթի փոխարժեքի վրա ազդող գործոններն ազդում են դրա առաջարկի և/կամ պահանջարկի վրա: Արտարժույթի պահանջարկը կարող է գոյանալ մասնավորապես ապրանքների և ծառայությունների ներմուծման, արտերկրներում կապիտալ ներդրումներ կատարելու, արտերկրացիներին եկամուտների վճարման, ներքին խնայողությունների կատարման և այլ նպատակներով: Արտարժույթի առաջարկի հիմնական աղբյուրներից կարելի է նշել ապրանքների և ծառայությունների արտահանումը, օտարերկրյա կապիտալ ներդրումները, արտաքին աղբյուրներից ստացվող վարկերը, տրանսֆերտները և այլն: Նշենք այն գործոնները, որոնք առավել մեծ չափով են կարևորվում արտարժույթի փոխարժեքի վրա ազդեցության տեսանկյունից: Ընդ որում՝ որոշ գործոններ կարող են անմիջապես ազդեցություն թողնել փոխարժեքի վրա (կարճաժամկետ գործոններ), իսկ որոշ գործոնների ազդեցությունը կարող է որոշակի ժամանակ պահանջել (երկարաժամկետ գործոններ):

Գների մակարդակ: Գների մակարդակի փոփոխությունը դասվում է փոխարժեքի վրա ազդող երկարաժամկետ գործոնների շարքին: Գների բարձրացման հետևանքով տեղական ապրանքները դառնում են պակաս մրցունակ արտասահմանյան ապրանքների նկատմամբ, աճում է ներմուծումը, և կրճատվում՝ արտահանումը, որի հետևանքով տեղի է ունենում ազգային արժույթի փոխարժեքի անկում: Գների նվազումը բնականաբար բերում է հակառակ ազդեցության: Գների մակարդակը դիտվում է փոխարժեքի վրա ազդող հիմնական գործոն՝ համաձայն գնողունակության պարիտետի տեսության: Ըստ դրա՝ երկու երկրների արժույթների փոխարժեքը պետք է հաստատվի այնպիսի մակարդակով, որ գների մակարդակները այդ երկրներում, արտահայտված նույն արժույթով, լինեն հավասար:

Տոկոսադրույք: Փոխարժեքի վրա ազդող կարճաժամկետ կարևոր գործոններից է *տոկոսադրույքը*: Տոկոսադրույքների բարձրացումը մեծացնում է տվյալ երկրի ֆինանսական ակտիվների գրավ-

չությունը արտերկրների ներդրողների համար: Դրա հետևանքով առաջացող կապիտալի ներհոսքը և կապիտալի արտահոսքի կրճատումը հանգեցնում են արտարժույթի առաջարկի մեծացման և պահանջարկի կրճատման, այսինքն՝ ազգային արժույթի փոխարժեքի բարձրացման: Երկու երկրներում տոկոսադրույքների տարբերությունը, որպես փոխարժեքի վրա ազդող կարևոր գործոն, դիտարկվում է տոկոսադրույքների պարիտետի տեսության շրջանակներում, ըստ որի՝ փոխարժեքը պետք է հաստատվի այնպիսի մակարդակով, որպեսզի երկու երկրներում կատարվող ֆինանսական ներդրումները միևնույն արժույթի փոխարկելիս բերեն միևնույն եկամուտը:

Ազգային եկամուտ: Ազգային եկամտի փոփոխությունը կարող է հակառակ ուղղություններով ազդել արժույթի փոխարժեքի վրա: Նախ՝ ինչպես հայտնի է, ազգային եկամտի աճը հանգեցնում է սպառման ավելացման: Ավելանում է ոչ միայն տեղական, այլև արտերկրների ապրանքների սպառումը՝ ներմուծումը: Ներմուծման աճը նվազեցնում է ազգային արժույթի փոխարժեքը: Մյուս կողմից՝ ազգային եկամուտը փողի պահանջարկի վրա ազդող հիմնական գործոններից է: Ինչպես հայտնի է, ազգային եկամտի աճը հանգեցնում է փողի պահանջարկի աճին, որի հետևանքով բարձրանում են տոկոսադրույքները: Տոկոսադրույթի աճը, ինչպես նշվել է, ազգային արժույթի փոխարժեքի բարձրացման պատճառ է դառնում: Հետևաբար, կախված նրանից, թե որ ազդեցությունն ավելի ուժեղ կլինի, ազգային եկամտի փոփոխությունը կունենա ուղիղ կամ հակադարձ ազդեցություն արժույթի փոխարժեքի վրա:

6.7. Սպասումներ փոխարժեքի փոփոխության վերաբերյալ

Եթե տնտեսավարող կազմակերպությունների մոտ այս կամ այն պատճառով ձևավորվում են սպասումներ արտարժույթի փոխարժեքի աճի վերաբերյալ, շուկայում առաջանում է լրացուցիչ պահանջարկ այդ արժույթի նկատմամբ, ինչը անմիջապես հանգեցնում է դրա փոխարժեքի աճին: Եվ հակառակը՝ փոխարժեքի անկման սպասումները հենց այդ անկմանն էլ հանգեցնում են: Այսինքն՝ եթե որոշակի ուղղությամբ սպասումները գերակայում են շուկայում,

ապա դրանք ինքնարդարացվում են: Սպասումները փոխարժեքի վրա ազդող կարևոր կարճաժամկետ գործոններից են, իսկ Forex շուկայում՝ թերևս կարևորագույն գործոնը:

Բնականաբար այս ցանկը ամենևին չի կարելի լրիվ համարել: Փոխարժեքը ամենազգայուն տնտեսական ցուցանիշներից է, եթե ոչ ամենազգայունը: Դրա վրա կարող են ազդել բազմապիսի գործոններ՝ սկսած հարկային քաղաքականության փոփոխությունից, նոր նավթահորի հայտնաբերումից, վերջացրած որևէ քաղաքական գործչի անփույտ հայտարարությամբ:

6.8. Արժուքային շուկաներ. դրանցում իրականացվող գործառնությունները

Արժուքային շուկան տնտեսական հարաբերությունների ուղորտ է, որտեղ իրականացվում են արտարժույթի, վճարային փաստաթղթերի առք ու վաճառք, ինչպես նաև փոխանակում: Ինստիտուցիոնալ տեսանկյունից արժուքային շուկան առևտրային բանկերի, ներդրումային ընկերությունների, բորսաների, բրոքերական գրասենյակների համակարգ է, որն իրականացնում է արժուքային գործառնություններ: Կազմակերպչա-տեխնիկական տեսանկյունից արժուքային շուկան հաղորդակցության համակարգերի ամբողջություն է, որը կապ է հաստատում տարբեր երկրների բանկերի միջև, որոնք իրականացնում են միջազգային հաշվարկներ և տարատեսակ արժուքային գործառնություններ:

Ընդհանուր առմամբ, համաշխարհային արժուքային շուկայի օրական շրջանառությունը, որի չափերը գերազանցում են ՄՏՀ-ի մյուս ձևերի շրջանառությունները, 2000 թ. կազմել է մոտ 2,3 տրլն ԱՄՆ դոլար, 2003 թ.-ին՝ 2,8 տրլն, իսկ 2006 թ.-ին՝ 3,2 տրլն, որի 40 %-ը իրականացվում է եվրոպական, 40%-ը՝ ամերիկյան, 20%-ը՝ ասիական արժուքային շուկաներում:

Արժուքային շուկայի հիմնական մասնակիցներ են՝

1) առևտրային բանկերը, որոնք իրականացնում են արժուքային գործառնությունների հիմնական մասը: Բացի հաճախորդներին սպասարկելուց, առևտրային բանկերը կարող են նաև ինքնուրույն իրականացնել արժուքային գործառնություններ՝ սեփական միջոցների հաշվին,

2) արտաքին առևտրատնտեսական գործառնություններ իրականացնող ձեռնարկություններն ու կազմակերպությունները,

3) կենտրոնական բանկերը, որոնք մի կողմից՝ շուկայի առանձին մասնակիցներ են, մյուս կողմից՝ արժութային կարգավորում իրականացնողներ,

4) միջազգային ֆինանսական կազմակերպությունները, որոնք մի կողմից՝ համաշխարհային արժութային շուկայի առանձին մասնակիցներ են, մյուս կողմից՝ արժութային բազմակողմ կարգավորում իրականացնողներ,

5) արժութային բորսաները: Թեպետ որոշ երկրներում (Գերմանիա, Ֆրանսիա, Ճապոնիա, Բենիլյուքսի և Սկանդինավյան երկրներ) պահպանվել են արժութային բորսաները, սակայն դրանց համաշխարհային դերը գրեթե աննշան է,

6) արժութային բրոքերային ընկերությունները, որոնք միջնորդ-կազմակերպություններ են և իրենց գործունեության համար ստանում են միջնորդային վճար՝ գործարքի գումարի որոշակի տոկոսի չափով: Բրոքերների արժութային գործառնությունների ծավալներն անընդհատ աճում են՝ կազմելով ընդհանուրի մոտ 30%-ը¹:

7) ֆիզիկական անձինք, ովքեր իրականացնում են արժութային գործառնություններ, հիմնականում՝ կանխիկ:

Ըստ իրականացվող գործառնությունների ժամկետի՝ արժութային շուկան ստորաբաժանվում է հետևյալ հատվածների՝

ա) կանխիկ (սփոթ) արժութային շուկա, որտեղ գործարքները կատարվում են արժութային անհապաղ մատակարարմամբ՝ 1-2 օրվա ընթացքում,

բ) ժամկետային արժութային շուկա, որտեղ իրականացվող գործարքները նախատեսում են մատակարարման ավելի երկար ժամկետ՝ 3 օրից մինչև մի քանի տարի:

Ըստ արժութային գործարքների բնույթի, ծավալի և կիրառվող արժույթների քանակի՝ արժութային շուկաները լինում են՝

ա) համաշխարհային, որոնք գտնվում են համաշխարհային ֆինանսական կենտրոններում՝ Լոնդոն, Նյու-Յորք, Տոկիո, Փարիզ, Ցյուրիխ, Սինգապուր և այլն: Այս շուկաներում գործարքները իրականացվում են այն արժույթներով, որոնք լայնորեն կիրառվում են համաշխարհային վճարային շրջանառությունում,

¹ Տե՛ս <http://forexpf.ru>

բ) տարածաշրջանային, որտեղ հիմնականում գործարքներն իրականացվում են մասնակի փոխարկելի արժույթներով,

գ) ազգային (ներքին), որտեղ առանձին պետության տարածքում գտնվող բանկերի կողմից իրականացվում են գործառնություններ՝ իրենց հաճախորդների սպասարկման նպատակով:

Ըստ օրինականության աստիճանի՝ արժութային շուկաները լինում են՝

ա) օրինական (լեգալ),

բ) սև (ոչ լեգալ),

գ) գորշ (այստեղ բանկերն իրականացնում են անօրինական գործարքներ՝ ոչ փոխարկելի արժույթներով):

Կանխիկ արժութային (սփոթ) գործառնությունների գործարքի երկու կողմերը պարտավորվում են փոխանակել սահմանված քանակությամբ արժույթ մինչև երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ գործարքի կնքման օրվա փոխարժեքով (սփոթ փոխարժեքով):

Արժութային շուկայում առավել կարևոր են ժամկետային գործառնությունները: Սրանց հիմնական նպատակներն են՝ համապատասխան շահույթի ստացումը՝ գործարքի մի կողմի համար, և արժութային ռիսկի կնքվողումը՝ մյուսի համար: Ժամկետային արժութային գործառնություններն են՝ *ֆորվարդը*, *ֆյուչերսը*, *օպցիոնը*, *սվոփը*:

Արժութային ֆորվարդն այն պայմանագիրն է, որով կողմերը պարտավորություններ են ստանձնում պայմանագրում նշված ժամկետում գնել կամ վաճառել որոշակի քանակի արժույթ՝ պայմանագրի կնքման ժամանակ ֆիքսված փոխարժեքով: Ֆորվարդային պայմանագրում ֆիքսվում է փոխանակվող արժույթի քանակը, փոխանակման ժամկետը, ֆորվարդային փոխարժեքը:

Նկատվում են երկարաժամկետ ֆորվարդային պայմանագրերի կնքման միտում (մինչև 6-7 տարի): Ֆորվարդային փոխարժեքը պայմանագրում ներառված արժույթներից մեկի գինն է՝ արտահայտված մյուսով: Այն կարող է լինել սփոթ փոխարժեքին հավասար, դրանից բարձր կամ ցածր: Եթե ֆորվարդային փոխարժեքը ցածր է սփոթ փոխարժեքից, ապա արտերկրների արժույթը վաճառվում է ֆորվարդային զեղչով (forward discount), եթե ֆորվարդային փոխարժեքը բարձր է սփոթ փոխարժեքից, ապա արտերկրի արժույթը վաճառվում է ֆորվարդային պարզևավճարով (forward

premium): Ֆորվարդային զեղչերն ու պարզևավճարները սովորաբար արտահայտվում են տարեկան վերաֆինանսավորման տոկոսադրույքներով՝ սփոթ փոխարժեքի նկատմամբ, հետևյալ բանաձևով.

$$\text{Premium/Discount} = (E_{\text{forward}} - E_{\text{spot}}) / E_{\text{spot}} \times (12/N) \times 100,$$

որտեղ՝ E-ն ֆորվարդային և սփոթ արժուքային փոխարժեքներն են, N-ը՝ գործարքի ժամկետը, 12/N-ը ցույց է տալիս մինչև վճարումն ընկած ամիսների թիվը: Օրինակ, եթե ֆորվարդային պայմանագրի տևողությունը մեկ ամիս է, ապա տոկոսը տարեկան կտրվածքով վերահաշվարկելու համար արդյունքը պետք է բազմապատկել 12-ով: Ֆյուչերսների շուկան ֆորվարդների շուկայի համեմատությամբ բավականին փոքր է: Չնայած այդ շուկաների մեծությունների միջև առկա խոշոր տարբերություններին՝ նրանցից յուրաքանչյուրը ներգործում է մյուսի վրա:

Արժուքային ֆյուչերսները կարճաժամկետ (առավելագույն ժամկետը՝ 1 տարի) և բարձր իրացվելի ֆինանսական գործիքներ են (ստանդարտ պայմանագրեր): Ֆյուչերսային գործարքների գլխավոր հատկանշական կողմը արժույթի մատակարարման պայմանների, ծավալների և ժամկետների ստանդարտությունն է:

Ֆյուչերսային շուկան իր ծավալներով զիջում է ֆորվարդային շուկային, որտեղ օրական շրջանառության ծավալը կազմում է մոտ 4 մլրդ ԱՄՆ դոլար, մինչդեռ ֆորվարդային շուկայում իրականացվող գործառնությունների ծավալը մեծ է ավելի քան 20 անգամ:

Թեպետ ֆորվարդային և ֆյուչերսային գործառնություններն ընդհանուր առմամբ իրար նման են, սակայն կան նաև մի շարք տարբերություններ, որոնք ներկայացված են ստորև բերված աղյուսակի միջոցով²:

² Стен Л.Н.Красавина, Международные валютно-кредитные и финансовые отношения 2002. էջ 365:

Համեմատման չափանիշ	Ֆյուչերսային շուկա	Ֆորվարդային շուկա
Մասնակիցները	Բանկեր, ընկերություններ, անհատ ներդրողներ, սպեկուլյանտներ (սակարկողներ)	Խոշոր բանկեր և ընկերություններ սահմանափակ է ոչ մեծ ձեռնարկությունների և անհատ ներդրողների համար
Հաղորդակցման մեթոդը	Մասնակիցներն անձանոթ են	Գործարքի մի կողմը ճանաչում է մյուսին
Միջնորդները	Գործարքի կողմերը գործում են բրոքերների միջոցով	Առանց միջնորդների
Երաշխիքային դեպոզիտ	Արժուքային ռիսկից խուսափելու համար մասնակիցները պետք է հաշվարկային պալատին վճարեն երաշխիքային դեպոզիտ	Երաշխիքային դեպոզիտ չի պահանջվում, եթե գործարքը իրականացվում է առանց միջնորդների
Գործարքի գումարը	Ստանդարտ գումար (<i>մինչև 5000 ԱՄՆ դոլար</i>)	Գումարի չափը ըստ կողմերի պայմանավորվածության
Արժուքային դիրքը	Արժուքային դիրքերը (<i>երկար և կարճ</i>) կարող են հեշտությամբ իրականացվել	Փակ դիրքը գրեթե չի իրականացվում
Գործարքի իրականացման վայրը	Բորսա	Միջբանկային՝ արտաբորսայական արժուքային շուկա

Արժուքային օպցիոնները ստանդարտ պայմանագրեր են, որոնք բաժանվում են երկու խմբի՝ գնորդի (քուլ) և վաճառողի (փուլ): *Քուլ օպցիոնը* արժույթի գնորդին տալիս է ընտրության իրավունք՝ գնել որոշակի քանակությամբ արժույթ՝ այդ պայմանագրով սահմանված գնով և ժամկետում: *Փուլ օպցիոնը* արժույթի վաճառողին տալիս է ընտրության իրավունք՝ վաճառել որոշակի քանակությամբ արժույթ՝ այդ պայմանագրով սահմանված գնով և ժամկետում: Եվ եթե քուլ օպցիոն գնողը որոշում է կատարել այդ, ապա վաճառողը պարտավոր է վաճառել արժույթը: Նմանապես, եթե փուլ օպցիոն գնողը որոշում է կատարել, ապա այդ օպցիոնի վաճառողը պարտավոր է գնել արժույթը՝ կատարման փոխարժեքով և ժամկետում: Այսպիսով, օպցիոն գնողը (քուլի դեպքում՝ արժույթի գնորդը, փուլի դեպքում՝ արժույթի վաճառողը) կարող է իրացնել իր ընտրության իրավունքը, եթե դա ձեռնտու է իրեն և հակառակը: Փաստորեն, սա

օպցիոն գնողին տալիս է որոշակի առավելություններ, որի դիմաց նա վաճառողին պետք է վճարի որոշակի պարգևավճար, որը ենթակա չէ վերադարձման օպցիոն պայմանագիրը չկատարելու դեպքում: Այն կարելի է դիտարկել որպես ապահովագրական պարգևավճար, որը օպցիոն գնողին պաշտպանում է փոխարժեքների ապագա անբարենպաստ փոփոխություններից:

Տարբերում են նաև եվրոպական և ամերիկյան օպցիոններ: Եվրոպական օպցիոնները կարող են իրականացվել միայն օպցիոնային պայմանագրի ժամկետը լրանալու օրը (մարման ժամկետին): Ամերիկյան օպցիոնները կարող են իրականացվել յուրաքանչյուր օր՝ մինչև ժամկետի ավարտը: Ամերիկյան օպցիոնները ավելի ճկուն են, և կատարման օրն ընտրելու հնարավորությունը մեծացնում է շահելու հավանականությունը: Եվ, բնականաբար, սրանք ենթադրում են ավելի բարձր պարգևավճար, քան եվրոպական օպցիոնները:

Օպցիոնի ներքին արժեքը սփոթ փոխարժեքի և կատարման փոխարժեքի տարբերությունն է: Սփոթ գնի փոփոխությանը զուգահեռ փոխվում է նաև օպցիոնի ներքին արժեքը: Երբ սփոթ գինը ցածր է կատարման գնից, օպցիոնը կատարել չի պահանջվում. այս դեպքում օպցիոնի ներքին արժեքը հավասար է զրոյի:

Օպցիոնների առևտուրը կարող է իրականացվել ինչպես բորսայում, այնպես էլ դրանից դուրս: Տարբերությունն այն է, որ բորսայում շրջանառում են միայն ստանդարտացված օպցիոններ:

Սվոփը արժույթային գործառնություն է, որը համատեղում է արժույթների առքն ու վաճառքը սփոթ գործարքի պայմաններով, և այդ նույն արժույթներով միաժամանակյա հակագործարքը՝ որոշակի ժամկետով: Դասական սվոփ գործառնությունը սփոթ և հակադարձ ֆորվարդ գործարքների համատեղումն է: Սվոփ գործառնությունների դեպքում կանխիկ գործարքն իրականացվում է սփոթ փոխարժեքով, իսկ հակագործարքը՝ ֆորվարդային փոխարժեքով³:

Սվոփ գործառնությունները կարող են իրականացվել առևտրային բանկերի միջև, առևտրային և կենտրոնական բանկերի միջև և հենց կենտրոնական բանկերի միջև: Սվոփ գործառնություններն իրականացվում են նաև ոսկով, որի նպատակն այն է, որպեսզի

³ St'u Hung, Juann H. (1997) Intervention strategies and exchange rate volatility: a noise trading perspective: *Journal of International Money and Finance* 16 (5).

պահպանելով դրա նկատմամբ սեփականության իրավունքը՝ ժամանակավորապես ձեռք բերվի անհրաժեշտ արտարժույթ⁴:

6.9. Արժուքային ռիսկ. դրա կառավարումը

Արժուքային ռիսկը ապագա արժուքային փոխարժեքի անորոշությամբ պայմանավորված ռիսկն է: Առանձնացնում են արժուքային ռիսկի երեք հիմնական տեսակ՝ գործարքային, տրանսյացիոն և տնտեսական:

Գործարքային արժուքային ռիսկը սպասվող դրամական հոսքերի վրա փոխարժեքի անմիջական ազդեցության հետևանքով վնաս ստանալու հնարավորությունն է: Ապրանքների իրացումից արտարժույթ ստացող արտահանողը կորուստ է կրում ազգային արժույթի նկատմամբ արտարժույթի արժեզրկումից, քանի որ ազգային արժույթով արտահայտված իրացումից հասույթը նվազում է: Արտարժույթով վճարումներ կատարող ներմուծողն իր հերթին կորուստներ է ունենում արտարժույթի արժեզրկման հետևանքով, քանի որ աճում է ապրանքների ինքնարժեքը՝ արտահայտված ազգային արժույթով:

Տրանսյացիոն արժուքային ռիսկը (հայտնի է նաև որպես հաշվեկշռային կամ հաշվարկային ռիսկ) առաջանում է այն ժամանակ, երբ ձեռնարկությունն իր հաշվեկշռում ունի արտարժույթով արտահայտված ակտիվներ և/կամ պարտավորություններ: Այդ ակտիվներն ու պարտավորությունները յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածի համար հաշվեկշռում վերահաշվարկվում են այդ պահին գործող փոխարժեքով: Արտարժուքային ակտիվների և պարտավորությունների տարբերությունն անվանում են *արժուքային դիրք*: Եթե արտարժուքային ակտիվները հավասար են պարտավորություններին, ապա արժուքային դիրքը փակ է: Եթե արտարժուքային ակտիվների և պարտավորությունների տարբերությունը զրոյից տարբեր է, ապա դիրքը բաց է: *Բաց դիրքը* կարող է լինել երկար, եթե արտարժուքային ակտիվները գերազանցում են արտարժուքային պարտավորություններին, և կարճ, եթե արտարժուքային

⁴ Տե՛ս Gabriele Galati Why Has ForeignExchange Market Declined? Explaining the 2001 Triennial Survey, էջ 2:

ակտիվները փոքր են արտարժութային պարտավորություններից: Երկար դիրքի պարագայում արտարժույթի արժևորման հետևանքով ձեռնարկությունը ստանում է շահույթ արտարժութային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից, արժեզրկման պարագայում ձեռնարկությունը վնաս է կրում: Կարճ դիրքի դեպքում փոխարժեքի փոփոխությունը հակառակ ազդեցությունն է ունենում արտարժույթի վերագնահատումից շահույթի կամ վնասի վրա:

Տնտեսական արժութային ռիսկը ձեռնարկության տնտեսական վիճակի, տնտեսական միջավայրի վրա փոխարժեքի անբարենպաստ ազդեցության հետևանքով վնաս ստանալու հնարավորությունն է: Օրինակ, ազգային արժույթի արժևորման հետևանքով տեղական շուկայում կարող է մեծանալ արտերկրների արտադրողների մրցունակությունը, և, հետևաբար, կտուժեն տեղական արտադրողները:

Եթե ձեռնարկությունը արժութային շուկայում չի զբաղվում սպեկուլյացիայով, այսինքն՝ գիտակցաբար չի գնում արժութային ռիսկի ընդունման, բնական է ակնկալել, որ նա արժութային ռիսկի կառավարման նպատակով կընտրի արժութային ռիսկից խուսափելու կամ այն նվազեցնելու մեկ կամ մի քանի եղանակ:

Արժութային ռիսկերի կառավարման մեթոդները բազմաթիվ են: Դրանցից առանձնացնենք հետևյալ հիմնական եղանակները:

Արժութային ռիսկի ապահովագրում (հեջավորում): Հեջավորումն իրականացվում է ժամկետային շուկայի գործիքների՝ ֆորվարդների, ֆյուչերսների, օպցիոնների, սվոփերի միջոցով: Եթե, օրինակ, ներմուծողը, համաձայն պայմանագրի, ապրանքների դիմաց պետք է վճարի 100 000 ԱՄՆ դոլար, ապա փաստացի վճարման օրվա դրությամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի բարձրացման ռիսկից նա կարող է խուսափել կամ նվազեցնել՝ 100 000 ԱՄՆ դոլարի գնման ֆորվարդային պայմանագիր կնքելով, որի ժամկետը կավարտվի ապրանքների դիմաց փաստացի վճարման օրը: Հեջավորման միջոցով կարող է նվազեցվել ինչպես գործարքային, այնպես էլ տրանսլյացիոն ռիսկը:

Ռիսկի տեղափոխում: Ձեռնարկությունը բոլոր գործարքները կնքում է իր ազգային արժույթով: Սակայն այս եղանակով խուսափելով գործարքային արժութային ռիսկից՝ ձեռնարկությունը կարող է բախվել տնտեսական արժութային ռիսկի հետ: Ենթադրենք ար-

տահանողը, փորձելով խուսափել գործարքային արժութային ռիսկից, ապրանքի գինը սահմանում է ազգային արժույթով: Այս դեպքում ազգային արժույթի փոխարժեքի բարձրացումը չի ազդի արտահանումից ստացվող հասույթի արժեքի վրա: Սակայն պարզ է, որ փոխարժեքի բարձրացումը պակաս գրավիչ կդարձնի արտահանողի ապրանքներն իր գործընկերների համար, որի հետևանքով կկրճատվի իրացման ծավալը:

Ռիսկի կիսում: Ձեռնարկությունները համաձայնեցնում են փոխարժեքի տատանման որոշակի միջակայք: Այդ միջակայքի շրջանակներում գործարքի պայմանները չեն փոխվում, սակայն դրանից դուրս փոխարժեքի տատանման դեպքում առաջացող արժութային ռիսկերը, ըստ պայմանավորվածության, ձեռնարկությունները հավասարաչափ կիսում են միմյանց միջև:

Արժութային գործարքներով հաշվարկների արագացում կամ դանդաղեցում: Ձեռնարկությունը կարող է նվազեցնել գործարքային արժութային ռիսկերը արժևորվող արտարժույթով վճարումների արագացման կամ արժեզրկվող արտարժույթով վճարումների դանդաղեցման միջոցով:

Արտարժութային ակտիվների և պարտավորությունների համապատասխանեցում:

Գործունեության ուղղությունների, հումքի աղբյուրների դիվերսիֆիկացիա: Այս եղանակը տնտեսական արժութային ռիսկից խուսափելու միջոցներից մեկն է: Ընդհանուր առմամբ, տնտեսական արժութային ռիսկը մնում է ամենադժվար կառավարելի ռիսկերից մեկը, քանի որ այս ռիսկի առաջացման մեխանիզմներն ավելի բարդ են:

6.10. Արժութային քաղաքականություն

Արժութային քաղաքականության ձևավորումը, որպես տնտեսության պետական կարգավորման ուղղություն, սերտորեն կախված է արժութային շուկայի ռեժիմից: Կախված այն հանգամանքից՝ տվյալ երկրում գործում է ֆիքսվա՞ծ, թե՞ լողացող փոխարժեքի ռեժիմ, պետությունը պետք է օգտագործի տնտեսական կարգավորման լծակների տարբեր հավաքածուներ՝ ներքին արժութային շուկայի հավասարակշռության ապահովման նպատակով:

Ինչպես վկայում է համաշխարհային փորձը, արժութային հարաբերությունների շուկայական և պետական կարգավորումները լրացնում են մեկը մյուսին: Երբ երկրի քաղաքական և տնտեսական իրավիճակը կայուն է, սովորաբար գործում է շուկայական կարգավորումը, իսկ երբ տիրում է տնտեսական անկայունություն, ճգնաժամ, գործում է պետական առավել կոշտ կարգավորումը:

Արժութային քաղաքականությունը, ընդհանուր տնտեսական քաղաքականության շրջանակներում և դրան համահունչ, պետք է միտված լինի տնտեսական քաղաքականության գլխավոր նպատակներին՝ կայուն տնտեսական աճի, վճարային հաշվեկշռի հավասարակշռության ապահովման և այլն:

Արժութային քաղաքականության ուղղություններն են՝ *կառուցվածքային* և *ընթացիկ*: Կառուցվածքային արժութային քաղաքականությունը երկարաժամկետ միջոցառումների համախումբ է, որն ուղղված է համաշխարհային արժութային համակարգում կառուցվածքային բարեփոխումներին: Սա իր ազդեցությունն է թողնում ընթացիկ արժութային քաղաքականության վրա: Ընթացիկ արժութային քաղաքականությունը կարճաժամկետ միջոցառումների համախումբ է, որն ուղղված է արժութային փոխարժեքի, արժութային գործառնությունների, արժութային և ոսկու շուկաների ընթացիկ (օպերատիվ) կարգավորմանը:

Արժութային քաղաքականության ձևերն են՝

- դիսկոնտային,
- դեֆլյացիոն, որն էլ ունի իրականացման տարբեր մեթոդներ.
 - ա) արժութային ներխուժումներ (ինտերվենցիա),
 - բ) արժութային պահուստների տարբերակում (ռեզերվների դիվերսիֆիկացիա),
 - գ) երկակի արժութային շուկա,
 - դ) դեֆլավացիա և ռեֆլավացիա:

Դիսկոնտային քաղաքականությունը կենտրոնական բանկի կողմից հաշվարկված ներդրումներն են ներքին ֆինանսական շուկայում՝ ուղղված արժութային փոխարժեքի և վճարային հաշվեկշռի կարգավորմանը: Վերջինս իրականացվում է՝ ազդելով մի կողմից՝ կապիտալի արտաքին և ներքին շարժերի, վերաֆինանսավորման տոկոսադրույքի, մյուս կողմից՝ գների, համախառն առաջարկի ուղղություններով:

Ներկայումս դիսկոնտային քաղաքականության արդյունավե-

տությունը նվազել է, ինչը պայմանավորված է առաջին հերթին դրաներքին ու արտաքին նպատակների տարբերություններով:

Դեկալյին քաղաքականությունը ազգային արժույթի փոխարժեքի վրա ազդելու առանձին ձև է, որն իրականացվում է տարբեր մեթոդներով: Զննարկենք դրանց առանձնահատկությունները:

Արժութային ներխուժումն իրականացվում է ԿԲ-ի կողմից ներքին արժութային շուկայում արտարժույթի գնման կամ վաճառքի ճանապարհով՝ ոսկե-արժութային պահուստների կամ կարճաժամկետ վարկերի հաշվին: Ազգային արժույթի փոխարժեքի իջեցման համար ԿԲ-ն սկսում է գնել արտարժույթ՝ ազգային արժույթով, իսկ բարձրացման համար՝ հակառակը:

Արժութային պահուստների տարբերակումը ԿԲ-ների, առևտրային բանկերի, ՎԱԿ-երի քաղաքականություն է՝ ողղված արժութային համապատասխան պահուստների կառուցվածքային կարգավորմանը: Վերջինս էլ իրականացվում է այդ պահուստների մեջ տարբեր կշիռներով արտարժույթներ և միջազգային հաշվարկային միջոցներ ընդգրկելու ճանապարհով:

Դեվալվացիան և ռեվալվացիան արժութային քաղաքականության ավանդական և տարածված մեթոդ են և հիմնականում կիրառվում են ֆիքսված արժութային փոխարժեքով ռեժիմում: Դեվալվացիան ազգային վալյուտային փոխարժեքի իջեցումն է այլ արժույթների փոխարժեքների նկատմամբ: Ռեվալվացիան դեվալվացիայի հակառակ երևույթն է:

Վալյուտային հարաբերությունների զարգացման տարբեր փուլերում դեվալվացիա և ռեվալվացիա հասկացությունները կրել են տարբեր իմաստներ: Օրինակ՝ ոսկե ստանդարտի ժամանակաշրջանում դեվալվացիա և ռեվալվացիա համապատասխանաբար նշանակում էին արժույթի մեջ ոսկու պարունակության բարձրացում և իջեցում:

Դեվալվացիայի տոկոսային չափը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$d = (Kc - KH) / Kc * 100\%,$$

որտեղ՝ հին փոխարժեքը Kc - ն է, նոր փոխարժեքը՝ KH -ն, իսկ դեվալվացիայի տոկոսային չափը՝ d -ն:

Ռեվալվացիայի տոկոսային չափը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$P = (KH - Kc) / Kc * 100\%,$$

որտեղ՝ P -ն ռեվալվացիան է՝ արտահայտված տոկոսներով:

6.11. Արժուքային քաղաքականության առանձնահատկությունները ՀՀ-ում

ՀՀ արժուքային քաղաքականությունն էական ազդեցություն ունի ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական որորոտների վրա: Հայաստանը փոքր և բաց տնտեսությամբ երկիր է: Ուստի արժույթի փոխարժեքը որոշիչ գործոն է ինչպես գների մակարդակի փոփոխությունների, այնպես էլ վճարային հաշվեկշռի կարգավորման առումով: ՀՀ-ն իր արժուքային քաղաքականությունն իրականացնում է ի դեմս ՀՀ կենտրոնական բանկի: Այն ուղղված է արժուքային պաշտոնական պահուստների արդյունավետ կառավարման միջոցով ՀՀ դրամի հուսալիության ու դրա նկատմամբ միջազգային վստահության բարձրացմանը, ընթացիկ և կապիտալի շարժի գործառնությունների ազատականացմանը, բարենպաստ իրավատնտեսական դաշտի ստեղծմանը: Այս նպատակների իրականացման համար որդեգրվել է «լողացող» արժուքային ռեժիմ, մշակվել են ազգային արժուքային համակարգի գործունեության սկզբունքներն ու մեխանիզմները, սահմանվել օրենսդրական կարգավորման շրջանակները: Ազգային արժուքային շուկայում ձևավորված փոխարժեքի հիման վրա ՀՀ ԿԲ-ն սահմանում է արդարժույթի հաշվարկային և առք ու վաճառքի ամենօրյա փոխարժեքները (տե՛ս ՀՀ ԿԲ Կանոնակարգ, 8-ի 7-րդ գլուխ):

Արժուքային կարգավորման համակարգը ՀՀ-ում կայացման փուլում է: Ընթացիկ հաշվի հետ կապված արտարժուքային փոխանակման գործառնությունները երկրի տարածքում իրականացվում են առանց ծավալային և այլ սահմանափակումների: Ներքին արժուքային շուկայում ինչպես ՀՀ ռեզիդենտները, այնպես էլ ոչ ռեզիդենտները առանց որևէ սահմանափակումների և իրենց կողմից նախընտրելի, փոխհամաձայնեցված փոխարժեքով կարող են իրականացնել արտարժույթի առքուվաճառքի գործառնություններ ԿԲ-ի և նրա կողմից լիցենզավորված անձանց, բանկերի, վարկային կազմակերպությունների, արժուքային դիլերների, փոխանակման կետերի, ինչպես նաև օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի միջոցով: Բանկերը, վարկային կազմակերպությունները արտարժույթի առքուվաճառքի գործարքներն իրականացնում են կանխիկ և անկանխիկ՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ, արժու-

թային դիւերները միայն անկանխիկ՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ, իսկ փոխանակման կետերը՝ միայն կանխիկ և ֆիզիկական անձանց հետ: Ազատականացված են ինչպես վճարային համակարգի, այնպես էլ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից իրենց հաճախորդների սպասարկման հետ կապված արժութային գործառնությունների իրականացումը: ՀՀ տարածքում գործող բանկերը, նրանց մասնաճյուղերը, ինչպես նաև ոչ ռեզիդենտ բանկերի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերը կարող են սպասարկել միջազգային պրակտիկայում ընդունված բոլոր տեսակի հաշիվներ: Նման ազատականացված սկզբունք է գործում նաև ռեզիդենտների կողմից օտարերկրյա բանկերում՝ միջազգային բանկային պրակտիկայում կիրառվող հաշիվների բացման հարցում: Ընթացիկ արժութային գործառնությունների արդյունքում ՀՀ ռեզիդենտների ստացած արժութային հասույթները լիովին տնօրինում են իրենք: Առանց սահմանափակումների է իրականացվում կանխիկ արտարժույթի ներմուծումը: Թույլատրվում է ՀՀ-ից արտահանել արտարժույթով արտահայտված արժեթղթեր և մինչև 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք արտարժույթ՝ առանց որևէ փաստաթղթի առկայության: Նշված գումարից ավելի դրամական միջոցների արտահանումն իրականացվում է բանկային փոխանցումների և բանկային պրակտիկայում կիրառվող վճարումների այլ եղանակներով:

ՀՀ-ում արժութային գործառնությունների իրականացման ընդհանուր սկզբունքները, արժութային վերահսկողության մարմինների իրավասությունները, արժութային արժեքների տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը՝ արժութային օրենսդրությունը խախտելու համար, սահմանված են «ՀՀ կենտրոնական բանկի մասին», «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին», «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքներում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, «ՀՀ կենտրոնական բանկում արժութային քաղաքականության սկզբունքների մասին» հայտարարությունում, «ՀՀ տարածքում արժութային կարգավորումը և վերահսկողությունը» ՀՀ ԿԲ Կանոնակարգ 8-ում:

2004 թ. երրորդ եռամսյակից սկսած՝ ՀՀ-ում նկատվեցին դրամի կտրուկ արժևորման միտումներ, թեև դրա անվանական փոխար-

ժեքի բարձրացումը որոշ չափով սկսվել էր դեռևս 2003 թ. վերջերին: Արժևորման նման միտումը հաճախ կապվում է ԴԴ տնտեսության (արտադրողականության աճ, ֆինանսական միջոցների ինտենսիվ ներհոսք արտերկրներից և այլն) և միջազգային ֆինանսական շուկաներում որոշ զարգացումների հետ⁵: Այնուամենայնիվ, նպատակ չունենալով դիտարկել պատճառները, փորձենք վերլուծել այն բոլոր դրական ու բացասական հետևանքները, որոնք կարող է առաջ բերել դրամի արժևորումը երկրի տնտեսությունում՝ հատկապես ներքին գնագոյացման և սոցիալական ուղղվածության հարցերի առումով:

Տեսականորեն ազգային արժույթի արժևորումը ընդհանուր առմամբ կարող է դիտվել որպես դրական երևույթ՝ դրա նկատմամբ վստահության մեծացման և հոգեբանական տեսանկյունից: Ավելի գործնական իմաստով նման երևույթը դրական է դիտվում նաև ներքին գնագոյացման առումով: Հատկապես Հայաստանի նման փոքր ու բաց տնտեսություն ունեցող երկրում, որի տնտեսական աճը մեծապես կախված է արտերկրներից ներմուծված վերջնական սպառման և հումքային ապրանքների գներից, ազգային դրամի արժևորումը այլ հավասար պայմաններում պետք է իջեցնի ներմուծվող ապրանքների գները: Վերջինիս արդյունքում ենթադրվում է նաև կարճաժամկետ հատվածում տեղական արտադրության ապրանքների գների անկում՝ հաշվի առնելով ներքին մրցակցությունը: Այստեղ խոսքը, ի դեպ, վերջնական սպառման ապրանքների մասին է, իսկ միջանկյալ սպառման և ներդրումների գծով այդ ազդեցությունը նկատվում է միջնաժամկետում և երկարաժամկետում: Ներմուծման գների համաթիվը, փաստորեն, ծախսային կամ առաջարկի գնաճի կարևորագույն կողմնորոշիչներից է: (Խնդրո հարցին կանդրադառնանք քիչ ավելի ուշ:)

Այսպիսով, ազգային արժույթի արժևորումից հիմնականում շահում են այն սուբյեկտները, որոնք ներմուծվող ապրանքների սպառողներ են: Միևնույն ժամանակ շահավետ է դառնում երկրում ներդրումների իրականացումը, քանի որ ավելանում է դրանցից ակնկալվող շահաբաժնի արտարժույթային արժեքը:

Ազգային արժույթի արժևորման դեպքում արտահանողների, ինչպես նաև արտարժույթով եկամուտներ ստացող այլ սուբյեկտների

⁵ Տե՛ս Սղաճը և ներմուծման գները Հայաստանում, ԴԴ ԿԲ, Եր., 2005, էջ 25-32:

եկամուտները կնվազեն՝ արտարժույթի և ազգային արժույթի հարաբերակցության տեսանկյունից: Սակայն նույնիսկ կարճաժամկետում անհնար է գնահատել արժույթի արժևորման հետևանքները որչ ազգաբնակչության տեսանկյունից և հաշվարկել, թե դրա արդյունքում հնարավոր կորուստներն ու օգուտներն ինչպե՞ս են վերաբաշխվում արտահանողների ու մյուս սուբյեկտների միջև: Սակայն վախճված է արտահանման ու ներմուծման նկատմամբ սահմանային հակվածության և դրանց համապատասխան տարբեր արդյունքների պահանջարկի առանձգականության ցուցանիշից:

Վերը դիտարկվածը ազգային արժույթի արժևորման դրական համարվող և տեսականորեն հիմնավորված ազդեցությունն է երկրի տնտեսության վրա: Սակայն պարզելու համար, թե որքանով է այն համապատասխանում մեր իրականությանը, կատարենք որոշակի վերլուծություն՝ հիմնվելով պաշտոնական վիճակագրական տվյալների վրա:

Փաստորեն, 2004-2007 թթ. ՀՀ դրամի արժևորումը ազգաբնակչության վրա ունեցել է երկակի ազդեցություն. մի կողմից՝ սոցիալապես անապահով խավերի գնողունակությունն ընկել է 20-30%-ով (հաշվի առած նաև ներքին գների աճը), մյուս կողմից՝ ներմուծող սուբյեկտների շահույթներն ավելացել են միջին հաշվով 57-93%⁶: Եվ եթե հաշվի առնենք, որ ընդհանուր բնակչության թվում անհամեատ մեծ տեսակարար կշիռ ունեն արտարժույթով եկամուտներ ստացողները, քան ներմուծող և մենաշնորհային դիրք ունեցող ձեռնարկատերերը, ապա կարելի է եզրակացնել, որ դրամի արժևորումը ՀՀ-ում, ընդհանուր առմամբ, հանգեցրել է սոցիալական զգալի բացասական հետևանքների: Կարևոր է նաև այն, որ ընդհանուր իմաստով ազգային արժույթի արժևորման դրական ցուցիչները մեծապես կորելացված են նաև երկրի տնտեսության, հետևապես՝ ազգային արժույթի միջազգային ինտեգրման աստիճանին: Հայաստանի ինտեգրման ցուցանիշը դեռևս ակնհայտորեն ցածր է և չի դիտարկվում նույնիսկ երկրների միջազգային ինտեգրման հեղինակավոր վերլուծողների կողմից:

⁶ Տե՛ս Թ. Ավետիսյան, Ազգային արժույթի արժևորման հայեցակետերն ու սոցիալական հետևանքները Հայաստանի Հանրապետությունում, «Քանթեր ԴՊՏՀ-ի» հանդես, 2007, թիվ 1:

6.12. Միջազգային արժուրթավարկային կազմակերպությունները

Միջազգային արժուրթավարկային կազմակերպություններից հիմնական երկուսը Համաշխարհային բանկի խումբն է և Արժույթի միջազգային հիմնադրամը:

Համաշխարհային բանկի խումբը բաղկացած է հինգ փոխկապված կազմակերպություններից:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (ՎՋՄԲ) (International Bank for Reconstruction and Development - IBRD) հիմնադրվել է 1944 թ. և սկզբնապես նպատակ էր հետապնդում աջակցել համաշխարհային պատերազմից տուժած տնտեսությունների վերականգնմանը: Ներկայումս նրա առաքելությունը ընդարձակվել է և ընդգրկում է միջին եկամուտ ունեցող, վարկունակ պետություններին ֆինանսական և տեխնիկական աջակցության տրամադրումը աղքատությունը կրճատելու նպատակով: ՎՋՄԲ-ի ծրագրերը հիմնականում ուղղված են ծավալուն ենթակառուցվածքային խնդիրների լուծմանը: ՎՋՄԲ-ի ֆինանսական ռեսուրսները ձևավորվում են անդամ-երկրների անդամավճարներից, ստացվող եկամուտից և, ամենակարևորը՝ համաշխարհային ֆինանսական շուկաներից հարաբերականորեն ցածր տոկոսադրույքով (շնորհիվ իր բարձր վարկանիշի) կատարվող ներգրավումներից: Կառավարությունները ՎՋՄԲ-ից վարկերը սովորաբար ավելի ցածր տոկոսով են ստանում, քան եթե իրենք փորձեին վարկեր ներգրավել ֆինանսական շուկայից:

Ձարգացման միջազգային ասոցիացիան (International Development Association – IDA) ստեղծվել է 1960 թ. և նպատակ է հետապնդում կրճատել աղքատությունը աշխարհի առավել թույլ զարգացած 81 երկրներում: ՋՄԱ-ն տրամադրում է անտոկոս վարկեր՝ 35-40 տարի մարման ժամանակով, որոնք հիմնականում ուղղվում են կրթության, առաջնային բուժսպասարկման, մաքուր խմելու ջրի ապահովման, ձեռնարկատիրական միջավայրի, ենթակառուցվածքների բարելավման և այլ ոլորտներ: ՋՄԱ-ի ռեսուրսները ձևավորվում են հարուստ անդամ-երկրների կառավարությունների շնորհներից և ՎՋՄԲ-ի եկամտից: ՋՄԱ-ն և ՎՋՄԲ-ն միասին կազմում են Համաշխարհային բանկը:

Միջազգային ֆինանսական ընկերակցությունը (International Financial Corporation – IFC) հիմնադրվել է 1956 թ. և նպատակ ունի նպաստել զարգացող երկրների տնտեսական աճին՝ մասնավոր հատվածում ներդրումների խրախուսման միջոցով: Այն մասնակցում է կապիտալին, տրամադրում է վարկեր, տեխնիկական աջակցություն այնպիսի ձեռնարկությունների, որոնց համար հասանելի չեն ֆինանսական մեծածավալ միջոցներ, կամ որոնք մասնավոր ներդրողների համար ռիսկային են թվում, սակայն իրականում ունեն զարգացման և երկրի տնտեսական աճին նպաստելու մեծ ներուժ:

Ներդրումների երաշխավորման բազմակողմանի հիմնադրամը (Multilateral Investment Guarantee Agency – MIGA) ստեղծվել է 1988 թ. և հիմնական գործառույթը օտարերկրյա ուղղակի ներդրողներին ոչ առևտրային ռիսկերից երաշխիքների տրամադրումն է: Այն երաշխավորում է այնպիսի քաղաքական ռիսկերից, ինչպիսիք են ազգայնացումը, արժույթի ոչ փոխարկելիությունը, պայմանագրերի չկատարումը, պատերազմները և այլն: Դրա միջոցով նա նպաստում է դեպի զարգացող երկրներ ՕՈՒՆ-երի ներհոսքի աճին: Բացի այդ, ՆԵԲՅ-ն նաև տրամադրում է խորհրդատվություն ՕՈՒՆ-ների ներգրավման գործում, ինչպես նաև օգնում է՝ օտարերկրյա ներդրողների շրջանակներում տարածել տեղեկատվություն տվյալ երկրում ներդրումային հնարավորությունների վերաբերյալ:

Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնը (International Centre for Settlement of Investment Disputes – ICSID), որը հիմնադրվել է 1966 թ., նպատակ ունի նպաստել կառավարությունների և օտարերկրյա մասնավոր ներդրողների միջև ծագող ներդրումային վեճերի լուծմանը՝ դրա միջոցով խրախուսելով ՕՈՒՆ-ների հոսքերի ավելացմանը:

Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) ստեղծվել է 1944 թ. և սկզբնապես նպատակ էր հետապնդում վերահսկել ֆիքսված փոխարժեքների համակարգը: Սակայն աստիճանաբար այն ձևափոխվեց մի միջազգային կառույցի, որի հիմնական նպատակը համաշխարհային տնտեսությունում մակրոտնտեսական կայունության ապահովումն է: Ներկայումս ԱՄՀ-ն իրականացնում է երեք հիմնական գործառույթ՝ վերահսկում, ֆինանսական աջակցություն և տեխնիկական աջակցություն:

Վերահսկման գործառույթն այն է, որ ԱՄՅ-ն, պարբերաբար ստանալով մանրամասն տվյալներ անդամ-երկրների տնտեսությունների և կառավարությունների կողմից վարվող քաղաքականության վերաբերյալ, բացահայտում է այն երևույթները, որոնք կարող են վտանգել տվյալ երկրի, ինչպես նաև համաշխարհային տնտեսության մակրոտնտեսական կայունությանը, և այդ երկրի կառավարությանը հանձնարարականներ է տրամադրում դրանց շտկման ուղղությամբ:

Եթե կառավարությունը ընդունում է այդ հանձնարարականները և շտկում իր տնտեսական քաղաքականությունը, ապա նա կարող է ակնկալել *ֆինանսական աջակցություն* ԱՄՅ-ից: ԱՄՅ-ի ֆինանսական ռեսուրսները ձևավորվում են անդամ-երկրների քվոտաներից՝ ԱՄՅ-ի կանոնադրական կապիտալում երկրների մասնակցությունից, վարկերից ստացվող տոկոսային եկամտից, ինչպես նաև անդամ-երկրների կառավարությունների և կենտրոնական բանկերի կողմից ԱՄՅ-ի համար բացված վարկային գծերից: Զվտայի մեծությունը կախված է երկրի ՅՆԱ-ի, պահուստների մեծությունից և միջազգային հաշվարկներում ընդգրկվածության աստիճանից: Զվտայի մեծությամբ է որոշվում ձայների քանակը, որ տվյալ երկիրն ունի ԱՄՅ-ում: Վերջինիս քվոտան, տրամադրվող ֆինանսական ռեսուրսները հաշվառվում են ԱՄՅ-ի հաշվարկային միավորներով՝ Փոխառելիության հատուկ իրավունքներով (SDR): SDR-ը արժութային զամբյուղ է, որն ընդգրկում է ԱՄՆ դոլարը, եվրոն, անգլիական ֆունտ ստերլինգը և ճապոնական իենը:

ԱՄՅ-ի ֆինանսական աջակցությունը տրամադրվում է մասնաբաժիններով՝ տրանշերով: Առաջին տրանշը, որ կոչվում է պահուստային տրանշ և կազմում է քվոտայի 25%-ը, տրամադրվում է, երբ երկիրը պարզապես ցույց է տալիս պատրաստակամություն՝ հաղթահարելու վճարային հաշվեկշռի հետ կապված ղժվարությունները: Հետագա տրանշերը տրամադրվում են միայն ԱՄՅ-ի և կառավարության միջև համաձայնեցված բարեփոխումների ծրագրի չափանիշներուր բավարարելու դեպքում:

Ընդհանուր առմամբ, ԱՄՅ-ի աջակցությունը կարող է լինել երեք տեսակի՝ կանոնավոր, կոնցեսիոն և հատուկ: Կանոնավոր ֆինանսավորումը տրամադրվում է քվոտայի մինչև 300%-ի չափով, շուկայական տոկոսադրույքով և 4-10 տարի մարման ժամկետով: Դրան պատկանելը կարող են լինել կարծաժամկետ մակրո-տնտեսա-

կան խնդիրների լուծումը կամ կառուցվածքային բարեփոխումներին աջակցումը: Կոնցեսիոն ֆինանսավորումը տրամադրվում է առավել թույլ զարգացած երկրներին՝ քվոտայի մինչև 50%-ի չափով, արտոնյալ պայմաններով (0.5% տոկոսադրույքով, 5 տարվա արտոնյալ ժամկետով): Հատուկ ֆինանսավորումը տրամադրվում է առանձնահատուկ դեպքերում (օրինակ, բնական աղետներ, ներմուծվող հումքի գների կտրուկ աճ և այլն)՝ քվոտայի մինչև 30%-ի չափով:

Տեխնիկական աջակցությունը ենթադրում է ԱՄՆ-ի կողմից դրամավարկային, արժուրային քաղաքականությունների, բանկային վերահսկողության, վիճակագրության և այլ ոլորտներում մեթոդոլոգիական, փորձագիտական աջակցության տրամադրում, ինչպես նաև կադրերի վերապատրաստում:

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկի և ԱՄՆ-ի անդամ է 1992 թվականից:

6.13. Եվրոպական արժուրային համակարգը և զարգացման փուլերը

Հիմնվելով Լյուքսեմբուրգի վարչապետ Վերների զեկույցի վրա, Եվրոպական համագործակցության անդամ-երկրների առաջնորդները դեռևս 1972 թ. իրենց առջև նպատակ դրեցին՝ ստեղծելու արժուրային միություն: Այս նախագծի իրագործման տարեթիվը նշվում էր 1980 թ: Սակայն նավթի գների կտրուկ տատանումները 70-ական թթ. կեսերին դարձան համաշխարհային տնտեսությունում լուրջ անկայունությունների պատճառ, և, փաստորեն, անհնար դարձավ նշված ծրագրի իրականացումը:

Մյուս կարևոր քայլը դեպի արժուրային միություն 1979 թ. Եվրոպական արժուրային համակարգի՝ ստեղծումն էր: Դրանում մեծ դեր խաղաց այն ժամանակ Եվրոհանձնաժողովի նախագահ Ռոյ Ջենքինսը, և գործի դրվեց Փոխարժեքների մեխանիզմը (ERM):

Դրա հիմնական պարամետրերն էին.

- Եվրոպական արժուրային միավորի՝ էքյուի ստեղծում (European Currency Unit): էքյուն Եվրոպական համագործակցության երկրների արժուրյների զաբյուղ էր և օգտագործվում էր որպես հաշվարկային միավոր:

- Փոխարժեքների տատանումների սահմանափակում էքյուրի նկատմամբ սահմանված փոխարժեքից՝ +/-2.25%-ի չափով:
- Արժուքային համագործակցության եվրոպական հիմնադրամի ստեղծում, որը պետք է տրամադրեր ֆինանսական աջակցություն փոխարժեքների կայունության ապահովման նպատակով:

1989 թ. Եվրոհանձնաժողովի նախագահ Ժակ Դելորի առաջարկությամբ կրկին դրվեց արժուքային միության անցնելու հարցը, որով նախատեսվում էր այն իրականացնել երեք փուլով (ժամանակային շրջանակներն ամրագրվեցին Մասստրիխտյան համաձայնագրում):

1-ին փուլ. 1990-1993 թթ.: Ավարտին պետք է հասցվեր ընդհանուր շուկայի ձևավորումը, և Եվրոմիության բոլոր անդամ-երկրները պետք է միանային ERM-ին:

2-րդ փուլ. 1994-1998 թթ.: Ֆրանկֆուրտում ստեղծվում է Եվրոպական վալյուտային ինստիտուտը, որի խնդիրներն էին՝ միասնական վալյուտայի ստեղծման նախագծի ղեկավարումը և Եվրամիության անդամ-երկրների տնտեսական գործընթացներին հետևելը: Երկրները պետք է հասնեին տնտեսությունների կոնվերգենցիայի՝ մերձեցման, որի չորս չափանիշները սահմանվել էին Մասստրիխտյան համաձայնագրով:

3-րդ փուլ. 1999-2002 թթ.: Որոշվեց այն երկրների շրջանակը, որոնք պետք է ընդգրկվեին Արժուքային միության մեջ: Այդ պահին Եվրամիության կազմի մեջ մտնող 15 երկրներից միայն Յունաստանը չբավարարեց կոնվերգենցիայի չափանիշներին և միացավ միությանը միայն երկու տարի անց, իսկ Մեծ Բրիտանիան, Դանիան և Շվեդիան չանդամակցեցին միությանը՝ սեփական նախաձեռնությամբ: 1999 թ. հունվարի 1-ից էքյուն իր տեղը զիջեց եվրոյին, որն սկսեց կատարել անկանխիկ վճարման միջոցի և հաշվարկային միավորի գործառնություններ: Եվրոյի գոտու մեջ մտնող երկրների արժույթների փոխարժեքները ֆիքսվեցին եվրոյի նկատմամբ: Իր հերթին, Եվրոպական վալյուտային ինստիտուտը վերափոխվեց Եվրոպական կենտրոնական բանկի, որն իր ձեռքը վերցրեց անդամ-երկրների արժուքային և դրամավարկային քաղաքականությունների ղեկավարումը: 2002 թ. հունվարի 1-ից շրջանառության մեջ մտավ կանխիկ եվրոն, և այն, փաստորեն, դարձավ լիարժեք և լիիրավ դրամական միավոր: 2002 թ. փետրվարի 28-ից եվրոյի

գոտու անդամ-երկրների ազգային արժույթները դադարեցին իրենց գոյությունը որպես պաշտոնական վճարամիջոց:

Եվրամիության հետագա ընդարձակումը ենթադրում է նաև, որ նոր երկրները նույնպես ցանկություն կհայտնեն միանալ եվրոյի գոտուն: Այդուհանդերձ, դրա համար այլ պայմանների հետ մեկտեղ անհրաժեշտ է բավարարել կոնվերգենցիայի չափանիշները: Առայժմ Եվրամիության նոր անդամներից միայն Սլովենիան է, որ 2007 թ. հունվարին միացել է եվրոյի գոտուն:

Միասնական արժույթի ներդրումը մեծ քայլ էր Եվրոպայում միասնական շուկայի ստեղծման ուղղությամբ: Եվրոն թույլ տվեց վերացնել արժութային ռիսկերը, արժույթի փոխանակման հետ կապված տրանզակցիոն ծախսերը: Արդեն իսկ կարելի է ասել, որ եվրոյի ներդրումը համաշխարհային արժութային համակարգը դարձրեց երկբևեռ՝ խաթարելով ԱՄՆ դոլարի մենիշխանությունը: Իսկ հիմնական վտանգը, որից տարակուսում են եվրոյի գոտուն չանդամակցող երկրները, մնում է դրամավարկային և արժութային ինքնուրույն քաղաքականություն իրականացնելու հնարավորությունից և ազգային ինքնիշխանության խորհրդանիշից զրկվելը:

6.14. Միջազգային հաշվարկների էությունը և ձևերը

Միջազգային հաշվարկները արտաքին տնտեսական գործունեության սուբյեկտների միջև դրամական պահանջների գծով վճարումների կազմակերպման և կարգավորման գործիքներից են: Առավել տարածված են հաշվարկների հետևյալ ձևերը:

Բաց հաշիվ: Բաց հաշիվը ենթադրում է առավելագույն ռիսկ վաճառողի և նվազագույն ռիսկ՝ գնորդի համար: Բաց հաշվով վաճառողն առաքում է ապրանքները՝ պայմանով, որ գնորդը վճարումը կատարի ապրանքները ստանալուց անմիջապես հետո կամ ապագա որոշակի պայմանավորված ժամանակահատվածում: Չնայած ռիսկի ակնհայտ բարձր մակարդակին, բաց հաշիվը միջազգային առևտրում առավել տարածված ձևն է: Եթե արտահանողը ճանաչում է ներմուծողին, և նրանց միջև առկա են ամուր գործընկերային հարաբերություններ, բաց հաշիվը կարող է դիտվել հաշվարկների առավել հարմար եղանակ: Բացառությամբ դրամական փոխանցումը կատարելուց՝ բանկերը որևէ այլ դեր չունեն բաց հաշվով հաշ-

վարկների ժամանակ և որևէ կերպ չեն երաշխավորում, որ վճարումն ի վերջո կկատարվի:

Կանխավճար: Հաշվարկների այս եղանակն առավել ապահովն է արտահանողի համար: Ներմուծողը վճարում է արտահանողին նախքան ապրանքի առաքումը և հետևաբար իր վրա է վերցնում ռիսկը այն պարզ պատկերացմամբ, որ արտահանողը ի վերջո չի կատարի առաքումը, կամ ապրանքը կլինի ոչ բավարար որակի, կամ այն՝ չի համապատասխանի մասնագրին: Կանխավճարը հիմնականում օգտագործվում է այն ապրանքների դեպքում, որոնց պահանջարկը բարձր է, իսկ առաջարկը՝ սահմանափակ: Կատարելով կանխավճար՝ արտահանողը փաստորեն ֆինանսավորում է ներմուծողին որոշակի ժամանակով, նախքան ապրանքն իր տրամադրության տակ հայտնվելը: Միջազգային առևտրում առավել հաճախ հանդիպում է մասնակի կանխավճարը (ապրանքի արժեքի 20-35%), որի դեպքում արժեքի մնացած մասը վճարվում է այլ եղանակով:

Ինկաստ (Collection): Ինկաստն բանկային ծառայության տեսակ է, որի դեպքում բանկը պարտավորվում է ներմուծողին հանձնել ինկաստի հանձնարարականում նշված փաստաթղթերը՝ միայն նրանից վճարումն ստանալու դիմաց:

Այս դեպքում արտահանման/ներմուծման հետ կապված ապրանքային և ֆինանսական փաստաթղթերը, ինչպիսիք են հաշիվ ապրանքագիրը, տրանսպորտային և ապահովագրական փաստաթղթերը, տրատուան, արտահանողի կողմից տրամադրվում են բանկին՝ հանձնարարելով դրանք փոխանցել արտերկրում գտնվող բանկին, նա էլ իր հերթին՝ ներմուծողին: Նման ինկաստն կոչվում է փաստաթղթային: Եթե ինկաստի են ներկայացվում միայն ֆինանսական փաստաթղթերը, ապա այն կոչվում է զուտ ինկաստ: Ինկաստի հանձնարարականում նշվում է, թե ինչպես պետք է փաստաթղթերը փոխանցվեն ներմուծողին: Դա կարող է իրականացվել երկու եղանակով՝ փաստաթղթեր վճարման դիմաց, երբ դրանք տրվում են ներմուծողին անմիջական վճարման դեպքում, և փաստաթղթեր հոժարագրման դիմաց, երբ դրանք տրվում են ներմուծողին տրատուայի հոժարագրման դեպքում:

Փաստաթղթային ինկաստն կարգավորվում է Առևտրի միջազգային պալատի թիվ 522 հրապարակմամբ՝ «Ինկաստի միասնական կանոններով» (URC 522):

Փաստաթղթային ակրեդիտիվ (Letter of credit (L/C)): Փաստաթղթային ակրեդիտիվը բանկի պայմանական պարտավորությունն է՝ կատարել վճարում՝ որոշակի պայմաններին բավարարող փաստաթղթերի դիմաց: Ակրեդիտիվները աստիճանաբար ընդգրկում են արտաքին առևտրային գործարքներում: Մասնավորապես Հարավարևելյան Ասիայի երկրներից ներմուծման գործարքների մեծ մասում օգտագործվում է հաշվարկների այս եղանակը: Ակրեդիտիվի դեպքում արտահանողի կողմից վճարման ստացումը կախված է ոչ թե ներմուծողի, այլ բանկի հուսալիությունից: Հաշվարկների այս եղանակը զգալիորեն նվազեցնում է թե՛ արտահանողի, թե՛ ներմուծողի ռիսկերը, սակայն ավելի ծախսատար է, քանի որ ակրեդիտիվ սպասարկող բանկերը հաշվարկների մյուս ձևերի համեմատ պահանջում են ավելի մեծ չափերի միջնորդավճարներ:

Ակրեդիտիվների գերակշիռ մասը հետ չկանչվող է, այսինքն՝ ներմուծողը և/կամ ակրեդիտիվը բացող բանկը չի կարող այն հետ կանչել, չեղյալ հայտարարել՝ առանց արտահանողի համաձայնության: Բացի այդ, եթե ակրեդիտիվը բացող բանկը չի վայելում միջազգային ճանաչում, ապա վստահաբար կարելի է ակնկալել, որ արտահանողը կպահանջի, որպեսզի այն հաստատվի միջազգայնորեն հայտնի, հուսալի բանկի կողմից: Ակրեդիտիվի հաստատումը նշանակում է հաստատող բանկի կողմից դրա կատարման լրացուցիչ պարտավորության ստանձնում: Դա ավելի ապահով է դարձնում ակրեդիտիվային հաշվարկները, թեպետ մեծացնում է միջնորդավճարների չափը:

Փաստաթղթային ակրեդիտիվները կարգավորվում են Առևտրի միջազգային պալատի թիվ 600 հրապարակմամբ՝ «Փաստաթղթային ակրեդիտիվների միասնական սովորույթներով և պրակտիկայով» (UCP 600):

6.15. Վճարային հաշվեկշռի էությունը, կառուցվածքը և կարգավորման մեթոդները

Վճարային հաշվեկշիռը վիճակագրական հաշվետվություն է, որում համակարգված և ամփոփ ձևով ներկայացված են այլ երկրների հետ տվյալ երկրի արտաքին տնտեսական գործառնությունների մասին տվյալները՝ որոշակի ժամանակահատվածի համար:

Ինչպես և հաշվապահական հաշվեկշռում, վճարային հաշվեկշռում նույնպես, ցանկացած գործարք արձանագրվում է կրկնակի գրանցման եղանակով: Այսինքն՝ կատարվում է երկու գրանցում. մեկը դեբետում, մյուսը՝ կրեդիտում: Եթե պարզ բնութագրենք, ապա վճարային հաշվեկշռի կրեդիտում արտացոլվում են երկրի համար արտարժույթի ներհոսքի պոտենցիալ (ներուժային) աղբյուրները (օրինակ՝ ապրանքների ներմուծում, ուղղակի ներդրումներ արտերկրների), իսկ դեբետում գրանցվում է արտարժույթի արտահոսքը (օրինակ՝ ապրանքների արտահանում, այլ երկրներից ստացվող վարկեր):

Ժամանակակից վճարային հաշվեկշիռը ստանդարտացված է ԱՄՆ-ի վճարային հաշվեկշռի ուղեցույցի հիման վրա: Այն բաղկացած է երկու հիմնական բաժիններից՝ ընթացիկ գործառնությունների հաշվից և կապիտալի ու ֆինանսական գործառնությունների հաշվից:

Ընթացիկ գործառնությունների հաշիվը ներառում է հետևյալ հիմնական հոդվածները.

Ապրանքներ: Այս հոդվածում գրանցվում է ապրանքների ներմուծումն ու արտահանումը: Դրա արդյունքը անվանվում է նաև առևտրային հաշվեկշիռ: Եթե արտահանումը գերազանցում է ներմուծմանը, ապա առևտրային հաշվեկշիռը պրոֆիցիտային է, հակառակ պարագայում՝ դեֆիցիտային:

Ծառայություններ: Այստեղ հաշվառվում են ծառայությունների մատուցումը երկրի ռեզիդենտների կողմից ոչ ռեզիդենտներին և հակառակը:

Եկամուտներ: Այս հոդվածում գրանցվում են աշխատավարձը և այլ հավասարեցված վճարումները, ինչպես նաև օտարերկրյա ներդրումներից եկամուտները, որոնք ռեզիդենտները ստանում են ոչ ռեզիդենտներից և հակառակը:

Ընթացիկ տրանսֆերտներ: Տրանսֆերտները նյութական և ֆինանսական ռեսուրսների փոխանցումներն են մի երկրից մյուսին, երբ փոխանցող երկիրը դրանց դիմաց որևէ փոխհատուցում չի ստանում: Տրանսֆերտները կարող են լինել ընթացիկ և կապիտալ: Կապիտալ չհամարվող բոլոր տրանսֆերտները դասակարգվում են ընթացիկ տրանսֆերտների խմբում:

Վճարային հաշվեկշռի երկրորդ հիմնական բաժինը կապիտալի և ֆինանսական գործառնությունների հաշիվն է: Այն ընդգրկում է

հետևյալ հոդվածները.

Կապիտալ տրանսֆերտներ: Դրանք գլխավորապես ներառում են հիմնական կապիտալի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը և պարտատիրոջ կողմից պարտքի չեղյալ հայտարարումը:

Զարտադրված ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերում, վաճառք: Որպես այդպիսի ակտիվների օրինակ կարելի է բերել հողը և ընդերքը, ապրանքային նշանները և այլն:

Ուղղակի ներդրումներ: Ընդգրկված են բաժնետիրական կապիտալում կատարված ուղղակի ներդրումները, եկամուտների վերաներդրումը և այլ ուղղակի ներդրումները:

Պորտֆելային ներդրումներ: Ընդգրկվում են տարատեսակ արժեթղթերում կատարված պորտֆելային ներդրումները, սկսած բաժնետոմսերից, մինչև ֆինանսական ածանցյալներ:

Այլ ներդրումներ: Այստեղ գրանցվում են այն բոլոր ներդրումները, որոնք չեն ընդգրկված ուղղակի և պորտֆելային ներդրումների կազմում, մասնավորապես՝ վարկերը, ավանդները, կանխիկ արտարժույթը և այլն:

Կապիտալի և ֆինանսական գործառնությունների հաշվի մյուս հոդվածները վերլուծական նկատառումներով առանձնացվում են՝ դրանցից վերև պայմանական գիծ է քաշվում: «Գծից ներքև» գտնվում են պահուստային ակտիվների փոփոխությունը արձանագրող հոդվածները: Ընդ որում՝ եթե «գծից վերև» գտնվող հոդվածներով ընդհանուր կրեդիտը գերազանցում է դեբետին, ապա ընդունված է վճարային հաշվեկշիռը համարել պրոֆիցիտային, հակառակ պարագայում՝ դեֆիցիտային:

Պահուստային ակտիվների փոփոխություն: Պահուստային ակտիվները երկրի միջազգային բարձր իրացվելի ակտիվներն են, որոնք գտնվում են դրամական իշխանությունների կամ կառավարության վերահսկողության ներքո, և կարող են ցանկացած պահին օգտագործվել վճարային հաշվեկշռի դեֆիցիտի ֆինանսավորման և ազգային արժույթի փոխարժեքի կարգավորման նպատակով: Դրանց մեջ ընդգրկվում են մոնետար ոսկին, Փոխառելիության հատուկ իրավունքները (SDR), ԱՄՅ-ում պահուստային դիրքը, արտարժույթային ակտիվները և այլ պահանջներ:

Այն դեպքում, երբ երկրի պահուստները չեն բավարարում վճարային հաշվեկշռի դեֆիցիտը ծածկելու համար, կամ դրանք

օրենսդրորեն չեն կարող օգտագործվել այդ նպատակով, պետությանն ստիպված է լինում դիմել արտակարգ ֆինանսավորմանը: Արտակարգ ֆինանսավորման գործարքները առանձին խմբի մեջ չեն առանձնացվում, այլ կարող են ընդգրկվել այլ հոդվածների կազմում: Նման գործարքներից են պարտքի չեղյալ հայտարարումը, պարտքի փոխանակումը բաժնետոմսերով, պարտքի վերաձևակերպումը, պարտքի կետանցումը և այլն:

Ինչպես և հաշվապահական հաշվեկշռը, վճարային հաշվեկշիռը ևս պետք է մշտապես լինի հավասարակշռված, քանի որ, ինչպես նշվել է, կիրառվում է կրկնակի գրանցման սկզբունքը: Սակայն քանի որ վճարային հաշվեկշիռը ի վերջո վիճակագրական հաշվետվություն է, այստեղ կարող են տեղ գտնել անճշտություններ (օրինակ՝ այն պատճառով, որ միևնույն գրանցման դեբետի և կրեդիտի վերաբերյալ տվյալները ստացվել են տարբեր աղբյուրներից): Նման անճշտություններն արտացոլվում են «Ձուտ սխալներ և բացթողումներ» հաշվում, որը վերջնականապես հավասարակշռում է վճարային հաշվեկշիռը:

Շուկայական մեխանիզմները (մասնավորապես՝ արժույթի փոխարժեքի փոփոխությունները) մշտապես նպաստում են վճարային հաշվեկշռի հավասարակշռության հաստատմանը, սակայն դա հաճախ չի տալիս ցանկալի արդյունք. պահանջվում է պետական կարգավորման գործիքների կիրառում: Որպես այդպիսի գործիքներ պետության կողմից կարող են օգտագործվել, մասնավորապես, ազգային արժույթի դեվալվացիան, արժութային սահմանափակումները, վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխությունները, արտաքին առևտրային քաղաքականության փոփոխությունը և այլն:

6.16. ՀՀ վճարային հաշվեկշիռը

ԽՍՀՄ-ի կազմում գտնվելու տարիներին Հայաստանի Հանրապետության տնտեսությունը դարձել էր հարաբերականորեն արդյունաբերականացված, մյուս հանրապետությունների հետ սերտորեն փոխկապված, բացության բարձր աստիճանով բնութագրվող: Մինչև ԽՍՀՄ փլուզումը (1998 թ.) ՀՀ տնտեսության բացությունը կարող է բնութագրվել ներմուծման և արտահանման քվոտաների բարձր մակարդակներով՝ համապատասխանաբար 66.9% և 47.3%:

Անկախացման առաջին տարիներին նախկինում ձևավորված առևտրային կապերի խզման, տրանսպորտային շրջափակման, ապրանքների ցածր մրցունակության հետևանքով արտահանման ծավալները զգալիորեն կրճատվեցին: Արդյունքում՝ առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը աճեց ՀՆԱ-ի 13%-ից (1991թ.) մինչև ավելի քան 29% (1996 թ.): Ընթացիկ գործառնությունների հաշվի դեֆիցիտը շատ ավելի փոքր էր՝ ՀՆԱ-ի 18.5%-ը: Անցումային շրջանի առաջին տարիները բնութագրվում էին նաև մարդասիրական օգնության մեծ ծավալներով, որոնք 1995 թ. կազմում էին ներմուծման մոտ 22.5%-ը, իսկ 1996 թ.՝ 10%:

Ընթացիկ գործառնությունների հաշվի դեֆիցիտը մեծամասամբ ֆինանսավորվում էր երկկողմ և բազմակողմ վարկերի, ինչպես նաև ուղղակի ներդրումների միջոցով:

Այդուհանդերձ, տնտեսական աճը, մի շարք կառուցվածքային բարեփոխումները և այլ դրական զարգացումները պետք է հանգեցնեին արտաքին հատվածի անհաշվեկշռվածությունների կրճատմանը:

1998 թ.-ից հետո ընթացիկ գործառնությունների հաշվի գծով դրական միտումները դարձան ակնհայտ: Այս առումով հատկանշական էր 1999 թ., քանի որ անկախացումից հետո առաջին անգամ Հայաստանի Հանրապետությունն ունեցավ զուտ արտահանման աճ: Տարվա ընթացքում առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը նվազեց ավելի քան 100 մլն ԱՄՆ դոլարով (հիմնականում շնորհիվ ներմուծման կրճատման): 2000 թ. զուտ արտահանումը ավելացավ ևս 10 մլն ԱՄՆ դոլարով, այս անգամ սակայն շնորհիվ արտահանման աճի: Հետագա տարիներին առևտրային հաշվեկշռի դեֆիցիտը աստիճանաբար խորանում էր ներմուծման արագ աճի հետևանքով՝ 2005 թ. հասնելով 582.19 մլն ԱՄՆ դոլարի:

Ներքոհիշյալ աղյուսակում ամփոփ կերպով ներկայացված է 2005 թ. ՀՀ վճարային հաշվեկշիռը:

ՀՀ վճարային հաշվեկշիռ, 2005 թ.

(մլն ԱՄՆ դոլար)

Ընթացիկ հաշիվ	-193.29
Ապրանքներ (առևտրային հաշվեկշիռ)	-582.19
Արտահանում	973.92
Ներմուծում	-1556.11
Ծառայություններ	-59.28
Արտահանում	331.76
Ներմուծում	-391.04
Եկամուտներ	44.74
Ստացված	365.46
Վճարված	-320.73
Ընթացիկ տրանսֆերտներ	409.14
Ստացված	474.01
Վճարված	-64.83
Կապիտալ և ֆինանսական գործառնությունների հաշիվ	188.76
Կապիտալ տրանսֆերտներ	50.91
Ստացված	53.72
Վճարված	-2.81
Ուղղակի ներդրումներ	251.51
Դեպի արտերկիր	-6.72
Դեպի Հայաստան	258.23
Պորտֆելային ներդրումներ	-1.59
Դեպի արտերկիր	-2.72
Դեպի Հայաստան	1.13
Այլ ներդրումներ	50.02
Սկտիվներ	-36.30
Պարտավորություններ	86.32
Պահուստային ակտիվներ	-162.09
Զուտ սխալներ և բացթողումներ	4.53

Ինչպես տեսնում ենք, առևտրային հաշվեկշռի զգալի դեֆիցիտը ընթացիկ գործառնությունների հաշվի դեֆիցիտի կարևորագույն պատճառն է: Իհարկե ծառայությունների հաշվեկշիռը նույնպես բացասական է մնում, թեպետ դրա դեֆիցիտի խորացում չի նկատվում, իսկ 2005 թ. վերջինս նույնիսկ նվազել է ավելի քան 11 մլն ԱՄՆ դոլարով: Առևտրային հաշվեկշռի այս դեֆիցիտը առավելապես ֆինանսավորվում է զուտ ընթացիկ տրանսֆերտների հաշվին, որոնց ծավալը 2005 թ. աճել էր շուրջ 22%-ով: Մեծ ծավալ են շա-

րունակում ունենալ դեպի երկիր կատարվող ուղղակի ներդրումները, իսկ պորտֆելային ներդրումների ծավալը չնչին է՝ կապված արժեթղթերի ձևավորված շուկայի բացակայության հետ: Այլ ներդրումների մեջ գերակշռող ծավալը կազմում են ստացված վարկերը՝ մոտ 92.3 մլն ԱՄՆ դոլար: Այդուհանդերձ, ներմուծման աճը 2005 թ. այնքան կտրուկ էր, որ ֆինանսավորող մյուս հաշիվների աճը բավարար չէր վճարային հաշվեկշռի դեֆիցիտը ծածկելու համար, որի հետևանքով պահուստային ակտիվները կրճատվեցին շուրջ 162 մլն ԱՄՆ դոլարով (համեմատության համար նշենք, որ 2004 թ. պահուստային ակտիվների կրճատումը կազմում էր ընդամենը 26.3 մլն):

Գրականություն

1. Ս. Հաստեղ., Ս. Սելվին, Միջազգային տնտեսագիտություն, II հատոր, Միջազգային ֆինանսներ, Եր., «Գիտանք», 1999:
2. Ա.Մարկոսյան, Դ.Հախվերդյան, Գ. Նազարյան, Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Եր., ԱՌՏ, 2002:
3. М.Т. Балаванов, Валютные операции, М., 2001.
4. Б.Г. Болдырев, Финансы. Валюта. Деньги, М., 2004.
5. М.К. Бункина, А.М. Семенов, Основы валютных отношений, М., 1999.
6. А.Н. Буренин, Фьючерсные, форвардные и опционные рынки, М., 1994.
7. М.В. Ершов, Валютно-финансовые механизмы в современном мире. Кризисный опыт конца 90-х, М., 2002.
8. А.В. Васильев, Хеджирование на срочных рынках, М., 1999, стр. 27.
9. В.Н. Лиховидов, Фундаментальный анализ мировых валютных рынков, М., 1999.
10. Л.Н. Красавина, Международные валютные и кредитные отношения, М., 2000.
11. Д.М. Михайлов, Мировой финансовый рынок: тенденции развития и инструменты, М., 2000.

12. И. Носкова, Международные валютно-кредитные отношения, М., 2002.
13. Основы международных валютно-финансовых и кредитных отношений, под ред. А.В. Круглова, С.В. Котелкина, М., 2004.
14. Б.Г. Федоров, Современные валютно-кредитные рынки, М., 1999.
15. Форекс. Учебник по валютному диллингу, Лос-Анджелес, 2001.
16. А.С. Чесноков, Инвестиционная стратегия, опционы и фьючерсы. Изд. 2-е, под ред. Э.А. Азроянца, М., 1995.
17. А.С. Шапкин, Экономические и финансовые риски, М., 2004.
18. Дж. Швагер, Технический анализ: полный курс, М., 2001.
19. А.И. Шмырева, В.И. Колесников, Международные валютно-кредитные отношения: уч. пособие для вузов, СПб., издательский дом "Питер", 2002.
20. А. Киреев, Международная экономика (в двух частях): уч. пособие для вузов, М., "Международные отношения", 2001.
21. ՀՀ օրենքների ժողովածու (Արժույթ և օտարերկրյա ներդրումներ), Եր., «Մխիթար Գոշ», 1998:
22. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, վիճակագրական ժողովածուներ:
23. [http:// www EC. org](http://www.EC.org).
24. [http:// www IMF.org](http://www.IMF.org).
25. [http:// www UNIDO. org](http://www.UNIDO.org).
26. [http:// www WORLD BANK.org](http://www.WORLD BANK.org).
27. [http:// www OECD.org](http://www.OECD.org).
28. [http:// www iee.com](http://www.iee.com).

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ

7.1. Տնտեսական ինտեգրման եւթյունը և փուլերը

Համաշխարհային տնտեսության զարգացման արդի փուլում փոփոխվում են աշխարհակարգի ավանդական հիմքերը, տեղի է ունենում միջազգային տնտեսական հարաբերությունների քանակական և որակական զարգացում: «Նոր տնտեսության» կայացումը, տնտեսության արդիականացումը, «տեղեկատվական հասարակության» ձևավորումը, որոնք արդի աշխարհակարգի գրավականներն են, ներառում են երկու փոխկապված, բայց միևնույն ժամանակ միմյանց հակասող երևույթներ.

- *գլոբալացում*, որը միասնական համաշխարհային տնտեսության կայացման գործընթաց է՝ հիմնված ազգային տնտեսությունների խորը փոխկապվածության, միջազգային տնտեսական հարաբերությունների և աշխատանքի միջազգային բաժանման ինտենսիվացման, տնտեսության ազատականացման և վերազգայնացման վրա,

- *տարածաշրջանային տնտեսական ինտեգրացում*, որը ենթադրում է տարածաշրջանի մակարդակով մի քանի ազգային տնտեսությունների միավորում՝ այս կամ այն տիպի տնտեսական համակարգի շրջանակներում, այսինքն՝ տեղի է ունենում «համաշխարհային տնտեսական ճարտարապետության» էվոլյուցիա, որը գլոբալացման դարաշրջանում դառնում է երկրների և տարածաշրջանների միավորման բարդ ու բազմամակարդակ համակարգ: Տարածաշրջանային տնտեսական միավորումների ձևավորումը գլոբալացման արդի փուլի բնութագրիչն է:

Գլոբալացումը և տարածաշրջայնացումը բարդ ու հակասական գործընթացներ են, որոնք ընձեռում են քաղաքական այլընտրանքային ռազմավարության ընտրության հնարավորություն: Գլոբալացող համաշխարհային տնտեսության և միջազգային տնտեսական ինտեգրման համակարգում խիստ կարևորվում է յուրաքանչյուր

ազգային տնտեսության ինքնորոշումը:

Միջազգային տնտեսական ինտեգրացիա եզրն առաջին անգամ օգտագործվել է 1930-ական թթ. շվեդացի և գերմանացի տնտեսագետների աշխատություններում, սակայն մինչև այսօր գոյություն ունեն դրա մի քանի տասնյակ սահմանումներ: Լատիներենից թարգմանաբար «integratio» բառը նշանակում է լրացում, միասնականացում, ուստի «ինտեգրում» նշանակում է առանձին մասերի միասնականացում մեկ ամբողջի մեջ:

Միջազգային տնտեսական ինտեգրացում ասելով հասկանում ենք կայուն ու խորը տնտեսական փոխհարաբերությունների և աշխատանքի միջազգային բաժանման վրա հիմնված արտադրության միջազգայնացման բարձր մակարդակ, որը աստիճանաբար տանում է մի շարք երկրների տնտեսությունների միասնականացմանը:

Սակայն հարց է ծագում՝ ինչպիսի՞ բովանկադություն ունի այդ «միասնականացումը»:

1960-ական թթ. կեսերին ամերիկացի տնտեսագետ Ռ. Պոմֆրեթը ինտեգրացումը ներկայացրեց որպես վերազգային կորպորացիաների միջոցով իրականացվող գործընթաց և գտնում էր, որ միայն դրանք են ի վիճակի ապահովել ինչպես տարածաշրջանային ինտեգրացումը, այնպես էլ երկրների հավասարակշռված զարգացումը: Այդ ուղղությունը միջազգային տնտեսագիտության մեջ բնութագրվեց որպես կորպորացիոնալիզմ¹: Շվեդացի տնտեսագետ Գ. Մյուրդալը ինտեգրացումը դիտարկում է որպես ինտեգրվող երկրների տնտեսությունում ձևավորված կառուցվածքային գործընթաց, որի արդյունքում առաջանում է որակապես նոր, ավելի կատարյալ տնտեսական օրգանիզմ, իսկ ինտեգրացման զարգացման բևեռները, ըստ նրա, խոշոր ֆիրմաներն են, արդյունաբերական ձեռնարկություններն ու ճյուղերը²:

Միջազգային տնտեսագիտության տեսաբաններ Ջ. Վիները, Ռ. Լիպսին, Դ. Սալվատորը, Ջ. Քանթվելը, Ա. Կիրենը և այլոք, միջազգային տնտեսական ինտեգրացման գործընթացներին տրված գնահատականներում միասնական են այն խնդրում, որ տնտեսա-

¹ St' u R. Pomfret, "The Economics of Regional Trading Arrangements", New York: Oxford University Press, 1998, էջ 105:

² St' u G. Myrdale, "Development and Underdevelopment", Cairo, National Bank of Egypt, 1959, էջ 46-52:

կան ինտեգրացումը ազգային տնտեսությունների միջև աշխատանքի միջազգային բաժանմամբ պայմանավորված փոխազդեցության խորը և կայուն կապերն են³: Որոշ հեղինակներ դրանով էլ ավարտում են միջազգային տնտեսական ինտեգրացման բնորոշումը: Ի. Սպիրիդոնովը ինտեգրացումը ներկայացնելով մոտավորապես նույն բնորոշմամբ՝ ավելացնում է, որ «տնտեսությունների փոխազդեցությունը իրականացվում է տարբեր մակարդակներում»⁴: Ավելի սպառիչ բնորոշում այդ երևույթին տվել է Յու. Շերբանինը. «Միջազգային տնտեսական ինտեգրացումը ազգային տնտեսությունների փոխհամաձայնեցումն է, որը դրանց ներառում է միջազգային մաշտաբով միասնական վերարտադրողական գործընթացների մեջ»⁵:

Չնայած տրված բնորոշումները վերաբերում են ընդհանրապես միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացների էության պարզաբանմանը, այնուամենայնիվ, ինտեգրման գլոբալ և տարածաշրջանային մակարդակներն ունեն մի շարք առանձնահատկություններ: Գլոբալ ինտեգրացման բնորոշ գիծն այն է, որ երկրների միջև տնտեսական կապերի ձևավորումը սահմաններ չի ճանաչում, այն թափանցում է յուրաքանչյուր երկիր՝ կախված դրանց համագործակցության համար առկա համեմատական առավելություններից: Տարածաշրջանային տնտեսական ինտեգրացումը անդամերկրների համագործակցության աստիճանական խորացման գործընթաց է, որը սկսվում է երկրների միջև ապրանքների ու ծառայությունների շարժի ազատականացումից, ընթանում արտադրության գործոնների բացարձակ շարժանակության, արժուրավարկային, բյուջետային և հարկային միասնական համակարգերի ձևավորման, գյուղատնտեսական և արտաքին տնտեսական փոխհամաձայնեց-

³ J. Viner, *The Customs Union Issue*, New York The Carnegie Endowment for International Peace, 1953; R. Lippy, *The Theory of Custom Unions*, *Economic Journal*, September 1961, page 508; D. Salvatore, *International Economics*, second edition, New York London, 1987, page 250; J. Cantwell *The Reorganization of European Industries after Integration; Selected Evidence on the Role of Multinational Enterprise Activities*, *Journal of Common Market Studies*, Vol. XXXI, N2, Dec. 1987, page 135.; А.Киреев, *Международная экономика часть 1*, М., *Международные отношения*, 1998, стр 361.

⁴ И. Спиридонов, *Мировая экономика*, М., ИНФРА, 1999, стр. 66.

⁵ Ю. Щербанин и др., *Международные экономические отношения // Интеграция*, М. ЮНИТИ, 1997, стр16.

ված քաղաքականության իրականացման ուղիով: Տարածաշրջանային ինտեգրացման խմբավորումների նպատակը համագործակցության անդամ-երկրների համար առավել բարենպաստ տնտեսական պայմանների ձևավորումն է, մաքսատուրքերի վերացման ճանապարհով ազգային ապրանքների գների նվազեցումը, որը վերջին հաշվով տանում է բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Եթե գլոբալ տնտեսական ինտեգրացումը միասնականացնում է համաշխարհային տնտեսական կառուցվածքը, ապա տարածաշրջանայինը տանում է դրա մասնատմանը առանձին տնտեսական խմբավորումների: Սրանից ելնելով էլ ինտեգրման այս երկու մակարդակները կարելի է սահմանել յուրովի:

Այսպես, *գլոբալ տնտեսական ինտեգրումը* միջազգային տնտեսական կազմակերպությունների գործունեության ընդլայնման, ինչպես նաև ՎԱԿ-երի կողմից համաշխարհային տնտեսության մենաշնորհման նպատակով աշխատանքի միջազգային բաժանման խորացման գործընթաց է, որը հանգեցնում է երկրների տնտեսական կապերի փոխլրացմանն ու փոխկապվածությանը և համաշխարհային տնտեսության վերածմանը միասնական տնտեսական օրգանիզմի:

Տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը միջպետական համաձայնություններով ամրագրված, անդամ-երկրների միջև տնտեսական կապերի * խորացմանն ու ազատականացմանն ուղղված համագործակցություն է, որն իրացվում ու վերահսկվում է միջպետական մարմինների կողմից՝ տարածաշրջանային մրցունակ շուկա ձևավորելու նպատակով:

Ինտեգրացման դիտարկումը որպես գործընթաց, որը ավելի պարզ ձևերից զարգանալով գնում է դեպի ավելի բարդը, թույլ է տվել կատարել փուլերի համապատասխան դասակարգում: Այդ փուլերը առաջին անգամ համակարգել է Պրիստոնի համալսարանի պրոֆեսոր Ֆ. Մաքիլուպը, իսկ հետագայում հաշվի առնելով ժամանակի հրամայականը, ավելի է հստակեցրել տնտեսագետ Բ. Բալաշան:

Ինտեգրացման համաձայնագրերի հիմնական ձևերն են.

- 1) *ազատ առևտրի գոտի* (free trade zone),
- 2) *մաքսային միություն* (customs union),
- 3) *ընդհանուր շուկա* (common market),

- 4) *տնտեսական և արժուրային միություն* (economic and monetary union),
- 5) *լրիվ տնտեսական և քաղաքական ինտեգրացում* (total economic and political integration):

Ազատ առևտրի գոտի: Համաձայնագրերի այնպիսի ձև է, որի դեպքում մասնակից-երկրները վերացնում են բոլոր մաքսային արգելքները միմյանց նկատմամբ, միևնույն ժամանակ երրորդ երկրների հետ՝ պահպանելով ինքնուրույն մաքսային քաղաքականություն վարելու իրավունքը:

Մաքսային միություն: Սրա հիմնական տարբերությունն ազատ առևտրի գոտուց այն է, որ մասնակից-երկրները ոչ միայն ազատականացնում են առևտուրը, այլև համաձայնության են գալիս երրորդ երկրների հետ միասնական մաքսատուրքեր կիրառելու մասին: (Մաքսային միությունը ենթադրում է մի քանի մաքսային տարածքների փոխարինում մեկով:) Մաքսային միությունը տրամաբանորեն ավարտուն ինտեգրացիոն համաձայնագրի ձև է, որն ընդգրկում է միայն առևտրի ոլորտը: Այդ առումով այն պարունակում է որոշակի ներքին հակասություն, որի զարգացումն անխուսափելիորեն հանգեցնում է այլ, ավելի բարդ առևտրատնտեսական համաձայնագրերի կնքմանը:

Ընդհանուր շուկայի շրջանակներում ազատականացվում են արտադրության բոլոր գործոնների՝ կապիտալի, աշխատուժի և տեխնոլոգիաների տեղաշարժը: Սա ենթադրում է ազգային օրենսդրության նորմերի նույնականացում, ինչպես նաև ինտեգրման ինստիտուցիոնալ հիմքերի զարգացում, միասնական կառավարման մարմինների ձևավորում:

Տնտեսական միությունը համաձայնեցնում է տնտեսական կյանքի բոլոր ոլորտների գործունեությունը, իրականացնում միասնական գյուղատնտեսական, արդյունաբերական, տրանսպորտային, տարածաշրջանային, սոցիալական, գիտատեխնիկական քաղաքականություն:


Պետք է ուշադրություն դարձնել այն բանին, որ երբ ինտեգրացման գործընթացները հասնում են որոշակի մակարդակի, հատկապես, երբ երկիրը բնութագրվում է որպես բաց տնտեսություն, ապա պահանջվում է տնտեսական այնպիսի համաձայնագրերի կնքում, որոնք ներառեն համագործակցության ավելի խորը ու լայն շրջանակներ: Այս գործընթացը հանգեցնում է տրամաբանորեն

ավարտուն մեկ այլ ամբողջական ու ավելի բարդ ձևի՝ *տնտեսական և արժույթային միասնականության*:

Արժույթային միությունը տարածաշրջանային արժույթային միասնական համակարգի ստեղծումն է: Այն ենթադրում է միասնական կենտրոնական բանկի և արժույթի ստեղծում՝ կոորդինացված արժույթավարկային և մակրոտնտեսական քաղաքականության իրականացմամբ:

Լրիվ ինտեգրացում: Խոսքը միասնական շուկան տնտեսական և քաղաքական ընդհանրական կառույցի վերածելու մասին է: Սա ենթադրում է ոչ միայն տնտեսական քաղաքականության փոխհամաձայնեցում, այլ նաև միասնական ֆիսկալ, վարկային, կոնյուկտուրային քաղաքականության փաստացի իրականացում, օրենսդրական բազայի լրիվ միասնականացում:

Առևտրատնտեսական համաձայնագրերի մասին ասվածը կարելի է ցույց տալ նաև գծապատկերով.



Գծապատկեր 1

7.2. Տարածաշրջանային ինտեգրման նախադրյալները

Եվրամիության տնտեսական համագործակցության հաջողությունների գործնական արդյունքների գնահատումը միջազգային տնտեսագիտության տեսաբաններին թույլ է տվել ուսումնասիրել և ներկայացնել նախադրյալների այն ամբողջությունը, առանց որոնց ինտեգրացումը շոշափելի փոխազդեցություն արդյունքներ չի կարող տալ: Այդ նախադրյալները, որոնք համակարգել ու ներկայացրել է ռուս տնտեսագետ Ա. Կիրենը, հանգում են հետևյալին.

1. Ինտեգրվող երկրների տնտեսական զարգացման բարձր մակարդակը և հասուն շուկայական հարաբերությունների առկայությունը: Ջարգացող երկրների տնտեսական ինտեգրացման արդի ձեռքբերումների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ինտեգրման գործընթացների համար հասունացել են զարգացած, այլ ոչ թե զարգացող երկրները: Արտահանման հումքային ուղղվածություն ունեցող երկրների ինտեգրումն ազգային տնտեսությունների փոխլրացման բավարար հիմքեր չունի: Ժամանակակից գիտատեխնիկական առաջադիմության պայմաններում արտահանման կառուցվածքում պատրաստի ապրանքների բաժնեմասի ավելացումն է միայն պայմանավորում ազգային շուկաների փոխլրացման բարձր մակարդակը, որն էլ, իր հերթին, տանում է բնակչության կենսամակարդակների (մեկ շնչին ընկնող ՀՆԱ) և երկրների տեխնոլոգիական զարգացման մակարդակների փոխկապվածությանը: Բնակչության կենսամակարդակը որքան բարձր է, այնքան ավելի մեծ է պահանջարկը բարձրորակ ապրանքների նկատմամբ: Ուստի զարգացած երկրների համագործակցությունը միայն կարող է ընդլայնել բարձրորակ ապրանքների փոխադարձ առևտուրը:

2. Ինտեգրվող երկրների աշխարհագրական մերձությունը, մի շարք դեպքերում (մաքսային միության) նաև ընդհանուր սահմանի առկայությունը և պատմականորեն ձևավորված տնտեսական կապերը: Սա կարելի է համարել տարածաշրջանային տնտեսական ինտեգրման ելակետային նախադրյալը, առանց որի ազատ առևտրային գոտիներ ձևավորելու մասին որոշումն իրականացնել հնարավոր չէ:

3. Երկրների առջև ծառայած տնտեսական և այլ հիմնախնդիր-

Ների ընդհանրությունը՝ տնտեսական զարգացման, տնտեսական հարաբերությունների կարգավորման, ֆինանսավորման, քաղաքական համագործակցության և այլ ոլորտներում: Այս ընդհանրությունը որոշակի նշանակություն է ձեռք բերում, երբ ինտեգրման գործընթացները թևակոխում են ընդհանուր շուկայի փուլ՝ անցնելով ազատ առևտրային գոտիների և մաքսային միության ձևավորման ճանապարհը: Եթե ինտեգրվող երկրները դրանով դադարեցնում են այդ գործընթացները, ապա տնտեսական այլ հիմնախնդիրների ընդհանրության հարց (միասնական արժույթային, հարկային, ֆիսկալ քաղաքականության իրականացում) չի ծագում:

4. Ցուցադրման էֆեկտը, ասել է թե՛ ինտեգրված երկրների տնտեսական հաջողությունները, զգալի հոգեբանական ազդեցություն են թողնում այդ գործընթացներից դուրս մնացած երկրների վրա, որոնք ձգտում են անդամագրվել այդ համաձայնագրերին:

5. «Դոմինոյի էֆեկտները»: Աուտսայդեր երկրները կանգնում են որոշակի դժվարությունների առջև՝ կապված ինտեգրման խմբավորմանը անդամագրվող երկրների տնտեսական կապերի վերակողմնորոշման հետ, և կորցնում են իրենց նախկին տնտեսական կապերը: Ուստի չունենալով ցանկություն, այնուհանդերձ, շահագրգռվածություն են ցուցաբերում մուտք գործելու այս կամ այն խմբավորման մեջ:

Ընդհանրապես, ինտեգրման նախադրյալ ասելով պետք է հասկանալ գործոնների այն ամբողջությունը, առանց որոնց ինտեգրումը բավարար արդյունք չի կարող տալ: Ուստի ինտեգրացման նախադրյալներից վերջին երկուսը՝ ցուցադրման և «դոմինոյի էֆեկտները», տարածաշրջանային տնտեսական ինտեգրացման նախադրյալներ չեն, քանի որ ինտեգրված երկրների տնտեսական հաջողությունների վերագնահատման հիման վրա համագործակցության ցանկությունը կարող է անվանվել միայն *ինտեգրացման շարժառիթ*:

Միջազգային տնտեսագիտության մեջ տնտեսության բացությունը ևս համարվում է տարածաշրջանային տնտեսական ինտեգրացման կարևորագույն նախադրյալ, քանի որ այն ուղղակիորեն կախված է երկրների արտահանման խթանման քաղաքականությունից և պետության արտաքին տնտեսական կողմնորոշումից: Հետևաբար տնտեսության բացությունը անմիջական ազդեցություն ունի երկրների տնտեսական ինտեգրման նախաձեռնության և դրա

հետագա հաջողությունների վրա: Այն արտացոլում է ոչ միայն երկրի տնտեսական իրավիճակն ու դրա ներդաշնակ զարգացումը, այլև թույլ է տալիս գնահատել համաշխարհային տնտեսության մեջ թափանցելու մասշտաբներն ու համագործակցության փոխլրացման հնարավորությունները: Տնտեսության բացությունը նաև երկրների տնտեսական զարգացման մակարդակի չափանիշն է, որի գնահատումը թույլ կտա ինտեգրմանը հակված երկրներին նախապես կողմնորոշվել, թե ինչպիսին կլինի համագործակցության ապագան:

Տնտեսական ինտեգրացման համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ համագործակցության իրական արդյունքները կախված են նաև այնպիսի գործոններից, ինչպիսիք են ինտեգրվող երկրների կամքն ու վճռականությունը (Նորվեգիայում, օրինակ, բնակչությունը հանրաքվեով մերժեց եվրամիությանը անդամակցելու առաջարկը) և քաղաքական կողմնորոշումը (Շվեյցարիա): Ինտեգրվող երկրների տնտեսական հաջողությունների հիմքում ընկած են նաև ինտեգրացման, այսպես կոչված՝ թաքնված գործոնները՝ մշակութային և կրոնական ընդհանրությունները: Տարածաշրջանային տնտեսական ինտեգրացման գործընթացներում վերջիններիս կարելի է վերագրել ոչ պակաս կարևոր դեր, համեմայն դեպս, այսօր, այն տարածաշրջաններում, որտեղ անտեսված է նշված գործոնների դերը, ինտեգրման յուրաքանչյուր փորձ մատնվում է անհաջողության: Պակաս կարևոր չէ նաև ինտեգրման ցանկություն հայտնող երկրների թիվը համաձայնագրի ստորագրման սկզբնական փուլում: Քանի որ տնտեսական զարգացման բարձր մակարդակը միանգամից ձեռք չի բերվում, ուստի ինտեգրացման նախընտրելի ուղին երկկողմ (լավագույն դեպքում՝ եռակողմ) առևտրային արտոնյալ պայմանագրերի կնքումից, երկրների տնտեսական զարգացման, արտաքին առևտրի անվանացանկի և կառուցվածքի ընդլայնմանը զուգահեռ, աստիճանական անցումն է բազմակողմ ինտեգրացման:

7.3. Եվրամիության ձևավորման և զարգացման փուլերը

Եվրոպական միությունը ամենախոշոր տարածաշրջանային միջպետական ինտեգրացման միավորումն է, որն ունի վերազգայնացման ընդգծված տարրեր: Թե՛ պատմականորեն և թե՛ ինտեգրման գործընթացների շարունակական, գործնական արդյունքների դրսևորման առումով, այն տարածաշրջանային ինտեգրման դասական օրինակ է: Եվրամիության շրջանակներում իրականացվում է միասնական առևտրային, գյուղատնտեսական և տրանսպորտային քաղաքականություն, կիրառվում է մեկ միասնական արժույթ: Այսօր Եվրամիության անդամ են 27 երկրներ, իսկ մի շարք երկրներ էլ անդամակցության թեկնածուներ են: Կարելի է միանշանակ պնդել, որ ինտեգրացման գործընթացները Եվրոպայում հասել են զարգացման գագաթնակետին: Սակայն այդ միության ձևավորման պատմությունն սկսել է ավելի քան կես դար առաջ: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ երկրների միջև նախկին հակասությունները սկսեցին թուլանալ, միավորման գաղափարներ հայտնվեցին քաղաքական կյանքի թատերաբեմում: Համաեվրոպականացումը դարձավ նորաձև հոսանք, ի հայտ եկան դրա կարգախոսները ակտիվորեն քարոզող քաղաքական գործիչներ ու գաղափարախոսներ:

Հարկ է նշել, որ արևմտաեվրոպական ինտեգրման շրջանակներում մեծ նշանակություն է տրվել ամուր, մանրամասնորեն մշակված իրավական բազայի ստեղծմանը, ինչն էլ դարձավ դրա արդյունավետ զարգացման հիմնական նախադրյալը:

Ժամանակակից արևմտաեվրոպական տնտեսական ինտեգրման առաջին քայլերը արվել են 1951 թ. ապրիլին, երբ Ֆրանսիան, Իտալիան, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, Բելգիան, Նիդեռլանդները, Լյուքսեմբուրգը Փարիզում ստորագրեցին Աժիսի և պողպատի եվրոպական միության համաձայնագիրը: Վերջինս ուներ ինքնուրույն իրավաբանական անձի կարգավիճակ, որի կառավարման համար ստեղծվեց ինստիտուցիոնալ համակարգ: Այս համաձայնագիրը վերազգային մեխանիզմի ստեղծման առումով առաջինն էր ոչ միայն Եվրոպայում, այլ նաև ամբողջ աշխարհում, և դրա ներուժը զարգանում և խորանում էր՝ ինտեգրացման հարաբերությունների ընդլայնմանը զուգընթաց:

1955 թ. վերոհիշյալ երկրների արտաքին գործերի նախարարների կողմից ընդունվեց որոշում՝ պատրաստել համաձայնագիր, որը նախատեսում էր ինտեգրացման գործընթացների ընդլայնում, մինչև ընդհանուր շուկա ստեղծելը: Միևնույն ժամանակ արժարժվում էր Արևմտյան Եվրոպայի երկրների ատոմային արդյունաբերության ինտեգրման հարցը: Արդյունքում՝ 1957 թ. մարտի 25-ին Յոթնուն կնքվեց համաձայնագիր՝ Եվրոպական տնտեսական համագործակցության (ԵՏՀ) ստեղծման մասին:

Մաքսային միության ստեղծումը Յոթնի համաձայնագրի հիմնական կետերից մեկն էր և ներառում էր հետևյալ դրույթները.

- ԵՏՀ երկրների միջև առևտրի խթանում,
- ձեռնարկությունների մրցակցային դիրքերի ամրապնդում,
- պատրաստի արտադրանքի, հումքի և կիսաֆաբրիկատների շուկաներում անհամամասնությունների վերացում,
- ԵՏՀ անդամ-երկրների միջև տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունների հարթեցում:

Համագործակցության կազմի մեջ սկզբանպես ներառված էին զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրներ, որը և կանխորոշիչ դեր խաղաց հետագա 15 տարիների ընթացքում համագործակցության արտադրության աճի բարձր տեմպերի պահպանման գործում:

1973 թ. տեղի ունեցավ ԵՏՀ առաջին ընդլայնումը. դրա անդամների թիվը հասավ 9-ի. համագործակցությանն անդամագրվեցին նաև Մեծ Բրիտանիան, Դանիան և Իռլանդիան: Սակայն դրանով էլ սկիզբ դրվեց ԵՏՀ տնտեսական ցնցումների և ճգնաժամերի երկարատև ժամանակաշրջանին: ԵՏՀ նոր անդամների միացումը լրջորեն մեծացրեց երկրների տնտեսական զարգացման մակարդակների միջև անհամամասնությունները՝ ամենից առաջ Իռլանդիայի և Մեծ Բրիտանիայի մի քանի՝ արդյունաբերական տեսակետից հետամնաց շրջանների պատճառով: Եվ 1970-ական թթ. մինչև 80-ական թթ. սկիզբը ԵՏՀ երկրների տնտեսական զարգացման մակարդակների միջև մեծացավ խզումը: Եթե համեմատենք բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ ծավալը ԵՏՀ «իմնյակի» տասը առավել զարգացած և տասը առավել հետամնաց շրջանների միջև, ապա 1970 թ. 2.9:1 հարաբերությունը 1977 թ. հասավ 4:1-ի:

1981 թ. ԵՏՀ-ին միացավ Հունաստանը: Համագործակցության երկրների հետ համեմատած՝ Հունաստանի տնտեսությունը

գտնվում էր ավելի ցածր մակարդակի վրա, և նրա մուտքը վերոհիշյալ ցուցանիշը հասցրեց 5:1 հարաբերակցության: 1986 թ. Իսպանիայի և Պորտուգալիայի միացումով տեղի ունեցավ ԵՏՀ երրորդ ընդլայնումը, որը էլ ավելի սրեց անհամամասնությունները անդամ-երկրների միջև: Պորտուգալիայում և Իսպանիայում գյուղատնտեսության մեջ զբաղված էր աշխատող բնակչության հինգից մեկը, այն դեպքում, երբ ԵՏՀ երկրներում այդ ոլորտում զբաղված էր աշխատող բնակչության 13-ից մեկը:

1980-ական թթ, սկզբներին, երբ ընդհանուր շուկայի ստեղծումը դարձել էր օբյեկտիվ անհրաժեշտություն, ընդունվեցին մի շարք դրույթներ, որոնք վկայում էին այն մասին, որ մաքսային միությունը կայացել է, և դրա հիմնական սկզբունքները տարածվում են երրորդ երկրների առևտրի վրա: Այդ նպատակով 1988 թ. ընդունվեց միասնական վարչական փաստաթուղթ, որը յուրօրինակ մաքսային դեկլարացիա էր, և որի հիմքի վրա 1992 թ. փետրվարի 7-ին կնքվեց Մասստրիխտի պայմանագիրը՝ նշանավորելով եվրոպական ինտեգրացման ժամանակակից փուլի սկիզբը: ԵՏՀ անդաման 12 երկրները ստորագրեցին պայմանագիր, ըստ որի՝ այն վերանվանվեց Եվրոպական միության (ԵՄ): Պայմանագիրը նախատեսում էր.

1. Միասնական եվրոպական քաղաքացիություն:
2. Տնտեսական և արժույթային միության ձևավորում:
3. Քաղաքական միության ձևավորում, ընդհանուր արտաքին քաղաքականության իրականացում, Եվրապառլամենտի դերի բարձրացում:

1994 թ. սկսվեցին բանակցությունները Եվրամիության երկրների կազմը 12-16 հասցնելու մասին: Անդամակցության հայտ էին ներկայացրել Ավստրիան, Ֆինլանդիան, Նորվեգիան և Շվեդիան: Մասստրիխտի պայմանագրի համաձայն մինչև վերջնական պայմանագրի ստորագրումը անդամության նոր թեկնածուներկրները իրենց երկրներում պետք է անցկացնեին հանրաքվե: Հանրաքվեների արդյունքում 1995 թ. փետրվարից Ֆինլանդիան, Ավստրիան և Շվեդիան դարձան ԵՄ անդամներ, իսկ Նորվեգիայում ժողովուրդն արտահայտեց բացասական վերաբերմունք:

Մասստրիխտի պայմանագիրը ներառում էր նաև արժույթային միության ստեղծման և գործարկման դրույթները: Եվրոպական արժույթային համակարգը նախատեսվում էր կյանքի կոչել 3 փուլով,

որի արդյունքում 2002 թ.-ից 11 երկրներ շրջանառության մեջ դրեցին միասնական եվրոպական արժույթը՝ եվրոն:

Հաջորդ կարևորագույն քայլը եղավ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (ԿԱԵ) երկրների մուտքը ԵՄ: Նախկին սոցիալիստական երկրներում քաղաքական բարեփոխումներից հետո ԵՄ-ն անմիջապես սկսեց աջակցել այդ երկրներին՝ կնքելով առևտրի և համագործակցության մի շարք համաձայնագրեր և հաստատելով հատուկ տնտեսական ծրագիր: Եվ թեպետ մի շարք հռետեսական գնահատականների, 2004 թ. մայիսի 1-ին կայացավ Եվրամիության ամենամեծ ընդլայնումը. անդամ պետությունների թիվը հասավ 25-ի: Եվրամիության անդամ դարձան Չեխիան, Սլովակիան, Սլովենիան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Լեհաստանը, Հունգարիան, Կիպրոսը և Մալթան: Ռումինիան և Բուլղարիան, որոնք անդամակցության հայտ էին ներկայացրել դեռևս 1994 թ., անդամակցեցին միայն 2007 թ. հունվարի 1-ին:

Թուրքիան անդամակցության հայտ էր ներկայացրել 1982 թ., սակայն մինչև այսօր չի դարձել ԵՄ անդամ: Բանակցությունները Թուրքիայի անդամցության վերաբերյալ շարունակվում են: Բոլորովին վերջերս անդամակցության հայտ ներկայացրեց նաև Խորվաթիայի Հանրապետությունը:

Այսպիսով, ԵՄ ինտեգրման հաջողությունների հիմնական գրավականը կարելի է համարել անդամ-երկրների զարգացած շուկայական տնտեսության՝ եվրոպական երկրների բազմամյա սերտ տնտեսական կապերի առկայությունը, ժողովրդավարության ամուր հիմքերը, ինչպես նաև հետպատերազմյան ժամանակաշրջանում Եվրոպայի վերակառուցման՝ դինամիկ զարգացում ապահովելու ընդհանուր ձգտումը:

Ինչ վերաբերում է ՀՀ և ԵՄ համագործակցությանը, ապա Հայաստանի նշված խմբավորման անդամ պետությունների միջև կնքված է «Գործընկերության և համագործակցության համաձայնագիր» (ԳՀԳ), որը պաշտպանությունից բացի ընդգրկում է համագործակցության բոլոր հնարավոր ոլորտները: Այն հնարավորություն է ընձեռում Եվրամիությանն ու ՀՀ-ին՝ հաստատել ավելի սերտ քաղաքական, տնտեսական, մշակութային կապեր: Համաձայնագրում շարադրված են կողմերի ընդհանուր քաղաքական ու տնտեսական արժեքները, որոնցից են՝ ժողովրդավարական սկզբունքների պահպանումը, օրենքի գերակայությունը, անձի իրա-

վունքների պահպանումը, ինչպես նաև շուկայական տնտեսություն զարգացնելու հանձնառությունը: Այս հիմնադրույթները պետք է ընկած լինեն կողմերի արտաքին ու ներքին քաղաքականությունների հիմքում: Եվրամիության պարագայում դրանք կազմում են Հայաստանի հետ համագործակցություն հաստատելու նախապայմանները:

Եվրամիությունն այսօր Հայաստանում իրականացնում է մի շարք ծրագրեր: Դրանցից է Տասիս (Tacis) ծրագիրը, որի նպատակն է նպաստել ժողովրդավարության և շուկայական տնտեսության հաստատմանը: Ծրագիրն ապահովում է նախկին խորհրդային պետությունների շուկայական տնտեսության և ժողովրդավարական հասարակության զարգացումը խրախուսելու նպատակով ֆինանսական օժանդակությունը՝ դրամաշնորհի ձևով:

7.4. Խառը տիպի ինտեգրման միավորումները: NAFTA և APEC

1994 թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտավ Հյուսիսամերիկյան ազատ առևտրի ասոցիացիայի (North American Free Trade Assosiation, NAFTA) ստեղծման մասին համաձայնագիրը, որի նպատակը ոչ միայն անդամ-երկրների դիրքերի ամրապնդումն էր, այլ նաև դրանց ազգային շահերի պաշտպանությունը՝ արդի գլոբալ հասարակարգի ձևավորման պայմաններում:

Համաձայնագիրը ենթադրում էր գործող առևտրային պատնեշների վերացում, արտասահմանյան ներդրումների ազատականացում, աշխատուժի միգրացիայի, ինչպես նաև այլ տնտեսական հարաբերությունների նկատմամբ սահմանափակումների վերացում: Այս միաձուլման արդյունքում ստեղծված գոտին կընդգրկեր 375 մլն բնակչություն և տարեկան 8 տրլն դոլար ՀԱԱ⁶: Դա հսկայական ազդեցություն կունենար ողջ արևմտյան կիսագնդի վրա՝ առաջ բերելով տնտեսական և քաղաքական խորը տեղաշարժեր:

NAFTA-ի անդամ-երկրներից յուրաքանչյուրը ինտեգրման գործընթացներին ձեռնամուխ լինելիս առաջնորդվում էր սեփական շարժառիթներով:

⁶ Стен Государство и рынок: американская модель / под. ред. М. А. Партнова, В. Б. Супяна. М.: Анкил, 1999. էջ 292:

ԱՄՆ-ի համար: Բնական է, որ Հյուսիսամերիկյան ինտեգրման մեջ վճռական դերը պատկանում է ԱՄՆ-ին, քանի որ ամերիկյան վերազգային կորպորացիաները, ունենալով տնտեսական և գիտատեխնիկական հզոր ներուժ, առանց խոչընդոտի նվաճում են ցանկացած երկիր՝ տապալելով գրեթե բոլոր առևտրային պատմեշնեղը: Սակայն ԱՄՆ-ի համար NAFTA-ի համաձայնագիրը յուրատեսակ ռազմավարական ծրագիր էր արևմտյան կիսագնդում իր դերի բարձրացման և հեռանկարում «Ալյասկայից մինչև Հրո երկիր» միասնական ազատ առևտրային գոտու ստեղծման համար: Համաձայնագիրը ամրապնդելու էր ԱՄՆ-ի ոչ միայն տնտեսական, այլ նաև աշխարհաքաղաքական հզորությունը: Այսինքն՝ NAFTA-ն ԱՄՆ-ի համար յուրօրինակ ոստնակ էր Լատինական Ամերիկայի երկրների տնտեսություններ ավելի խորը ներթափանցելու համար, ընդ որում՝ նոր կարգավիճակով. ոչ թե որպես «շահագործող», այլ որպես գործընկեր:

Իրականում ԱՄՆ-ի նպատակն էր նաև ապահովել ամերիկյան ապրանքների, ծառայությունների և կապիտալի ազատ տեղաշարժը դեպի հարևան երկրներ, բարձրացնել տեղական արտադրանքի մրցունակությունը՝ օգտագործելով տարածաշրջանային համեմատական առավելությունները, այն է՝ միավորել մեքսիկական և կանադական էժան հումքն ու աշխատուժը ամերիկյան բարձր տեխնոլոգիաների հետ:

Մեքսիկայի համար NAFTA-ի համաձայնագիրը տնտեսական զարգացման տեմպերի արագացման, տնտեսության արդյունավետության բարձրացման, առևտրի ազատականացման, ինչպես նաև օտարերկրյա կապիտալի ներգրավման ուղի էր: Այս ժամանակահատվածում Մեքսիկան արդեն քաջ գիտակցում էր, որ 70-80 ական թթ. սկզբին նավթային բումի անկման պայմաններում նավթն այլևս չէր կարող երկրի հետագա բարգավաճման երաշխիք լինել: Այդ պատճառով արդեն 80-ական թթ. կեսերին մեքսիկական կառավարությունը վերանայեց իր բացասական վերաբերմունքը ԱՄՆ-ի հետ տնտեսական համագործակցություն սկսելու կապակցությամբ:

Ի տարբերություն ԱՄՆ-ի, Մեքսիկայի շարժառիթները NAFTA-ի համաձայնագրին միանալու առնչությամբ առավելապես տնտեսական էին. երաշխավորված մուտք դեպի ամերիկյան շուկա (մեք-

սիկայի արտահանման մոտ 80%-ը բաժին էր ընկնում ԱՄՆ-ին)⁷, նոր աշխատատեղեր, նոր շուկա մուտք գործելու հնարավորություն՝ ի դեմս Կանադայի, ներդրումների ներգրավում, որը թույլ կտար ներդնել բարձր տեխնոլոգիաներ և արմատապես արդիականացնել տնտեսությունը: Մյուս կողմից՝ մտավախություն կար, որ շուկայի ազատականացման պայմաններում հատկապես գյուղատնտեսական արտադրանք արտադրող մեքսիկական ընկերություններին դժվար կլիներ դիմակայել ամերիկյան և կանադական ընկերությունների մրցակցությանը: Այսպես, ամերիկյան փորձագետների զնահատականի համաձայն մաքսատուրքերի իջեցումից հետո ամերիկյան գյուղմթերքի 9/10-րդ մասը կստանա մեքսիկական շուկա մուտք գործելու իրավունք, ինչը կարող է հանգեցնել մեքսիկացի արտադրողների սնանկացմանը⁸:

Այնուամենայնիվ, Հյուսիսամերիկյան ինտեգրացման գործընթացներում Մեքսիկայի անդամացությունը կունենար նաև մի շարք դրական հետևանքներ, որոնք գերակշռում էին հնարավոր կորուստների: Առավել ևս, որ Մեքսիկան պատրաստվում էր NAFTA-ի միջոցով 15 տարով կրճատել տնտեսության բարեփոխումների ժամկետը:

Բացի այդ, Մեքսիկայի հետաքրքրությունը NAFTA-ին անդամակցելու առումով թելադրված էր ոչ միայն տնտեսական շարժառիթներով. Մեքսիկան ցանկանում էր ստեղծել ինտեգրացման «նոր մոդել» նաև շրջակա միջավայրի աղտոտվածության, սահմանային հակամարտությունների, անօրինական միգրացիայի հիմնախնդիրների կարգավորման համար:

Կանադայի համար: Առաջին համաշխարհային պատերազմից հետո Կանադայի արտաքին տնտեսական կապերը շրջվեցին հիմնականում ԱՄՆ-ի կողմը: Միացյալ Նահանգներին գրավեցին հյուսիսային հարևանի հարուստ ռեսուրսները: Ամերիկյան ներդրումները աստիճանաբար թափանցեցին կանադական տնտեսության առաջատար ճյուղերը: Երկրորդ համաշխարհային պատերազմը էլ ավելի ամրապնդեց ԱՄՆ-Կանադա տնտեսական կապերը հատկապես ռազմարդյունաբերական համալիրի ճյուղերում: 1965 թ.

⁷ Տե՛ս Н.А. Касымова, НАФТА: предпосылки создания и тенденции развития // США и Канада. 2001. # 6. էջ 102:

⁸ Տե՛ս Ю.В. Шашков, НАФТА: истоки, надежды, перспективы // МЭИМО. 1994. # 11. էջ 134:

ԱՄՆ-ը Կանադայում ներդրել էր մոտ 15.2 մլրդ դոլար, որը կազմում էր այդ երկրում կատարվող ուղղակի կապիտալ ներդրումների 70%-ը: Կանադական վերագգային կորպորացիաները և սկսեցին ակտիվ ներդրումներ կատարել իրենց հարավային հարևանի տնտեսությունում: Երեք տասնամյակների (1960-1990 թթ.) ընթացքում ԱՄՆ-ի արտաքին առևտրային շրջանառության 1/5 մասը կապված էր Կանադայի հետ⁹:

Այնուամենայնիվ, Կանադայի մասնակցությունը NAFTA-ի ստեղծման բանակցություններին՝ հիմնականում պայմանավորված էր այլընտրանքի բացակայությամբ: Եթե Կանադան հրաժարվեր մասնակցել այդ ինտեգրացման կառույցին, ապա ԱՄՆ-ը կարող էր երկկողմ համաձայնագիր կնքել Մեքսիկայի հետ, ինչը ԱՄՆ-ի համար կստեղծեր միանգամայն բարենպաստ պայմաններ: Այդ պատճառով Կանադայի համար եռակողմ համաձայնագիրն ավելի շահավետ էր, քանի որ այն նաև հնարավորություն կտար հեռանկարում միանալ Մեքսիկայի հետ (իսկ հետագայում նաև լատինաամերիկյան այլ երկրների հետ) և հանդես գալ որպես հակակշիռ ԱՄՆ-ին:

NAFTA-ն որպես ինտեգրացման կառույց, ունի մի շարք առանձնահատկություններ: Այսպես, ԱՄՆ-Կանադա-Մեքսիկա համագործակցությունը աչքի է ընկնում Մեքսիկայի և Կանադայի թույլ ինտեգրացման փոխազդեցությամբ և ԱՄՆ-ի գերիշխող դիրքերով: Բավական է նշել, որ Մեքսիկան մինչև NAFTA-ի համաձայնագրի կնքումը Կանադայի 17-րդ առևտրային գործընկերն էր, իսկ 1993 թ. Մեքսիկայի բաժինը Կանադայի արտաքին առևտրում կազմում էր ընդամենը 1.3%: Կանադայի բաժինը Մեքսիկայի հետ՝ 3%¹⁰: Սա վկայում է այն մասին, որ Կանադան և Մեքսիկան ավելի շատ մրցակցում են ամերիկյան ապրանքային և աշխատուժի շուկաներում՝ փորձելով ներգրավել ամերիկյան կապիտալ և տեխնոլոգիաներ: Մյուս կողմից՝ ԱՄՆ-Մեքսիկա և ԱՄՆ-Կանադա համագործակցությունները բավականին խորն են և ընդգրկուն: Դրանք աչքի են ընկնում և՛ ապրանքների ու ծառայությունների առևտրի ծավալներով, և՛ կապիտալի ու աշխատուժի միգրացիայի ծավալներով: Այս-

⁹ Sté L.R Klein., D. Salvatore, Welfare Effects of NAFTA // Journal of Police Modeling. N.Y., 1995. Vol. 17. # 2:

¹⁰ Ю. В. Шахов, 62վ. աշխ., էջ 127:

պես, 90-ական թթ. սկզբներին ԱՄՆ-ի արտաքին առևտրային շրջանառության 1/5-րդ մասը (կամ ԱՄՆ-ի ՉԱԱ 1%-ը) բաժին էր ընկնում Կանադային, իսկ Կանադայի արտահանման 70-80%-ը ուղղվում էր դեպի ԱՄՆ: Ինչ վերաբերում է Մեքսիկային, ապա վերջինիս բաժինը ԱՄՆ-ի ապրանքաշրջանառության մեջ կազմում էր 8%¹¹:

ԱՄՆ-ի նման ամուր դիրքերը կարելի է դիտարկել ինչպես դրական, այնպես էլ բացասական առումներով: Մի կողմից՝ որպես ինտեգրացման գործընթացի առաջատար, ԱՄՆ-ը ապահովում է NAFTA-ի առաջխաղացումը և հետագա զարգացումը, իսկ հարկ եղած պահին կարող է օգնություն ցուցաբերել ավելի թույլ գործընկերոջը: Մասնավորապես, 1994 թ. դեկտեմբերին Մեքսիկայում սկիզբ առած տնտեսական ճգնաժամի ժամանակ, ԱՄՆ-ը միջազգային ֆինանսավարկային ինստիտուտների հետ մեկտեղ ցուցաբերեց զգալի աջակցություն, և 1996 թ. սեպտեմբերին արդեն Մեքսիկան կարողացավ հաղթահարել ծանր կացությունը: Մյուս կողմից՝ առաջատարին հատուկ է «ուժի» դիրքերից գործելու գայթակղությունը՝ ուռնահարելով գործընկերների շահերը:

Այնուամենայնիվ, ԱՄՆ-Կանադա-Մեքսիկա եռակողմ բանակցությունները, որոնցում յուրանքանչյուր երկիր ձգտում էր գնալ իր ուղիով՝ իրացնել իր նպատակները, վերջին հաշվով հանգեցրին շահերի հաշվեկշռային վիճակի:

Պայմանագրի սկզբունքային դրույթները հետևյալն են.

- մինչև 2009 թ. լրիվ վերացնել առևտրային պատնեշները,
- ապրանքների և ծառայությունների առևտրում սակագնային արգելքների աստիճանական վերացում,
- Մեքսիկայում հյուսիսամերիկյան կապիտալ ներդրումների ռեժիմի մեղմացում,
- Մեքսիկայի ֆինանսական շուկայում ամերիկյան և կանադական բանկերի գործունեության ազատականացում,
- մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության արդյունավետ համակարգի ստեղծում,
- շրջակա միջավայրի պաշտպանության և աշխատանքի շուկայի օգտագործմանը վերաբերող համաձայանագրերի կնքում:

¹¹ St'u A. Парканский, Новая торговая группировка – североамериканская // Внешняя торговля. 1994 # 2. էջ 19:

NAFTA-ի համաձայնագրի ուժի մեջ մտնելուց և առևտրի ազատականացումից հետո մի քանի անգամ ավելացել են անդամ-երկրների փոխադարձ առևտրի ծավալները: Դա միևնույն ժամանակ նպաստել է ռեսուրսների հավասարաչափ բաշխմանը, գների մակարդակի իջեցմանը, շրջակա միջավայրի պայմանների բարելավմանը, գիտատեխնիկական առաջընթացին և կապիտալ ներդրումների ներգրավմանը: NAFTA-ի գործունեության առաջին հինգ տարիների ընթացքում ամերիկյան արտահանումը դեպի Կանադա աճեց 56%-ով, իսկ դեպի Մեքսիկա՝ 91%-ով: Ավելի ակնառու աճ գրանցվեց Կանադայից Մեքսիկա արտահանման ծավալներում՝ 127%: Միևնույն ժամանակ, Մեքսիկայի արտահանման 89%-ը բաժին էր ընկնում ԱՄՆ-ին, իսկ 67%-ը՝ Կանադային¹²:

Մեկ այլ դրական տեղաշարժ NAFTA-ի շրջանակներում կարելի է համարել կապիտալ ներդրումների ավելացումը: Այսպես, օտարերկրյա ուղղակի ներդրումները ԱՄՆ-ից դեպի Կանադա ավելացել են 1.5 անգամ, իսկ դեպի Մեքսիկա՝ 1.8 անգամ¹³:

Այսպիսով, ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ լատինաամերիկյան երկրների համար NAFTA-ի համաձայնագիրը յուրօրինակ հիմք է արևմտյան կիսագնդում ավելի խորը և լայնածավալ ինտեգրացման գործունեություն ծավալելու համար: Այդ կապակցությամբ, դեռ 1994 թ. Մայամիում կայացած համաժողովի ընթացքում չնայած միանգամայն տարբեր մոտեցումներին (NAFTA, MERKOSUR), արևմտյան կիսագնդի 34 երկրների կառավարությունների կողմից կնքվեց հայտարարագիր՝ 2005 թ. Համաամերիկյան ազատ առևտրի գոտի (Free Trade Area of Americas–FTAA) ստեղծելու կապակցությամբ: Այժմ այդ ծրագիրը բանակցությունների փուլում է:

Ինչ վերաբերում է Ասիախաղաղօվկիանոսյան տարածաշրջանային համագործակցությանը (APEC), ապա վերջինս ներառում է տարբեր աշխարհամասերում տեղաբաշխված երկրներ, հետևաբար այն կարելի է համարել *միջտարածաշրջանային խմբավորում*: APEC-ը ստեղծվել է 1989 թ., որպես տարածաշրջանային միջկառավարական տնտեսական կազմակերպություն, որին սկզբնապես

¹² Ст'ю Интеграция в Западном полушарии и Россия / отв. ред. А. Н. Глинкин. М.: ИАА РАН, 2004. էջ 254:

¹³ Ст'ю Ю. В. Шашков, Интеграционные процессы на пороге XX века. М.. НП тысячелетие, 2001. էջ 305:

անդամակցում էին 12 երկրներ¹⁴: Հետագայում APEC-ի կազմը համալրվեց ևս 9-ով: Միավորման գլխավոր առաքելությունը համարվում է տարածաշրջանային առևտրի և կապիտալ ներդրումների կանոնակարգումը: Անդամ-երկրներն ունեն հզոր տնտեսական ներուժ, իսկ ազատ առևտրի գոտու ձևավորումը թույլ կտա ստեղծել աշխարհի ամենամեծ ինտեգրացման խմբավորումը: Այդ երկրներին է բաժին ընկնում համաաշխարհային ՀՆԱ-ի 60%-ը, համաաշխարհային առևտրի՝ 50%-ը, բնակչության՝ 40%-ը, իսկ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմում է 10.816 ԱՄՆ դոլար¹⁵:

Միավորման հիմնական նպատակները 1991 թ. ուրվագծվեցին Սեուլյան համաձայնագրի շրջանակներում.

- տարածաշրջանի երկրների տնտեսական աճի ապահովում,
- առևտրի բազմակողմանի համակարգի ձևավորում,
- ԱՀԿ նորմերի համաձայն՝ ապրանքների, ծառայությունների և կապիտալի տեղաշարժը սահմանափակող բոլոր արգելքների վերացում:

Այնուամենայնիվ, APEC-ի անդամ-երկրներն ունեն տնտեսական զարգացման տարբեր մակարդակներ, ուստի համագործակցությունից ակնկալիքները գործնականում կլինեն շատ աննշան: Բացի այդ, դրանք տեղաբաշխված են տարբեր աշխարհամասերում, և շրջանցվում են տարածաշրջանային տնտեսական ինտեգրացման բոլոր նախադրյալները: Այն, որ այդ խմբավորման համագործակցությունը սահմանափակվում է միայն անդամ-երկրների մասնակցությամբ ձևավորված կառույցների գործունեությամբ, կամ երկրների ղեկավարների հանդիպումներով, արդեն վկայում է այն մասին, որ դասական ինտեգրման գործընթացները խեղաթյուրված են: Նույնիսկ ազատ առևտրային գոտու ձևավորումը տարբերակված է ըստ երկրների տնտեսական զարգացման մակարդակների. մինչև 2010 թ. ազատ առևտրի գոտու ձևավորում զարգացած երկրների, 2015 թ.՝ նոր ինդուստրիալ երկրների, իսկ 2020 թ.՝ մնացած երկրների շրջանակներում:

¹⁴ APEC-ին անդամակցում են ԱՄՆ, Կանադա, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Ճապոնիա, Հարավային Կորեա, ASEAN-ի բոլոր անդամները, 1991թ՝ Հոնկոնգ, Թայվան, 1993 թ՝ Մեքսիկա, Նոր Գվինեա, 1994թ.՝ Չիլի, 1998թ՝ Ռուսաստան, Պերու, Վիետնամ:

¹⁵ The APEC Region Trade and Investment, Canberra. November 2002. The Economist: Pocket World in Figures, 2002.

Սակայն APEC-ը, որպես միջտարածաշրջանային ինտեգրման խմբավորում, դրսևորում է նաև որոշ առանձնահատկություններ.

- տեղի է ունենում տնտեսության միջազգայնացման գործընթացի խորացում՝ ապրանքների և կապիտալի ներտարածաշրջանային հոսքերի ակտիվացման հիման վրա,

- անդամ-երկրների տնտեսական մակարդակների տարբերությունների պահպանումը տանում է ներտարածաշրջանային ինտեգրացման խորացմանը՝ զարգացման մոտավորապես հավասար մակարդակ ունեցող երկրների միջև:

Մոտ ապագայում դժվար է սպասել, որ APEC-ը կդառնա վերագային կարգավորման մեխանիզմ ունեցող տարածաշրջանային ինտեգրման խմբավորում, հաշվի առնելով ինչպես աշխարհագրական, այնպես էլ տնտեսական ու քաղաքական գործոնների հակազդեցությունը:

7.5. Ինտեգրման գործընթացները զարգացող երկրներում

Ինտեգրացման գործընթացների հիմնական նպատակը մասնակից երկրների միաձուլումն է մեկ միասնական տնտեսական համակարգի շրջանակներում՝ աշխատանքի տարածաշրջանային բաժանման խորացման և արտադրողական ուժերի հարաբերակաճորեն բարձր զարգացման պայմաններում: Սակայն 1960-1980 թթ. ընկած ժամանակահատվածում զարգացող երկրների շրջանակներում ստեղծված և ոչ մի ինտեգրացված կառույց չի հետապնդել նման նպատակ: Ջարգացող երկրների համար ինտեգրացումը արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակը հաղթահարելու, ներքին շուկայում զարգացած երկրների մրցակցությանը դիմակայելու, համաշխարհային շուկայում իրենց դիրքերը ամրապնդելու ձգտում է: Այսօր զարգացող երկրների տնտեսական համագործակցությունը կարելի է գնահատել որպես ինտեգրացման գործընթացների նախապատրաստական աստիճան: Ջարգացող երկրների ինտեգրացումն ավելի շուտ մասնակից-պետությունների տնտեսական քաղաքականության համաձայնեցում է, քան տնտեսական փոխկապվածության և փոխլրացման օբյեկտիվ գործընթաց:

Եթե զարգացած երկրներում ինտեգրացման գործընթացները սկիզբ են առնում առևտրի ազատականացումից և հետո միայն անցում կատարում արտադրության ոլորտ, ապա զարգացող երկրներում տեղի է ունենում ճիշտ հակառակը. ինտեգրացումը նախ ընդգրկում է արտադրության, այնուհետև փոխադարձ առևտրի ոլորտը: Պատճառն այն է, որ ինտեգրվող երկրների համար տնտեսական օպտիմալ համակարգի ստեղծմանը խոչընդոտում են ոչ այնքան արհեստական սահմանափակումները՝ սակագնային ու ոչ սակագնային արգելքների ձևով, որքան բնական արգելքները, այն է՝ երկրների տնտեսական զարգացման ու փոխլրացման ցածր մակարդակը, որը կարելի է հաղթահարել միայն արտադրական համագործակցության ակտիվացման ճանապարհով:

Խոսելով զարգացող երկրների համագործակցության մասին, պետք է հաշվի առնել, որ երրորդ աշխարհի առանձին տարածաշրջաններում ընթացող ինտեգրացման գործընթացները տարբերվում են ինչպես իրենց բնույթով, այնպես էլ շարժման գործոններով և զարգացման տեմպերով: Ուստի զարգացող երկրների ինտեգրման տնտեսական ու քաղաքական նախադրյալների առանձնահատկությունները հանգեցրել են տարբեր տիպի տնտեսական միավորումների ստեղծմանը: Այսպես, Լատինաամերիկյան ազատ առևտրի համաձայնագիրը՝ ԼԱԲԿԻՆ՝¹⁶-ն (Latin American Free Trade Agreement) սկզբում բազմաթիվ պետությունների համագործակցություն էր, որի հիմնական նպատակը զուտ տնտեսական էր՝ փոխադարձ առևտրի ազատականացում, ներտարածաշրջանային շուկայի պաշտպանություն՝ հովանավորչական մաքսային պատնեշների միջոցով, և փոխադարձ ապրանքաշրջանառության խթանում: Այս խմբավորումն ընդգրկում էր Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների 85%-ը, երկրներ, որոնք ՀՆԱ-ի մեծության տեսանկյունից համարվում են խոշոր ու միջին: Սակայն փոխադարձ առևտրային կապերի նշանակալից ակտիվացման շրջանից հետո խմբավորման ներսում սկսվեց անկումը, սրվեցին հակասությունները: Գյուղային ծրագրերը չիրականացվեցին, որը կասկածի տակ դրեց ընդհանրապես ինտեգրման ողջ գործընթացի

¹⁶ ԼԱԲԿԻՆ ստեղծվել է 1960-ական թթ., դրան անդամակցում են՝ Արգենտինան, Բրազիլիան, Մեքսիկան, Պարագվայը, Ուրուգվայը, Պերուն, Չիլին, Կոլումբիան, Էկվադորը, Վենեսուելան, Բոլիվիան:

դրական ելքը:

1980-ական թթ. LAFTA-ն վերանվանվեց Լատինաամերիկյան ինտեգրացման ասոցիացիայի (ALAI- Association of Latin American Integration), որն ավելի ճկուն համաձայնագիր էր և անդամ-երկրներին թույլ էր տալիս կնքել երկկողմ ու եռակողմ առևտրային համաձայնագրեր: Եվ չնայած այն հանգամանքին, որ լատինաամերիկյան ազատ առևտրի գոտին այդպես էլ չկայացավ այնուհանդերձ, անդամ-երկրների միջև 1990-2002 թթ. ընկած ժամանակահատվածում փոխադարձ առևտուրը 13.3 մլն դոլարից աճեց մինչև 43.1 մլն դոլարի¹⁷:

Այսօր Լատինական Ամերիկայում գործում են չորս ոչ լրիվ կայացած մաքսային միություններ՝ MERCOSUR¹⁸, CACM¹⁹, Անդյան պակտի խումբ²⁰, OECS²¹, որոնք փորձում են ձևավորել նաև ընդհանուր շուկա: Բայց եթե MERCOSUR-ը և Անդյան պակտի խումբը շարժընթաց զարգացող ինտեգրացիոն խմբավորումներ են, որոնք իրենց միավորված շուկայի պաշտպանությունը թուլացնում էին աստիճանաբար, իսկ ներտարածաշրջանային տնտեսական կապերի ազատականացման գործընթացներն ուղղորդում բավականին արագ, ապա մյուս երկուսն ակտիվ գործունեություն են սկսել ծավալել միայն վերջերս: Մյուս ինտեգրացման կառույցները, այդ թվում նաև երկկողմ, պահպանում են ազատ առևտրի գոտու կարգավիճակ, և ենթադրվում է, որ դրանք կինտեգրվեն FTAA կազմում:

Այլ ճակատագիր ունեն այն զարգացող երկրների ինտեգրացման խմբավորումները, որոնք սկզբնապես ձևավորվեցին զուտ քաղաքական շարժառիթներով: Այսպես, 1967 թ. գոյություն ունեցող Չարավարենյան Ասիայի երկրների ասոցիացիայի (ASEAN)²² անդամ-երկրները մինչև վերջին ժամանակները փոխադարձ տնտեսա-

¹⁷ UNCTAD Handbook of Statistics 2003. Geneva, 2003.

¹⁸ MERCOSUR (Mercado Común del Sur), ստեղծվել է 1991 թ., անդամակցում են Արգենտինան, Բրազիլիան, Պարագվայը, Ուրուգվայը, Չիլին:

¹⁹ CACM (Central American Common Market), ստեղծվել է 1960 թ. անդամակցում են Կոստա-Ռիկան, Սալվադորը, Գվատեմալան, Հոնդուրասը, Նիկարագուան:

²⁰ Անդյան պակտի խումբը ստեղծվել է 1969 թ., անդամակցում են Բոլիվիան, Վենեսուելան, Կոլումբիան, Պերուն, Էկվադորը, Չիլին:

²¹ OECS (Organization of Eastern Caribbean States) ստեղծվել է 1968 թ., անդամակցում են 14 երկրներ:

²² ASEAN (Association of South East Asian Nations), անդամակցում են Սինգապուրը, Թայլանդը, Ֆիլիպինները, Ինդոնեզիան, Մալայզիան, 1984թ՝ Բրունեյը, 1995թ՝ Վիետնամը, 1997թ՝ Լաոսը, Մյնման, 1999թ՝ Կամբոջան:

կան կապերի զարգացմամբ առանձնապես աչքի չէին ընկնում: Այս երկրները միավորվել էին Հարավարևելյան Ասիայի ռազմական ու քաղաքական կայունության պահպանման համար: Հետագայում քաղաքական գործոնների դերը նշանակալից չափով թուլացավ, ինչը նպաստեց տնտեսական համագործակցության մեկնարկին: 40 տարվա ընթացքում ASEAN-ը կրել է և՛ որակական, և՛ քանակական փոփոխություններ: Տնտեսական համագործակցության խորացումը նշանավորվեց խմբավորման անդամների թվի աճով՝ 5-10-ի: Դա նաև նպաստեց ինտեգրացման կառույցի տնտեսական ներուժի ավելացմանը, քանի որ այժմ Ասոցիացիան ընդգրկում է 500 մլն մարդ՝ 738 մլրդ դոլար ՀՆԱ-ով²³:

Աֆրիկյան երկրների տնտեսական ինտեգրացումը միանգամայն այլ բնույթի համագործակցություն է: Սա հետամնաց, միմյանց հետ գործնականում ոչ մի տնտեսական կապ չունեցող երկրների միջև արդյունաբերության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է, որի նպատակը ներքին շուկայի պահանջների բավարարումն է: Աֆրիկյան տարածաշրջանում ինտեգրացման գործընթացներն ուրվագծվեցին 1950-1960 թթ., այսինքն՝ գաղութային համակարգի փլուզումից անմիջապես հետո: Դրանց նպաստում էր նաև ՄԱԿ-ի Տնտեսական հանձնաժողովի գործունեությունը, որը հորդորում էր աֆրիկյան երկրներին՝ վարել ներմուծմանը փոխարինող քաղաքականություն՝ օտարերկրյա կախվածությունը թուլացնելու և «սեփական ուժերի վրա հենվելու» նպատակով: Այսօր աֆրիկյան տարածաշրջանում գոյություն ունեն մի շարք ինտեգրացված կառույցներ՝ Արևմտյան Աֆրիկայի երկրների տնտեսական համագործությունը (ECOWAS)²⁴, Արևելյան և Հարավային Աֆրիկայի ընդհանուր շուկայի (COMESA) և Կենտրոնական Աֆրիկայի մաքսային ու տնտեսական միությունը (UDEAC)²⁵: Այս միությունները պլանավորել էին նպատակաուղղված պետական քաղաքականության հիման վրա զարգացնել փոխադարձ տնտեսական

²³ Imada P. Production and Trade Effects of ASEAN Free Trade Area // The Developing Economies. 1993. # 1.P. 5.

²⁴ ECOWAS՝ Բենին, Բուրկինա-Ֆասո, Կապո-Վերդե, Կոտդիվուար, Գամբիա, Գանա, Գվինեա, Գվինեա-Բիսաու, Լիբերիա, Մալի, Մավրիտանիա, Նիգեր, Նիգերիա, Սենեգալ, Սերա-Լեոնե, Տոգո (1975թ.):

²⁵ UDEAC՝ Կոնգո, Կամերուն, Գաբոն, Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետություն, Ռուանդա, Բուրունդի, Էկվադորյան Գվինեա, Սան Տոմե և Պրինսիպի, Անգոլա (որպես դիտորդ), (1964թ.):

կապերը՝ ներքին տարողունակ շուկա ստեղծելու համար: Աֆրիկայի տնտեսական զարգացման վերջին նախագծերից է նաև NEPAD-ը (New Partnership for Africa`s Development. Աֆրիկայի զարգացման նոր համագործակցություն), որն ուղված է դեպի անդամ-երկրների փոխադարձ առևտրային և ներդրումային կապերի զարգացմանն ու ազգային տնտեսությունների տնտեսական քաղաքականության կորորդինացմանը:

Այնուամենայնիվ, այս աշխարհամասի երկրների տնտեսական համագործակցության ճանապարհին կանգնած են այնպիսի արգելակներ, ինչպիսիք են ներքին նեղ շուկաները, արտահանման միատիպ հուլնքային մասնագիտացումը, ազգային տնտեսական համալիրների փոխլրացման ցածր մակարդակը: Ուստի XXI դարի սկզբին ևս Աֆրիկան շարունակում է մնալ համաշխարհային համագործակցության խտրականացված մասը, որը չի տնօրինում առաջընթացի ոչ մի հնարավորությունների՝ հավատարիմ մնալով իր գաղութային ժառանգականությանը:

7.6. Անկախ պետությունների համագործակցություն

Անկախ պետությունների համագործակցությունը (ԱՊՀ) ստեղծվել է 1991թ. դեկտեմբերի 8-ին Սիմսկում՝ Ռուսաստանի, Բելոռուսի և Ուկրաինայի կողմից կնքած Համաձայնագրի հիման վրա: Նույն թվականի դեկտեմբերի 21-ին Համաձայնագրի կանոնակարգի համաձայն դրան միացան նաև Ադրբեջանը, Թուրքմենստանը, Հայաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Տաջիկստանը, Ուզբեկստանը, իսկ 1993 թ. նաև Վրաստանը: 1992-1993 թթ. ընթացքում ձևավորվեց համագործակցության կազմակերպական կառուցվածքը՝ պետության և կառավարության ղեկավարների խորհուրդները: ԱՊՀ գոյության մի քանի տարիների ընթացքում կնքվեցին մի քանի հարյուր երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր, որոնք որոշակիացնում էին անդամ-երկրների տնտեսական, սոցիալական և ազգային անվտանգության ոլորտներում փոխադարձ համագործակցության սկզբունքներն ու ուղղությունները:

Սկզբնապես ԱՊՀ ձևավորման նպատակը քաղաքական էր. այն է՝ նախկին խորհրդային երկրների «քաղաքակիրթ ապահարզան»: Սակայն 1993 թ. կնքած Պայմանագիրը՝ «Տնտեսական միության

ստեղծման մասին», սկիզբ դրեց անդամ-երկրների փոխհարաբերությունների միջև որակական նոր շրջանի: Պայմանագիրը նախատեսում էր ընդհանուր շուկայի ստեղծում՝ ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժի ապահովման նպատակով:

ԱՊՀ տնտեսական միության ստեղծումը պայմանավորված էր հետևյալ հանգամանքներով.

1. ԽՍՀՄ կազմալուծումից հետո տնտեսական կապերի քայքայման հետևանքով վատթարացավ համագործակցության անդամ-երկրների տնտեսական դրությունը: Սեփական շուկան պաշտպանելու նպատակով Ռուսաստանը սահմանեց բարձր մաքսատուրքեր, հատկապես էներգետիկ ռեսուրսների և կարևոր հումքային ապրանքների վրա, որը բարձրացրեց այս ապրանքների գները՝ հասցնելով դրանք համաշխարհային մակարդակի: Դա ստեղծեց լրացուցիչ բարդություններ համագործակցության անդամների համար:

2. ԱՊՀ անդամ-երկրները, կանգնելով սոցիալ-տնտեսական դժվարությունների առջև, վերջնականապես հասկացան, որ քաղաքական անկախության պայմաններում տնտեսական հիմնախնդիրները սեփական ուժերով լուծելը զուտ պատրանք է:

Սակայն իրականում ԱՊՀ երկրների տնտեսական ինտեգրացումը կրում է ձևական և դեկլարատիվ բնույթ, որը կարելի է բացատրել հետևյալ փաստարկներով.

1) Նախ նշենք, որ ԱՊՀ երկրները դեռևս գտնվում են անցման շրջանում, իսկ տնտեսական բարեփոխումներն իրականացվում են տարբեր տեմպերով: Գոյություն ունեն էական տարբերություններ երկրների սոցիալ-տնտեսական զարգացման, արտաքին տնտեսական և քաղաքական կողմնորոշման ոլորտներում, իսկ տարածաշրջանային մի շարք հակամարտությունների առկայությունը չի ապահովում բարենպաստ արտաքին և ներքին պայմաններ ինտեգրացման գործընթացների զարգացման համար:

2) ԱՊՀ երկրները տարբերվում են նաև տնտեսության կառուցվածքով և շուկայի հասունության աստիճանով, բայց միևնույն ժամանակ արտաքին շուկաներում դրանք հանդես են գալիս որպես մրցակիցներ:

3) Ինտեգրացման դանդաղ ընթացքին նպաստում է նաև տեխնոլոգիական համագործակցության բացակայությունը:

Այնուամենայնիվ, երբեմնի միասնական տնտեսական տարածքը դեռ չի կորցրել իր կենսունակությունը: Այսօր էլ ԱՊՀ երկրները շարունակում են պահպանել արտադրության գործոնների ազատ տեղաշարժի բավականին բարձր մակարդակ, սակայն տնտեսական տարածքը դեռ գործում է «ինտեգրայով»՝ լուրջ օրենսդրական բազայի բացակայության պայմաններում:

ԱՊՀ շրջանակներում գործնական քայլերի բացակայությունը հանգեցրեց այն բանին, որ ձևավորվեցին մի շարք եռյակներ, քառյակներ անդամ-երկրների միջև: Այսպես, 2000 թ. հոկտեմբեր ամսին Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղըզստանի և Տաջիկստանի միջև ձևավորվեց տարածաշրջանային ինտեգրացման կազմակերպություն՝ Եվրասիական տնտեսական համագործակցությունը (ԵՅՐԱՀՅԸ): Այս նոր կազմակերպության ստեղծման նպատակը հինգ երկրների տարածքում հեռանկարում միասնական տնտեսական գոտու ստեղծումն էր: Իսկ ավելի մոտալուտ նախագծերից են անդամ-երկրների տնտեսության կառուցվածքային բարեփոխումների համաձայնեցումը, միասնական տրանսպորտային կառուցվածքի և շուկայի ձևավորումը, միասնական մաքսային սակագնի կիրառումը, ազգային օրենսդրության միասնացումը, միջազգային կազմակերպությունների հանդեպ միասնական քաղաքական ուղղության մշակումը: Այսօր ԵՅՐԱՀՅԸ-ի անդամ երկրներն իրականացնում են փոխադարձ առևտրի վերլուծություն՝ նույնաճուն ապրանքների հակադարձ հոսքերը կրճատելու և միասնական փոխշահավետ մաքսային քաղաքականություն վարելու նպատակով:

Ինչ վերաբերում է ՀՀ անդամակցությանը ԱՊՀ-ին, ապա այս կառույցի անդամ-երկրները մեր երկրի ամենակարևոր առևտրային և ներդրումային գործընկերներն են: Ինչպես ցույց են տալիս հաշվարկները, ԱՊՀ երկրների հետ ՀՀ արտահանման ծավալները աճելու հավակնություն ունեն. 1999 թ. համեմատությամբ 2003 թ. ՀՀ արտահանումն աճել է 124.9%-ով, իսկ ներմուծման համապատասխան աճը կազմել է 65.5%²⁶: Հետագա տարիների ընթացքում աճի տեմպերը թեպետ դանդաղել են, սակայն կայուն են: Այսպես՝ 2002 թ. համեմատությամբ 2005 թ. արտահանումն աճել է 51.3, իսկ ներմու-

²⁶ Հաշվարկները կատարվել են «ՀՀ արտաքին առևտուրը 2002թ.» տվյալների հիման վրա, էջ 13:

ծումը՝ 57.8%-ով: ՀՀ արտահանումը դեպի ԱՊՀ երկրներ 2005 թ. կազմել է համախառն արտահանման 28.9, իսկ ներմուծման՝ 19.3%-ը: Արտահանման և ներմուծման ապրանքային կառուցվածքի վերլուծությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում հանքահումքային ապրանքների արդյախանումն աճել է, մեքենաշինական ապրանքների բաժինը՝ նվազել, իսկ թանկարժեք քարերի և մետաղների բաժինը ինչպես միշտ կայուն է ու բարձր²⁷:

7.7. Հայաստանի Հանրապետությունը միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացներում

Բացի ԱՊՀ-ից, Հայաստանը նաև մեկ այլ տնտեսական միավորման՝ Սևծովյան տնտեսական համագործակցության (ԱԾՏՀ) անդամ է:

1980-ական թթ. վերջերին տեղի ունեցած քաղաքական վերածակվորումների արդյունքում Սևծովյան տարածաշրջանի երկրների մեծ մասը կանգնեց փոխհարաբերությունները վերանայելու և, համաշխարհային գլոբալ զարգացումներին համապատասխան՝ համագործակցության նոր ուղիներ գտնելու ընտրության առջև: Փնտրելով իրենց ազգային զարգացման ուղիները, Սևծովյան տարածաշրջանի երկրները հանգեցին իրենց ջանքերը միավորելու գաղափարին՝ առաջնորդվելով խաղաղության, կայունության ձգտումով: Հիմնադիր երկրները սկզբնապես Թուրքիան, նախկին ԽՍՀՄ երկրները, Ռումինիան և Բուլղարիան էին, որոնք էլ 1990 թ. դեկտեմբերի 19-ին Անկարայում, Թուրքիայի նախաձեռնությամբ, մշակեցին և ներկայացրին համագործակցության ձևավորման հիմնարար սկզբունքները: ԽՍՀՄ փլուզումից հետո ԱՊՀ երկրներից կազմակերպությանն անդամագրվեցին Ռուսաստանը, Ուկրաինան, Մոլդովան, Վրաստանը, Հայաստանը, Ադրբեջանը, ավելի ուշ՝ Յուգոսլավիան և Ալբանիան: 1992 թ. հունիսին Ստամբուլում հանդիպման ժամանակ երկրները ստորագրեցին Սևծովյան տնտեսական համագործակցության մասին Հռչակագիրը, որում հատկապես ուշադրությունը բևեռված էր երկրների տնտեսական ներուժի և

²⁷ Հաշվարկները կատարվել են «ՀՀ արտաքին առևտուրը 2006թ.» տվյալների հիման վրա, էջ 27:

փոխշահավետ տնտեսական համագործակցության բարձրացման հնարավորությունների վրա: ՍԾՏՀ Ստամբուլի հանդիպման ժամանակ նշվեցին նաև այն ոլորտները, որոնք պետք է գտնվեն համագործակցող երկրների ուշադրության կենտրոնում՝ տրանսպորտ, կապ, տեղեկատվություն, ապրանքների ստանդարտացում և սերտիֆիկացում, բնական հումքի արդյունահանում և վերամշակում, գյուղատնտեսություն, անասնաբուժություն և սանիտարական պաշտպանություն, տուրիզմ, առողջապահություն, գիտություն և տեխնիկա, դեղագործություն, տնտեսական և կոմերցիոն տեղեկատվության փոխանակություն, էներգետիկա: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ըստ էության ՍԾՏՀ-ն ոչ միայն տնտեսական, այլ նաև սոցիալ-առողջապահական, գիտական համագործակցության լայնածավալ ծրագրերով առաջնորդվող համագործակցություն է, որը միանգամայն տարբերվում է ներկայումս գոյություն ունեցող տնտեսական բոլոր այն խմբավորումներից, որոնք համագործակցում են շեշտված տնտեսական ծրագրերով:

Այսօր ՍԾՏՀ անդամ-պետությունների մեծ մասը բախվում է շուկայական տնտեսության՝ երկարատև անցման շրջանի բազմաբնույթ հիմնախնդիրների հետ, և ամբողջ տարածաշրջանը մխրճվել է փոխակերպման բազմաթիվ ցավոտ գործընթացների և վերակառուցման աշխատանքների մեջ: Տեղական չլուծված տարածայնությունները քայքայում են տարածաշրջանի քաղաքական, տնտեսական և սոցիալական միատարրությունը և խոչընդոտում բազմակողմանի տնտեսական համագործակցության գործընթացին: Հետևաբար, որպեսզի ՍԾՏՀ-ն ապագայում վերաճի շարժընթաց զարգացող տարածաշրջանային տնտեսական կառույցի, անհրաժեշտ է տնտեսական և քաղաքական փոխհարաբերությունները կառուցել փոխադարձ վստահության հիման վրա: Իսկ առանց ներքաղաքական հակասությունների համահարթեցման, հազիվ թե կազմակերպությունն առաջիկայում տնտեսական հաջողություններ ձեռք բերի: ”

Ինչ վերաբերում է ՀՀ համագործակցությանը տարածաշրջանի երկրների հետ, ապա տնտեսական ինտեգրացման առումով Հայաստանի համար առավել հեռանկարային, քիչ թե շատ վստահելի գործընկերը Վրաստանն է: Հայաստանի և Վրաստանի միջև գոյություն չունեն այնպիսի լուրջ տարածայնություններ, որ սպառնան երկրների խաղաղ գոյակցությանը: Ավելին, այս երկու պետություն-

ները կապված են դարավոր բարեկամությամբ և ունեն միասնական երկարատև պատմություն: Վրաստանը նաև ՀՀ ռազմավարական գործընկերն է, այն մնացած աշխարհի, հատկապես ԱՊՀ երկրների հետ կապող ծովային, մասամբ էլ՝ ցամաքային ուղին է: Հետևաբար, անհրաժեշտ է ըստ ամենայնի ընդլայնել ու ամրապնդել Վրաստանի հետ տնտեսական կապերը՝ անկախ ՀՀ գործընկեր երկրների, հատկապես Ռուսաստանի նկատմամբ Վրաստանի դիրքորոշումից: Այս համագործակցության շարժիչ ուժը պետք է լինի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերի ապահովումը:

Ընդհանուր առմամբ, Հայաստան-Վրաստան փոխադարձ առևտրում նկատելի են դրական միտումներ, հատկապես ՀՀ արտահանման տեսանկյունից, քանի որ վերջինս 2005 թ., 2002 թ. համեմատությամբ ավելացել է մոտ 2.5 անգամ, ինչը վկայում է ՀՀ ապրանքների մրցունակության բարձրացման և Վրաստանի շուկայում դրանց հանդեպ պահանջարկի ավելացման մասին²⁸: Ուստի Վրաստանի հետ տնտեսական ինտեգրացման ելակետային մոդելը կարող է կառուցվել ազատ առևտրային գոտու համաձայնագրի հիման վրա, որը թույլ կտա ակտիվացնել արտահանման-ներմուծման ծավալները, վերացնել մաքսատուրքերը, ինչն էլ կհանգեցնի երկու երկրների ներքին շուկաներում ապրանքների գների նվազմանը, սպառման ավելացմանը: Ներքին շուկայում ապրանքների գների նվազումը բարենպաստ մրցակցային դաշտ կծեակվորի ներքին արտադրողների համար: Մաքսատուրքերի վերացումը թույլ կտա նաև փակել մաքսանենգության ճանապարհը և վերացնել տարբեր ճանապարհներով մաքսային հարկումից խուսափելու դեպքերը:

Վրաստանին համանման, Իրանի՝ որպես ՀՀ ռազմավարական գործընկերոջ դերը տարածաշրջանային տնտեսական համագործակցության զարգացման գործընթացներում չի կարելի թերագնահատել: Սակայն միևնույն ժամանակ, այն, որ Իրանից արտահանվող ապրանքները մրցակցային առավելություններ ունեն միայն ցածր ինքնարժեքի առումով, ակնհայտ ցուցադրվեց հայ-իրանական արտաքին առևտրային կապերում: Այսպես, եթե 1996 թ. ՀՀ համախառն արտահանման մեջ Իրանի բաժինը կազմում էր 15.1%, ապա 2005 թ. այն կազմեց 2.9%: Իրանից ներմուծվող ապրանքների բաժինը ՀՀ համախառն ներմուծման մեջ համապատասխան

²⁸ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2006, էջ 490:

տարիներին կազմել է 17.5 և 4.9%²⁹: Հայ-իրանական առևտրային կապերի թուլացումը պայմանավորված է որոշ հանգամանքներով: Նախ՝ 1990-ական թթ. սկզբին Իրանը Հայաստանի միակ առևտրային գործընկերն էր: Դրանից հետո հայկական շուկա մուտք գործեցին ռուսական և եվրոպական ապրանքներ, որոնք ավելի որակյալ էին, բնականաբար դուրս մղեցին պարսկական ապրանքները ՀՀ շուկայից:

Իրան-Հայաստան տնտեսական համագործակցության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հարևան պետության հետ առևտրային կապերն այնքան էլ ակտիվ չեն և չեն կարող բարենպաստ դեր խաղալ տնտեսական ինտեգրացման գործընթացների զարգացման համար: Երկու երկրների արտաքին առևտրի հիմքում ընկած է ոչ թե երկրների համեմատական առավելություններով պայմանավորված փոխշահավետ համագործակցությունը, այլ մերներքին շուկայի չարդարացված բացությունը, որը և անհասկանալի ապրանքային հոսքերի պատճառ է դառնում: Իսկ ՀՀ տնտեսական զարգացման ցածր մակարդակը թույլ չի տալիս արտահանել գիտատար ապրանքներ, որի արդյունքում հարևան երկրի տարողունակ շուկան շարունակում է մնալ հայկական ապրանքների համար անմատչելի:

Տարածաշրջանի մյուս հարևան երկրների՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ ՀՀ տնտեսական ինտեգրացումը բախվում է բազմաթիվ հիմնախնդիրների հետ, որոնք թե՛ տնտեսական, թե՛ կրոնական և թե՛ քաղաքական բնույթ ունեն: Այնուամենայնիվ, Ադրբեջանը և Թուրքիան արևմուտքի երկրների համար մեծ հետաքրքրություններ կայացնող երկրներ են, և որքան ապագայում տնտեսապես հզորանան, այնքան ավելի մեզ համար կբարդանա տնտեսական հարաբերությունների վերահաստատումը: Քաղաքական հակամարտություններն ավելի են խորացնում տնտեսական հարաբերությունների խզման մակարդակը, ինչը չի բխում տարածաշրջանային տնտեսական ինտեգրման՝ համաշխարհային տնտեսության մեջ ձևավորված առկա պահանջներից:

Սակայն ի տարբերություն Ադրբեջանի, Հայաստանին և Թուրքիային կապում են բավականին ակտիվ առևտրային հարաբերությունները: Անցած ժամանակամիջոցում Թուրքիա-Հայաստան

²⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 493, 495:

տարիներին կազմել է 17.5 և 4.9%²⁹: Հայ-իրանական առևտրային կապերի թուլացումը պայմանավորված է որոշ հանգամանքներով: Նախ՝ 1990-ական թթ. սկզբին Իրանը Հայաստանի միակ առևտրային գործընկերն էր: Դրանից հետո հայկական շուկա մուտք գործեցին ռուսական և եվրոպական ապրանքներ, որոնք ավելի որակյալ էին, քնականաբար դուրս մղեցին պարսկական ապրանքները ՀՀ շուկայից:

Իրան-Հայաստան տնտեսական համագործակցության վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հարևան պետության հետ առևտրային կապերն այնքան էլ ակտիվ չեն և չեն կարող բարենպաստ դեր խաղալ տնտեսական ինտեգրացման գործընթացների զարգացման համար: Երկու երկրների արտաքին առևտրի հիմքում ընկած է ոչ թե երկրների համեմատական առավելություններով պայմանավորված փոխշահավետ համագործակցությունը, այլ մեր ներքին շուկայի չարդարացված բացությունը, որը և անհասկանալի ապրանքային հոսքերի պատճառ է դառնում: Իսկ ՀՀ տնտեսական զարգացման ցածր մակարդակը թույլ չի տալիս արտահանել գիտատար ապրանքներ, որի արդյունքում հարևան երկրի տարողունակ շուկան շարունակում է մնալ հայկական ապրանքների համար անմատչելի:

Տարածաշրջանի մյուս հարևան երկրների՝ Թուրքիայի և Ադրբեջանի հետ ՀՀ տնտեսական ինտեգրացումը բախվում է բազմաթիվ հիմնախնդիրների հետ, որոնք թե՛ տնտեսական, թե՛ կրոնական և թե՛ քաղաքական բնույթ ունեն: Այնուամենայնիվ, Ադրբեջանը և Թուրքիան արևմուտքի երկրների համար մեծ հետաքրքրություններ կայացնող երկրներ են, և որքան ապագայում տնտեսապես հզորանան, այնքան ավելի մեզ համար կբարդանա տնտեսական հարաբերությունների վերահաստատումը: Քաղաքական հակամարտություններն ավելի են խորացնում տնտեսական հարաբերությունների խզման մակարդակը, ինչը չի բխում տարածաշրջանային տնտեսական ինտեգրման՝ համաշխարհային տնտեսության մեջ ձևավորված առկա պահանջներից:

Սակայն ի տարբերություն Ադրբեջանի, Հայաստանին և Թուրքիային կապում են բավականին ակտիվ առևտրային հարաբերությունները: Անցած ժամանակամիջոցում Թուրքիա-Հայաստան

²⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 493, 495:

առևտրային կապերում ձևավորված իրավիճակը ցույց է տալիս, որ այն ունի կայուն բնույթ: Այսպես, 2005 թ. 2002 թ. համեմատությամբ ներմուծումն աճել է 57.1%-ով, իսկ արտահանումը՝ 58%-ով³⁰: Այնուամենայնիվ, միայն առևտրային կապերի զարգացումը բավական չէ տարածաշրջանային ինտեգրման զարգացման համար, քանի որ երկրների միջև հաստատված չեն դիվանագիտական հարաբերություններ:

Գրականություն

1. Ա. Դարբինյան, Հայաստանը միջազգային տնտեսական ինտեգրացման գործընթացներում, Եր., Պետական ծառայություն, 2000:
2. Զ. Թաղևոսյան, Դ. Գալոյան, Միջազգային տնտեսական հարաբերություններ, Եր., 2006:
3. Е. Аكوпова и др., Мировая экономика и международные экономические отношения; изд "Феникс", Ростов-на-Дону, 1997.
4. А.Н. Глинкин., Интеграция в Западном полушарии и Россия. 2004.
5. А. Киреев. "Международная экономика,, , часть 1, М., Международные отношения.
6. Н.А. Касимова. НАФТА: предпосылки создания и тенденции развития // США и Канада. 2001. # 6.
7. И. Спиридонов. "Мировая экономика,, М., ИНФРА, 1999.
8. Ю. В. Шишков. Интеграционные процессы на пороге XXI века. М.: НП тысячелетие, 2001.
9. Ю. Щербанин и др. Международные экономические отношения, Интеграция, М., ЮНИТИ, 1997.
10. R. Lippy "The Theory of Custom Unions" Economic Journal, September 1961.
11. R. Pomfret "The Economics of Regional Trading Arrangements", New York: Oxford University Press, 1998.
12. D. Salvatore "International Economics" second edition, New York Lonon, 1987.
13. J. Viner "The Customs Union Issue" New York The Carnegie Endowment for International Peace, 1953.

³⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 492:

Միջազգային տնտեսական հարաբերություններ

Ուսումնական ձեռնարկ

Հրատ. խմբագիր՝

Ռ. Երվանդյան

Համակարգչային ձևավորումը՝

Վ. Անտոնյանի

Պատվեր՝ 278: Չափսը՝ 60x84 1/16:
16,9 հեղ. մամուլ, 17 հրատ. մամուլ,
18,75 տպ. մամուլ, 17,44 տպ. պայմ. մամուլ:
Տպաքանակ՝ 300:

«Տնտեսագետ» հրատարակչություն

Տպագրված է «Տնտեսագետ» հրատարակչության
տպագրական արտադրամասում
Երևան 25, Նալբանդյան, 128